ՄԻ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

891.995
Գ-83

ՀԱՅԿԱԿԱՆ
ԽՍՀ
ՊԵՏՀՐԱՏ



891.99Մ
Զ-83

30 MAY 2011

Ար

ՍՏ. ԶՈՐՅԱՆ

ՄԻ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1940

13 APR 2013

8548

ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ՝ ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-ССР

2175
41

СТ. ЗОРЬЯН

ИСТОРИЯ ОДНОЙ ЖИЗНИ

Переработано для школьников среднего возраста

Армгиз, Ереван, 1940

I

ՄԵՐ ՏՈՒՆԸ

Ես իմ մանկությունը հիշում եմ այն օրից, երբ մի կտոր շաքար ուտելու համար ծեծեցին ինձ: Այդ՝ ինձ համար նշանավոր դեպքից առաջ հիշում եմ, իհարկե, և ուրիշ բաներ, բայց դրանք շատ աննշան են ու ակնթարթային, ինչպես խանգարված երազի մասեր, որ ոչնչով չեն կապվում իրար, կամ խավարի մեջ նշմարվող ցոլքեր, որ անկարող են փարատել խավարը:— Հիշում եմ ինձ, օրինակ, սպիտակ շորեր հագած. հիշում եմ մի աղբյուր, որից ջուրը թափվում է մերկ թրի պես շողշողալով, և մի սևազգեստ կին, որ ձեռս բռնած տանում է ինձ այդ աղբյուրի մոտով: Սևազգեստ կինը՝ տատս է. տանում է ինձ եկեղեցի... Իսկ եկեղեցում զարմացնում են ինձ վառված ջահերը և տերտերը, մանավանդ տերտերը, որ չեմ իմանում տատի՞ է նա, թե պապի—կի՞ն է, թե մարդ,—ու որոշում եմ, որ կեսը, երևի պապի է, կեսը տատի... Հետո հիշում եմ մի ցանկապատ, որի փշերը մագիլների նման բռնել են շորերս. չեմ կարողանում տուն գընալ, ու լալիս եմ... Այնուհետև—կանգնած եմ մեր տան շեմքին. Հանկարծ երկինքը տրաքում է, մեր հա—

րեանի բարդին բոցավառվում է երկինք հասնող կրակե սյունի պես, և ճարճատյունով ընկնում: Բարդու հետ ընկնում եմ և ես...

Կան և ուրիշ կցկտուր դեպքեր, որոնք մնում են դարձյալ առանձին-առանձին ու չեն կապվում իմ հետագա կյանքի հետ: Իսկ չաքարի նշանավոր դեպքով միանգամից սկսվում է իմ, եթե կարելի է ասել, գիտակցական կյանքը:

Այս դեպքը հիշելուս պատճառն այն է գուցե, որ դրա հետևանքով մեր տանը կատարվեցին ուրիշ նշանավոր դեպքեր, որ այնքան հուզում ու վիշտ պատճառեցին ինձ:

Դժվար է ասել՝ քանի տարեկան էի — չո՞րս, հինգ թե՞ վեց, — բայց լավ հիշում եմ ինչեր կատարվեցին մեր տանը այդ ծեծից հետո:

Բայց նախ չաքարի մասին:

Ես — ահա — մի փոքրիկ-փոքրիկ տղա՝ կրծքակալ կապած (այդ մայրս է կապել, որ կերակուր ու ջուր չթափեմ հագուստներիս) գնում եմ դեպի պահարանը, որի մեջ մայրս, տատս ու հորեղբորս կինը դնում են հաց, պանիր, մածուն, մրգեր և ուրիշ-ուրիշ ուտելիքներ:

Պահարանը մեծ չի. նա հացի սեղանից բարձր է, ու սև. վրան դրված են եղնիկի ոտներից շինած մոմակալներ և սև հասարակ շրջանակով մի հայելի, որի մեջ (երբ մայրս ցույց է տալիս) երևում է ինձ նման մի փոքրի՛կ-փոքրի՛կ տղա:

Մոտենում եմ պահարանին, դուռը բանում եմ ու նայում ներս: Տանը մարդ չկա. մենակ եմ: Մայրս չըգիտեմ ուր է գնացել, իսկ տատս ու հորեղբորս կինը՝ Սանամ գիզին բակում՝ ծառի տակ կար են անում: Այդ է պատճառը, որ ես երկար, հանգամանորեն նայում եմ պահարանի ներսը: Ինչքա՞ն բան կա. — հա՛ց, պանի՛ր, ձու. ափսեներ, բաժակներ, ադամաններ, մուրաբի վազեր — բոլորը շարված իրար կողքի, իրար վրա...

Նկ. Ս. Ռաստամյանի

— Այ դու... էդ ինչ ես անում...

րով: Մայրս լվանում է ձեռներս ու երեսս և աշխատում է բամբակով կտրել բերանիցս եկող արյունը ու հետո էլ անիծում է ինձ խփողին.

—Ձեռը կտրվի տվողի,— կրկնում է նա, և ինձ կանֆետ ու մրգեր է խոստանում, որ լաց չլինեմ:

Վերջին անգամ, երբ մայրս ասում է՝ «տվողի ձեռը կտրվի»— կողքի սենյակից նորից դուրս է գալիս հորեղբայրս, կանաչ աչքերը խոժոռում է ինձ ու մորս վրա և ասում է բարկացած.

— Հերի՛ք է դուրս տաս, չմեռավ...

— Ախր ի՞նչ է արել որ... — տարակուսում է մայրս:

— Ի՛նչ է արել... Մտել էր, չկաֆի մեջ նստել՝ չաքար էր ուտում: Ա՛յ ինչ է արել...

—Մի կտոր շաքարի համա՞ր, —ասում է մայրս,— ինձ ասեիր... էլ ինչու ես արյունլվա արել...

—Էդ դրան քիչ է,—շարունակում է հորեղբայրս:—Ասում եմ՝ «բերանդ բաց»— մատս կծում է...

Ու նա, բռունցքը վրաս թափ տալով, նորից մտնում է կողքի սենյակը:

Ես դողում եմ: Հորեղբայրս՝ իր սև միրուքով ինձ թվում է ահռելի հսկա, որին կարծես, ոչ-ոք չի կարող հաղթել, ու նա ինչ ուզենա կարող է անել:

Բայց իմ շաքար ուտելու պատմությունը սրանով չի վերջանում:

Հենց նույն երեկո մեր տանն սկսվում է մի ահագին իրարանցում ու կռիվ: Բոլորը խոսում են հուզված ու մատնացույց անում ինձ:

Հայրս, որ մի նիհար, երկար մարդ է՝ կոշտ բեխերով, սենյակի մեջտեղ կանգնած՝ բարկացած խոսում է հորեղբորս վրա, թե ինչո՞ւ է ծեծել ինձ: Իսկ պապս (տերտերի նման մեծ միրուքով մարդ) և տատս՝ (սև գլխաշոր կապած կին) պաշտպանում են հորեղբորս և ձեռնին շարունակ մեկնում են իմ կողմը:

— Անկարգ երեխա է. ամեն բանի մեջ ընկնում է, ամեն ինչ խառնում...

— Բա էրեխան ո՞նց կըլի,—ասում է հայրս: —Էրեխան իրա էրեխությունը կանի: Բա մի կտոր շաքարի համար էնպես կտան, որ ատամը պռոշում թաղվի՞: Էն ի՛նչ բան ա...

Ես ձեռս տանում եմ դեպի շրթունքս, որ ցավում է հիմա: Բայց ոչ մի ձայն չեմ հանում: Անխոս նստել եմ մորս կողքին, բռնել եմ նրա փեշերից ու վախլուկ աչքերով նայում եմ խոսողներին: Այդ լինում է այն ժամանակ, երբ խոսողները ձեռնին մեկնում են ինձ:

Սակայն, այդպիսի վախը չունեմ հորից:

Այսօր նա շատ է գրգռված այն բանի համար, որ ինձ ծեծել են: Ուրիշ անգամներ նա ինքն էլ բարկանում է ինձ վրա, երբ անկարգություն եմ անում, բայց այսօր փոխված է. այսօր նա էլ մորս պես պաշտպանում է ինձ:

—Բա ես աշխատեմ, արուն-քրտինք թափեմ ամեն օր, մի կտոր շաքարն իմ երեխին շատ համարեն,—ասում է հուզված ու գնում-գալիս սենյակում, երկար-երկար քայլեր անելով:

Իսկ պապս, տերողորմյան ձեռին, մոթաքին թիկնած՝ պատասխանում է.

—Աշխատո՛ւմ... ինձ համար հո չես աշխատում: Ինչքան աշխատում, երկու էնքան ուտում եք: Կնիկդ, չորս էրեխադ... Մենք չըլենք, դու կարա՞ս ապրես: Քո էրեխեքը պահողը մե՛նք ենք: Դեռ խոսո՛ւմ ես:

Հայրս ավելի է բարկանում.

— Ուրեմն դո՞ւք եք ինձ պահում, հա՞...

Ու խոսում է դարձյալ ձեռները շարժելով և դարձյալ գնում-գալիս է սենյակի մեջտեղով:

Ես առաջին անգամն եմ ներկա լինում մեծերի կռվին, գուցե եղել եմ ուրիշ անգամ էլ, բայց այժմ լռում եմ կլանված. չեմ ուզում թողնել և ոչ մի բառ:

Քանի որ նրանք խոսում են իմ շաքար ուտելու մասին և մատնացույց են անում ինձ, թվում է, թե այն ամենը, ինչ ասում են—բոլորը վերաբերում է ինձ, միայն ինձ, ու լարվում եմ, աշխատում եմ հասկանալ նրանց խոսքերը, ըմբռնել գոնե դրանց իմաստը: Բայց այդ ինձ չի հաջողվում. շատ բան մնում է մութ ու անհասկանալի: Ի՞նչ բան է աշխատանքը և ինչո՞ւ են աշխատում, ո՛վ է ո՛ւմ պահում,—ես այդ չեմ հասկանում: Ես գիտեմ միայն, որ ինձ պահողն իմ մայրն է, հորս էլ նա է հաց տալիս, պապիս էլ, տատիս էլ... Բոլորին: Մայրս ու հորեղբորս կինը՝ Սանամ-գիզին. դրանք են, որ կերակուր ու թեյ են եփում, անկողին են քցում... էլ ի՞նչու է պապս ասում, թե հորս պահողն ինքն է. երբ ինքը ոչինչ չի անում. ոչ կերակուր, ոչ թեյ է եփում, ոչ սեղան է սարքում, ոչ անկողին քցում, այլ միայն տերողորմյա է քաշում ու իր նման պապերի հետ պատերի տակ նստած զրույց անում:

Խոսակցությունը շարունակվում է: Պապս դարձյալ ինչ-որ խոսքեր է ասում հորս, տատս աշխատում է մեղմել պապիս ասածները, իսկ հորեղբայրս պապիս մոտ, սեղանի կողքին նստած, աչքի տակով խեթ նայում է հորս և անձայն ծիծաղում նրա վրա: Այդ ծիծաղն ինձ դուր չի գալիս:

Հայրս ավելի է տաքանում.

— Ուրեմն ես է՛ս տանն աշխատանք չունե՞՛մ...

—Մեծ բան ա՝ մի երկու արտ ա վարում,—խոսում է հորեղբայրս և նորից, ատամները բանալով, ծիծաղում անձայն:

Հայրս բարկացած գնում է դեպի հորեղբայրս.

—Ի՞՛նչ. իսկ դու ի՞նչ ես անում: Սաղ օրը պարապ-սարապ նստած ես խանութիդ դռանը...

—Քեզ ի՛նչ,—ասում է հորեղբայրս:—Մի օրվա մեջ ես քու մի տարուց շատ եմ աշխատում:

Ու վարից վեր նայում է հորս (ինձ թվում է նայում է նրա չորերին) ու ավելացնում .—Սրան տեսեք: Գյադա՛...

Չեմ հասկանում թե ինչո՛ւ այս խոսքի վրա հայրս հարձակվում է հորեղբորս վրա և ուզում է խփել նրան բռունցքով, բայց տատս ու Սանամ գիզին կտրում են առաջը ու չեն թողնում, որ հայրս մոտենա նրան: Տատըս ոչ միայն չի թողնում, այլ և բարկանում է սաստիկ:

—Լա՛վ, հերի՛ք է. էս տունը իրար գլխով մի տաք մի լակոտի համար...

Եվ նա ձեռը մեկնում է իմ կողմն ու չանչում ինձ:

—Ո՛ւ, շաքարը բկումդ մնար...

II

ԲԱԺԱՆՔ

Այս կռվից հետո մերոնք բաժանվում են: Հորս, մորս ու մեզ՝ երեխաներիս՝ թողնում են մեր սենյակում, ուր մենք քնում ենք, ճաշում· իրենք՝ պապս, տատս, հորեղբայրս ու նրա կինը՝ Սանամ-զիզին փոխադրվում են մյուս սենյակները, ուր լավ մահճակալներ կան և պատերին՝ հետաքրքիր, անչափ հետաքրքիր պատկերներ: Ոչ թե փոխադրվում, այլ ավելի ճիշտ՝ նրանք մնում են մեծ սենյակներում և այլևս չեն գալիս մեր սենյակը: Ու մեր ու այդ սենյակները միացնող դուռը, որ միշտ բաց էր լինում, փակվում է միանգամից:

Եվ ես այդ փակ դռնից եմ իմանում, որ մենք բաժանվել ենք: Երբ սովորականի պես, կռիվ ու շաքար մոռացած, ուզում եմ այդ դուռը բանալ՝ մյուս սենյակները գնալու—դուռը չի բացվում· հրում եմ, ծեծում—դարձյալ չի բացվում: Այդ ժամանակ մայրս հասկացնում է ինձ, որ էլ չի բացվի, որովհետև բաժանվել ենք:

Ի՞նչ է նշանակում բաժանվել—չեմ հասկանում: Բայց մայրս նորից օգնության է հասնում ինձ· բացատրում է, որ այլևս միասին չենք ապրելու· նրանք՝ տատս և մյուսները պետք է ապրեն մեծ սենյակներում, իսկ մենք, մեր սենյակում:

Ահա թե ի՛նչ... Եվ այդ օրն ես առաջին անգամ հասկանում եմ, որ բաժանք նշանակում է միջի՝ երկու սենյակի արանքի դուռը փակել:

Բայց հետո նկատում եմ, որ բաժանքն ունի ուրիշ առանձնահատկություններ էլ:—Դուռը փակելուց հետո՝ մերոնք էլ իրար մոտ չեն գնում· այսինքն՝ ավելի ճիշտ պապս, տատս, հորեղբայրս ու նրա կինը՝ Սանամ-զիզին այլևս չեն գալիս մեր սենյակը թեյի, ճաշի, ինչպես անում էին միշտ: Հիմա նրանք իրենց համար են թեյ եփում, մայրս՝ մեզ համար: Հենց դուռը փակելու օրը Սանամ-զիզին գալիս է սամավարը տանում մեր սենյակից ու էլ չի բերում: Հետո նրանք իրենց համար են կերակուր եփում, մայրս մեզ համար:

Մեր սենյակն առաջ ընդհանուր էր· այդտեղ առաջ հավաքվում էին բոլորը՝ թեյում, ճաշում և ապա գնում կողքի սենյակները զրուցելու, քնելու:

Այդ կողքի սենյակները երեք էին, երեքն էլ լավ զարդարված· պատերին գորգեր, հատակին գորգեր, լուսամուտներին՝ վարագույրներ: Կային լավ մահճակալներ, դրանցից մեկն ընկուզենու փայտից էր և տատս դա համարում էր տան ամենաթանկագին բանը, և մի առանձին խնամքով էր սրբում նրա փոշին: Իսկ նրա ճաղերն ու տախտակներն այնպիսի քանդակներ ունեին—զարմանալի՛· ծաղիկներ են քանդակված, նուռ ու խնձոր, իսկ ծայրերին՝ կլոր-կլոր գնդակներ, որ եթե պտտես՝ դուրս կգան, և հոլի նման կարելի է խաղացնել:

Այդ սենյակներում նրանք ընդունում էին լավ հյուրերի, և այդտեղ էլ հաց ու ճաշ տալիս նրանց: Պապս այդ սենյակները անվանում էր «ուրախության ու տրտմության օթախներ»: Այդտեղ էին կատարվել

Թե՛ հորս, թե՛ հորեղբորս հարսանիքը և թե իմ կընունքը:

Այդ սենյակները միշտ մաքուր էին ու հաճելի. և դրա համար այնտեղ մտնելն ինձ համար ուրախություն էր. պատերին կախված էին ամեն տեսակ՝ մեծ ու փոքր պատկերներ: Բայց ինձ ամենից շատ դուր էր գալիս այն պատկերը, ուր բազմաթիվ մկներ՝ զույգ-զույգ լծված՝ սատկած կատվին սահնակով տանում են թաղելու... Ես առհասարակ մկներից վախենում եմ. այդ պատկերի մկներն էլ սկզբում ինձ սարսափի էին բերում, բայց շուտով տեսնելով, որ դրանք մյուս մըկների նման չեն շարժվում, այլ շարունակ մնում են միևնույն տեղն անշարժ— էլ չեմ վախենում: Համարձակ գնում-կանգնում էի պատկերի առաջ ու կատվին «փիշտ» անում: Ինձ թվում էր, որ նա քնել էր, հանկարծ պիտի զարթնի ու մկներին հալածի, բռնի: Օ՜, եթե զարթներ... մկներն ինչպես պիտի փախչեի՜ն: Թվում էր պատկերի վրա էլ մուկ չէր մնա. բոլորը պիտի թափվեին «ընկուզի» մահճակալի վրա... Իսկ եթե դա լիներ գիշերը—ի՞՛նչ պիտի անեին հորեղբայրըս ու Սանամ-զիզին... Բայց հիմար կատուն չէր զարթնում: Եվ մայրս որքան էլ ասում էր «սատկած» է,—ես չէի համոզվում: Կարծում էի, որ նա մի օր պիտի վեր կենա սահնակից ու բոլոր մկներին բռնի-խեղդի, ինչպես անում էր մեր Ծամո կատուն:

Միջի դուռը փակելը, այսինքն՝ բաժանքը ինձ՝ տխրեցրեց հենց միայն նրա համար, որ այլևս չեմ տեսնելու այդ պատկերը, որովհետև մորս ասելով, այսուհետև պապիս տուն չպիտի գնայի:

— Նրանք դուռը փակել են, որ մենք նրանց մոտ չգնանք, հասկանո՞ւմ ես,—ասում է մայրս:

Ես, ճիշտն ասած, չեմ հասկանում (որովհետև դժվար էր հաշտվել այդ մտքի հետ), բայց և այնպես գլխով եմ անում, թե հասկանում եմ:

Դուռը փակելուց հետո հորեղբայրս ու պապս մի օր գալիս են մեր սենյակը՝ հացի մեծ սեղանը տանելու:

Հայրս տանը չի: Ինչպես միշտ, այդ օրն է՛լ գնացել է աշխատանքի. նա կամ վար անելու է գնում, կամ սայլով փեյին է կրում դաշտը: Իսկ տանը մնում է միայն անձրև օրերը և ջղայնանում է ու հաճախ նկատողություն անում ինձ, որ անկարգ բաներ եմ անում ու երբեմն խփում է ինձ... Դրա համար էլ ես ուրախ եմ լինում, որ նա տանը չի մնում:

Բայց այդ օրը, երբ պապս ու հորեղբայրս գալիս են սեղանը տանելու,— այդ օրը ես ուզում եմ որ հայրըս տանը լիներ, որ չթողներ մորս հրեն դես ու դեն, և արգելեր սեղանը տանելու:

Ու ինձ թվում էր, որ եթե նա տանը լիներ— ամեն բան այնպես չէր լինի, ինչպես եղավ:

Երբ պապս ու հորեղբայրս մտնում են սեղանին՝ վերցնելու, մայրս, որ այդ ժամանակ փոքր եղբորս օրորոց է դնում, վեր է թռչում տեղից, երեխան դնում է թախտին ու մոտենում է նրանց:

— Ձեզ մոտ քիչ բան կա՝ սեղա՞նն էլ եք տանում,—ասում է նա:— Գետնին հո չե՞նք ճաշելու:

— Իսկ մենք գետնի՞ն պիտի ճաշենք,—պատասխանում է հորեղբայրս խեթը նայելով:

— Ձեզ մոտ ծալովի սեղան կա,— շարունակում է մայրս:

— Էն հեչ. էն զոնաղի սեղան է,— նկատում է պապս:

Ու վերցնում են, որ տանեն. բայց մայրս ընկնում է սեղանի վրա:

— Չե՛մ թողնի:

— Հեռո՛ւ քաշվիր,— ասում է պապս խիստ:

Մայրս ուղղվում է, բայց սեղանի ոտը չի թողնում: Համարյա կախ է ընկնում նրանից:

Այս անգամ հորեղբայրս հրում է նրան: Մայրս ետ-ետ գնալով, դիպչում է թախտին ու մնում կանգ-

նած. և, չգիտեմ, ամաչելո՞ւց թե վախից, էլ ոչինչ չի ասում. թույլ է տալիս անեն ինչ ուզում են:

Եվ նրանք՝ պապս ու հորեղբայրս, յուրաքանչյուրը մի ծայրից բռնած, տանում են սեղանը:

Քիչ հետո հորեղբայրս գալիս է աթոռները տանելու: Վերցնում է երկու հատ և ուզում է գնալ: Մայրս նորից է փորձում արգելել. այժմ ավելի համարձակ, որովհետև պապս չկա. ինձ այդպես է թվում: Նա բռնում է աթոռներից ու ձգում է դեպի իրեն:

— Սրանք ո՞ւր ես տանում: Բա մեզ աթոռ հարկավոր չի՞...

Բայց հորեղբայրս ուժով թափ է տալիս աթոռները. մայրս նորից ետ-ետ է գնում. ու մինչ ուզում է նորից առաջ գալ— հորեղբայրս տանում է աթոռները:

Հետո հերթով՝ տատս, Սանամ-զիզին, հորեղբայրս գալիս տանում են առաստաղից կախված լամպը, հարթուկը, ամաններ, ափսեներ, բաժակներ, սփռոց... Մայրս խղուր ամեն բանի ընդդիմանում է. նրան չեն լսում:

Մորս հաջողվում է պահել միայն պահարանը, այն պահարանը, որի մեջ մտել էի չաքար ուտելու և որի վրա դրված էին եղնիկի ոտներից շինած մոմակալներն ու հայելին:

Այդ օրն ես հասկանում եմ նաև, որ բաժանում նշանակում է ոչ միայն միջի դուռը փակել, այլև ապրանքներ ու իրեր տանել տնից: Կամ ավելի ճիշտ դրանք բաժանել միմյանց միջև:

Այնուամենայնիվ ինձ թվում էր, որ միջի դուռը կբացվի մի օր, որ դա ժամանակավոր բան է, որովհետև ես այնպես էի հավատացած, որ մեր տանն ամեն բան պիտի մնա այնպես, ինչպես եղել է. օրինակ՝ տատս պիտի մնա միշտ տատ, պապս՝ պապ... հայրս, մայրս, հորեղբայրս ու Սանամ-զիզին էլ պիտի մնան միշտ այդպես իրենց տեղում, իրենց գործի վրա, իսկ

ես, մյուս երեխաների—Վարդուշի, Վաչոյի հետ պիտի մնամ միշտ երեխա:

Բայց այդպես չէր լինում կարծես:

Իմ աշխարհը քանդվում էր... Օրերն անցնում էին իրար ետևից և միջի դուռը չէր բացվում:

Սեղանը և մյուս իրերը տանելու երեկոյան հայրս գալիս է տուն. մայրս լաց լինելով պատմում է նրան ամեն ինչ: Հայրս լսում է նրան անխոս ու գլուխը թափ տալիս, լսում է՝ գլուխը շարժում, հետո մեկեն պոկվում է տեղից ու դուրս գնում:

Ու, փոքր անց, փակված դռան ետևից, այսինքն պապիս սենյակներից լսվում է նրա բարկացած ձայնը: Մայրս մոտենում է դռներին ու ականջ դնում. ինձ թվում է՝ ուզում է իմանալ ինչ է ասում հայրս: Զնայած երեխան՝ փոքրիկ Վաչոն լալիս է անհանգիստ, բայց մայրս այնպես է հետաքրքրված այն կողմի խոսակցությամբ, որ ուշ չի դարձնում երեխային. գլխով ու ձեռով հասկացնում է ինձ, որ նրան օրորեմ: Իսկ ինքը, գլուխը թեքած շարունակում է ականջ դնել: Մեկ էլ՝ նա ճչում է հանկարծ ու ձեռով խփում դռան:

— Սո՛ւտ է, ես նրան բան չեմ ասել: Սո՛ւտ է...

Այն կողմից պատասխանում են մորս. մայրս պատասխանում է նրանց, ու սկսվում է ականջ խլացնող, անհասկանալի, աղմկալի մի խոսակցություն: Այնտեղից, դուռը ծեծելով, պատասխանում են մորս, այս կողմից մայրս է դուռը ծեծում ու պատասխանում:

Ես չեմ հասկանում ինչո՛ւ համար են աղմկում ու դռներ ծեծում, բայց եզրակացնում եմ, որ բաժանում նշանակում է նաև աղմկել ու դռներ ծեծել...:

Այնուհետև այդպիսի աղմկալի զրույցներ հաճախ են պատահում ծնողներիս ու մերոնց միջև՝ թե բա-

ՀՍՍՀ ... Гос. Публ. Библиотека АРМ-ССР им. А. Мясникяна

կում, թե ղռների ետևից: Եվ ես, վերջապես, մի փոքր հասկանում եմ գործի էությունը:

Հայրս ու մայրս ասում են, թե քանի որ բաժանվել ենք— մեր բաժինը տվեք՝ կարգին բաժանվենք:

Պապս համառում է, չի համաձայնում:

Մենք ունենք շատ տավար— եզներ, կովեր, հորթեր, ձի, տան իրեր, գորգեր և շատ ուրիշ բաներ:

Այդ բոլորից պապս հորս տալիս է միայն ա՛յն մի լուծ եզը ու ա՛յն սայլը, որ հայրս բանեցնում է: Իսկ «տան բաներից»— ոչինչ:

Հայրս խնդրում, պահանջում է «հալալ» բաժին:

Պապս գլուխն օրորում է:

— Դու ջահել ես,— ասում է,— ես ծեր եմ. էդ կովերը, բաները զոռով ինձ պահեն ու ծեր մորդ:

— Բա իմ երեխեքը ինչո՞վ ապրեն,— շարունակում է հայրս:

Պապս զարմանում է:

— Է, քու երեխաներին էլ ես պահե՞մ…

— Ես իմ աշխատածից եմ ուզո՛ւմ,— բացատրում է հայրս:

— Ինչքա՛ն աշխատել ես, երկու էնքա՛ն կերել ես, պատասխանում է պապս:

Ու վիճում են, թե ո՛վ է շատ աշխատել, ո՛վ է շատ կերել: Վեճը կամաց-կամաց փոխվում է կռվի, կռիվը՝ աղմուկի, և ես էլ ոչինչ չեմ հասկանում, թե ի՛նչ են ասում և ի՛նչ են ուզում իրարից:

Ամեն մի իր, ամեն մի գործիք առաջ է բերում նոր վեճ ու նոր կռիվ. խոսում են պղինձների մասին, անիվների մասին, կացնի մասին… Ամեն մեկն ուզում է, որ այդ բաներն իրենը լինի… Շուտով սկսում են խոսել և հողի մասին:

Հայրս ինչ-որ հող է ուզում վարել — պապս չի թողնում:

— Էդ ես պիտի վարել տամ,— ասում է նա հան-

դարտ, տերողորմյան քաշելով,—դու գնա ձալի հողը վարի:

— Խաս հողը ձեզ, խամը՝ ի՞նձ—տաքանում է հայրս:

Պապս սիրում է խոսել հանդարտ, ընդհատումներով, մտածելով և երբեմն չի պատասխանում, երբ հայրս տաքանում է: Երեսը թեքում է մի կողմ ու շարունակում տերողորմյան քաշել հանգիստ:

Այս անգամ էլ, երբ հայրս ձայնը բարձրացնում է—նա լռում է. նայում գետնին ու տերողորմյայի սև ձիթապտուղի մեծություն ունեցող հատիկները չխկացնում իրար ետևից:

Հայրս կանգնում է մի փոքր. սպասում է, որ պապս մի բան ասի. բայց, երկար պատասխան չստանալով, հեռանում է զայրացած:

Երկու օր հետո նրանք նորից են վիճում:

Հայրս բողոքում է, թե ինչո՛ւ իր վարած հողը — պապս ցանել է տվել իրենց համար:

— Շատ լավ եմ արել,—ասում է պապս հանգիստ.—ես քեզ ասի՝ էդ հողը չվարես:

— Ինչո՞ւ չվարեմ,—բարկանում է հայրս:

Պապս երեսը թեքում է ու տերողորմյայի հատիկները չխկացնում:

Մի ուրիշ անգամ մայրս արցունքն աչքերին գալիս է տուն ու բարկացած գնում պապիս մոտ:

— Բա էսենց բան կանե՞ն, այ ապի,— ասում է նա, վեր քաշած գոգնոցը պապիս առաջ բանալով:

Մորս գոգնոցի մեջ ես տեսնում եմ նոր ծլած լոբի և սոխի ու պամիդորի սածիլներ՝ արևի տակ թուլացած, կուչ եկած:

— Գնացել եք ցանած տեղը քանդել, սերմ ու սածիլ էսպես շաղ տվել,— շարունակում է մայրս:

Պապս լսում է, լռում մի առ ժամանակ, ապա գլուխը բարձրացնում ծանրախոհ:

— Գնա բանի՛դ,—ասում է նա:—Շա՛տ էլ լավ եմ

արել: Քեզ ո՞վ էր իրավունք տվել, որ գնաս տեղ վերցնես ու բան ցանես:

— Բա, այ ապի...

— Գնա՛ բանիդ...

Պապս երեսը թեքում է մի կողմ, ու տերողորմյայի սև հատիկները չխկում են իրար ետևից:

Հայրս տուն է գալիս, տեսնում է հանած սերմերը և վրդովվում է սաստիկ:

— Ես հիմա ցո՛ւյց կտամ,— ասում է ու դուրս գնում արագ:

Քիչ հետո նա վերադառնում է մեր հարևան ծերունիների հետ, նստեցնում նրանց ծաղկած, վիթխարի ծաղկեփնջի նմանվող սալորենու տակ՝ թախտի վրա և սերմերն ու սածիլները փռում նրանց առաջ:

— Տեսեք, այ ախպեր. էսենց բան կըլնի՞,— ասում է հայրս ու ձեռները խաչում կրծքին:

Ծերունիները, որոնց բոլորին էլ ճանաչում եմ,— Պողոսանց Վարդան ամին, իմ ընկեր Աչոտի պապը, պառավ Զանոյի մարդը և դարբին Դավիթը—չորսը միասին նայում են սածիլներին ու չորսը միասին գլուխներն օրորում:

— Ամոթ բան է ,— ասում են նրանք միասին:

— Բա հիմա ես ի՞նչ անեմ,— ասում է հայրս վրդով:

— Դու ոչինչ էլ մի անի,— ասում են ծերունիները հանգիստ,— մարդ ղարկի՝ հորդ կանչի:

Այդ օրը հանդիսավոր օր է ինձ համար: Այդ ծերունիները, որ այնպես վեհ էին թվում ինձ ու պատկառելի, առաջին անգամն են լինում մեր տանը՝ միասին: Եվ ես, նրանց շուրջը պտտվելով ագահ հետաքրքրությամբ նայում եմ նրանց դեմքերին, որ կնճիռներից ճաքճքել են կարծես, նրանց ծանր սև փափախներին, որոնց տակ կռացել են նրանց ականջները, և ճերմակ միրուքներին, որ ծածկում են կրծքերը, ինձ թվում էր՝ չորսն էլ նման են իրար: Եվ ի՞նչ ուզեն կա—

Նկ. Ս. Ռաստակյանի

— Գնացեք էդ բաժանքը ձեզ համար արեք:

րող են անել: Եվ ամեն մարդ նրանց խոսքը կլսի. կարող են հորս պաշտպանել և պապիս հանդիմանել:

Մինչև պապիս գալը՝ նրանք նստում են լուռ իրենց ձեռնափայտերին հենած, իսկ երբ պապս գալիս է—նրանք անխոս տեղ են տալիս նրան թախտի վրա ու նորից լռում:

Պապս նստում է տերողորմյան ձեռքին և սպասում, թե ի՛նչ են ասելու իրենից տարիքով այդ ծերունիները:

Իսկ ես մի քիչ հեռու կանգնած՝ հետաքրքիր նայում եմ այդ ծեր մարդկանց և նույնպես սպասում, թե ի՛նչ են ասելու:

Վերջապես Վարդան ամին չիբուխը հանում է գոտուց, ծխախոտ է լցնում ու կոկորդը մաքրում:

— Մանաս, — ասում է նա պապիս, — էս ձեր բաժանքը ո՞նց պիտի ըլի: Ինչո՞ւ Ներսեսին (հորս) բաժինն չես տալիս: Քանի աչքդ բաց է, ունեցածդ բաժին արա որդկերանցդ մեջ ու հանգիստ ապրի: Մեկին ավար մի անի, մյուսին խավար: Լավ չի...

Պապս լսում է և տերողորմյան քաշում հանդարտ:

— Հը, ի՞նչ կասես, Մանաս,— խոսում է իմ խաղընկեր Աշոտի պապը:— Ներսեսը էրեխատեր է, իրա բաժինը տուր՝ թող գնա:

— Տունը՛, մի լուծ եզը՛ իրա ձեռին է,— ասում է պապս:

— Էդ չէղա՛վ,—միջամտում է դարբին Դավիթը. — չէղա՛վ: Մի գոմ տավարից մի լուծ եզը՞ — քիչ է... Դու պետք է հողից հող տաս, տնից— տուն, տան միջից՝ տան մեջ...

Խոսում են և մյուսները. ուզում են համոզել պապիս, որ ունեցածը հավասար բաժանի երկու որդու միջև, և օրինակ են բերում թե ի՛նչպես են անում ուրիշները և թե ի՛նչպես կարելի է անել:

— Ներսեսին տուր մի երկու կով, մի երկու խալիչա, բոստանի կեսը,— ասում է Վարդան ամին:

Մյուս ծերունիները թվում են ուրիշ բաներ, որ անհրաժեշտ է տալ հորս:

Պապս անխոս լսում է նրանց ու տերողորմյան քաշում հանդիստ:

Եվ երբ նրանք խոսքով ամեն ինչ բաժանում են, վերջացնում, պապս գլուխը բարձրացնում է, նայում ծերունիներին և ոտքի կանգնում:

— Գնացեք էդ բաժանքը ձե՛ղ համար արեք,— ասում է նա:—Ես բաժանելու բան չունեմ...

Ու արագ գնում է դեպի տուն:

Բաժանարար ծերունիներն անխոս նայում են իրար և գլուխնին օրորում դարձյալ: Քիչ հետո մեկը հարցնում է, թե ինչո՞ւ ենք բաժանվել կամ պատճառն ի՞նչ է եղել բաժանքի, և հայրս սկսում է իմ կերած մի կտոր շաքարից...

Այդպես է անում և մայրս: Երբ հարևանուհիները գյուղի մեջ հարցնում են նրան, թե ինչ պատահեց, որ հանկարծ բաժանվեցինք, մայրս միշտ սկսում է շաքարից:

— Էս գետինը մտածը եթե չկափը չմտներ՝ շաքարը ուտեր, էս բանը չէր ըլի...

Իսկ տատս, ինձ տեսնելիս, միշտ չանչում է բարկացած:

— Գրողը քեզ տանի, էն մի կտոր շաքարը չուտեիր էլի: Մեր խաղաղ տունն իրար գլխով ավիր...

Եվ ես զգում եմ, որ եթե, իսկապես, ես շաքար չուտեի, մեր տունը, երևի, ոչինչ չէր պատահի...

III

ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ

Իմ ամենամեծ հաճույքը սայլ նստելն է:

Հայրս ամեն օր, մեր հարևանների հետ, սայլով բեռներ է կրում կայրանից առևտրականների համար կամ բեռներ է տանում կայարան: Առավոտը ես քնած եմ լինում, երբ նա սայլը լծում է գնում: Բայց կեսօրին, երբ գալիս է եզներին խոտ տալիս և ինքն էլ հաց ուտում,— ես սայլի մոտից չեմ հեռանում: Սպասում եմ լծելուն: Իսկ երբ հայրս սկսում է լծել, ես բարձրանում նստում եմ սայլը և գնում մինչև մեր փողոցի անկյունը: Դա իմ ամենասիրած հաճույքն է: Սայլի վրա բազմած՝ վերևից եմ նայում փողոցում պատահող երեխաներին. նրանք ոտով են գնում, ես՝ սայլով. Նրանք հո սայլ չունե՛ն... Իմ մեջ զարթնում է երգելու, աղմկելու տրամադրություն. և ես երգում եմ, աղմըկում, որ մարդիկ, երեխաներ ուշադրություն դարձնեն վրաս. տեսնեն ինչպես եմ սայլ նստել:

Եվ ես հասնում եմ նպատակիս. երեխաներն ինձ սայլի վրա տեսնելով՝ վազում են, որ իրենք էլ նստեն. բայց ես չեմ թողնում: Ո՛ւմ սայլին կնստեն... Նրանք մոտենում են—ես քշում եմ ճիպոտով... ու այդ

բանը հպարտությամբ է լցնում սիրտս: Երբեմն ո՛ւմ ուզում թողնում եմ, ո՛ւմ չեմ ուզում—չեմ թողնում... Ու այս անում եմ համարձակ. քանի որ հայրս հետս է.— վստահ եմ, որ ոչ մի տղա չի համարձակվի ինձ բան ասել... Հայրս ինձ համար ամենաուժեղ մարդն է աշխարհում, ո՛վ կարող է նրան հաղթել. նա միայն պապին չի կարողանում հաղթել, թե չէ ամեն բան անում է.—մենակ՝ ցորենով լիքը պարկը վերցնում է՝ տանում ներս. եզներին ենթարկում է իրեն. մի անգամ փախչող ձիու թոկը բռնեց և ձին կանգնեց: Չէ, իմ հայրը շա՜տ ուժեղ է. սայլի անիվը մենակ հանում է, առնում մազութ քսում ու նորից տեղը դնում... Հորս մոտ և հորս հետ ես ինձ զգում եմ միանգամայն ապահով թե՛ շներից, թե՛ տավարից և թե՛ երեխաներից... Ահա թե ինչու հպարտ եմ և վերևից եմ նայում բոլորին:

Բայց իմ հաճույքը երկար չի տևում:

Հասնում ենք փողոցի անկյունը թե չէ, հայրս սայլը կանգնեցնում է:

— Դե, իջի՛ր:

Մեծ ափսոսանքով իջնում եմ սայլից ու կանգնում տխուր:

Այդ ժամանակ հայրս կարգադրում է, որ գնամ տուն, թե չէ շունը կգա՝ կըկծի կամ կով կգա՝ հարու կտա: Եվ որովհետև ես շներից ու հարու տվող կովերից սաստիկ վախենում եմ—վազում եմ տուն, որ այնքան էլ հեռու չի փողոցի անկյունից: Անցնում եմ մի չորհինգ տուն— նորից մեր տան առաջ եմ:

Իսկ երեկոյան, մայրամուտին, երբ արևը թաղնըվում է անտառի ետևը՝ ես նորից գնում եմ փողոցի անկյունը, անհանգիստ սպասում եմ հորս, որ սայլ նստեմ և այնպես՝ սայլին բազմած վերադառնամ տուն...

Եվ ահա մի օր էլ, երբ ես խաղում եմ ընկերներիս հետ, տեսնում եմ մեր սայլը գալիս է: Ուրախ—ուրախ վազում եմ ընդառաջ, էլ չմտածելով, որ ժամանակից

շուտ է գալիս: Երբ մոտենում եմ—նոր միայն նկատում եմ, որ քշողը հայրս չի, այլ մեր հարևանի տղա Ալեքը:

Այդ ինձ տարօրինակ է թվում. բայց և այնպես առաջ եմ վազում և հենց սայլի մոտ մնում եմ քարացած... Հայրս՝ չորերը ցեմենտոտ՝ մեկնվել է ցեմենտից սպիտակած սայլի վրա, իսկ մեր Փիլոս քեռու մեծ տղա Մաթոսը նրա գլուխը դրել է իր գոգին ու բռնել ձեռներով:

Հորս այդ դիրքից ինչ—որ վատ, շատ վատ բան նախազգալով՝ իսկույն ետ եմ դառնում ու վազում դեպի տուն:

Մայրս, գուլպան ձեռին, զրուցում է մեր հարևանուհի՝ Թերեզա մորքուրի հետ:

— Հայրիկին բերում են,—ասում եմ կերկեր:

— Ո՞նց թե,—վեր է թռչում մայրս զարմացած:— Ինչե՞ր ես դուրս տալիս:

Ես էլ խոսք չեմ գտնում ասելու. միայն ձեռս մեկնում եմ դեպի փողոց, որով մեր ցեմենտից փոշոտված սայլը դանդաղ գալիս է դեպի տուն:

Մայրս տեսնելով սայլը և հորս նրա մեջ մեկնված՝ մի ճիչ է արձակում ու ընկնում է գետին:

Մենք՝ ես ու քույրս՝ մորս ձայնից ավելի ենք վախենում, քան հորս դիրքից, ու սկսում ենք լաց լինել:

— Ոչի՛նչ, ոչի՛նչ, բան չկա,—ասում է սայլը քշող Ալեքը:

Նույնն ասում է և մեր քեռու տղա Մաթոսը:

Այդ ժամանակ մայրս վեր է կենում չոքած տեղից ու մոտենում սայլին:

Մինչ այդ սայլը կանգնում է, սայլապանները՝ Ալեքն ու Մաթոսը հորս՝ թևերից բռնած՝ իջեցնում են ցած, ապա ոտքի կանգնեցնելով, թևերն ընկած տանում են ներս:

Ա՛հ ուրեմն մեռած չէր:

Ես թեթևացած շունչ եմ քաշում, բայց ինձ պաշա-

րում է մի նոր անհանգստություն.— ի՞նչ է պատահել արդյոք, որ հորս աչքերը փակ են. նա ինչո՞ւ է գլուխը կախել թույլ և ինչու է ամեն մի քայլն անելիս՝ տընքում:

Մորս սուր ցավը նույնպես անցնում է. նա էլ չի ճչում, այլ, ծնկներին խփելով, ուզում է իմանալ ի՛նչ է պատահել:

— Թող, թող տանենք տուն՝ հետո,— ասում են սայլապանները:

Եվ նրանք ոչինչ չեն ասում, մինչև հորս չեն տանում ներս: Իսկ ներս տանելով՝ նրան զգուշությամբ պառկեցնում են թախտի վրա՝ երեսը դեպի առաստաղը:

Այստեղ միայն նկատում եմ, որ հորս աչքերը փոշոտ են, իսկ կուրծքն ու գլխի մազերը փոշեթաթախ:

Մայրս էլ չի համբերում.

— Դե, ասեք տենամ ի՞նչ է պատահել,— ասում է նա արցունքը սրբելով:

Ալեքի ու Մաթոսի պատմածից ես այնքան եմ ըմբռնում, որ հայրս վիճել է ցեմենտի ռուս կապալառուի հետ, թե ինչո՛ւ խոստացած վարձը չի տալիս, և կապալառուն բարկացած՝ մի բուռ ցեմենտ է վերցրել ու շպրտել հորս երեսին: Ցեմենտը թափվել է հորս բերանն ու աչքերը... Հայրս կամեցել է հարձակվել կապալառուի վրա, բայց էլ աչքերը չեն բացվել... Սայլապանները հավաքվել են անմիջապես երեսը սրբել, բերանը ջրով ողողել, բայց աչքերը չեն կարողացել մաքրել: Հայրս ինքն էլ դժվարացել է աչքերը բանալ, որովհետև ցեմենտից սաստիկ կսկիծ է զգացել... Այդ տեսնելով՝ սայլապանները կամեցել են կապալառուին բռնել ծեծել, բայց նա՝ թողել է փախել:

— Խալես եղավ բանը:— Հիմա պտի բժիշկ կանչել,— ասում են սայլապաններն ու դուրս գնում:

Շուտով մեր տունը լցվում է հարևաններով: Կին, մարդ, երեխա գալիս են հորս տեսնելու: Հեռվից նա-

յում են նրա՝ թախտին պարզված մարմնին, առաստաղին ուղղած փակ աչքերին,— նայում են, հառաչում, վշվշում ու կանգնում մի կողմ:

Նրանց վշվշոցն ավելի էր հուզում մորս, և նա լալիս է: Իսկ հայրս երբեմն-երբեմն աչքերը խուփ հայհոյում է կապալառուին:

— Պետք է գանգատ տալ,— ասում է մեկը:— Տանուտերին կամ միրավոյ սուդը:

— Թո՛ղեք, ամա՛ն. տակից ուրիշ բան կհանեն: Էլի ձեզ մեղավոր դուրս կբերեն. փոդրադչին պրիստավին մոտիկ ա...երկուսն էլ ռուս— շատ կպցեն...

Այդ ռուս փոդրադչուն բոլորը ճանաչում են, որովհետև նա մեր թաղումն է ապրում, հենց մեր փողոցի վրա. մեր գոմի այն կողմը, այսինքը փողոցի հակառակ կողմը: Ապրում է նա պատշգամով մի տան մեջ: Երկու աղջիկ ունի, մի տղա:

Ես նույնպես ճանաչում եմ թե՛ իրեն, թե՛ երեխաներին: Աղջիկներն ինձնից մեծ են, իսկ տղան փոքր. բոլորն էլ լավ շորեր ու կոշիկներ ունեն. հետո՝ խաղի օղեր ու գնդակ. գնդակը մե՛ծ-մեծ է— մարդու գլխի չափ:

Իմանալով այդ փոդրադչին է հորս աչքերը ցեմենտ լցրել, կանայք սկսում են անիծել նրան.

— Շլինքը փորը պրծնի...

— Արևի լուսին կարոտ մնա:

Փոքր անց գալիս են տատս ու պապս: Բաժանքի օրվանից նրանք մեր տուն չեն եկել, բայց այսօր գալիս են: Հավաքվածները ետ-ետ են գնում ու ճամբա տալիս նրանց:

Տատս էլ, մորս նման ծնկներին խփում ու ընկնում է հորս վրա:

Նա էլ սկսում է անիծել փոդրադչուն: Հետո մաքուր թաշկինակ է ուզում և սկսում է հորս աչքերը սրբել. ավելի շուտ ուզում է մաքրել. բայց դրանից հորս աչքերն ավելի են ցավում: Հայրս չի կարողանում

ոչ կարողին խփել աչքերը, ոչ էլ կարողին բանալ. նրանք մնացել էին մի տեսակ կիսախուփ դրության մեջ որովհետև նրա կոպերի ու բիբերի արանքին ցեմենտ կա և այդ ցեմենտը ցավ, կսկիծ է պատճառում: Այդ ժամանակ տատս թաշկինակը դնում է մի կողմ և, լեզուն հանելով, կռանում է հորս երեսին: Ես հետաքրքրությամբ նայում եմ, թե ինչ է անելու տատս, և տեսնում եմ, որ նա, արցունքներն աչքերին, լիզում է հորս աչքերի փոշին:

— Ցավո՞ւմ է, Ներսես ջան,—հարցնում է տատս:

— Կսկծում է,—ասում է հայրս սարսռալով, և նրա աչքերի թերթերունքները խաղում են անբնական ձևով:

Հորս այդ ցավը տեսնելով՝ զգում եմ, թե ինչպես սիրտս կամաց-կամաց լցվում է ատելությամբ դեպի կապալառուն. նա ինձ թվում է աշխարհի ամենաչար մարդը, մեր ընտանիքի դժբախտության պատճառը, մեր թշնամին: Զգում եմ, թե ի՛նչպես ատում եմ և նրա երեխաներին, որ ամեն օր գալիս խաղում են մեր փողոցում... Որքան տխրությամբ զգում եմ միաժամանակ, որ հայրս ինչպես այն ամենազոր, անհաղթ մարդը չէ, ինչ երևակայում էի: Ուրեմն նա չի կարողացել հաղթել կապալառուին... Չէ՞ որ հայրս նրանից և՛ բարձրահասակ է և՛ ուժեղ: Այդ ի՞նչպես է պատահել... Ես ցույց կտամ այդ փոդրադչունն:

Ու քանի գնում ատելությունս սաստկանում է.— Ուրեմն հայրս պիտի պառկի, իսկ նա ազատ ման գա՞... Ուրեմն մենք՝ մայրս ու երեխաները տխուր պիտի նստենք հորս անկողնու մոտ, իսկ նրա լավ հագնված երեխաները՝ օղեր ու գնդակներ խաղա՞ն... Ոչ, պետք է այնպես բան անել, որ նրանք էլ տխրեն, որ փոդրադչին էլ վնասվի, նրա կինն էլ... Բոլորը...

Ու հետզհետե ինձ համակում է մի զգացում, որին, ինչպես հետո եմ իմանում, մեծերը «վրեժխնդրություն» կամ «վրեժ առնել» են ասում: Եվ օրեցօր այդ

զգացումն ավելի է ուժեղանում մեջս: Երբ տեսնում եմ հորս՝ աչքերը փակ պառկած, իսկ մորս նրան կերակուր ուտեցնելիս— սիրտս բռնկվում է զայրույթից. ուզում եմ դուրս վազել և կապալառուին, նրա երեխաներին քարով խփել կամ մի ծանր վնաս հասցնել:

Ու կամաց-կամաց այդ ցանկությունը մեջս դառնում է որոշում. միայն հարմար առիթ եմ որոնում՝ այդ վնասը նրանց հասցնելու. ինձ համար միևնույն է, թե ո՛վ կլինի վնասվողը—ինքը կապալառուն, թե նրա երեխաները, միայն թե սիրտս հովանա:

Բայց զգում եմ միաժամանակ, որ լավ կլինի այդ վնասը հասցնեմ հենց իրեն—կապալառուին:

Եվ ահա մի առավոտ ես, փեշս քար լցրած, մտնում եմ մեր հարևանի պարտեզը, որ ընկած է փողոցի կողքին: Ես գիտեմ երբ է անցնում կապալառուն փողոցով: Մոտավորապես գիտեմ նրա գործի գնալու և վերադառնալու պահերը: Առավոտը, երբ թեյից հետո, խաղում ենք—նա գնում է տնից, իսկ երբ ճաշում ենք վերջացնում—գալիս է ձեռնափայտը ձեռին: Նրա գլխին սպիտակ գլխարկ կա, հագին մոխրագույն պիջակ: Միրուքը նման է կացնի՝ հիմքը նեղ, ծայրը լայն: Երբ քայլում է՝ ձեռնափայտը միշտ թխկացնում է գետնին: Հորից կարճ է ու գեր, և քայլում է միշտ գլուխը կռացրած, կարծես միտք է անում չարունակ:

Մտնելով պարտեզ՝ պահվում եմ նրա մի անկյունում, ուր մորի խիտ թփեր կան ու կանեփներ: Այդ տեղը թե՛ հարմար է և թե՛ ապահով: Հարմար է նրանով, որ փողոցով անցնողը երևում է. ուրեմն կապալառուին կարող եմ տեսնել անցնելիս: Իսկ ապահով է նրանով, որ ոչ-ոք ինձ չի տեսնի. ուրեմն որքան էլ քարեր նետեմ կապալառուի վրա, նա ինձ չի նկատի: Տաս աչք էլ ունենա,—մտածում եմ,—չի տեսնի:

Ու ահա սպասում եմ: Անցնում է բավական ժա-

մանակ. (գուցե մի ժամ, գուցե երկու ժամ, չգիտեմ—ես ժամի մասին գաղափար չունեմ տակավին). փողոցով անցնում են ամեն տեսակ մարդիկ, անցնում են սայլեր, երբեմն ձիավորներ, բայց կապալառուն չկա: Ցանկապատը շատ բարձր չի, և բոլոր անցորդները երևում են ուսերից վեր: Միթե՞ նա անցել, գնացել է մինչ այստեղ պահվելս:

Ու անհանգստությունից ինձ թվում է ժամանակն անցել է արդեն... ամեն մի ոտնաձայնից վեր եմ թռչում, գլուխս բարձրացնում թփերի միջից ու նայում: Նա չկա, դարձյալ չկա:

Կամաց-կամաց հուսահատվում եմ, որ էլ չի գալու, և դրա հետ միասին թուլանում է քարեր նետելու տրամադրությունս: Գնա՞մ արդյոք տուն, թե՞ սպասեմ մի փոքր էլ...

Այս մտածումների մեջ եմ, մեկ էլ ահա խաղաղ փողոցում ձեռնափայտի թխկոց ու... քիչ հետո, երևում է կապալառուի սպիտակ գլխարկը:

Սիրտս սկսում է դողալ կրծքիս տակ, ոտներս նույնպես դողում են, իսկ ձեռներս լարվում: Զգում եմ—վճռական րոպեն մոտենում է. պետք է ցույց տամ քաջություն, պետք է այնպես անեմ, որ նա էլ պառկի հորս նման, կամ մի ծանր վերք ստանա:

Փեշիցս մի քար եմ վերցնում ու սպասում...

Ահա գալիս է նա՝ ձեռնափայտը թրխկացնելով, ու գլուխն երևում է ուսերից հետ:

Ես տատանվում եմ. քցե՞մ քարը, թե՞ չքցեմ:

Նա կամաց-կամաց հավասարվում է ինձ:

Քցե՞մ թե չքցեմ:

Նա անցնում է արդեն... Անհանգստությունը նորից համակում է ինձ.— կերթա, կհեռանա և էլ այսպես հարմար առիթ չի պատահի...

Ես մի փոքր բարձրանում եմ տեղիցս ու քարը նետում... Բայց չի դիպչում: Անցնում է նրա գլխի կող-

քով: Ես այդ լավ եմ տեսնում, և այդ հանգամանքը ոգևորում է ինձ:

Ես նետում եմ երկրորդը, երրորդը, մի քանիսը—իրար ետևից: Հանկարծ նա կանգ է առնում ու ետ նայում զայրացած: Տեսնում եմ նրա չար աչքերի փայլը. ուզում է տեսնել, իմանալ—որտեղի՞ց են գալիս քարերը:

Ես կուչ եմ գալիս կանեփների մեջ, աշխատելով ամեն կերպ մնալ աննկատ, թեև կանեփները երկու իմ հասակին են:

Կապալառուն նայում է այս ու այն կողմ և տեսնելով, երևի, ոչ-ոք չկա, գլուխն օրորում է ու գնում:

Ես անմիջապես վերսկսում եմ իմ «քարապլանուկը»—մե՛կ, երկո՛ւ, երե՛ք... Քարերը թռչում են նրա գլխի վրայից, անցնում են նրա կողքով և կա՛մ ընկնում են փողոցի այն կողմի պարտեզը կա՛մ փողոցը, ու ոչ մեկը նրան չի դիպչում:

Այս անգամ նա ետ է դառնում մի քանի քայլ, նայում դարձյալ աջ ու ձախ: Ես նորից անշարժանում եմ կանեփների մեջ: Իսկ նա դես ու դեն նայելով՝ թըքստում է ու ինչ-որ խոսում ռուսերեն:

Մարդ չտեսնելով՝ նա նորից շարունակում է ճանապարհը: Այդ ես իմանում եմ արդեն նրա փայտի թխկոցից:

Երբ փայտի թխկոցը բավական հեռանում է, ավելի շատ էլ չի լսվում, ես կամացուկ, զգուշությամբ, շուրջս նայելով, դուրս եմ գալիս կանեփներից ու մոխի թփերից և գնում տուն: Գոհ եմ, որ կապալառուին գոնե զայրացրի: Կուզեի, որ քարերը դիպչեին նրա գլխին, կուզեի, որ նրա գլուխը պատռվեր՝ արյուն դուրս գար, կամ քարերը դիպչեին նրա մարմնի որևէ մասին ու մի լավ վնասեին նրան: Բայց քանի որ դա չեղավ, լավ էր գոնե անհանգստացրի, բարկացրի:

Բայց թող սպասի՛: Մենք դեռ կտեսնվենք: Ճաշին տուն վերադառնալիս ցույց կտամ նրան:

Մինչև ճաշ, սակայն, ուրիշ բաներ են պատահում:

Ճաշից առաջ, ես սովորականի պես, բարձրանում եմ մեր գոմի կտուրը, տեսնելու, թե ինչպես են մեծ տղաները աղավնիներ թռցնում: Ինձ դուր է գալիս աղավնիների այդ թռիչքը. սիրում եմ, երբ նրանք վեր բարձրացած՝ սկսում են հանկարծ ցած իջնել՝ իրենց գլխի վրա շուռանալով, կամ երբ թևածելով երկար շրջան են անում տների գլխին, ապա տարվում հեռո՜ւ-հեռո՜ւ, անհայտանում լազուրում և հանկարծ՝ նորից հայտնվում իրենց տերերի գլխավերև: Այս անգամ գոմի կտուրը բարձրանալով՝ նկատում եմ, որ կապալառուի աղջիկներն ու տղան ուրախ խաղում են իրենց բակում: Շեկ մազերով աղջիկները ճերմակ հագած, իսկ տղան՝ ծովայինի կապույտ զգեստով ու գլխարկով:

Նրանց ուրախ, զվարթ խաղը նորից պղտորում է իմ սիրտը. հիշո՞ւմ եմ արդյոք պոկած հորս՝ ցեմենտից կսկծացող խուժ աչքերը թե՞ մորս, որ հաճախ լալիս է կամաց, հորիցս ծածուկ—դժվար է ասել ինչեր են անցնում իմ գլխով. այդ րոպեին ես, առանց երկար մտածելու, գոմի կտրից քարեր եմ հավաքում ու մեկը մյուսի ետևից, նետում նրանց կողմը:

Քարերը Ֆռռում են ու ընկնում նրանց բակը, բայց ո՛չ մեկին չեն դիպչում:

Խաղը սակայն խանգարվում է:

Նրանք շփոթված նայում են այս ու այն կողմ, բայց ինձ չեն նկատում: Ես շարունակում եմ...

Այդ ժամանակ նրանք փախչում-մտնում են իրենց պատշգամբը ու այնտեղից դիտում, թե քարերը ո՛րտեղից են գալիս:

Նկատում են և, իսկույն բակն իջնելով, ճակատամարտն ընդունում. սկսում են իրենք էլ քարեր նետել իմ կողմը:

Աղջիկներն ինձնից մեծ են, իսկ տղան՝ իմ հասակի է, բայց գեր:

Ես գցում եմ, նրանք պատասխանում են: Եվ չնայած նրանք երեքով են, սակայն չեն կարողանում ինձ հաղթել. այսինքն ինձ չափ քարեր նետել: Նրանք չեն կարող ինձ հաղթել նրա համար, որովհետև ես բարձր տեղ եմ—գոմի կտրանը. իսկ նրանք գտնվում են ցած, բակում: Եվ հայտնի բան է քարը վերևից ցած ավելի լավ է նետվում, քան հակառակը:

Բայց նրանք մի առավելություն ունեն, որից ես զուրկ եմ. նեղն ընկած ժամանակ նրանք պատսպարվում են պատշգամբի մոտ գտնվող ծածքի տակ, իսկ ես պահվելու տեղ չունեմ: Նրանց քարերից պաշտպանվելու համար կռանում եմ միայն, կտրանը կպչելու աստիճան: Բայց չեմ դադարում և շարունակ քարեր եմ նետում նրանց վրա... ու, վերջապես, նրանց փախցնում եմ տուն և ինքս իջնում փողոց:

Բայց քիչ հետո նրանք նախահարձակ են լինում:

Փողոցով անցնելիս՝ կապալառուի փոքր աղջիկը դարբասի դռնից փայտի մի կտորով խփում է մեջքիս ու դուռը փակում:

Դա բավական է լինում: Անմիջապես քարեր եմ հավաքում փողոցի խճերից և, փեշս լցնելով, կրկին բարձրանում գոմի կտուրը:

Ու նորից սկսվում է տաք քարակռիվը:

Քարերը երկու կողմից անվերջ գնում են գալիս: Բայց զարմանալի բան,— չեն դիպչում ոչ իմոնք նրանց, ոչ նրանցը ինձ: Ասենք նրանք ամեն մի քար նետելիս՝ իսկույն մտնում են ծածքի տակ, իսկ ես կռանում եմ, կամ քաշվում գոմի մյուս ծայրը, որ չի երևում նրանց բակից:

«Քարապրանուկը» տևում է բավական երկար. իմ քարերը նորից հատնում են և ես, ստիպված նորից իջնում եմ փողոց քարեր առնելու:

Իմ հակառակորդները նկատում են այդ և, դարբասի դռան մոտ գալով, նետում են իմ կողմը ի՛նչ ձեռներն է ընկնում—քար, փայտի կտոր, տաշեղներ,

կոտրած ափսեներ... Ես պատասխանում եմ նրանց՝ բառերով խիճ շպրտելով... Ձեռներով հավաքում եմ փողոցի ավազն ու մանր խիճը և, առանց գոմի կտուրը բարձրանալու, շպրտում նրանց կողմը: Կռիվը երբեմն ընդունում է կատաղի բնույթ. այնպիսի արագությամբ ենք գործում, որ իրար երես չենք տեսնում...

Վերջապես, այդ բոլորը վերջանում են նրանով, որ հանկարծ լսվում է մի սուր ճիչ:

— Մամա՜...

Իմ նետած քարերից մեկը դիպչում է կապալառուի տղային. նա վեր է ընկնում, հետո լաց լինելով քույրերի օգնությամբ գնում տուն:

Ես ցնծում եմ իմ հաղթությամբ, ու, անմիջապես, կռվի վայրը թողնելով, ուրախ–ուրախ վազում եմ տուն:

Վերջապե՜ս... Դե՛, թող գնան հիմա... Հպարտանում, պարծենում եմ ինքս ինձ և ուզում եմ մորս պատմել, թե ի՛նչ քաջագործություն եմ արել, բայց վախենում եմ. նա այնպես չի սիրում, որ դուրսը՝ երեխաների հետ չարություն եմ անում:

Չնայած դրան, այնուամենայնիվ որոշում եմ պատմել թե՛ մորս և թե՛ հորս. թող նրանք էլ ուրախանան: Բայց չի հաջողվում. մայրս այդ րոպեին խոսում է մի կնոջ հետ, որ եկել է հորս տեսնելու:

Ու մինչ մայրս զրուցում է, ես ուրախ–ուրախ դուրս ու ներս եմ անում, ինքս իմ արածի վրա հիացած:

Վերջապե՜ս... Դ՛ե, հիմա գնացեք...

Ես ինձ զգում եմ հաղթական. բարձրանում եմ ինքս իմ աչքում և որոշում եմ՝ կապալառուի աղջիկներին էլ խփել, իրեն կապալառուին էլ:

Սակայն իմ այդ ուրախությունը երկար չի տեվում:

Հանկարծ մեր դուռը ծեծում են: Մայրս դուրս է

գնում իմանալու ո՛վ է, և ես լսում եմ մեր գզիր Ասատուրի ձայնը.

— Մանասի թոռն ո՞ւր ա,— ասում է նա:

—Թոռը՞, թե՞ տղան,—հարցնում է մայրս, հավատացած լինելով, որ գզիրը հորս է հարցնում:—Հիվանդ պառկած է...

— Ես էդ գիտեմ,—ասում է գզիրը,—ես տղին չեմ ուզում, թոռն եմ ասում: Սուրենը քո տղա՞ն է,—շարունակում է գզիրը:

Ես դողում եմ և լռությունս լարում:

Հայրս նույնպես, մեջքի վրա պառկած, աչքերը կիսախուփ, հետաքրքրված շարժում է անում ու ականջ դնում:

—Իմ տղան է,—պատասխանում է մայրս անհանգիստ:—Ի՞նչ կա որ:

— Հեչ. կանցիլարում կանչում են:

— Կանցիլարո՛ւմ,— զարմանում է մայրս:— Նա կանցիլարում ի՞նչ գործ ունի... Սխալ կլինես, ախպեր. գուցե հորը՝ Ներսեսին են կանչում:

Գզիրը նեղանում է:

— Է՛, ես Ներսեսին չեմ ճանաչո՞ւմ:—Ինձ ասել են Ներսեսի տղա Սուրենին բեր:

Ես դողում եմ և գնում դեպի հայրս:

Իսկ մայրս չեմքում, բան չհասկանալով, տաքանում է:

— Ախր էն բեխան ի՞նչ գործ ունի կանցիլարում:

— Ինչ թե ի՛նչ գործ ունի,—ձայնը բարձրացնում է գզիրը:— Տվել է փողրադչու էրեխու գլուխը ճղել— գործ չունի՞...

Շուրթերս խաղում են, ատամներս դիպչում են իրար, և ես ավելի եմ մոտենում հորս:

— Փողրադչու...

«Ուրեմն բոլորն իմացել են և գնացել գանգատվել:

Հիմա ի՞նչ պիտի անեմ,—մտածում եմ ես:—Զլինի՞
քարն այնպես է դիպել, որ գլուխը ճզմել և վտանգա-
վոր:Ի՞նչ պիտի լինի:Ինչո՞ւ համար են ինձ կանչում»:
Ես ավելի եմ դողում:
— Լավ. ի՛նչ կա որ. խփել է՝ դրա համար կանցի-
լյա՞ր եք կանչում,— բարկանում է մայրս:— Բեխան՝
բեխուլթյուն է արել: Բա որ նրա հերը, էդ մեռած
փողրադչին մարդուս աչքերը կուրացրել է, խի՞ նրան
չեք կանչում...
— Էդ իմ բանը չի,—ասում է գզիրը,—տանուտերը
ինձ ղարկել է տղիդ ետևից: Թե տա՞նն է, տաս՝ գա:
Ես տագնապած նայում եմ հորս երեսին, տեսնե-
լու ինչպես կվերաբերվի նա այս բանին:
Հայրս սաստիկ անհանգիստ է. արտևանունքները
թարթում է չուտ-չուտ, ասես ուզում է աչքերը բա-
նալ. բայց թոնթորում է ինչ-որ ու ձայն տալիս գզի-
րին.
— Աստտո՛ւր, արի էստեղ:
Գզիրը մտնում է ներս:
Հայրս, աչքերը փակ, բացատրում է նրան, որ ին-
քըն ինձ կթողնի այն պայմանով, եթե միայն գզիրն
ինքը չի թողնի ինձ ծեծեն կամ վախեցնեն:
Բայց մայրս այլ կարծիքի է. նա ասում է, որ ինձ
երբեք մենակ չի թողնի, և ինքն էլ կգա: Նա թեև գի-
վանատուն և նման տեղեր չի գնում երբեք, որովհետև
սովորություն չի, որ մարդատեր կինը գնա այդպիսի
տեղեր, բայց այս անգամ մայրս նշանակություն չի
տալիս այդ սովորության: Շալը վերցնում է, ձեռս
բռնում և դառնում գզիրին, որ ճիպոտը ձեռքին կանգ-
նել է սենյակի մեջտեղը:
— Գնա՛նք:
Գզիրն առաջ է ընկնում, իսկ ես մորս ձեռը բռնած,
գնում եմ դողալով:— Գզիր, տանուտեր, պրիստավ,
կանցիլար—այդ բոլորն ինձ սարսափ են ազդում. բո-
լորն ինձ թվում են ամենակարող մարդիկ, որ ինչ ու-

զեն կարող են անեն: Ես լսել ու տեսել եմ, թե ինչպես
են նրանք մարդիկ բռնում, ծեծում, բանտարկում:
Մայրս ինձ միշտ վախեցնում է գզիրով... Ինքս էլ
տեսել եմ թե որքա՛ն չար են գզիրները... մի անգամ
նրանք տարան մեր հարևանի կարպետն ու սամա-
վարը: Զնայած մեր հարևանի կինը լաց էր լինում,
կախ էր ընկնում կարպետից ու սամավարից, բայց
նրան չէին լսում. հրում էին, ձեռներին խփում, որ
պոկվի...
Ես գնում եմ և ճանապարհին պատահող տղանե-
րին, աղջիկներին նախանձում, որ խաղում են իրենց
համար, որ նրանց կանցիլար չեն կանչել: Վախի հետ
միաժամանակ մտածում եմ և իմ ինքնապաշտպանու-
թյան մասին: Եթե հարցնեն. «ինչո՞ւ ես խփել»,—կա-
սեմ. «Նրանք երեքով ինձ էին քար քցում,ես էլ նրանց
քցեցի»: Իսկ եթե ասեն՝ «հապա պատճառն ի՞նչ է, որ
դու քար ես քցել և իրա՝ փողրադչու վրա»... Չէ՞ որ
հիմա ամեն ինչ հայտնի կլինի նրան: Ի՞նչ պիտի պա-
տասխանեմ: Եվ որոշում եմ այդ հարցին անվախ պա-
տասխանել. «Լավ եմ արել. բա ինչո՞ւ է նա իմ հոր
աչքերը ցեմենտ լցրել»...
Քայլում ենք, և ես զգում եմ, որ մայրս նույնպես
անհանգիստ է, այլայլված. Նրա ձեռը, որով բռնել է
իմ թաթը, դողում է:Ես չգիտեմ ի՛նչ է մտածում նա,
բայց վստահ եմ, որ նա ինձ կպաշտպանի, նրա ներկա-
յությամբ ես ինձ լավ կպահեմ և անվախ պատասխան-
ներ կտամ: Լավ է, որ մայրս հետս է :
Ահա և կանցիլարը: Մեծ քարե շենք՝ բազմաթիվ
լուսամուտներով : Հենց դրսի աստիճանների գլխին
մեզ հանդիպում է մի թուխս՝ փոքրիկ ճուտերով շըր-
ջապատված: Մեզ տեսնելուն պես՝ թուխսը թեվերն
ուռցնում է և ընկնում միջանցքը՝ ահագին աղմուկով
ու ճուտերին կանչելով: Այդ հավի ճուտերն էլ ինձ
թվում են երջանիկ. Նրանց տանուտերի մոտ չեն տա-
նում. ուր ուզեն կարող են գնալ հիմա: Բայց ես...

Միջանցքից մտնում ենք մի երկար սրահ․ փայտե երկար, թիկնակով նստարաններին նստած են գյուղացիներ՝ փափախները ծնկներին դրած։ Սրահի վերի մասում նստած են տանուտերը՝ դեղին շղթան վզին, և ակնոցով մի մարդ, որ գրում է գլուխը կախ։ Ես տանուտերին ճանաչում եմ․ նա ամեն օր անցնում է մեր փողոցով մի ձեռնափայտ ձեռին։ Նրան տեսնելիս՝ միշտ վախ եմ զգում, որովհետև նա այնպես խիստ է խոսում մարդկանց հետ և երբեմն այնպես է բարկանում։ Օ՜օ՜օ՜...

Գյուղացիներից դենը՝ առաջին նստարանին նստած է լավ հագնված մի կին։ Ես նրան անմիջապես չեմ նկատում, որովհետև գյուղացիները ծածկել էին նրան։ Բայց երբ նկատում եմ՝ ճանաչում եմ իսկույն և ինձ ավելի վատ եմ զգում։

Կապալառուի կինն է՝ իր տղայի հետ․ տղան էլ է փոխված․ նրա գլուխն ամբողջ կապված է սպիտակ վիրակապով։ Ուրեմն բերել է ցույց տալ և գանգատվել։

Այո, ես այդպես էլ կասեմ․—«նրանք ինձ էին խփում, ես էլ նրանց խփեցի»։

Երբ մորս հետ մտնում եմ ներս և բոլորը նայում են մեզ, մայրս քայլերը դանդաղեցնում է։

— Առա՛ջ արի,—ասում է գզիրը։

Մայրս ձեռս բռնած, կամաց-կամաց առաջ է գնում և, դեռ նստարաններին չհասած, կանգ է առնում։

Տանուտերը աչքերը հառում է ինձ և մորս վրա։ Այդ ժամանակ փոդրադչու կինն էլ նայում է մեզ՝ զայրացած աչքերով։

Ես կպչում եմ մորս փեշին։

— Պատի՛կ, առաջ արի,— ասում է տանուտերը ինձ՝ մի տեսակ հաստ, հրամայական ձայնով։

Մայրս առաջ է հրում ինձ ու ինքը կանգնում իմ

ետև։ Այդ ինձ դուր է գալիս․ լավ է, որ ինձ մենակ չի թողնում։

Իսկ տանուտերը՝ շղթան վզին, կռանում է սեղանի վրա, նայում է ինձ ու հարցնում․

— Դո՞ւ ես Սուրենը։

Ես, աչքերս հատակին, գլխով եմ անում։—Այո։

— Էս տղի գլուխն ի՞նչու ես ճղել,—ասում է նա բարկացած ու ձեռը դեպի կապալառուի տղան մեկնելով։

Այս անգամ ես հոնքերիս տակից նայում եմ տանուտերին, նայում եմ նրա կողքին նստած ակնոցով մարդուն (որ գրելը թողել՝ նույնպես դիտում է ինձ), —նայում եմ մի ակնթարթ կապալառուի կնոջն ու իր՝ գլուխը կապած տղային և հանկարծ,—օ՛, խայտառակություն,—մորս փեշին փաթաթվելով լաց եմ լինում։

Չգիտեմ՝ տանուտերի ձեռնափա՞յտն եմ հիշում, գրագրի ակնո՞ցն է ահազդու, կապալառուի կնոջ դե՞մքն է զայրացկոտ, թե՞ շրջապատն է օտարոտի,— ես չեմ կարողանում ինձ պահել, լաց եմ լինում ու... խայտառակվում ինձ։

Բայց մայրս իրեն չի կորցնում․ նա սկսում է անմիջապես հանդիմանել տանուտերին, թե ինչո՛ւ հապա նա չի պատժում կապալառուին, այդ կնոջ մարդուն, որ հորս աչքերը կուրացրել է և մեզ զրկել ապրուստից, իսկ հիմա—երկու երեխա գիպել են իրար—իսկույն կանչել է մեզ։

— Ամո՛թ է,—ասում է մայրս և դառնալով հպարտ նստած կապալառուի կնոջը, հայերեն ու ռուսերեն խոսքեր է ասում բարկացած, բռունցքը թափ տալով։ Նրա բոլոր ասածներից ես այնքան եմ հասկանում միայն, թե երեխայի գլուխ պատռելը քիչ է, դեռ նրա մարդու աչքերը պետք է իր ձեռով հող ու մոխիր լցնի, որ նա էլ հորս նման կուրանա և մնա տանը պառկած։

Կապալառուի կինը, հանկարծակի եկած, աչքերը ճպճպացնում է չարունակ, և ինձ թվում է նա վախից

է այդպես անում. բայց տարիներ անց իմանում եմ, որ նա ոչինչ չէր հասկանում մորս ռուսերենից և չգիտեր, որ մարդը՝ հորս կուրացրել է ցեմենտով:

Մայրս երևի երկար պիտի խոսեր, բայց գզիրը շուտով բռնում է նրա թևը, և դուրս բերում կանցելարից:

Ես հետևում եմ մորս:

— Կամանց, կամանց,— ասում է գզիրը,— դու չես իմանո՞ւմ, որ փոդրադչին թագավորական մարդ է:

— Բա մենք շո՞ւն ենք— ասում է մայրս:— Մենք էլ մարդ ենք...

Եվ մինչև տուն մորս բարկությունը չի անցնում, իսկ տանը պարծանքով պատմում է հորս, թե ինչպես է «շշպրել» տանուտերին և «էն ռուս մաթուշկին»:

Իսկ երեկոյան, երբ հայրս քնում է, նա դարձյալ հուզված խոսում է կապալառուի մասին. ասում է, որ ռուս կապալառուները միշտ այսպես են. ամեն տեսակ վատ բան են անում և նրանց չեն պատժում, որովհետև նրանք թագավոր ունեն:

— Իսկ մենք անտեր ենք, անտե՛ր,— կրկնում է նա:

«Անտեր» բառի մեջ ես մի ամբողջ ողբերգություն եմ զգում. գիտեմ, որ «անտեր» որբն ու երեխան քաղցած է մնում ու մերկ, իսկ «անտեր» տունը փլվում է, ինչպես մեր թաղում այդ օրերը փլվեց մի տուն, որին Բաղոյանց «անտեր» տուն էին ասում: Ինչ վերաբերում է «թագավորին»,— ես երկար մտածում եմ, թե ի՛նչ բան է «թագավոր», և ինչո՞ւ ուրիշներն ունեն, իսկ մենք չունենք:

— Բա ի՞նչու մենք թագավոր չունենք, մայրիկ,— հարցնում եմ ծայր աստիճան հետաքրքրված:

Իմ հարցին, իբր պատասխան, մայրս անում է մի զարմանալի պատմություն, որ ամբողջովին կլանում է ինձ:

— Թագավո՛ր... մենք էլ, իհարկե, ունեցել ենք. բայց հիմա էլ չկան: Նրանցից մնացել է միայն մի տղա, մի փոքր, քու չափ պստիկ տղա. դրան էլ կաթողիկոսը տարել-պահել է հեռու մի գեղում, մինչև մեծանա...

Իսկ երբ մեծանա, մորս ասելով, մեր երկիրը պիտի ազատի, աղքատներին ոսկի ու արծաթ պիտի բաժանի և անիրավներին պատժի:

«Այդ լավ է,— մտածում եմ,— փադրադչուն էլ կպատժի, որ էլ մարդկանց աչքերը ցեմենտ չլցնի»: Բայց, մորս ասելով, այդ պստիկ տղին թագուն պահում են նրա համար, որ թշնամիները չտեսնեն, որովհետև աչքերից, դեմքից կհասկանան ո՛վ է:

— Ու չներն էլ իրա մսից են,— ասում է մայրս:

Այդ արդեն շատ զարմանալի է— «չներն իրա մըսից»:

Ես գիտեմ ինչ բան են չները: Դրանք այն պսպղուն, գեղեցիկ բաներն են, որ կան պրիստավի, աֆիցերների և մեծավոր մարդկանց ուսերի վրա: Բայց միթե՞ չները կարող են մսից լինել,— մտածում ես և եզրակացնում, որ թագավորներինը, երևի, այսպես է լինում. թագավորի տղաները, երևի չներով են ծնվում...

Ու այդ օրն անկողին եմ մտնում, մտածելով թագավորի այդ փոքրիկ տղայի մասին, որի չները իրա մսից են: Հանկարծ իմ ուսերին էլ այդպիսի չներ դուրս գա՞ն... Այս մտքերով էլ քնում եմ: Իսկ առավոտը, երբ զարթնում եմ, նորից հիշում եմ թագավորի տղային և ձեռս տանում եմ ուսերս, տեսնեմ— չներ չե՞ն դուրս եկել արդյոք...

IV

ՋԱՔԱՐ ՎԱՐԺԱՊԵՏԻ ԴՊՐՈՑԸ

Մեր տանը նորից վեճ կա:

Եվ այդ վեճի առարկան դարձյալ ես եմ: Մայրս ու հայրս ամեն երեկո խոսում են ինձ դպրոց տալու մասին: Մայրս պահանջում է, որ հայրս շուտով դըպրոց տանի ինձ, որովհետև ուրիշները՝ իմ հասակի տըղաներն ու աղջիկներն արդեն գնում են սովորելու: Իսկ հայրս առաջարկում է՝ սպասել մի քիչ, մինչև կալը կվերջացնի. իսկ կալից հետո պատճառ է բերում դարմանը, կարտոֆիլը: Եվ մայրս բարկանում է: Ու դարձյալ վիճում են այն մասին, թե վո՞ր դպրոցը տան ինձ,—ռուսա՞ց դպրոցը, թե՞ ուրիշ մի տեղ: Եվ երկար չեն կարողանում ընտրություն անել:

Բայց նրանց վեճից ես իմանում եմ, որ եղել են հայոց դպրոցներ, և որ այդ հայոց դպրոցները փակվել են ռուս թագավորի հրամանով ու նրանց տեղ բաց են արել ռուսաց դպրոց: Հիմա ուրեմն ռուսաց դպրոց կա միայն. կան նաև երկու վարժապետ ու մի տերտեր, որ աշակերտներ են սովորեցնում թաղում: Եվ դրանցից մեկը Ջաքար վարժապետն է, որ նոր է եկել: Մայրս լսել է, որ նա ա-

մենակյացն է, որովհետև ճեմարանում է եղել և տերտերից էլ լավ է սովորեցնում:

Որովհետև խոսում են իմ մասին, ես նրանց լսում եմ խորին ուշադրությամբ, բայց նրանց ասածներից մի քանի բան չեմ հասկանում. օրինակ, թե ինչու է թագավորը փակել հայոց դպրոցները, ի՞նչ է նշանակում «ճեմարան» և ինչո՞ւ հայոց դպրոցների փոխարեն բաց են արել ռուս դպրոց:

— Որ ռուս դառնա՛նք.—բացատրում է մայրս:

Ես այդ էլ չեմ հասկանում: Ի՞նչ կա որ, եթե ռուս դառնանք, մենք էլ «փոդրադչու» նման լավ տուն կսարքենք և նրա երեխաների պես լավ կհագնվենք: Իսկ ինչ վերաբերում է «ճեմարանին»—այդ ինձ համար մնում է մութ:

Վերջապես, որոշում են տանել ինձ Ջաքար վարժապետի «դպրոցը»: Ընկերս՝ մեր հարևան խանութպանի տղա Սամսոնն արդեն գնում է նրա մոտ: Գնում է միշտ լավ հագնված, մի գիրք կռնատակը դրած. և մայրս, ամեն անգամ նրան տեսնելիս, անհանգստանում է.

— Վա՜յ, կուրանամ ես, Սուրեն ջան, նա գնաց մարդ դառավ, դու մնացիր չոբան:

Ու ծնկանը խփում, դարդ է անում, իսկ երեկոները հանգիստ չի տալիս հորս.

— Այ մարդ, շուտ, խալխի բեխեքը մարդ դառան, մերը մնաց չոբան:

Եվ հայրս միշտ պատասխանում է.

— Լավ, լավ. թող կարտոլն էլ հանեմ—հետո:

Հայրս առհասարակ զգացումներ չի արտահայտում. անտեղի, անկարելի բաներ չի խոստանում, բայց ինչ որ խոստանում է—կատարում է: Այս անգամ էլ այդպես. հենց որ գետնախնձորը հանում բերում է տուն—մյուս օրն ինձ տանում է Ջաքար վարժապետի «դպրոցը»:

— Խելոք կմնաս,— ասում է մայրս, հագուստներս ուղղելով ու ճանապարհ դնելով.— ինչ որ ասի՝ կսովորես, ոչ մի բան բաց չթողնես...

Ես գլխով եմ անում. այո, ոչ մի բան չեմ թողնի, և ուրախ եմ, որ գնում եմ այն դպրոցը, ուր Սամսոնն է գնում: Այդ լավ է, միասին կերթանք, միասին կըգանք, կռվի ժամանակ միասին կպաշտպանենք իրար,— մտածում եմ ես ճանապարհին:

Զաքար վարժապետի դպրոցը՛... Ես երբեք չեմ մոռանա քեզ, իմ առաջին պանսիոն, և քեզ, իմ առաջին ուսուցիչ՝ Զաքար վարժապետ: Չեմ մոռանա և քո աներոջը՝ տեր-Բաղդասարին, որ իր հետաքրքիր հարցերով միջամտում էր մեր դասերին, և զոքանչին քո՝ երեցկնոջը պառավելի, որ քո փոխարեն նկատողություններ էր անում մեզ:

Զաքար վարժապետի դպրոցը՛... ներս մտնելու համար՝ իջնում ենք երկու-երեք աստիճան. կիսագետնափոր սենյակ է՝ քառակուսի լուսամուտներով. մի կողմը՝ արկղների ու սղոցած կարճ կոճղերի վրա շարված են հասարակ երկար տախտակներ՝ մեկը բարձր, մյուսը ցածր: Նույնպիսի երկար մի տախտակ ամրացած է պատին՝ թարեքի պես, և նրա վրա կան ինչ-որ մանրիկ խորանարդներ, որ առաջին պահ խաղալիքներ են թվում ինձ: Ես սկզբում զարմանում եմ. սենյակի մեջ այդքա՞ն տախտակ և այդքա՞ն խաղալիք թարեքին—ինչո՞ւ համար են: Բայց հետո պարզվում է, որ դրանք «սեղաններ ու նստարաններ» են աշակերտների համար. իսկ մանրիկ խորանարդները՝ տառեր: Ամեն մի խորանարդի յուրաքանչյուր կողմին տպված է մի տառ. այսինքն ամեն մեկի վրա վեց տառ:

«Դպրոցը» գետնահարկ է, որովհետև, ինչպես ասում են, վերի հարկը դեռ չի շինված. հատակը հող է, պատերը տակավին անսվաղ. քարերը երևում են. բայց պատերին կախված են զանազան պատկերներ և

մի սև տախտակ, որի վրա կավիճով ինչ-որ բաներ են գրված:

Այս բոլորից բացի սենյակում կան թախտեր, հացի մեծ պահարան և ուրիշ իրեր: Վառ շորեր հագած, ուրախ ուխտավորի նման մի բարձրահասակ սիրուն աղջիկ, մի խումբ բանալիներ ձեռին, թևերի սուրմաներն ու բանալիները զնգզնգացնելով դասի ժամանակ գալիս է, պահարանը բանում, չոր լավաշները ձեռներին դրած տանում, կրկին սուրմաներն ու բանալիները զնգզնգացնելով: Ներս մտնելիս՝ հողը կարծես թնդում է նրա ոտների տակ և «դպրոցը» լցվում է ուրախությամբ: Դժվար է ասել ինչի՛ց է այդ,—նրա զվարթ շարժումների՞ց, թե՞ սուրմաների զնգզնգոցից,—բայց մենք ուզում ենք, որ նա շուտ-շուտ ներս մտնի, որովհետև Զաքար վարժապետը որքան էլ տխուր ու մռայլ լինի, նրան տեսնելիս մեղմանում է իսկույն ու ժպտում. նրա դեմքը պայծառանում է այնպես...

Դա Զաքար վարժապետի նշանածն է:

Իսկ ինքը Զաքար վարժապետը, բարձրահասակ, փոքրիկ փափուկ մորուքով մարդ է. կապույտ վերնաշապկի վրա կապում է գոտի, որի ծոպավոր ծայրերը կախվում են նրա վարտիքի գրպանի վրա, որտեղից շուտ-շուտ հանում է նա եզրերը կարմիր թելերով ասեղնագործած թաշկինակը և սրբում հոգնած ճակատը:

Զաքար վարժապետը նոր է նշանվել տերտերի աղջկա հետ, և որովհետև, ասում են, գործ, պաշտոն չունի՝ «դպրոց» է բաց արել: Եվ մենք—20-ից ավելի երեխաներ — խելոք նստում ենք նրա առաջ, լսում նրա դասերը և նայում, թե ի՛նչ է կատարվում դուրսն ու սենյակում: Եվ սենյակում երբեմն դասերից ավելի հետաքրքիր բաներ են լինում:

Թախտերից մեկը մեծ է, շատ մեծ. նա բռնում է սենյակի համարյա մի ամբողջ անկյունը, և ավելի է զարդարված, քան մյուսը. վրան կա մի վառվռուն

գորգ, որի մի ծայրը փռված է գետնին, կան և մինդարներ, և բարձեր ու մութաքաներ՝ խաս երեսներով: Հաճախ տերտերակինը՝ կարմրերես ու կլորիկ մի կին՝ գալիս նստում է այդ փափուկ մինդարների վրա և, մեջքը մութաքաներին տված գուլպա է գործում: Իսկ տերտերը երբեմն, թիու նման միրուքը կրծքին, նրա կողքին նստում, լրագիր է կարդում, կամ, մեծ մասամբ ձեռները կապայի գրպանը դրած, գնում-գալիս է թախտի առջև, գորգի վրայով: Եվ այդ ժամանակ նրա միրուքը տմբտմբում է. թվում է տերտերը խոսում է մտքում կամ աղոթք է ասում: Բայց ինձ զարմացնում է այն, որ տերտերը փարաջան հանում է. ինձ միշտ թվում էր, որ տերտերները երբեք փարաջա չեն հանում և որ այդ փարաջայի տակ նրանք կանացի դերյաներ են հագնում. բայց պարզվում է, որ փարաջայի տակ նա կապա է հագնում և վարտիկ. ուրեմն տերտերը այն չի, ինչ կարծում էի մինչև հիմա, թե նա կիսով չափ պապի է, կիսով չափ տատի: Ոչ, տերտերն ավելի մարդու է նման, քան կնոջ,—եզրակացնում եմ ես, և այնուամենայնիվ գտնում եմ, որ տերտերի մեջ դարձյալ կանացի մի բան կա: Եվ ահա դրանց՝ տերտերի և երեցկնոջ ներկայությամբ տեղի են ունենում մեր դասերը:

Վարժապետը վերցնում է թարեքին շարված խորանարդներից մեկը և, մատը տառերի վրա դնելով, հարցնում է.

— Սա ի՞նչ է:

Աշակերտները պատասխանում են. «Ա, կամ Բ, Դ, կամ Գ»... Պատահում է աշակերտի մեկը սխալվում է և Բ-ին Դ է ասում կամ հակառակը:

— Չէ, այդ չեղավ,— ասում է վարժապետը:— Լավ նայիր:

Աշակերտը նայում է և դարձյալ սխալվում:

— Այ, տեսար, էլի սխալվեցիր:

Տերտերակինը, որ գուլպան գործելով՝ միաժամա-

նակ ժպտերես հետևում է մեր դասերին, հանկարծ գլուխն օրորում է.

— Ժամհարանց չաչերից է, հալբաթ որ կխալվի,—ասում է նա դժգոհ:—Դրանցից ո՞վ է մարդ դառել, որ դա դառնա:

Վարժապետն անհարմար է զգում կարծես, որ իրեն խանգարում են, բայց ոչինչ չի ասում, չկամենալով զոքանչին վիրավորել:

Բայց, փոքր անց, երեցկինը նկատողություն է անում մի ուրիշ սխալվող աշակերտի.

— Այ տղա, էյ՛, խելքդ գլուխդ հավաքի, կարգին սովորիր, որ հետո չասեն, տերտերանց փեսան բան չի սովորեցրել...

Երբեմն էլ տերտերն է միջամտում: Կանգնում է նա ձեռները կապայի ետև դրած. աչքերը կարճատեսի պես կկոցելով՝ նայում է սխալվող աշակերտներին և հարցնում.

— Դու ումոնցի՞ց ես, տղա:

— Մանասանց Ներսեսի տղան եմ,—ասում եմ ես մի անգամ:

— Ներսեսի՞,—զարմանում է տերտերը:—Ա՛յ քեզ բան: Իսկի չէի ճանաչի, եթե չասեիր: Ուրեմն Մանասի թո՞ռն ես:

— Հա,—ասում եմ ես:

— «Հա» չեն ասիլ, անշնորհք,—նկատում է երեցկինը, գլուխն օրորելով:—Ասա «այո»: Աշակերտ ես, ամոթ է. կկարծեն տերտերանց փեսան լավ չի սովորեցնում:

Վարժապետը լռում է մի վայրկյան, թեթև դժգոհությամբ ու կիսախեթ նայում է զոքանչի կողմը և ապա շարունակում դասը:— Մեկին կարդացնում է, մյուսին թվաբանական խնդիր է առաջարկում, երրորդին սովորեցնում է տետրակի մեջ գրել իր անուն-ազգանունը... Աշակերտների պատրաստականությունը տարբեր է, ուստի դասերն էլ տարբեր են: Այստեղ

կան ամեն հասակի տղաներ—տասնըհինգից մինչև յոթ տարեկան· և բոլորը նստում են միասին—փոքրերն առաջ, հասակավորները վերջին շարքերում: Եվ որովհետև ես համարյա բոլորից փոքր եմ՝ նստել եմ առաջին նստարանին ու այդ հանգամանքի շնորհիվ, ավելի լավ եմ հետևում ուսուցչի շարժումներին և նայում նրա փնջավոր գոտուն, որի ծայրերը շարունակ ծեծում են նրա ազդրը· այդ գոտին ինձ շատ է դուր գալիս· նայելով դրան՝ շարունակ մտածում եմ—երբ մեծանամ, ես էլ մի այդպիսի գոտի կառնեմ—կկապեմ:

Դասերը տևում են երկու ժամ: Ընդմիջումներին խաղում ենք բակում, որ պարտեզից բաժանված է գետնին զարսած գերաններով: Խաղից հոգնելիս՝ նստում ենք այդ գերանների վրա ու նայում աշնան պարտեզին, ուր մի քանի խնձորենիներ դեռ կռացած են խնձորներով: Դրանք ձմեռվա խնձորներ են· Իրիցկինը, ինչպես ինքն է ասում, թողնում է «եղյամ ուտեն»:

— Հը, ի՞նչ եք աչքներդ չորս արել,—ասում է նա, տեսնելով ինչ ցանկությամբ ու կարոտով ենք նայում աշնան արևի տակ փայլող խնձորներին:—Չտեսնեմ, չլսեմ մի խնձոր քաղեք· թթուի համար է... Գերանների էս կողքին կարող եք խաղալ, համա դենը՝ մի շաղ չանեք· ոտներդ կկոտրեմ: Իսկ քաղելու ժամանակ ամենքիդ մի հատ կտամ, որ աչքներդ վրեն չըմնա:

Եվ ամեն անգամ դասամիջոցին կամ տուն գնալիս Իրիցկինը դուրս է գալիս բակը նայելու, թե հո պարտեզ չենք մտնում:

Տուն վերադառնում ենք ես ու իմ ընկեր Սամսոնը միասին և միասին էլ դաս ենք սովորում կա՛մ նրանց տանը, կա՛մ մեր: Մայրս սիրում է, երբ մենք կարդում ենք գիր կապելով: Նա հրճվում է, որ ես տառերի անունը տալիս եմ մեկ-մեկ: Մայրիկս ինքը գիտի կարդալ· հենց որ սխալվում եմ,—ուղղում է, և տանը

ոչ մի գործի չի դնում ինձ, ոչ մի բանի չի ուղարկում, ինչպես անում էր առաջ· ամեն բան ինքն է անում, որ դասերս չթողնեմ·

— Դու կարդա՛, կարդա՛, որ էշուց ամոթով չմընաս:

Հայրս նույնպես հրճվում է իմ առաջին թոթովանքներով· այդ մռայլ, անժպիտ մարդը, օրվա հոգսերից ու աշխատանքից դադրած՝ ցնծում է, երբ գիր կապելով՝ ասում եմ· «ա—սա, ա—րա, ա—րի»...

— Այ, կեցցե՛ս, ասում է նա,—սովորիր, որ թըշնամուդ աչքը հանես, որ ապրես, թե չէ քեզ էլ կուրորեն մեզ պես:

Թեև չեմ հասկանում ի՛նչ է նշանակում «թշնամու աչքը հանել», բայց թշնամին համարում եմ հորեղբորս, և, հորս խոսքերից ոգևորվելով, ձայնս ավելի եմ բարձրացնում·

—Ս—ա—ր=սար: Տ—ա—ր=տար... Մ—ա—ս—ի—ս=Մասիս:

— Այ, կեցցե՛ս... Մասիսն ի՞նչ ա,—հարցնում է հայրս:

— Սար,—պատասխանում եմ ես, վարժապետից սովորած խոսքերով:

— Կեցցե՛ս, ճիշտ ա՛:

— Բա ի՞նչ ես կարծում,—հպարտանում է մայրս,—ուրիշի բեխանց պես անհասկացող հո չի:

— Հը՛,—խնդում է հայրս, նույնպես հպարտությամբ:—Ո՞ւմ տղան է, որ անհասկացող ըլի:

Մայրս շուրթերը սեղմում է և գլուխն օրորում·

— Չլինի՞ ուզում ես ասել, որ ձե՛զ է քաշել:

— Բա ո՞ւմ է քաշել,—նեղանում է հայրս, ձայնը փոքր ինչ բարձրացնելով:—Չլինի՞ կարծում ես հերանցդ:

— Իհարկե,—հպարտանում է մայրս:

— Բա որ վատ բան է անում, ինչո՞ւ ես ասում «ձեզ է քաշել»:

— Իհարկե, վատ կողմով ձեզ է քաշել, լավ կողմով՝ մեզ,—շարունակում է մայրս:

Հայրս տաքանում է.

— Ուզում ես ասել, ուրեմն՝ մենք վատ ենք, քո հերանք՝ լա՞վ:

— Իհարկե. իմ հերն իր տղերանցը չի գրկում. իմ հերը պաչոտնի մարդ ա, օխտը գեղի գլավա...

Ու սկսում են վիճել... Երբեմն վեճն այնպիսի ընթացք է ստանում, որ նրանք վիրավորում են իրար ու խռովում: Բայց մեծ մասամբ հեգնում են միմյանց, ծիծաղում իրար վրա և նորից դառնում իրենց հոգսերին:

Իսկ ես, նրանց զրույցը լսելով, կրկնում եմ դասերս, որ Սամսոնից լավ պատասխանեմ, որ վարժապետը քանոնով ձեռքս չխփի և իրիցկինը մինդարի վրայից ինձ նկատողություն չանի: Ես ոչ այնքան վարժապետի քանոնից եմ վախենում, որքան իրիցկնոջ նկատողություններից և տերտերից: Տերտերից և առհասարակ տերտերներից ես վախենում եմ, որովհետև նրանք մեռել են թաղում: Ինձ թվում է՝ խորհրդավոր ու չար ուժի տեր են տերտերները. կապ ունեն երկնքի ու աստծու հետ. ո՛ւմ ուզեն կարող են մեռցնել տալ և, ապա երգելով՝ տանել թաղել... Դրա համար ես զգուշանում եմ տերտերից. աշխատում եմ դասս լավ պատասխանել, իսկ խաղի ժամանակ նրա աչքից ու սենյակից հեռու մնալ:

Բայց մի անգամ ահա ձմեռը, դասամիջոցին, պատահում է մի սարսափելի բան. ընկերներով երկու բանակի բաժանված, բակում ձնագնդի ենք խաղում. ճերմակ գնդակներն անվերջ գնում-գալիս են օդում մի մոլեգին արագությամբ. յուրաքանչյուր խումբ աշխատում է հաղթանակ տանել ինքը և բոլորը քրտնամխած կռանում են բարձրանում, մոռացած թե իրենց, թե ամբողջ աշխարհը. տեսնում ենք միայն ձյունը, որից պետք է ձնագնդի շինել, և հակառակորդին,

որին պետք է խփել... Ես ու Սամսոնը մի խմբի մեջ ենք. թորթոքված ու լարված գնդակներ ենք շինում սառած ձեռներով ու դեռ կռացած նետում «թշնամիների» վրա: Նույնն անում են մյուսները: Իսկ ես ուզում եմ առանձնապես աչքի ընկնել. մի այնպիսի բան անել, որ ինձ գովեն. ուզում եմ գնդակներս այնպես պինդ անել, որ դիպչողին լացացնեն, ու բավական է հակառակորդներից մեկը, երկուսը լաց լինի, մյուսները կվախենան ու կփախչեն: Այդ պատճառով մի քանի գնդակ պատրաստում եմ միանգամից, ապա լցնում եմ փեշս ու նետում իրար ետևից, մի այնպիսի արագությամբ, որ ինքս հրճվում եմ իմ ճարպկության վրա: Բայց հանկարծ,—ով կարող էր սպասել,—իմ գնդակներից մեկը դիպչում է տնից դուրս եկող տերտերի գլխին և նրա գդակը նետում ցած: Տղաները «վայ» են անում ու խաղը դադարեցնում: Ես նույնպես. փեշիս ձնագնդերը թափում եմ ու կանգնում շվարած:

— Ո՞վ էր,—ասում է տերտերը, գդակը ձյունի միջից վերցնելով: Եվ ես սպասում եմ, որ տղաներն ահա մատնացույց կանեն ինձ կամ, բռնած, կտանեն տերտերի մոտ:

Բայց տղաները լռում են:

Տերտերը նորից է հարցնում.

— Ո՞վ էր այդ անպիտանը:

Տղաները դարձյալ լուռ են:

Տերտերը գլուխն ու միրուքը թափ է տալիս բարկացած: Ու նորից տուն է մտնում՝ գդակը մաքրելու:

Սամսոնը մոտենում է ինձ:

— Ես տեսա, որ քո ձնագնդին դիպավ, բայց չասի,—ասում է նա կամացուկ:—Եթե ասեի՝ գիտես ինչ կանե՛ր...

Այդ օրը մինչև երեկո—ես սաստիկ անհանգիստ եմ. հանկարծ տերտերն իմանա, որ իրեն խփողը ես եմ. հանկարծ տղաներից մեկն ասի. երևի,էլ չեն թող–

նի սովորելու գնամ. կամ տերտերն այնպես կծեծի, որ ես հիվանդանամ ու մեռնեմ. չէ՞ որ տերտերներն ամեն բան կարող են անել... Հետևյալ օրը ես սարսափով եմ գնում Զաքար վարժապետի «դպրոցը». այնքան ահ կա իմ սրտում, որ, թվում է, տեղ հասնելուն պես պտի բռնեն ու նորից տանեն կանցիլար կամ տերտերը դասի ժամանակ կմոտենա և ականջներս կքաշի: Այնքան չեմ վախենում ծեծից, որքան խայտառակությունից:

Բայց, բարեբախտաբար, օրերն անցնում են և ոչինչ չի լինում:

Զաքար վարժապետը տառերից հետո սովորեցնում է մեզ կարդալ, գրել, հաշիվներ անել, դասամիջոցներին խաղում է մեզ հետ, լավ իմացող աշակերտներին գովում է, չիմացողներին կանչում է և ճաշից հետո, որ ավելի լավ սովորեցնի:

— Սովորեցեք, որ մարդ դառնաք, թե չէ դիր չիմացողին ամեն մարդ կխաբի,—ասում է նա ամեն անգամ:

Մինչև գարուն ես ու Սամսոնը մեր դասագրքերը կես ենք անում արդեն և փորձում ենք մեր բոլոր տնեցիների ու ընկերների անունները գրել պատերի վրա ու մեր տետրակների մեջ:

Բայց գարնանը, երբ սկսվում են անձրևները, մեր «դպրոցն» սկսում է կաթել:

— Վերին հարկը չինված չի, դրա համար է կաթում,—բացատրում է տերտերը:— Ամառը կշինենք՝ էլ չի կաթի:

Կաթիլքի պատճառը մեզ չի հետաքրքրում, որքան ինքը կաթիլքն է անհանգստացնում: Անձրևաջրի մութ կաթիլներն ընկնում են գրքերի, տետրակների վրա, կամ, «կըլպպում» մեր գլխին: Ամենից անհաճո այն կաթիլներն են, որ գրելիս ընկնում են մեր ծոծրակին և օձիքից անցնում շապկի տակ. կարծես մի սառը ճիճու է սողում դեպի մեջքը: Մենք ընդհատում

ենք գրելը և նայում առաստաղին, թե ինչ նոր կաթիլներ են պատրաստվում այնտեղ. և տեսնում ենք մութ հեղուկներ են անցնում առաստաղի տախտակներից և սպառնում սրան կամ նրան:

Իրիցկինը թախտերի գորգերն ու բարձերը հավաքել—տարել է մյուս սենյակները և ամեն տեղ ամաններ է շարել, նույնիսկ մեր «սեղանների» վրա ափսեներ է դրել, բայց ոչինչ չի օգնում: «Դպրոցը» կաթում է և այն ժամանակ, երբ անձրևը դադարում ու արևն սկսում է փայլել դուրսը:

Այդ ժամանակ մենք դուրս ենք գալիս բակը՝ թափված գերանների վրա պարապելու:

Զաքար վարժապետը, ձեռները ետևը դրած, գնում-գալիս է մեր առջև ու դաս հարցնում:

Մենք կարդում ենք կամ պատասխանում նրա հարցերին:

Ու շուտով մեր գլխին հավաքվում են թաղի պարապ, հետաքրքիր մարդիկ, կանայք, երեխաներ: Լըսում են աշակերտների դասերը, պատասխանները և երբեմն, միջամտում իրիցկնոջ նման. ոչ թե նկատողություններով, այլ բացականչություններով. լավ պատասխաններին հավանություն են տալիս հրճվանքով.

— Այ, կեցցե՜ս. հալալ ըլի կերած կաթդ...

Իսկ սխալվողի վրա ծիծաղում են բարձրաձայն.

— Էդ չեղա՜վ, չեղա՜վ. հա՛-հա՛-հա՛...

Զաքար վարժապետը չի բարկանում նրանց միջամտության վրա, ոչ ոքի չի հեռացնում, այլ ժպտում է մի տեսակ բարեհոգի: Կարճ-կլոր իրիցկինն է միայն, որ տանել չի կարողանում ցանկապատի մոտ խմբված տղաներին ու աղջիկներին. հաճախ ձեռները կանթում է մեջքին և հանդիմանում նրանց.

— Ի՞նչ եք հավաքվել. քյանդրբա՞զ են խաղացնում, թամաշա եք եկել...

Զաքար վարժապետն, ընդհակառակը, փափուկ

միրուքը շփելով՝ երբեմն կանչում է այդ պարապ տղաներին, նստեցնում գերաններին, որ ավելի մոտից լսեն մեր դասը, և այդ ժամանակ աղմուկը դադարում է. բոլորը լսում են ուշադիր, հետաքրքիր ու կլանված:

Իսկ ինքը Զաքար վարժապետը, երթևեկելուց ու կանգնելուց հոգնելով, նստում է գերանների առաջ՝ մի աթոռի և էլի կա՛մ կարդալ է տալիս մեր հայերենի դասը կա՛մ թվաբանական խնդիրներ է առաջարկում: Մենք՝ աշակերտներս պատասխանում ենք իրար հետ մրցելով, դրսից եկած տղաները նույնպես ցանկություն են հայտնում պատասխանելու.

— Վարժապետ, կարելի՞ ա,— ասում է նրանցից մեկն ու մեկը:

— Կարելի է,— ժպտում է Զաքար վարժապետը մեղմությամբ:

Եվ երբեմն դրսեցի տղաներն ավելի լավ պատասխաններ են տալիս, քան մենք: Դա. թերևս նրանից է, որ նրանք ավելի տարիքով են, քան մենք:

— Կեցցե՛ս,—ասում է Զաքար վարժապետը:

Տղաները ոգևորվում են, և դասը շարունակվում է նոր թափով:

Ու դասը գերանների վրա մեզ ավելի է դուր գալիս, քան ներսում: Այստեղ ավելի լույս է, ավելի ուրախ ու հաճելի: Եվ ուզում ենք, որ միշտ շարունակվի այդպես:

Դասից հետո դրսից եկած տղաները հանկարծ դիմում են Զաքար վարժապետին, որ մի բան պատմի իրենց:

— Լավ,— համաձայնում է Զաքար վարժապետը և իր կարճ, փափուկ միրուքը շոյելով, սկսում է մի պատմություն:

Այն ի՛նչ հափշտակություն էր Տեր Բաղդասարի բակում, ի՛նչ զարմանք ու հիացում, ինչ բոցականչություններ են, որ լսվում են անվերջ. բոլորը լսում

են կլանված և չեն կարողանում զսպել իրենց զարմանքը, թե ինչպես մեր երկիրը, երկրագունդը՝ հոլի պես պտտվում է տիեզերքում, ֆռռում է շարունակ ու չի ընկնում ցած. թե ինչպես կան երկրներ, ուր ձյուն չի գալիս, և երկրներ, ուր մարդիկ այլ կերպ են ապրում... Անգամ դժգոհ իրիցկինը դուլպան ձեռին մոտենում է աշակերտների խմբին և հանգիստ ականջ դընում փեսայի պատմությանը:

Բայց դարձյալ այդ անհամբեր իրիցկինն է ընդհատում պատմությունը.

— Լավ, հերի՛ք է, հերի՛ք: Գնացեք ձեր տները. կերակուրս հիմա փչացավ...

Եվ նա դուլպան ձեռին վազում է դեպի օջախը, իսկ տղաները ցրվում են իրենց տները, մյուս օրը նորից գալու մտադրությամբ:

Բայց մեր հաճույքը երկար չի տևում:

Մի առավոտ էլ ահա գնում ենք դասի—Զաքար վարժապետը չկա:

Տերտերը, ձեռները կապայի գրպանը դրած գընում-գալիս է տխուր, սուրմաներով աղջիկը լալիս է ձեռներն երեսին, իսկ իրիցկինը հուզված, բարկությունից ճարճատելով, անիծում է ինչ որ մարդկանց:

— Տարա՛ն, տարա՛ն ձեր վարժապետին, էլ երեսը չեք տեսնիլ: Տանողի տունը՛...

Զարմացած, վախեցած հարցեր ենք տեղում իրիցկնոջ գլխին:

— Ինչո՞ւ... ո՞վ տարավ... ո՞ւր տարան...

Իրիցկինը պատասխանում է անեծքներով, զայրացած և միանգամից կարծես մի քանի կամ մի խումբ խոսք է արտասանում: Եվ նրա հախուռն խոսքերից մենք այնքան ենք իմանում, որ Զաքար վարժապետին տարել են բանտ:

— Մատնողի տունը քանդվի,—հուզվում է իրիցկինը:—Ասում էի՝ գերանների վրա դաս մի տալ,

Թաղի երեխաները մի հավաքեր գլխին: Հազար աչք է տեսնում...

Իրիցկնոջ ասելով՝ փեսային բռնել էին դպրոց պահելու համար:

Հայրս էլ այդ կարծիքի էր: Բայց նա ասում էր, որ Զաքար վարժապետն ինքն էր մեղավոր. նա՛ պետք է թաքուն սովորեցներ, որ պրիստավը՝ բանը չիմանային. չէ՞ որ թագավորն արգելել է հայոց դպրոցները...

V

ՌՈՒՍԱՑ ԴՊՐՈՑ

Այսօր արտակարգ օր է ինձ համար. մերոնց ուշադրության առարկան նորից ես եմ. թե մայրս, թե հայրս զբաղված են դարձյալ ինձանով. ամեն ինչ թողած՝ շրջապատել են ինձ անսովոր փայփայանքով ու գուրգուրանքով: Հագցրել են ամենալավ զգեստներս — կապույտ բլուզ, փողկերը թողած շալվար և կապույտ երիզով գլխարկ, որ հայրս գնել է հատկապես մի օր առաջ. իսկ վերնաշապիկիս վրա կապել եմ կարմիր գոտի, որ մայրս պահել է «աղիզ օրվա» համար:

Ինչո՞ւ են այդպես փայփայում ինձ և ինչո՞ւ են այսպես հույսերով դառնում իմ շուրջը:

Այսօր ես գնում եմ, այսինքն՝ հայրս ինձ տանում է ռուսաց դպրոց, որ վիճակ հանեմ և քննություն տամ: Այսպես է այնտեղ. նախ պետք է վիճակ հանել, հետո քննություն տալ: Բայց բախտս կբանի՞ արդյոք —ինձ վիճակ կընկնի՞...

Մայրս շարունակ պտտվում է շուրջս,— ուղղում, շտկում է հագուստներս և հետն էլ խրատում.

— Այ, տես, փուչ չհանես... քննության ժամանակ էլ—չամաչես. ինչպես պատասխանի—զարմանան, — ձեռը բռունցք շինած սիրտ է տալիս նա:

— Որ ասեն կարդա՝ կկարդաս,— ավելացնում է հայրս անսովոր մեղմությամբ, մի մեղմություն, որ շատ քիչ է պատահում:

— Ես ուրիշ գրքից չեմ կարդա,— զգուշացնում եմ ես,— մենակ իմ գրքից կկարդամ:

— Որ էդպես է, քու գիրքը վերցրու,— ասում է հայրս նույն մեղմությամբ:

Եվ մենք ճանապարհ ենք ընկնում:

Ռուսաց դպրոցը ես շատ եմ տեսել դրսից, բայց այսօր նա էլ անսովոր է աչքիս: Կարծես կենդանացել, շնչավորվել է նրա շենքը և դարձել խորհրդավոր: Դա մի հարկանի բարձր, մեծ տուն է՝ մի քանի փեղկեր ունեցող լայն լուսամուտներով, որոնց նմանը չկա մեր գյուղում: Իսկ տանիքը ծածկված է ներկած թիթեղով, ջրորդանները կախված են մինչև պատերի կեսը և մի մետր առաջ թեքված, բաց բերաններով,— որոնց մեջ երևում է նրանց թիթեղե լեզուն,— նայում են անցորդին: Ինձ ամենից շատ զարմացնում են այդ լեզուները, որոնք խողովակների ծայրերին տալիս են բաց բերանի կերպարանք, և թվում են անհասանելի ճարտար գործեր. իսկ դրանց շինող վարպետը— հրաշագործ: Ջաքար վարժապետի մոտ սովորելիս, երբ ամեն անգամ անցնում էի այդ դպրոցի մոտով և ճաղավոր դարպասից տեսնում բակում խաղացող աշակերտներին, ծառերը, ծաղկանոցը և ուսուցիչներին (որ դընում-գալիս էին իրար հետ զրուցելով) իմ միակ փափագն էր լինել այդտեղի աշակերտ: Ոչ միայն ես, այլև Սամսոնն ու մյուսները ցանկանում էին սովորել ռուսաց այդ դպրոցում, հագնվել նրա աշակերտների նման լավ, դաս առնել նրա լավ սենյակներում, երգեր սովորել և շարքեր կազմած—զբոսանքի գնալ: Գրավիչ էին թվում և ուսուցիչները, որ փայլուն, պսպղուն կոճակներով պինջակներ ունեին, կակարդով գլխարկ, կրախմալած շապիկ, վզներին սև բանթ կամ փողկապ, իսկ վարժուհին՝ մի չիկահեր, սպիտակ օրիորդ, ակնոց էր դնում քթին և հովանոցը ձեռին զբոսնում ուսուցիչների հետ: Այս բոլորը լավ էր, բայց մտածում էի, արդյոք նրանք էլ Ջաքար վարժապետի պես բարի՞ են, սրտաբա՞ց, արդյոք նրա չափ պատմություններ գիտե՞ն. և թվում էր, որ նրանք ավելի պիտի իմանային, որովհետև ավելի լավ էին հագնված: Իսկ ինչ վերաբերում է բարության ու սրտաբացության— այդ դժվար էր իմանալ. դրա համար ոչ մի նշան չըկար:

Եվ ահա ես ու հայրս մտնում ենք բակը—աշակերտներն ուրախ խմբեր կազմած՝ խաղում են այնտեղ իսկ ոմանք—ամաչկոտ ու հետաքրքիր—ներս են գնում իրենց հայրերի ու մայրերի հետ: Երևում է՝ ինձ նըման շատերը կան:

Երբ ներս ենք մտնում— տեսնում ենք մեծ, ընդարձակ, բարձր սենյակը լիքը աշակերտացուներով ու ծնողներով, որ նստարաններին նստած, լարված հետևում են վիճակահանությանը:

Սենյակի ծայրին դրված է մի մեծ, երկար սեղան՝ կարմիր մահուդով ծածկված. շուրջը նստած են ուսուցիչները. դրանցից մեկը մեր ծխատեր քահանան է՝ տեր-Գյուտը, որի անունը երեխաները չեն կարողանում ճիշտ արտասանել և միշտ ասում են տեր-Գութ. դա է՝ իր տիրացուի հետ ամեն Զատկի ու Ջըրօրհնեքի գալիս մեր տունն օրհնելու: Միջահասակ է, լեցուն, կրծքին նստած սև մորուքով. ձեռներն սպիտակ են ու փափուկ. սև փարաջան այնքան երկար է, տակից երևում են միայն կոշիկների ծայրերը: Ինչպես բոլոր քահանաները, այնպես էլ դա իր երկար հագուստի պատճառով, ինձ թվում է՝ կես-տղամարդ, կես-կին: Ինձ թվում է, նա այդտեղ նստած ուրիշ բաների մասին է մտածում, որովհետև շուտ-շուտ լուսամուտից նայում է դուրս: Տերտերի կողքին նստած է տեսուչը. նրա սպիտակ դեմքին աչքի են ընկնում ոլորած երկար բեխերը, որ հիշեցնում են եղան եղջյուր-

ներ: Հագին դեղին, փայլուն կոճակներով սյուրտուկ է. Նա շուտ-շուտ ձեռը տանում էր բեխերին և վեր բարձրացնում, կարծես եթե ցած իջնեն՝ իրեն պիտի խանգարեն: Նրա աջ կողմը տերտերն է, ձախ կողմը՝ ակնոցով վարժուհին, որ մատիտի ծայրերը դարձնում է հերթով: Մյուս երկու ուսուցիչը հետևում են, թե ինչպես են աշակերտները վիճակ հանում. նրանց վերցրած թղթերը նրանք առնում-բանում են ու ինչ-որ նշանակում իրենց առաջին փռած թղթի վրա. դրանց բոլորին ես ճանաչում եմ: Դուրսը՝ փողոցում նրանք ավելի բարի են թվում, քան այստեղ. փողոցում ես նրանցից չեմ վախենում, ո՛չ մեկից. բայց այստեղ, չգիտեմ ինչու, սիրտս դողում է: Զգում եմ, որ ինչ-որ բան շարունակ զարկում է կրծքիս տակ— տի՛կ-տի՛կ, տի՛կ-տի՛կ... և ես ահով եմ նայում, թե ինչպես տղաներն ու աղջիկներն հերթով թուղթ են հանում, բերում տալիս տեսչին, և նա, այդ թղթերը բանալով, հայտարարում է ռուսերեն. «փուչ» կամ որևէ թիվ է ասում:

«Փուչ» հանողը տխրում է, ամաչկոտ նայում ուսուցիչներին և գլուխը կախ կամ լացակումած հեռանում: Իսկ «թիվ» հանողը ժպտում է լավ բան գտածի պես. Նրա դեմքը լուսավորվում է մանավանդ այն ժամանակ, երբ ուսուցիչը կամ տեսուչն ասում է. «Կանգնիր այն կողմը»:

Ես կանգնել եմ վիճակ հանող երեխաների մեջ և շուտ-շուտ նայում եմ հորս, որ ծնողների շարքում նստած, իր հերթին նայում է ինձ, և, թվում է, աչքերով խրախուսում է, որ «փուչ» չհանեմ կարծես. ես նկատում եմ նույնպես, որ «փուչ» հանողների հետ նա տխրում է, «թվանշան» հանողների հետ՝ ուրախանում, պայծառանում. այդ ժամանակ նրա աչքերն արտահայտիչ դառնում են ինձ, որ կարծես ասելիս լինեն. «այ, դու էլ այդպես»: Ու դրանից սիրտս ավելի է դողում. ու ես, սրտիս ձայնը խլացնելո՞ւ, թե՞ ինձ

հանգիստ զգալու համար, նայում եմ պատերին կախված պատկերներին, քարտեզներին, բայց ոչինչ չեմ ջոկում նրանց վրա. հայացքս ակամա դառնում է նորից ուսուցիչներին, տերտերին, հորս և վիճակ հանող տղաներին:

Վերջապես գալիս է ահա և իմ հերթը:

Այժմ, երբ ժամանակի հեռավորությունից նայում եմ այդ փոքրիկ տղային,— տեսնում եմ կարծես, թե ինչպես է նա վեր կենում ու գնում դեպի վիճակահանության սեղանը. Նրա փոքրիկ սիրտն ավելի է դողում, աչքերն ասես ոչինչ չեն տեսնում, բացի ուսուցիչների դեղին, փայլուն կոճակները. միտքն է ընկնում մոր խրատը, թե վիճակը հանելուց առաջ՝ երեսխաչ քաշի. բայց ամաչում է և մտածում, թե անհարմար է. եթե բախտ ունի—փուչ չի հանի:—Եվ մի վերջին անգամ նայում է հորը, ու մի ակնարկից հասկանում է նրան. հայրն այժմ լարված, հուզված տեսք ունի. աչքերի մեջ այնքան աղերսանք կա, կարծես ասում է. «Սուրեն ջան, ամոթով չանես»... և այդ փոքրիկ Սուրենը հորը նայելով, խղճում է նրան, խղճում է ու սրտապնդում.— ինչ լինելու է— թող լինի: Ու ձեռը կոխում է ոլորած թղթերով լիքը տուփը և... էլ չի իմանում, որքան ժամանակ է անցնում, մեկ էլ լսում է տեսչի ձայնը, որ կարդում է.

— Տասնութ:

Այդ նշանակում է, որ ես փուչ չեմ հանել, այլ «18» թվանշանը: Սրահը միանգամից լուսավորվում է, պատկերները պատից ուրախ նայում են ինձ, և առաջին դեմքը, որ տեսնում եմ— դարձյալ հայրս է: Նա ցնծում է. կարծես ուրախություն է ճառագել նրա վրա. Նա երբեք այդպես ուրախ չի եղել: Դա, թերևս, նրա կյանքի ամենաուրախ, ամենաերջանիկ վայրկյանն է— որդու աջողությունը:

Ես նույնպես ուրախ եմ, որ հորս «ամոթով» չեմ արել և մյուսներից ետ չեմ մնացել... Բայց սա դեռ

չի նշանակում, թե ընդունված եմ: Դեռ պետք է քննություն տամ, և քննությունից հետո կպարզվի — ընդունվում եմ, թե ոչ: Ու վիճակ հանելու կարճատև երանությունը տեղի է տալիս նոր անհանգստության:

— Կարո՞ղ եմ արդյոք քննություն բռնել... քննում են ահա առաջին համարները հանողներին: Նրանց հարցնում են ամեն տեսակ բաներ: Հարցեր տալիս են թե տեսուչը, թե տերտերը և թե մյուս ուսուցիչները: Իսկ վարժուհին շարունակ դժգոհ կարծես՝ նայում է թե հարց տվողներին և թե երեխաներին. թվում է՝ նա ձանձրանում է այդ բոլորից, և ես վախենում եմ, թե հանկարծ ինձ հարցեր տա նա — չեմ կարող պատասխանել:

Բայց, բարեբախտաբար, այդ անում է տեսուչը:

— Անունդ ի՞նչ է, — հարցնում է նա:

— Անունի՞ս...

Ամաչո՞ւմ եմ, թե՞ շփոթվում, — մոռանում եմ անունս, և իմ փոխարեն պատասխանում է հայրս:

— Կարդալ գիտե՞ս, — շարունակում է տեսուչը:

Ես գլխով եմ անում. — Այո:

— Ո՞րտեղ ես սովորել:

— Զաքար վարժապետի դպրոցում:

— Որտե՞ղ:

— Զաքար վարժապետի դպրոցում, — կրկնում եմ ես:

— Այդպես դպրոց չկա, — ասում է նա:

Ի՞՛նչպես թե չկա. ես ուզում եմ ասել, որ կար, բայց հիմա չկա, որովհետև Զաքար վարժապետին բանտարկել են. սակայն տերտերը ժամանակ չի տալիս:

— Կրոն սովորե՞լ ես, — միջամտում է նա:

Ես գլուխս օրորում եմ. — Ո՛չ:

— Բայց գիտե՞ս կրոնն ի՛նչ է:

— Գիրք:

Տերտերը ժպտում է. մյուսները ծիծաղում են կամաց, և ես չեմ հասկանում ինչո՛ւ:

— Հիսուսի մասին բան գիտե՞ս, — շարունակում է տերտերը:

Ես գլխով եմ անում. — Գիտեմ:

— Ո՞վ է Հիսուսը:

— Պատկեր է:

Տերտերը գլուխն օրորում է:

— Կասեն «սուրբ», անշնորք անիրավ, ոչ թե պատկեր:

Ես կրկնում եմ.

— Սուրբ, անշնորք անիրավ, ոչ թե պատկեր:

Բայց այս ինչո՞ւ են ծիծաղում. մի՞թե տերտերի խոսքերը ես սխալ ասի. եթե այդպես է, ուրեմն բանս վատ է: Երևի այդպես է, որ ծիծաղում են, մտածում եմ ու ամոթից հորս չեմ նայում. ո՛վ գիտի ինչ վիշտ եմ պատճառում նրան:

Բայց շուտով ուսուցիչներից մեկը հանում է ինձ այդ դրությունից: Տեսնելով գիրքս՝ թևիս տակ սեղմած, նա հետաքրքրվում է, թե ինչ գիրք է:

— Իմ դասագիրքն է:

— Կարո՞ղ ես մի բան կարդալ:

Ես բաց եմ անում գիրքը և կարդում առաջին պատահած նյութը՝ «Ծիտը ծառին ծլվլում է»...

— Լավ, — ասում է նա, — հիմա կարո՞ղ ես ասել, թե քանի վրա գումարենք քսան — ի՞նչ կանի:

— Քառասուն:

— Քառասունից հանենք տա՞սը:

— Երեսուն:

— Լավ:

Այս «լավ» — երկից հետո նայում եմ հորս — նա ուրախ է նորից. ժպտում է այնպես լավ: Եվ դա ինձ սրտապնդում է:

Բայց հանկարծ պատահում է այն, ինչից շարունակ վախենում էի. ակնոցով վարժուհին ուղղվում է

տեղը, ուղղում է պենսնեն և դառնում ինձ, թե ռուսերեն գիտե՞մ արդյոք:

Ես գլխով եմ անում, որովհետև կապալառուի երեխաներից ես սովորել եմ շատ խոսքեր, հայհոյանքներ ու մինչև քսան հաշվելը: Վարժուհին ինձ հարցնում է քանի՞ կով ունենք և քանի հավ: Ես պատասխանում եմ— երկու կով, ութ հավ, հինգ սագ, մի շուն... Ուսուցիչները նորից ժպտում են, և, ինձ թվում է այդ բանը ոչ-ոք չէր սպասում, թե ես ռուսերեն գիտեմ:

— Մալադեց,— ասում է տեսուչը, բեխի մեկը վեր տանելով,— վաղը կըգաս:

Տանը մայրս ուրախությունից գրկում է ինձ և համբուրում:

Իսկ հայրս շարունակ կրկնում է տեսչի խոսքը.

— Մալադե՛ց, մալադե՛ց: Էդ լավ էր, որ ռուսերեն գիտեիր. թե չէ— բանդ վատ էր... Հիմի կերթաս ռուսերենը լա՛վ կսովորես, թե կուզես պիսըր կդառնաս, կուզես կանդխտոր կըլնես: Եթե լավ սովորես, ով գիտի հլա տելեգրաֆիստ էլ դառնաս...

Հորս ասածներն ինձ չեն հետաքրքրում: Այժմ ինձ ուրիշ խնդիրներ են զբաղեցնում.— ես ուրախությունս չեմ կարողանում պահել, դուրս եմ գնում անմիջապես և պատահողին պատմում, որ ընդունվել եմ ռուսաց դպրոց: Ասում եմ թաղի երեխաներին, տատիս,— ուզում եմ, որ բոլորն իմանան, և բոլորը տեսնեն իմ նոր հագուստները, գլխարկը: Ու հնարում եմ պատմություններ, թե որքան դժվար է ընդունվելը:

— Եթե մի խոսք չիմացար—պրծա՛վ. չեն ընդունի: Եթե ծիծաղեցիր— դուրս կանեն...

Ու պարծենում եմ, թե ուսուցիչների բոլոր հարցերին ես պատասխանեցի և տեսուչն ինձ ասավ «Մալադեց»:

Նկ. Ս. Բասմաջյանի



Ես տալիս եմ անունս և հարցնում եմ իրենը:

Մյուս օրն արդեն, բոլոր գրքերս առած, Սամսոնի հետ գնում եմ դպրոց: Թո՛ղ հորեղբայրս, Սանամ-գյուղն, հարևանները տեսնեն, որ ես ռուսաց դպրոցի աշակերտ եմ... մայրս մի քանի չիր, հաց ու պանիր է դրել գրպանս և Սամսոնին պատվիրել է, որ ինձ լավ նայի, չթողնի տղաների հետ կռվեմ: Սամսոնը խոստացել է և այժմ ճանապարհին սովորեցնում է, թե ինչպես կռվենք, եթե կռիվ պատահի:

Ես ու Սամսոնը լինելու ենք միևնույն երկրորդ բաժանմունքում, և ուզում ենք, որ նստենք իրար կողքի, մի նստարանի վրա: Բայց ինձ Սամսոնի հետ չեն նստեցնում, այլ մի աղջկա մոտ, որ կանաչ չալ դեյրա ունի, և սև չալ գոգնոց: Եվ ինձ թվում է՝ դա վատ հարևան չի. ընդհակառակը, դա ավելի լավ է, քան որևէ տղա, որ, ով գիտի, ինչ չարություններ աներ. Իսկ սա երևում է շատ մաքուր ու խելոք աղջիկ է. մազերը հավաքել է մի կարճ հյուսի մեջ և ծայրը կապել ժապավենով ու բանթ արել, և այդ բանթը նման է մեծ թիթեռի: Նա բարի աչքերով նայում է ինձ և շարունակ ժպտում: Հետո չի համբերում ու հարցնում է.

— Անունդ ի՞նչ է:

Ես տալիս եմ անունս և հարցնում եմ իրենը.

— Իսկ քո՞նը:

— Եվա...

Եվա... ինչպես չհիշեմ քեզ, քո մեղմ ձայնը, որ թելադրում էր ինձ չիմացածս, քո համով նախաճաշերը, որից միշտ բաժին էիր հանում ինձ և քո փոքրիկ, փոքրիկ ճերմակ ձեռները, որ նման էին փոքրիկ աղավնիների: Չգիտեմ ո՞վ է կնոջ ձեռները նմանեցրել աղավնիների, բայց այդ ճիշտ է Եվայի փոքրիկ ձեռների համար. Նրանք դասի ժամանակ երբեմն այնպես են դողում սեղանի վրա, կարծես ահա թռչեն պիտի...

Մենք խոսում ենք, և պարզվում է, որ նա հա-

բուստի աղջիկ է. հայրը չիթ ու կտոր է ծախում, գործեր. շուտ-շուտ Թիֆլիս է գնում, և ամեն անգամ Եվայի համար նվերներ է բերում։

— Քու հայրիկն ի՞նչ է անում,— հարցնում է նա։

— Արտ է վարում, սայլ է բանեցնում...

— Դուք սայլ ունե՞ք,— ուրախանում է նա։— Ես սիրում եմ սայլ նստել։ Կթողնե՞ս ձեր սայլը նստեմ։

Ես նրան հրավիրում եմ, բայց նստելու պիտի գալ այնպիսի ժամանակ, երբ հայրս տնից գործի է գնում։ Նա խոստանում է։

Առաջին դասն անցնում է հարցումներով. ուսուցիչը՝ դեղին կոճակներով մի կարճ մարդ, որի անունը, ինչպես հետո ենք իմանում, Արամ Սիմոնիչ է, հարցնում է նոր ընդունվածների անուն-ազգանունը և ապա մի քանիսին կանչում է, որ գրատախտակի վրա գրեն իրենց անունները։

Ես էլ գրում եմ իմ անունը...

Ու ամեն ինչ լավ է գնում մինչև առաջին դասամիջոցը։

Առաջին դասամիջոցը՜... ինչպես չհիշեմ այդ դասամիջոցը, երբ պատահեց այն, ինչ երբեք չէի կարող սպասել...

Բոլորս դուրս ենք գալիս բակը ու բոլոր դասարանները խառնվում են իրար՝ խաղում, կանչում, թռչկոտում. մինչև անգամ այն նորեկ աշակերտներից մի քանիսը, որ ամաչելուց չէին կարողանում իրենց անունն ասել ուսուցչին— բակում վազվզում են, գնդակ են գցում միմյանց, թռչում են իրար ուսի։ Իսկ նորեկների մեծ մասը կանգնել են քաշված ու դիտում են նրանց խաղը, ուսումնասիրում են իրենց շրջապատը։ Ես էլ, համարյա բոլորին անծանոթ՝ հեռու կանգնել նայում եմ խաղացողներին։ Մեկ էլ իմ հասակի երեք տղա, հին աշակերտներից մոտենում են ինձ ու կանչում, որ մասնակցեմ խաղին, որովհետև

մեկը պակաս է։ Ես նրանց ծանոթ չեմ, և դրա համար տեղից չեմ շարժվում։ Ամաչում եմ։ Սամսոնն այդ ժամանակ հեռու խաղում է, իսկ իմ նոր ընկերուհին՝ Եվան աղջիկների մեջ է։ Բայց տղաներն իմ ամաչկոտությունը հպարտության տեղ են ընդունում և սկսում են ծաղրել ինձ։

— Տեսեք, չի ուզում շորերը փչանան։

— Վերնաշապկին նայեք։

— Գոտիքի՛ն, գոտիքի՛ն...

Ես չեմ խոսում. շուրթերս սեղմած՝ նայում եմ նրանց ու մտածում հեռանալ. այնպես հեռանալ, որ իբր թե՝ ոչինչ. արժանապատվություն պահելով. բայց նրանք նկատում են իմ այդ տրամադրությունը ու ավելի են երես առնում։

— Տեսե՛ք, տեսե՛ք վախո՛ւմ է։

— Սպասեք, սա հրես պիտի գռա...

Ու ավելի են մոտենում. մեկը՝ մի չեկ տղա նույնիսկ քաշում է գոտիս, իսկ մյուսն ուզում է գլխարկս վերցնել։ Չեմ թողնում և խփում եմ նրա մեկնած ձեռին։ Այդ ժամանակ երեքը միասին շրջապատում են ինձ ու փորձում դարձյալ գլխարկս վերցնել։ Ես չեմ թողնում մոտենան. պաշտպանվում եմ, խփելով նրանց ձեռներին կամ գլուխս փախցնելով այս ու այն կողմ։ Բայց նրանք ծամածռություններ են անում, լեզու հանում։ Ես, մեջքս պատին քսելով, փորձում եմ հեռանալ, բայց նրանք քայլ առ քայլ, ծաղրելով, գալիս են ետևիցս։ Ավելի շատ ծաղրում է ուռած այտերով ու կապույտ աչքերով մի գլխարաց տղա. Նրա լիքը դեմքը, հանած լեզուն ու համարձակությունն ավելի են գրգռում ինձ։ Ուզում եմ քացով խփել, բայց վախենում եմ հագուստները կեղտոտեմ և այն ժամանակ ավելի վատ լինի։ Սակայն, երբ նա ձեռը գցում է գոտիս պոկելու—ես չեմ համբերում. մեջքս պատին դեմ եմ անում և քացով խփում նրա... փորին։

Բայց սա ի՞նչ է. մի՞թե իմ հարվածն այնքան ուժեղ էր, որ այդ չեկ, գեր տղան հանկարծ մի թեթև «ահ» է անում ու ընկնում գարմանով լիքը տոպրակի պես: Իսկ ընկերներն անմիջապես ետ են քաշվում ու մնում կանգնած: Իմ դեմքը, հավանորեն, ահարկու է, որ նրանք զարմանքով ու չռած աչքերով նայում են ինձ ու էլ չեն համարձակվում մոտենալ: Իսկ բակում խաղացող մյուս աշակերտները նույնպես մոտենում են ու շրջապատում անշարժ ընկած չեկ տղային:

Մինչ կհարցնեն, կիմանան ի՛նչ է պատահել, ես՝ նետվում եմ դասարան, գրքերս վերցնում ու... շունչըս առնում եմ միայն տանը:

Թե ինչպես եմ անցնում այդ տարածությունը— անհայտ է, բայց ես, հավանորեն, շատ այլայլված եմ, որ մայրս հարցնում է անհանգիստ.

— Ի՞նչ է պատահել: Ինչո՞ւ այսքան շուտ եկար:

— Արձակեցին:

Մայրս զարմանում է, որ ռուսաց դպրոցում այսքան շուտ են արձակում: Բայց հետո կասկած է հայտնում, թե ինչու հապա Սամսոնը չի եկել:

— Նա գնաց հոր խանութը:

Արդյոք մայրս հավատո՞ւմ, հանգստանո՞ւմ է,— չգիտեմ: Ես գոնե չեմ հանգստանում. գնում եմ պարտեզ, աչքից հեռու մի տեղ և նստում մի քարի: Թըվում է՝ ո՛ւր որ է ահա մարդիկ կգան ու կտանեն ինձ դպրոց կամ կանցիլար, ինչպես կապալառուի տղին խփելուց հետո: Կտանեն ու կսկսեն հարցուփորձել: Եթե ուշաթափ եղած լինի՝ ինձ, երևի, դպրոցից կհեռացնեն: Իսկ եթե մեռած լինի՞... Մազերս կանգ են առնում և ահը ցնցում է սիրտս: Այնքան վատ եմ ըզգում ինձ, այնքան տխուր, անմխիթար: Էլ ի՞նչպես պիտի երևամ ընկերներիս. ի՞նչ պատասխան պիտի տամ հորս, մորս, ուսուցիչներին... Չէ, հիմա բոլորը, և ամենից առաջ հորեղբայրս, կուրախանան, որ չկարողացա ինձ պահել, և դպրոցից դուրս արին:

Ես շարունակ նայում եմ դպրոցի ճանապարհին, թե երբ պիտի գա Սամսոնը: Բայց նա ուշանում է, և անհանգստությունը տանջում է ինձ. ցանկապատի մոտ բուսած խոտերը պոկում եմ թափում գետին կամ դրանցից մեկը գցում բերանս ու ծամում:

Վերջապե՜ս... Սամսոնը գալիս է ահա. բայց նա այլայլված է, և այդ հանգամանքն ինձ սարսափ է բերում, ու այդ սարսափը ինձ թույլ չի տալիս նրա բոլոր խոսքերը լսեմ: Նրա ասածներից հասկանում եմ միայն, որ չեկ տղան նոր եկած պրիստավի տղան է: Պրիստավի տղա՛ն... Ես վախից վեր եմ թռչում: Բայց Սամսոնը հանգստացնում է ինձ.— Նա չի մեռել, այլ ուշաթափվել է, և այն էլ ոչ երկար... Այդ լավ է: Ի՞նչ... Իմ հեռանալուց անմիջապես հետո վեր է կացել, ինձ փնտրել, որ ծեծի: Բայց չգտնելով՝ սպառնացել է, որ եթե ձեռն ընկնեմ... Այ թե ի՛նչ... Բայց այդ սպառնալիքն այնքան ահարկու չի, որքան... նա պրիստավի տղան է: Այս անունըն ինձ դող է պատճառում: Ուրեմն հիմա ուր որ է դպիրները կամ պրիստավի սորաժնիկները կգան իմ ետևից: Չէ՛, ես էլ դպրոց չեմ գնա:

— Սամսոն, հայրիկիս ու մայրիկիս չասես:

— Ինչո՞ւ: Վախենում ես ծեծե՞ն: Հեչ բան էլ չեն անի: Նա ուզեցել է քեզ խփել, դու էլ նրան ես խփել. ի՞նչ կա որ:

Չէ, ես ուզում եմ, որ նա չասի: Սամսոնը հասկանում է ինձ ու խոստանում ոչինչ չասել:

Այդ գիշեր ես երկար, երկար չեմ կարողանում քընել. մտածում եմ դարձյալ, թե ահա մարդ կգա ինձ տանելու. տղայի մայրը, կապալառուի կնոջ նման, երևի գանգատված կլինի և ահա գզիր Ասատուրը կգա: Ու չեմ քնում: Իսկ երբ աչքերս փակում եմ, տես-

նում եմ մի խումբ տղաներ, որ վազելով ուզում են բռնել ինձ, բայց ես փախչում եմ հեռո՛ւ—հեռո՛ւ...

Առավոտ մայրս արթնացնում է ինձ, թե դպրոցի ժամանակն է: Ես հագնվում եմ, բայց չեմ ուզում դպրոց գնալ, և մորս բոլոր հարցումներին պատասխանում եմ մի բառով.

— Չեմ ուզում:

— Ինչո՞ւ: Դո՞ւր չի գալիս, չե՞ս հավանում,— հետաքրքրվում է հայրս:

Չեմ խոսում.

— Վրադ բարկացե՞լ են:

Ես գլուխս օրորում եմ.— ոչ:

— Վատ բան ես արե՞լ:

Լռում եմ:

— Բա ինչո՞ւ չես գնում, ասա տեսնեմ,— շարունակում է հայրս:

— Ուզում է գյադա մնա,— բարկանում է մայրս,— ուզում է բոլորը վրան ծիծաղեն: Անխե՛լք... դու էնպես սրտով ուզում էիր ռուսաց դպրոց գնալ, հիմի ի՞նչ պատահեց. ով գիտի վատ բա՞ն ես արել...

Ո՛չ ամոթանք, ո՛չ հանդիմանություն, ո՛չ ապագայի վատ հեռանկար, որ «գյադա» կմնամ— վրաս չեն ազդում: Գիտեմ, որ հորեղբայրս, հարևանները վրաս կծիծաղեն, թե ծույլ եմ, բայց միևնույն է, ես միակար կրկնում եմ.

— Չեմ ուզում: Չեմ ուզում:

— Տես ա՛յ, տավարը կուղարկեմ,— սպառնում է հայրս, իմանալով, որ տավարը գնալ չեմ սիրում:

Համաձայն եմ ամեն բանի, միայն թե դպրոց չըգնամ, պրիստավի տղային չտեսնեմ, ուսուցիչների հանդիմանությունը չլսեմ: Որքան էլ մայրս մերթ սիրով, մերթ բարկությամբ աշխատում է համոզել, թե ինչքան լավ բան է դպրոցը, արևից, անձրևից հեռու, մաքուր...— միևնույն է. չեմ համոզվում:

Չեմ գնա...

— Վերջին անգամ եմ ասում. եթե չգնացիր— տավարը կուղարկեմ,— ասում է հայրս, իսկապես, վերջին անգամ, և դուրս է գալիս տնից:

Եվ այնուհետև՝ որքան էլ մայրս բարկանում, լաց է լինում— ես իմ որոշումը չեմ փոխում: Կանչում է Սամսոնին՝ հարց ու փորձ անում, թե ինչ է պատահել, ի՞նչ եմ արել ես— Սամսոնը ոչինչ չի ասում: Նա պատասխանում է, որ ոչինչ չեմ արել. ոչի՛նչ...

Մայրս նորից է բարկանում, նորից է լալիս:

Միևնույն է. վերջացած բան է. ես ռուսաց դպրոց չեմ գնում:

Եվ հայրս ուղարկում է ինձ տավարը:

VI

ՏԱՎԱՐԱԾ

Ահա մեր դաշտերը՝ հնձած արտերով ու գետնախնձորի ցանքսերով. ահա աշնան անտառը, ուր վնգում է աշնան սառնաշունչ քամին և տերևները— կարմիր, դեղին ու նարնջի—թափվում են, թափվում և քամու բերանն ընկած տարվում հեռո՜ւ... Ահա մեր երկինքը կապույտ ու վճիտ, ուր կռունկների եռանկյունի վաշտերը իրար ետևից հարավ են գնում, և վերևից ահա լսվում է մեկ-մեկ նրանց դյութական ձայնը:

— Կըրւը՛կ... կըրւը՛կ...

Ես գիտեի, որ հայրս բարկացկոտ է. ինչ ասում է, այն էլ անում է, բայց չէի կարծում իր սպառնալիքն իրագործի այս անգամ: Սակայն որքան անկոտրում էի ես, նույնքան համառ եղավ նա:

Համոզվելով, որ էլ չեմ գնում դպրոց, նա հենց մյուս օրը՝ վաղ առավոտ կանչում է ինձ, եզներն ու կովերն առաջս անելով՝ ասում է. «տար»: Ապա հացի կապոցը տալով ինձ, ավելացնում է.

— Կպահես մինչև իրիկուն. երբ ժամի զանգերը տան՝ նոր կբերես:

Ես հասկանում եմ. հայրս այնպես է կարծում, երևի, թե դա կազդի ինձ վրա. կապոցն ու ճիպոտը

ցած կդնեմ իսկույն և կասեմ. «Չէ, հայրիկ. կերթամ դպրոց»...

Բայց ես համառ եմ և ինքնասեր. այդպիսի բան չեմ անի: Չնայած սիրտս տխուր է այնքան, որ պատրաստ եմ լաց լինել, սակայն արտաքուստ հանգիստ, ատամներս սեղմած, վերցնում եմ ճիպոտն ու կապոցը և տավարը քշում դեպի դաշտ: Մեր եզներն ու կովերը ճանապարհը գիտեն. գնում են հանգիստ, ու ես նրանց ետևից: Պատահել է ուրիշ անգամ, որ մեր եզներն ու կովերը տարել եմ դաշտ՝ տավարածի հանձնելու, բայց երբեք տավարած չեմ եղել: Եվ այժմ ինձ մտահոգում է այն, թե եթե հանկարծ այս եզներն ու կովերը կորչեն անտառում—ի՞նչ պիտի անեմ: Կամ բանջարանոցներն ու գետնախնձորի ցանքսերն ընկնեն: Չէ որ անտառապահն ու հանդապահն իսկույն «տուն կանեն» և «տուգան» կուզեն: Այն ժամանակ ի՞նչ կասի հայրս.— ավելի լավ չէ՞ր լինի դպրոց գնայի և այս պատասխանատվությունից ազատ լինեի:— Բայց պրիստավի տղա՞ն, նրա ընկերնե՞րը... մի՞թե կներեն ինձ իմ քացին, նրա ուշաթափությունը և, վերջապես, ի՞նչ կասեն ուսուցիչները, տերտերը, ակնոցով վարժուհին, հետո իմ նստարանի ընկեր Եվան: Թեև Սամսոնն ասում է, ոչ-ոք չի խոսում այդ մասին, բայց բավական է ես երևամ... Ոչ, ավելի լավ է առայժմ տավարը:

Ու երկու-երեք օր ես տավարը պահում եմ մենակ դաշտի մեջ, անտառից ու բանջարանոցներից հեռու. բավական է, որ եզան կամ կովի մեկը մի քիչ հեռանում է մյուսներից, ես անմիջապես ետ եմ տալիս և միացնում ընկերներին, որ հանկարծ բանջարանոց չընկնի կամ անտառ չգնա... Բայց կովերն իրենց պահում են անկարգ: Նրանք մի ժամ արածում են միջակների խոտը, եզների հետ, ապա մտնում են մասրի ու մամխի թփերի արանքը, ու երբեմն աներևութանում այդ թփերում. այս հանգամանքն ահաբեկում է

ինձ. վազում եմ Թխուտի եզրին կանգնում ու ձայն տալիս, որ անմիջապես դուրս գան... Եզները, սակայն, կովերի նման չեն. նրանք, ինչպես երևում է, հասկանում են իմ անհանգստությունը և իրենց պահում են ավելի հանգիստ. և ես նրանցից գոհ եմ:

Այսպես անցնում է միայն առաջին երկու օրը, հետո մոտենում են ինձ ուրիշ փոքրիկ տավարածներ և իրենց տավարը խառնում իմ տավարին. մոտենում, ընկերանում են էլի ուրիշ անծանոթ տավարածներ, ապա բոլորս միասին ընկերանում ենք մի ծերունի տավարածի, որ ահագին մոխրագույն խոպան միրուք ունի կրծքին, ահագին «ծլավոր» փափախ գլխին և մի սև յափնջի, որը,— զարմանալի բան,— ման գալիս գցում է ուսերին, նստելիս՝ տակը, իսկ անձրև ժամանակը՝ կանգնեցնում է վրանի պես ու ինքը մտնում մեջը: Ի՛նչ տարօրինակ, զարմանալի մարդ է այդ Մազաթ բիձան. ես առաջին անգամին եմ տեսնում նրան. ինչե՞ր գիտի այդ մարդը. լուցկին դանակով կիսում է, որ երկու անգամ կրակ անի կամ չիբուխը երկու անգամ վառի, չնայած գոտու մեջ ունի և կայծաքար և ղավ:

Առաջին օրը տավարածներն ինձ տարօրինակ հարցեր են տալիս, հետո սկսում են ծաղրել ինձ— իմ դպրոցական գլխարկը, գրքից սովորած իմ խոսքերը, և, վերջապես, իմ վախը, թե տավարը կարող են կորցնել՝ առաջ գնալով: Երբեմն էլ— պարապ մարդիկ— խմբով հավաքվում են գլխիս ու կատակում:

— Հապա մի ասա տեսնենք՝ մի տարեկան ուլը գլխով քա՞նի ուրբաթ է անցնում:

Ես չեմ կարողանում պատասխանել, այնքան դըժվար ու խորն է թվում այդ խնդիրը, որ նախանձում եմ հարց տվողին. նա ինձնից տարիքով է, ճիշտ է, բայց որտեղի՞ց է իմանում:

— Իսկ մեռած մարդը քա՞նի օր է ապրում,— հարցնում է մի ուրիշը:

Դարձյալ պատասխանել չեմ կարողանում:

— Դե որ դպրոց ես գնացել, ասա տեսնենք Ավետարանում քանի՞ «և» կա,— հարցնում է երրորդը, մի հաստակավոր տղա:

Ես գլուխս օրորում եմ.— չգիտեմ: Բոլոր հարցերն ինձ թվում են դժվարին ու խրթին:

— Դպրոցում այդ դասը դեռ չենք սովորել,— արդարանում եմ ես:

Բայց նկատում եմ— տավարածները ժպտում են, իրար աչքով են անում ու քրքջում:

Հետո սկսում են հանելուկներ ասել:

— Էն ի՞նչ ա՝ մի մարագ՝ մեջը լիքը ուրագ:

— Չգիտեմ:

— Էն ի՞նչ ա՝ երկու ախպեր, մի սարի ետև, մըտիկ են անում, իրար չեն կարըմ տեսնեն:

Ես դարձյալ չեմ իմանում: Տղաները ծիծաղում են նորից և ուզում են նոր հանելուկներ ասել, բայց ինձ օգնության է հասնում Մազաթ բիձան:

— Դե, դե, ըրեխուն տնազ միք անիլ,— սաստում է նա տղաներին, ու իր կողմից նոր հանելուկներ է առաջարկում նրանց: Տղաները չեն գտնում: Ես ուրախանում եմ: Իսկ Մազաթ բիձան գլուխը թափ է տալիս:

— Այ, տեսնում եք,— ասում է նա,— բաներ կան, որ դուք էլ չեք իմանըմ: Հըմի որ ձեզ վրա ծիծաղեմ, լավ կըլնի՞: Չէ՞. սկի էլ չեմ ծիծաղի: Պստըկին կսովորեցնեն— հետո: Իսկ դուք հա՛ վրա եք տալի: Ղադեն, — դառնում է նա ինձ,— անունդ ի՞նչ ա: Սուրե՞ն: Լավ անուն ա: Արի էստեղ նստի, ղադեն,— ցույց է տալիս նա գետնին փռած յափնջու փեշը:

Այնպես պարզ, սրտագին է նրա հրավերը. ես ամաչելով մոտենում եմ— նստում յափնջու վրա: Մազաթ բիձայի ամբողջ արտաքինը նման է կրոնի դասագրքում նկարած Աբրահամ նահապետին: Նա չիբուխը բերնին թիկն է տվել յափնջու վրա և խորը, խորը

նստած երազուն աչքերով նայում է տավարին, որ, աշնան դաշտում ցրված արածում է հանգիստ:

— Դու ումոնցի՞ց կլնես, ղաղեն,— հարցնում է Մաղաթ բիձան:

Ես տալիս եմ մեր անունը: Նա ճանաչում է հորս, պապիս, ու խրախուսում, սիրտ է տալիս, որ ոչ մի բանից չվախենամ— ոչ տավարից, ոչ տավարածից, և երբ հանդը կգամ— տավարս միշտ բերեմ խառնեմ իր տավարին: Իմանալով, որ չեմ ուզում դպրոց գնալ— գլուխն օրորում է:

— Էդ լավ չես անում, ղաղեն. սկի լավ չես անում: Ուսումնարանը մարդու խելքը շատացնում ա...— Նա լռում է մի փոքր, մատներով սանրում է խալան միրուքը և շարունակում.— Ասենք՝ մարդ էլ կա՝ չաշացնում ա: Բայցը խելքը հարկավոր բան ա: Տավար գնալու համար էլ խելք ա հարկավոր: Խելք որ չունեցար— տավար էլ չես կարող պահել: Բա՛...

Մաղաթ բիձան... որքա՛ն դանդաղ և ինչպիսի՛ ընդմիջումներով է խոսում: Չիբուխը ծծում է այնպես՝ միրուքն այտերի հետ փոս են ընկնում: Հիմա, երբ գրում եմ նրա մասին, նա ինձ թվում է բրոնզաձույլ մի արձան, որի համար ոչինչ են անձրևն ու քամին, և՛ փոթորիկ և՛ կայծակ: Կամ՝ թվում է երբեմնի բոխի մի կոճղ, որ արմատներն ամուր տարածել է հողում և խլլոտ իրանը ծածկել բրջոտ ճղներով: Փոթորկից հարյուրավոր ծառեր են տապալվում արմատահան, բայց նա միշտ մնում է կանգուն:— Այդ Մաղաթ բիձան, ասես, հողից է դուրս եկել ու ինքը բնության մի մասն է, և ինչ որ կա այդ բնության մեջ՝ բոլորի լեզուն հասկանում է:

Տավարի հետ այնպես է վարվում, որ ուրիշ տավարած երբեք չի կարող: Երբ կովերն ուզում են հեռանալ՝ նա այնպիսի ձայն է հանում, որ նրանք իսկույն կանգ են առնում: Իսկ երբ երկար «հո–հո–հո» է անում—անտառ մտնող կովերը ետ են դառնում: Առաջ

Նկ. Ա. [illegible]

— Դու ումոնցի՞ց կլնես, ղաղեն,—հարցնում է Մաղաթ բիձան:

քշելու համար առանձին ձայն ունի, ջրելու համար բոլորովին այլ: Իսկ երբ գալիս է տավարը տուն տանելու ժամանակը— նա ձայնը զլլացնում է մի այնպիսի հանգով, որ կովերն ու երինջներն ընդհատում են արոտը և բռնում տան ճամբան: Կարծես նա այդ ձայնով հասկացնում է թե տուն գնալու ժամանակն է, և կովերը հասկանում են նրան: Իսկ երբ պատահում է երկու կով կռվում են իրար հետ— նա ձայն է տալիս միայն՝ «հե՛-հե՜»... և կովերը, հնազանդ երեխաների պես, հեռանում են իրարից:

Հետագայում ես շատ տավարած եմ տեսել, բայց Մադաթ բիձի հմտությունը չի ունեցել ոչ մեկը: Այսօր էլ ականջիս հնչում է կարծես նրա «հեյ-հեյ»-ը, որ գնում դիպչում է լեռներին ու անտառներին և երկարում այնտեղ: Նրա գիտությունը տավարի, խոտի, ծառերի մասին անսահման է. գիտի բոլոր ծառերի, բույսերի անունը. գիտի երբ կարելի է ջրել կովերին և երբ հանգիստ տալ, որ կաթը չպակասի: Գիտի ո՛ր ամպն է անձրևաբեր և ո՛ր քամին ի՛նչի նշան է: Իսկ պատմությունները՜... պատմում է, թե ինչպես կովերը վախենում են ոզնուց, ինչպես օձը մտնում է քնած մարդու բերանը և ինչպես առնետները բարձրանում են ձիու «յալը» հյուսում: Պատմում է ու հետո էլ չվի չինում կամ գդալներ կերտում չիչմիրից կամ վայրի տանձենուց:

Մադաթ բիձան, օ՜, չի սիրում, երբ տավարածները քարով կամ փայտով խփում են կովերին. այդպիսի դեպքերում նա գլուխն օրորում է վշտացած:

— Է, ախպեր ջան, ո՞նց կարելի ա, չէ՞ նա էլ քեզ պես չունչ, սիրտ ունի: Որ քեզ խփեն՝ դուր կգա՞... Չէ: Էդպես էլ նրանք... Ջա՛ն տուր, բարեկացի, բայց խփել—չէ՛: Նա էլ քեզ նման ա, մենակ լեզու չունի. սրտի ուզածը չի կարա ասի, պիտի խղճանք: Բա՜... Այ, մի անգամ, ջահել ժամանակս, սարը գնալիս՝ մերու մեջ պատահեցի մի պախրի: Պախրա մի տաս—մի

պատկեր: Քարի ծերին կաղնած՝ արևկող է արել: Մըտիկ եմ անըմ—էնպես լավ ա կաղնել, ոնց որ աստված ա ղրկել: Արի կրակեմ—ասի...

Ու չիբուխը ծծելով պատմում է Մաղաթ բիձան, թե ինչպես է կրակել եղջերուի վրա, որ գյուղում պարծենա, թե ինքն էսպես բան է արել: Կրակում է—տրա՛ք.— եղջերուն նայում է նրա կողմն ու ընկնում: Մաղաթ բիձան գնում-տեսնում է եղջերուն ընկել է մի ցից քարի և հորթի գլուխը դուրս է եկել պատռված փորից: Այդ որ տեսնում է— էլ ձեռ չի տալիս:

— Գնացի սար ո՛նց արունք արած,— շարունակում է Մաղաթ բիձան, չիբուխը ծծելով, միրուքն այտերի հետ փոս քցելով ու մի առ ժամ անխոս նայում է հեռուն, կարծես հիշում է անցածը:— Էդ օրվանից որսի թարկը տըվի: Մեղք բան ա, ղաղեն: Շա՛տ... Հորթի գլուխը մոր պատռած փորից դուրս եկած, մեղք բան ա...:— Նա լռում է նորից:— Նրանք էլ մե՛ր են, ղաղեն, նրանք էլ հե՛ր են. նրանք էլ մեզ նման սիրտ ունեն:

Լռում է, ծուխը ծոր տալիս ու ասում.

— Երբ տեսնես ծտի ճուտը բնից ընկել ա—տեղը դիր. սոված չուն տեսնես—մի կտոր հաց տուր: Հաց չունես— թող գնա... Ձեռ չտաս, ղաղեն, ոչ մի կենդանու. ամենքն էլ աշխարհ են եկել ապրելու. էն էլ ի՛նչ պըտի ապրեն— մինը մի ամիս, մեկելը— մի տարի, շատ-շատ տասը տարի... Մարդն ա մենակ, որ շատ ա ապրում: Դրա համար էլ անխիղճ ա... Էդպես ա. շատ ապրողն անխիղճ ա ըլում: Պլենակը (թիթեռը) յա ծիտը քեզ օրինակ. ո՞ւմ են վատ բան անում: Հեչ մեկին: Բայց մարդը— օ՜օ՜օ՜...

Եվ Մաղաթ բիձան տնքում է ու չիբուխը ծծում եռանդով. ծուխը ոլորվում է հանդարտ ու հալվում է օդում: Մեր վերև դեղնող անտառը խշշում է անհանգիստ, մեր առջև փռվում են մերկ դաշտերը և կաղամբի և դետնախնձորի ցանքսերը, որ կարծես ավելորդ

կարկատաններ լինեն դաշտի վրա: Տավարն արածում է ցրված. կուշտ երինջները հանաքով գլուխ-գլխի են տալիս: Երկնքով թռչունների երամներ են անցնում:

Ու Մաղաթ բիձան պատմում է էլի թռչունների, բույսերի մասին, հետո տղաներին ուղարկում է գետնախնձոր կամ խնձոր գողանալու:

— Գնա, ղաղեն, մի քանի խնձոր բեր,—ասում է նա ինձ առաջին անգամ հանդիստ ու պարզ ձևով, ասես ուղարկում է մեր կամ իր այգին:

— Որտեղի՞ց,— հարցնում եմ տարակուսած:

Իմ շվարումը նկատելով՝ ցույց է տալիս մոտիկ գտնվող խնձորի այգին:

— Ո՞ւմ ասեմ:

Մաղաթ բիձան գլուխն օրորում է քմծիծաղ:

— Ո՛ւմ պըտի, ղաղեն: Գնա՝ պատի վրով մտի, քաղի բեր,— շարունակում է նա նույն հանդարտ, պարզ ձևով:

— Բա որ տեսնե՞ն:

— Հենց գնա, ղաղեն, չտեսնեն:

Այդ ես չեմ հասկանում. իսկ եթե տեսնե՞ն ու բռնե՞ն:

— Ընենց արա, որ չտեսնեն. իսկ եթե բռնեն, ասա՝ ինձ համար ա, Մաղաթ բիձի համար: Գնա՛, ղաղեն, գնա: Երբ չունես՝ գողանալն ամոթ չի: Աշխարհում ո՞վ ումից չի գողանում—: Ղուշը (թռչունը), որ ղուշ ա, նա էլ ա գողանում—արտից, անտառից, մարդուց: Գազանը հո ավելի: Իսկ մարդը—բոլորից շատ: Ով շատ գողանում ա, ղաղեն, նա էլ շատ հարստանում ա: Բայց ես հարստություն չեմ սիրում. ինձ օրը մի բոքոն, մի կտոր պանիր, մի երկու կարտոփ յա երկու խնձոր— հերի՛ք ա:

Տեսնելով դժվարանում եմ գողության գնալ, նա սպասում է մինչև ուրիշ տավարածներն են մոտենում: Երեք հոգի են՝ տասից-տասներկու տարեկան տղաներ՝ տրեխավոր, ճիպոտներով զինված: Կես խոսքերից

Հասկանում են Մաղաթ բիձին ու վազում դեպի այգի. և չի անցնում կես ժամ, վերադառնում են ծոց ու գրպան լիքը: Մաղաթ բիձան մի երկուսը վերցնում է իրեն, մնացածը թողնում տղաներին:

— Ագահ մի ըլեք, տղեք. ինչքան պետք ա, էնքան քաղեցեք. մի անգամից չեն պոկի...

Մաղաթ բիձան այդպես ուղարկում է և գետնախնձորի և դաղարի:

Բայց ամենից ավելի Մաղաթ բիձան սիրում է տղաներին ուղարկել խնձորի. և տղաներն այդ գողությունն անում են զարմանալի ձևով. Նրանցից մեկը գնում է այգեպանին հայտնում, թե այգու ներքին մասը գող մտավ. ու մինչև այգեպանը գնում է ներքև, մի քանի տավարած մտնում են այգու վերին մասը և ծոց ու գրպան լցնում խնձորով: Բայց ամեն անգամ այդ ձևով չի լինում. պատահում է, երբ տեսնում են այգեպանը չի երևում—ուղղակի մտնում են այգին՝ որևէ հարմար տեղից, որ այնուհետև փախչելը հեշտ լինի:

Եվ մի անգամ ահա տղաներն ինձ էլ են տանում հետները, որ եթե այգի չեմ մտնի, գոնե «դարաուլ» քաշեմ: Բայց երբ հետախուզությունը պարզում է, որ ոչ այգեպանը կա, ոչ տղան, չորս հոգով մտնում ենք խնձորի այգի:

Հիշում եմ.— մայր մտնող արևն իր հրաշեկ շողերով ողողել է այգին և խնձորները. խնձորները տերևների մեջ վառվում են ոսկու և նարնջի փայլով: Աշխարհի գեղեցիկ տեսարաններից մեկը մի՞թե խնձորները չեն՝ մայրամուտի շողերով ոսկեվորված: Եվ ո՞վ կարող է անտարբեր անցնել նրանց մոտով, և չըհիանալ ու չգայթակղվել նրանցով:

Մենք զգուշությամբ անցնում ենք այգու վերին պատը. զգուշությամբ, որ շունը չլսի մեր ոտնաձայնը. զգուշությամբ ու չորս կողմ աչք ածելով բարձրանում ենք ծառերը, ամեն մեկս մի ծառ. զգուշությամբ քաղում ենք խնձորները և լցնում ծոցներս— ամենահարմար տեղը՝ վազելու դեպքում: Քաղում ենք, քաղում հափշտակված և այն է՝ պատրաստվում ենք իջնել, երբ տղաներից մեկի գոտին բացվում է, թե՞ ուռած վերնաշապիկի փեշն է դուրս գալիս գոտուց, հանկարծ խնձորները ծառի վերևից— թը՛փ-թը՛րփ,—կարկուտի պես թափվում են ցած:

Ու շունն անմիջապես անհանգիստ հաչոցով լցնում է այգին. լսվում է հայհոյանք ու քայլերի ձայն:

Տղաներն իջնում են ահաբեկ. ես շտապում եմ հետևել նրանց. շո՛ւտ—շո՛ւտ... Նրանք իջնում են ու հայդա՛—մեկը մյուսի ետևից: Իսկ իմ վերնաշապիկի փեշն ընկնում է հանկարծ մի փոքրիկ, փոքրիկ մատնաչափ ճյուղի... Ես ինձ կորցնում եմ ավելի, ու մինչ փեշս ազատում եմ, որ իջնեմ, տղաները պատն անցնում են, թողնելով ինձ մենակ՝ ներքևից եկող մարդկանց առաջ, որ մոտենում են արդեն: Իջնում եմ, վերջապես, և կռացած վազում դեպի պատը, և որպեսզի չնկատեն պատն անցնելիս, ես փորսող տալով մտնում եմ պատի տակ բացված առվի անցքը: Եվ իմ դժբախտությունն սկսվում է հենց այստեղ.— առվի անցքը նեղ է, իսկ ծոցս լիքն է խնձորներով. ես գուցե անցնեմ, բայց խնձորները, խնձորները թույլ չեն տալիս:

Ու մինչ մտածում եմ գոտիս արձակել, խնձորները թափել անցնելու համար, այգեպանն ու տղան վրա են հասնում ու... ոտիցս բռնելով՝ դուրս քաշում առվի անցքից... Քանի՞ ապտակ է իջնում երեսիս— ես չեմ հաշվում, և չեմ կարող հաշվել. ես սթափվում եմ այն ժամանակ, երբ խնձորներն ու գոտիս թողած, հասնում եմ Մաղաթ բիձի մոտ և երբ տղաներն ասում են, որ երեսիս մի մասը «կապտել է»:

Ես ձեռս տանում եմ երեսս և սաստիկ, սաստիկ ցավ եմ զգում:

— Ի՞նչ ա, ղաղեն, ցավո՞ւմ ա,— հարցնում է

Մաղաթ բիձեն։— Բան չկա։ Ա՛ռ էս խնձորը կեր, կըլավանաս։

Ես շատ ծածկամիտ եմ, որքան էլ դուրսը ինձ հայհոյում են, ծեծում՝ ես ընկերներիս, տանը ոչինչ չեմ ասում, իսկ երբ վրաս որևէ նշան է լինում,— խաբում եմ, թե ընկել եմ կամ բանի եմ դիպել։

Այդպես էլ այդ երեկո, երբ մայրս հարցնում է, թե ինչո՞ւ է երեսս ուռել, ես նրան հավատացնում եմ, որ ընկել եմ։ Մայրս գլուխն օրորում է թերահավատ ու ցավով·

— Հը, հիմա դպրո՞ցն ա լավ, թե՞ տավարը։

Ես չեմ պատասխանում։ Երկընտրանքը դեռ պարզ չի ինձ համար։ Իհարկե, դպրոցը լավ է, բայց··· պըրիստավլի տղան, իմ արարքը···

Մի շաբաթվա ընթացքում ես կամաց-կամաց ընտելանում եմ տավարածության· այլևս առաջվա երկյուղը չունեմ, թե կովերը, մի քիչ հեռանալով, կարող են կորչել, կամ բանջարանոցներն ընկնել։ Հիմա ես էլ, մյուս տավարածների նման, հանգիստ պառկում եմ մեջքիս ու նայում երկնքին։ Դա իմ հաճույքներից մեկն է, թերևս միակ հաճույքը դաշտում։— Որքա՜ն դուրեկան է աշնան ջինջ կապույտ երկինքը և որքան տխուր անտառի տերևաթափը։ Վճիտ երկնքով լողում են քողի նման բարակ, թափանցիկ ամպերը, գեղեցիկ, բազմատեսակ ամպերը։— Ո՞վ է ստեղծել այդ ամպերը և ո՞ւր են գնում նրանք···։ Մեջքիս պառկած, հետևում եմ նրանց ընթացքին, մինչև որ հալվում, անէանում են նրանք մի տեղ կամ անցնում են սարի ետևն ու աներևույթանում։

Պառկած ժամանակ, երբ հանկարծ հիշում եմ դըպրոցը, վեր եմ թռչում ու նստում։ Մտածում եմ ուսուցիչներիս, ընկերներիս մասին, հիշում եմ Եվային, մաղի ծայրին թիթեռի նման բանիթ ունեցող Եվային և մտածում, որ Սամսոնը նրան երևի ասած կլինի, որ

ես տավարած եմ դարձել· և հետաքրքրական է— ի՞նչ կմտածի նա իմ մասին։ Հիշում եմ այս բոլորը ու նախանձում աշնան մարգերում շրջող լորերին, երկնքում չվող թռչուններին և հանգիստ արածող կովերին, որ ո՛չ քացի են տվել պրիստավլի տղային, ոչ էլ վախենում են որևէ մեկից։ Մանավանդ ինձ շատ անվախ են թվում թռչունները, որ ահա երկնքի երեսն ընկած՝ գնում են դեպի հեռուները··· Վայրի բադերը և կըռունկները։

Ամենից հաճելին ու հետաքրքրականը— կռունկների եռանկյունի վաշտերն են, որ հանդարտ թևածումով անցնում են աշնան երկնքով·

— Կըռլը՛կ—կըռլը՛կ···

Ինչ-որ խորհրդավոր վերացնող ու քաղցր բան եմ զգում ես նրանց այդ կարծես վաղուց, շատ վաղուց լսած հարազատ կանչի մեջ։ Եվ երբ նրանք անցնում են սարի ետևը՝ խորին թախիծ ու տխրություն է իջնում վրաս։ Արդյոք ո՞ւր են գնում նրանք այդպես հանդիսավոր ու «կըռլըկ-կըռլըկ»··· Մարդ կարողանա գնալ նրանց հետ· թևեր ունենա ու թռչի, և այնտեղից՝ վերևից նայի աշխարհին։ Տեսնես ինչե՛ր կտեսնի··· Երբեմն էլ մտածում եմ—մարդ կարողանա հասնել մինչև ամպերը· նստի մի ամպի վրա ու գնա մինչև աստղերը ու տեսնի՝ աստղերն ի՞նչ են արդյոք— կրա՞կ, թե՞ աչքեր, ինչպես տատս է ասում։

Իմ ցնորքներից ինձ հանում են դարձյալ կռունկները·

— Կըռլը՛կ—կըռլը՛կ···

— Դրանք իմաստուն ղշեր են,— ասում է Մաղաթ բիձան։— Երբ գալիս են՝ նշանակում ա գարունք ա։ Երբ գնում են—աշունք։ «Պատրաստվեցեք», ասում են։ Առաջ որ փոշտ չի էլել, դրանք են նամակներ տարել-բերել։ Բա՛···

Կռունկների ձայնից հետո ես սիրում եմ անտառի ձայնը· երբ նա մեկ շրշում է հանդարտ, մեկ խշշում

հուզված կամ դղրդում աղմկաձայն. ականջ եմ դնում ուշադիր և ուզում եմ իմանալ, թե ո՞րտեղից են առաջանում այդ ձայները և ի՞նչ են ասում նրանք. և արդյոք ասո՞ւմ են մի բան: Իմ մեջ զարթնում է երգելու ու սուլելու տրամադրություն:

Երբեմն կանգնում եմ անտառի պռնկին ու ձայն տալիս. «Օ՜–հո՜...»: Ինձ հաճույք է պատճառում ձայնիս արձագանքը, որ դրմբում է անտառի խորքում և կրկնվում բամբ ձայնով: Թվում է՝ անտառի խորքից, թե մի մութ անձավից ինչ–որ հսկաներ կրկնում են իմ ձայնը՝ ինձ սաստելու, որ չխանգարեմ իրենց հանգիստը և չծաղրեմ: Իսկ ես իմ անվախությունը ցույց տալու համար՝ շարունակում եմ ծաղրել նրանց:

— Օ՜–հո՜...հո՜...

Պատասխանն ավելի բամբ է լինում: Բայց ես չեմ վախենում.— քայլերի ձայն չի լսվում: Ու շարունակում եմ ավելի ոգևորված:

— Դու էդ լավ չես անում, ղադեն,— ասում է Մադաթ բիձան մի օր:— Անտառի մարդին չի կարելի ծաղրել:

— Անտառի մարդն ո՞վ է...

— Անտառի մարդը՜... բա մինչև հիմի չես իմանում անտառի մարդն ո՞վ ա: Անտառի մարդը, ա՛յ էս բոլորին—ծառին, խոտին, մկծեռին, ալապտրակին, պախրին շունչ տվողն ու պահողն ա.. Բա՜, ղադեն: էդ դու նրան տնազ մի անի...

Ա՜յ թե ինչ... Մադաթ բիձի ասածն ինձ վրա խորը տպավորություն է անում: Ուրեմն անտառապահից բացի՝ անտառի ծառերին ու կենդանիներին ուրիշ պահո՞ղ էլ կա, որ ապրում է հենց անտառի մեջ: Ինչո՞ւ մինչև հիմա տատս, մայրիկս այդ բանն ինձ չեն ասել: Ուրեմն մեր ձայնին բարկացած պատասխանողը նա՛ է: Հետաքրքրական է, ի՞նչ մարդ է դա, ի՞նչ կերպարանք ունի:

Բայց, այնուամենայնիվ, ես նրանից վախ չեմ

զգում և շարունակում եմ տնազել նրան օրը մի քանի անգամ. երբ գնում եմ տավարը ետ տալու, որ անտառ չմտնեն, կանգնում եմ ու ծաղրում անտառի մարդուն: Դա ինձ հաճույք է պատճառում.— Թո՛ղ ճաքի: Չեմ վախենում, որովհետև Մադաթ բիձան մոտիկ է: Նա ինձ կպաշտպանի:

Ես ինձ հանգիստ եմ զգում մանավանդ այն ժամանակ, երբ տավարը նստում է, երբ այլևս երկյուղ չկա, թե կովերը կկորչեն: Պառկում եմ մեջքիս վրա, նայում երկնքին ու տարվում ցնորքներով: Հիշում եմ մերթ տատիս, մերթ մորս պատմած հրաշքները: Իսկ երբ դպրոցը միտս է ընկնում՝ նորից վեր եմ թռչում ու տխրում: Հիմա Սամսոնն ահագին բան սովորեց. արդյոք ի՞նչ է մտածում իմ մասին իմ նոր ընկերը՝ Եվան... Բայց քիչ հետո տարվում եմ էլի ցնորքներով.

— տատս պատմել է, որ երկինքը յոթը հարկ է և, ամենավերևին հարկում նստում է աստված՝ իր ոսկե գահի վրա. ճերմակ շորեր ունի նա և ճերմակ մորուք: Երբ ուզում է աշխարհը տեսնել—երկնքի կապույտ դռները բացվում են և նա նայում է աշխարհին, թե ո՛վ ինչ է անում, ով ի՛նչ պատժի կամ պարգևի է արժանի: Այդ ժամանակ երկնքից մինչև երկիրը մի ոսկե սանդուղք է ձգվում, և այդ սանդուղքով ցած են իջնում ճերմակ հագած հրեշտակները՝ աստծու հրամանները կատարելու:

Ցնորքներով տարվելու հետ միաժամանակ, ես միշտ զգուշանում եմ, որ տավարը բանջարանոցներն ու «կարտոֆիները» չընկնեն, որովհետև հանդապահը, որի պարտավորությունների մեջ են մտնում դրանց հսկումն ու պահպանումը, շուտ–շուտ երևում է դաշտում կամ գյուղի ծայրին և հարցնում տավարածներին. «Հը, կարտոֆ գողացե՞լ ես», կամ «Տավարդ հո կարտոֆների մեջ չե՞ս արել»:

Եվ ահա մի օր, երբ Մադաթ բիձան չկա, ես բոլորովին մենակ պառկել նայում եմ երկնքին ու մտա–

ծում եմ այն փոքրիկ տղայի մասին, որի «չներն իրա մսից են»։ Մտածում եմ, չգիտեմ որքան ժամանակ, հանկարծ մի բառաչ եմ լսում. հիշում եմ տավարը, վեր եմ թռչում ու ի՜նչ տեսնեմ— տավարը չկա։ Ահաբեկ նայում եմ այս ու այն կողմ։ Զլինի՞ անտառ են մտել, որ չեն երևում. այն ժամանակ վա՛յ ինձ. կկորչեն կամ անտառապահը «տուն կանի» ու...

Եվ վազում եմ դեպի անտառ, որ հեռու չի։ Բայց դեռ անտառի պռունկը չհասած, նորից ետ եմ նայում դեպի դաշտը, ուր գետնախնձորի, կաղամբի ու բադուկի կոտր-կոտր ցանքսերը որոշակի բաժանվում են հնձած արտերից։ Տավարն այնտեղ էլ չկա... Հայացքըս անցնում է մինչև դաշտի ծայրը, որտեղից սկըսվում են գյուղի տներն ու բարդիները...

Նայում եմ ու ոտներս դողում են հանկարծ։

Մեկը մեր եզներն ու կովերը քշում է դեպի գյուղը։ Ահա մեր սպիտակ եզը, ահա և մեր սև կովը. ուղիղ չորս տավար։ Մե՞րն է... հանդապահը... մի բոպե, և ես սթափվում եմ ու վազում շնչասպառ, այնքան արագ, որքան կարող է վազել ինը տարեկան ահաբեկված տղան։

Վազում եմ խնդրեմ հանդապահին՝ ների ինձ, որ անուշադիր եմ եղել, որ մյուս անգամ չեմ թողնի ցանքերի մեջ ընկնեն։ Ու հավատում եմ, որ կների։ Եթե խոսքերս չազդեն—լաց կլինեմ, նրա ձեռը կհամբուրեմ. կասեմ, որ հայրս կծեծի ինձ... ու վազո՛ւմ եմ, վազո՛ւմ։

Բայց դեռ նրան չհասած, արցունքը թափվում է աչքերիցս։ Մի քիչ էլ, մի քիչ էլ, և ես կհասնեմ նրան։

Եվ, վերջապես, հասնում եմ ահա։

— Քեռի,— հեկեկում եմ ես, և էլ չեմ կարողանում շարունակել։

Հանդապահը հոգեբան է. անմիջապես հասկանում է ո՛վ եմ. հասկանում է, որ տավարն իմն է. ու այն-

պես է թնդում վրաս, որ ես քիչ է մնում գետնին կըպչեմ։

— Կորի՛ր, լակոտ։ Հըլա մի ըստեղ արի, էն օրը քցեմ, որ գոմչին «օրհնյա ի տեր» ասես։

Ու ճիպոտն այնպես է թափ տալիս վրաս, որ վախից քարանում եմ, իսկ ինքը ծեծելով քշում-տանում է մեր եզներն ու կովերը։

Երբ նա գյուղ է մտնում և աչքիցս հեռանում, ես սթափվում եմ նորից ու մտածում.— հիմա ի՞նչ պատասխան տամ հորս, մորս. գնամ հայտնե՞մ. բայց ի՞նչպես. հայրս չի՞ ծեծի արդյոք։

Եվ ես վճռում եմ հայտնել նախ մորս. նա կհասկանա ու կների ինձ։

Օ՜, մոր ներողամտություն, որ սահման չունես...

Նա, արցունքներս սրբելով, լսում է ինձ և իր հերթին, հայտնում է հորս։

Եվ, փոքր անց, հայրս գնում է մեր եզներն ու կովերը բերում։ Բերում կապում է բակում ու մոտենում ինձ։

— Է, հիմի ի՞նչ կասես. էլի դպրոց չե՞ս գնա։

Ես լռում եմ. ես չեմ պատասխանում. երկու տեղն էլ գնալ ես չեմ ցանկանում։ Ես ուրախությամբ կերթայի դպրոց, բայց ի՞նչպես...

Իմ լռությունը, իմ համառությունը անհասկանալի է ծնողներիս։

—Ախր պատճառն ի՞նչ է, որ խրտնել ես դպրոցից,— բարկանում է հայրս։— Քեզ վատ բա՞ն են ասել... Թե՞ վատ բան ես արել։ Ասա՛։ Ով գիտի բան ես արել, ամաչում ես գնալ։ Հը՞։

Այս երեկո ես այնքան հուզված եմ, որ այլևս չեմ կարողանում ինձ պահել և խոստովանում եմ բոլորը։

— Ըհը՛ բանեն ասա՛,— ասում է հայրս, և մյուս օրը առավոտ գնում է դպրոց՝ տեսչին խնդրելու, որ ինձ ընդունեն նորից։

VII

ՆՈՐԻՑ ԴՊՐՈՑՈՒՄ

Այս անգամ դպրոց եմ գնում առանց դժվարության, առանց դժկամելու:

Բայց երբ հայրս ինձ տեսչին հանձնելով՝ գնում
է, ես ինձ շատ անհարմար դրության մեջ եմ զգում.—
ամաչում եմ, կարմրում և չեմ համարձակվում ոչ
միայն տեսչի, այլև աշակերտների երեսին նայել. վա-
խենում եմ հանկարծ բացատրություն պահանջեն դեպ-
քի համար, հանկարծ պրիստավի տղան դա և վրեժ-
խնդիր լինի,— քացով խփի ինձ: Ի՞նչ պիտի անեմ այդ
ժամանակ: Համբերե՞մ, թե՞ պատասխանեմ:

Ինձ թվում է, թե աշակերտները, առաջվա պես,
կծաղրեն ինձ կամ կծիծաղեն վրաս: Այդ պատճառով
բոլորին նայում եմ սրված ուշադրությամբ: Բայց ո-
չինչ, անգամ ինձ ծաղրող ու հալածող տղաները, ո-
րոնց ընկերոջը քացով խփել եմ, նրանք էլ նայում են
ինձ առանց թշնամության. իսկ տուժողն ինքը՝ պրիս-
տավի տղան մինչև իսկ ուշադրություն չի դարձնում
վրաս, խաղում է իր համար. գուցե և մոռացել է ինձ:

Մեր դասարանցիները շրջապատել են ինձ հետա-
քրքրությամբ, մեծ դասարանների աշակերտները
ժպտում են իմ ամաչկոտության վրա, իսկ Սամսոնն
ուրախացած ինձ սիրտ է տալիս շարունակ.

— Մի՛ վախի. արի՛, արի գնանք ներս:

Ես չեմ վախենում, այլ ամաչում եմ, հիշելով ա-
րածս և տեսնելով, թե ինչ հետաքրքրությամբ են շըր-
ջապատել ինձ:

Վերջապես, նրանց հետաքրքրությունից ինձ ա-
զատում է զանգը:

— Դե՛, գնա տեղդ նստիր և խելոք կաց,— ասում
է տեսուչը, ձեռը մեղմաբար մեջքիս խփելով:

Ես, տեսչի այդ վերաբերմունքից խրախուսված,
գնում եմ ներս և նստում առաջվան տեղս, այնտեղ ուր
արդեն նստած է Եվան: Նստելիս՝ ես նրան բարևում
եմ գլխով, մի թաքուն ահ սրտիս, թե հանկարծ իմա-
ցած լինի իմ արած անկարգությունն ու տավար գը-
նալը և չուզենա կողքիս նստել:

Բայց նա, ընդհակառակը, ժպտում է այտերը փոս
գցելով ու սպիտակ ձեռը մեկնում է ինձ.

— Բարով, Մանասյան: Ինչո՞ւ չէիր գալիս,—ա-
սում է նա մեղմորեն:— Մենք այնքան դաս ենք սովո-
րել...

Օ՜, որքան բարի է թվում նրա ձայնն ինձ, որքան
սիրալիր՝ աշակերտների սառը հետաքրքրության մեջ:
Ուրեմն նա ոչինչ չգիտի, թե՞ գիտի— չի ուզում հի-
շել: Եվ դրա համար նա ինձ մոտ ու հարազատ է թը-
վում, քան մյուսները:

Այդ օրը առաջին դասը տերտերինն է—կրոն:

Ներս է մտնում նա սև շալն ուսերին... Տեր-Գյու-
տը, կամ ինչպես աշակերտներն են ասում տեր-Գու-
թը, առհասարակ աշնանը և ձմեռը, դասավանդելիս,
ուսերին շալ էր գցում: Նրա այդ շալը՜... տերտերի
այդ շալը բերում – տանում է տեր-Հոր հարեվանի
տղան, որ աշակերտ է մեզ մոտ: Դրա համար
այդ տղային բարձր դասարանի աշակերտներն ան-
վանում են «տերտերի շալ»: Տղան նեղանում և որո-
շում է հրաժարվել շալը բերել-տանելուց, բայց չի կա-
րողանում. ոմանք ասում էին՝ ամաչում է, մյուսնե-
րը, թե վախենում է տերտերը վատ թվանշան դնի:

Ներս մտնելով՝ տերտերը մի երկու անգամ գընում-գալիս է դասարանում, ապա մի ընդհանուր անտարբեր նայվածք է պտտում դասարանում և, ամբիոնում նստելով, մատը մեկնում է ինձ.

— Պատմի՛ր:

Ես վեր եմ կենում ու կանգնում շվարած. ոչինչ չգիտեմ պատմելու համար, բայց և չեմ իմանում ի՞նչ պատասխանեմ:

Ինձ օգնության է հասնում Եվան:

— Տեր-հայր, սա վաղուց բացակա էր, էսօր է եկել:

— Հա՛,— ասում է տերտերը ցրված,— որ էդպես է, դու էգուց կպատասխանես:

Ես ուրախանում եմ, որ տերտերը նույնպես չի հետաքրքրվում իմ բացակայության պատճառով. ուրեմն նա՛ էլ ոչինչ չգիտի:

Այսպես է սկսվում իմ նոր մուտքը: Եվ այնուհետև շարունակվում են դպրոցական միատեսակ օրերը, տարիները. օրեր ու տարիներ, որ ղեկավարում են ուսուցիչները,— եղջյուրանման բեխեր ունեցող տեսուչը, որին Սանատրուկ Սերգեիչ ենք ասում, Նիկալայ Պետրովիչը, որ հայերեն գիտեր միայն «խող» բառը, որ արտասանում էր «հող», և որն ավանդում էր մեզ աշխարհագրություն և պատմություն,— ռուսաց լեզվի վարժուհի Լիդա Լվովնան, տեր-Գութը և մյուսները:

Այժմ, երբ տասնամյակների հեռավորությունից, ետ եմ նայում դեպի այդ ժամանակները—դպրոցական միատեսակ օրերի, տարիների միջուկից ելնում են նախ ընկերներս, իմ մտերիմ, իմ չարաճճի ընկերները, որոնց դեռ շատ կհանդիպենք այս պատմության մեջ, և ապա ուսուցիչներից նրանք, որ ավելի ազդեցություն ունեին դպրոցում կամ տպավորություն էին թողնում մեզ վրա: Դրանց հետ ես հիշում եմ, ի հարկե, մեր ընդարձակ բակը, մեր դպրոցի անմոռանալի բակը, ուր

ունեինք հողմացույց, անձրևաչափ և օդերևութաբանական ամեն տեսակ սարքավորում. այդ բակում էին տեղի ունենում մեր խաղերը, մեր զինավարժությունը, և ծառատնկությունը ամեն գարնան— Նիկալայ Պետրովիչի ղեկավարությամբ:

Առավոտները վաղ հավաքվում ենք՝ խաղում դըպրոցի բակում և զանգը տալուն պես՝ կանգնում ենք զույգ-զույգ ու ներս մտնում: Ամեն մեկը զույգ է կազմում իր նստարանի ընկերոջ հետ, և ես ու Եվան կանգնում ենք միշտ միասին: Միայն այդ չի. մենք դասերն էլ համարյա պատասխանում ենք միասին— Եվան ինձ է թելադրում, ես նրան:

Ամենից դժվարն ինձ համար ռուսաց լեզվի, աշխարհագրության և պատմության դասերն են: Դըժվարը դեպքերը չեն, այլ անունները, անծանոթ, անսովոր անունները, որ այնքան շատ են, տարօրինակ, երբեմն անարտասանելի.— Նաբուգոդոնոսոր, Բեհեղցերուղ, Դիոկղետիանոս— կրոնի մեջ. իսկ ռուսաց պատմության մեջ ես չեմ կարողանում արտասանել «Րյուրիկ», և միշտ ասում եմ «Լյուրիկ», որի համար և Նիկալայ Պետրովիչը սաստիկ բարկանում է վրաս և կրկնել տալիս անվերջ: Միևնույն է, ոչինչ չի ըստացվում. «Լյուրիկը» մնում է էլի «Լյուրիկ»:

Ես ու Եվան նստում ենք միշտ առաջին նստարանին, իսկ մեզնից հետո գալիս են Մելիտե Էվանպուլլոն ու Սեդրակը, դերձակ Ավագի տղան, հայտնի Սեդրակը, որ բոլորին կամթում է, գրքերը վերցնում՝ կատակով պահում և ուսուցիչներին բավական գլխացավանք պատճառում: Դասերը թելադրում է և պահանջում, որ իրեն էլ թելադրեն, եթե «դեմ առնի»: Բայց երբեմն, կատակի համար, սխալ բաներ է թելադրում և փորձանքի մեջ գցում ընկերներին: Իսկ երբ ուսուցիչը նկատողություն է անում սխալվող աշակերտին այդ սխալի համար— Սեդրակը ծիծաղում է: Բայց մի անգամ նա ընկավ. սխալվող տղան հայտնեց

Նիկալայ Պետրովիչին, թե այդ սխալը թելադրեց Սեդրակը: Նիկալայ Պետրովիչն անմիջապես կանչեց Սեդրակին ու կանգնեցրեց գրատախտակի մոտ.— «Դե հիմա թելադրի»... Կարծում եք Սեդրակն ընկճվե՞ց: Բնա՛վ: Ուսուցչի թիկունքից լեզուն հանում է, ծամածռություններ անում և երբեմն դաս պատասխանող աշակերտին կա՛մ հավանություն է տալիս գլխով, թե՝ ճիշտ է, շարունակիր. կա՛մ՝ գլուխը տարուբերում է բացասաբար: Մի ուրիշ անգամ հայոց լեզվի դասին, երբ տերտերը նրան, անկարգության համար, միջանցքն է անում, Սեդրակը ներս է մտնում լուսամուտից ու շարունակում ծիծաղեցնել աշակերտներին. և տերտերը որքան էլ ցրված, այնուամենայնիվ նկատում է նրա ներկայությունը և գոռում անսպասելի զայրացած:

— Դո՛ւրս, անիրավ, որտեղից եկել ես, այնտեղ էլ գնա...

Սեդրակը բարձրանում է լուսամուտը՝ բակը ցատկելու:

— Ո՞ւր ես գնում, անիրավ,— կանգնեցնում է նրան տերտերը:

— Դուք ասիք՝ «որտեղից եկել ես, այնտեղ էլ գնա», տեր-հայր: Ես այստեղից եմ եկել,— պատասխանում է Սեդրակը ու թռչում բակը:

Տերտերը գլուխն օրորում է միայն, որ նշանակում է թե Սեդրակից ոչինչ դուրս չի գա:

Սեդրակի ու Մելիտեի ետևը նստում են Ապոստոլ Կարամանիդին ու Ֆիլիպ Զայցևը, երկաթուղու ավագ վարպետի որդին, որ հագնվում է միշտ մաքուր ու կոկ, սանրվում է ճաշակով և փոքրիկ ժամացույց է կրում վարտիքի գրպանում. ունի նաև սադաֆե կոթով փոքրիկ դանակ, որ պահում է կաշվե պատյանի մեջ և մեծ դժվարությամբ է տալիս մեզ մատիտ սրելու: Հայոց լեզվի և կրոնի դասերին—Ապոստոլ Կարամանիդին, Ֆիլիպը և մյուս ռուսները դուրս են գնում,

բայց Մելիտե Նիվանդուլլոն մեզ հետ սովորում է կրոն ու հայոց լեզու: Եվ նա երբեմն մեզնից՝ հայերից լավ էր պատրաստում տերտերի դասերը, և տերտերը միշտ ամաչեցնում էր մեզ.

— Այ, անիրավներ, ամոթ ձեզ. հույն է, բայց հայերենը ձեզնից լավ է սովորում:

Այդ ճիշտ էր. Մելիտեն իսկապես մեզնից լավ էր սովորում, և այդ զարմացնում էր մեզ:

— Մելիտե, դու հայերեն ինչո՞ւ ես սովորում. ինչի՞դ է պետք,— հարցնում ենք մենք:

— Հայրս ասում է «սովորիր, խանութում պետք կգա»:

Մելիտեի հայրն առևտրական է. գլխավոր փողոցի վրա նա մանրուքի և մրգեղենի մի մեծ խանութ ունի: Ցուցանակի վրա խոշոր-խոշոր տառերով գրված է՝ «Արիստո Նիվանդուլլո»: Այդ Արիստոն՝ Մելիտեի հայրն է: Նրա խանութում այնքա՜ն լավ մրգեր կան: Մեր գյուղաքաղաքի ամենալավ մրգերը ծախվում են նրա մոտ. և Մելիտեն երբեմն հոր խանութից միրգ, կանֆետ, թուզ, խուրմա կամ ձիթապտուղ է բերում մեզ ծախում, ու ստացած փողը խնամքով դնում կաշվե պորտմանի մեջ: Կամ ապառիկ տալու դեպքում, ծոցատետրում գրում է հայերեն—այս ինչը մնաց այսքան կոպեկ:

Այդպես չի Ապոստոլ Կարամանիդին. նա շարունակ ասում է, որ իրենք մեր քաղաքում չեն մնալու. շուտով, դպրոցն ավարտելուն պես, պետք է գնան իրենց երկիրը՝ Հունաստան:

— Հեռո՞ւ է,— հարցնում ենք.

— Է, հեռո՜ւ, ծովերից դենը,— ձեռը բարձրացնում ու երկարում է Ապոստոլը:

Նա իր հայրենիքը նկարագրում է իբրև մի հեքիաթային, չքնաղ երկիր՝ կապույտ ծովերի մեջ, պայծառ արևի տակ, ուր ծաղկում են ձիթենին ու նշե-

նին և ուր հասնում են աշխարհի բոլոր մրգերը—նարինջ, նուռ, խաղող:

— Դու եղե՞լ ես այնտեղ:

— Չէ:

— Հապա որտեղից ես իմանում:

— Հայրս է պատմել:

Նրա հայրը հացթուխ է. թխում է ամենաընտիր մատնաքաշ հացը, իսկ եղբայրներից մեկը քարտաշ է, աշխատում է կայարանի շենքերի վրա, երկրորդ եղբայրը ծառայող է: Կիրակի օրերը բոլորը հագնվում են մաքուր, պատշգամում նստում դոմինո խաղում կամ այցելում մյուս հույներին:

— Կալիսպերա նեպե...

Ապոստոլի պատմությունները մենք լսում ենք միշտ հափշտակված. դրանք վերացնում են մեզ և տանում մի ուրիշ հիասքանչ աշխարհ: Եվ ահա մի անգամ, երբ նա հուզված պատմում է իր հայրենիքի, իրենց թագավորների մասին ու պարծենում, ես չեմ համբերում և նույնպես ուզում եմ պարծենալ:

— Մենք էլ թագավոր ունենք,— ասում եմ ես:

Տղաները զարմացած նայում են ինձ:

— Բա ո՞ւր է,— հարցնում է Սեդրակը:

— Մեր կաթողիկոսը պահում է, դեռ փոքր է. շներն էլ իրա մոտից են:

Տղաներն ավելի են զարմանում:

— Դու ի՞նչ գիտես,— հետաքրքրվում է Սեդրակը:

Մայրս է պատմել,— ասում եմ ես:

— Իմ մայրն էլ է պատմել,— վրա է բերում Սամսոնը:

Տղաները զարմանում են, և ամենից ավելի Ապոստոլն ու Մելիտեն. զարմանում են մանավանդ այն բանից, որ «մեր թագավորի շներն իրա մոտից են»: Եվ զարմանքն այնքան մեծ է, որ նրանք չեն կարողանում իրենց զսպել ու անմիջապես մոտենում են տեսչին:

— Ծանատրուկ Սերգեիչ, կա՞րող է էսպես բան լինել,— ասում են նրանք, պատմելով իմ ասածը:

Տեսուչը, պատասխանի փոխարեն նայում է ինձ և գլուխն օրորում եղջերանման բեխերի հետ միասին, որ ասես պատրաստվում է հարու տալ:

— Մյուս անգամ այդպիսի հիմար բաներ չլսեմ,—մատը թափ է տալիս նա և շարունակում իր զրոսանքը Նիկոլայ Պետրովիչի և Լիդա Լվովնայի հետ:

Ես խորտակված եմ. դաժանաբար պարտվում եմ հույների առաջ և լռում: Ուրեմն դա հիմար բա՞ն է: Միթե՞ մայրս խաբել է ինձ: Չէ՞ որ տատս էլ է պատմել նույնը, Սամսոնի մայրն էլ: Ուրեմն բոլորը խաբե՞լ են մեզ...

Ու իմ մեջ կասկածներ են զարթնում:

Բայց մեր ընկերների հարաբերություններն այսպիսի բաներով երբեք չեն վատանում: Մենք ոչ միայն դպրոցում, այլ և դասերից հետո էլ, ամեն օր համարյա հանդիպում ենք, խաղում, կամ գնում ենք դաշտ, անտառ: Երբեմն էլ, երեկոները հավաքվում նստում ենք առանձնացած մի տեղ աստղերի տակ ու զրուցում երկար: Երկինք ու երկիր խառնում ենք իրար: Աստղերը բաժանում ենք միմյանց միջև, թե ո՛րն ում աստղն է, ուզում ենք իմանալ ի՞նչ է իսկապես արևը, ի՞նչ է լուսինը, ի՞նչից են նրանք շինված և ո՞վ է կարգադրում արդյոք գիշերվա ու ցերեկվա գործերը... Այնպես ուզում ենք ամեն բան պարզել, իմանալ և թափանցել իրերի խորքը: Ուսուցիչների բացատրությունները մեզ չեն բավարարում, և մենք մեր փոքրիկ մտքերով հածում ենք տիեզերական խնդիրների շուրջը, ինչպես ծտերը ցորենի փակ պարկերի շուրջը:

— Ես կուզեի գիտնական լինել ու էդ բոլորն իմանալ,— ասում է Սեդրակը, հափշտակված այդ մթին ու խորհրդավոր գաղտնիքներով:

— Էդ բաները դժվար է իմանալ,— ասում է Սամ-

տոնը:—Իմ մորաքրոջ տղան սկի չգիտի, դու ի՛նչ պիտի իմանաս:

— Քո մորաքրոջ տղան հո գիտնական չի, ուսանող է,— առարկում է Սեդրակը:— Իսկ ես ուզում եմ գիտնական լինեմ ու ամեն բան իմանամ:

— Գիտնակա՞ն. կարծում ես հեշտ է,— նկատում է Սամսոնը,— դու սկի քու դասերը չես կարդում, էնքան հաստ գրքեր ո՞նց պտի կարդաս:

— Չէ, Սեդրակ, էդ քու բանը չի. դու ավելի լավ է տանուտեր դարձի,—խորհուրդ է տալիս Մելիտեն,— որ չախրած մարդուդ բանտարկես, դոշիդ մեդալ կախես:

— Տանուտերը լավ չի,— միջամտում է գյուղացին Աշոտը՝ մեր Թաղեցի այրի Նոյեմի տղան:— Ի՞նչ բան է որ— մարդ բանտարկել, սրա-նրա վրա գոռալ:

— Բա որ լա՛վ կապրի. նվերներ կստանա, բոլորին կհրամայի,— շարունակում է Մելիտեն:

— Չէ,— գլուխն օրորում է Աշոտը:— Եթե ինձ հարցնեք՝ ես ավելի շուտ տերտեր կլինեի, քան տանուտեր: Բոլորը համ պատիվ կտան, համ փող, համ էլ հանգիստ կապրես քեզ համար:

— Բա մեռել կարո՞ղ ես թաղել,— վրա է պրծնում Սեդրակը:

— Չէ. ես մեռելից վախենում եմ,— խոստովանում է Աշոտը, և մի փոքր մտածելով, ավելացնում է.— որ էդպես է —ուսուցիչ կլինեմ:

Կամաց-կամաց խոսում ենք թե ո՛վ իսկապես ի՛նչ կուզեր լինել:

Սամսոնն ասում է, թե ինքը կուզեր մորաքրոջ տղայի նման ուսանող դառնալ:

— Իսկ դու ի՞նչ կուզես լինել, Սուրեն,— հարցնում է նա ինձ:

— Տելեգրաֆիստ,— ասում եմ ես:

Վաղուց հեռագրիչները, մանավանդ երկաթուղու հեռագրիչները դուր են գալիս ինձ՝ իրենց փայլուն կոճակավոր պիջակներով, կակարդավոր գլխարկներով: Բացի դրանից՝ ինձ թվում է նույնպես, որ նրանցից խելոք ու հնարագետ մարդ չկա. ուրիշ ո՞վ կարող է նրանց պես թելերի միջով խոսել քաղաքների հետ:

Ապոստոլը ոչինչ չի ուզում. նա սպասում է դըպրոցն ավարտի ու գնա Հունաստան. այնտեղ էլ կըրոշի իր անելիքը: Իսկ Մելիտեն այն կարծիքի է, որ պետք է շարունակի հոր գործը:

— Խանութը կմեծացնեմ ու ամեն տեսակ նոր բան կծախեմ: Դուք էլ կգաք ինձանից առուտուր անելու...

— Դե, կալիսպերա, նեպե՛,— ասում է Սեդրակը:— Հերիք է, գնանք քնենք:

Ու տղաները ցրվում են իրենց տները, մտածելով վաղվան դասերի և ուսուցիչների մասին: Եվ ամենից առաջ, իհարկե, Նիկոլայ Պետրովիչի մասին, որ այնքա՛ն խստապահանջ է ու բարկացկոտ:

VIII

ՆԻԿԱԼԱՅ ՊԵՏՐՈՎԻՉ

Աշակերտները ոչ մեկից այնպես չեն վախենում, ինչպես Նիկալայ Պետրովիչից: Ինչո՞ւ է այդպես: Թերևս դրա պատճառն այն է, որ նա պատմությունից ու աշխարհագրությունից բացի մեզ սովորեցնում է նաև զինավարժություն, և պահանջկոտ է ու խիստ. հետո չի սիրում, երբ որևէ անուն կամ բառ աղավաղում են արտասանելիս: Բայց հետաքրքիր, շատ հետաքրքիր մարդ է Նիկալայ Պետրովիչը.— նա հագնում է դեղին կոճակներով սև սյուրտուկ և նույնպիսի ժիլետ. Նրա դեմքն սպիտակ է, իսկ մազերը չեկ՝ դիք կանգնած, որ հիշեցնում են նոր ծլած գարի: Ինքը նույնպես չեկ է, ջահել ու բարձրահասակ: Նրա ժամացույցի շղթայից կախված է մի խոզ: Որևէ աշակերտի վրա բարկանալիս՝ նա մատով ցույց է տալիս այդ խոզը և ասում. «Հո՛գ, հո՛գ... դու՝ հոգ»: Առհասարակ Նիկալայ Պետրովիչը սիրում է անուններ կպցնել աշակերտներին: Սեդրակին, օրինակ, որպես անկարգություններ անող աշակերտի, անվանում է «Պուգաչյով», Սամսոնին, «Երկար լեզու», «Մելիտեին՝ «հոգ», Ապոստոլին ու ինձ «մայոր», և այդպես մյուսներին: Բոլոր անուններն էլ նա կապում է աշակերտների այս կամ այն վարքի հետ: Սամսոնին, օրինակ, «Երկար լեզու» անվանում է նրա համար, որովհետև Սամսոնը սովորություն ունի՝ լեզու հանել աշակերտների վրա. Մելիտեին «հոգ» է ասում՝ սըրան-նրան գլխով խփելու համար, իսկ իմ ու Ապոստոլի «մայորն» արդյունք եղավ այն բանի, որ մենք ծառատնկության օրը վատ էինք աշխատում: Ընկերները փոս էին փորում, ծառ էին տնկում, իսկ մենք գործն ընդհատել՝ զրուցում էինք պարապ:

— Ահա՛ ձեզ մայորներ... մայորներ. իսկական մայորներ...

Եվ այդ օրվանից մեզ կանչում է «մայոր»:

Դասարան մտնելիս՝ նա մի վայրկյան կանգնում է դռան մոտ, մի ընդհանուր զննական ու խիստ հայացք է գցում աշակերտների վրա և ապա ծանր քայլերով մոտենում ամբիոնին.

— Նու, պատրա՞ստ եք:

Դասարանը պատասխանում է.

— Այո:

— Պետրոսյան, սկսիր:

Խե՛ղճ Պետրոսյան... Նիկալայ Պետրովիչը միշտ քեզանից էր սկսում, որովհետև դու դասերդ լավ չէիր պատմում. Թեպետ իմանում էիր, բայց չէիր կարողանում պատասխանել համարձակ, և սպասում էիր, որ երբեմն թելադրեն, և թելադրողները հաճախ ավելի սխալանքի մեջ էին գցում քեզ, ինչպես արի և ես մի անգամ, ու տուժեցի դրա համար:

Պետրոսյանն իր տարիքից փոքր երևող տղա է. դաս պատմելիս՝ իրեն կորցնում է և շուռ-շուռ այս ու այն կողմն է նայում, թե արդյոք սխալ չարա՞վ և արդյոք հիմա մեկը չի՞ բռնի իր սխալը կամ ուղղի: Երբեմն էլ կամացուկ ասում էր հարևաններին.— «Վրա քցեք»: Իսկ երբ «վրա էին քցում»— թելադրում էին, նա վստահ էր լինում, որ դա ճիշտ է, ու ընկնում էր սխալների մեջ:

Մի անգամ ահա՝ աշխարհագրության դասին՝

Պետրոսյանը դժվարանում է պատասխանել, թե ո՛րն է Բելգիայի մայրաքաղաքը. գուցե և գիտի, բայց կասկածով նայում է այս ու այն կողմ և, թվում է, օգնություն է սպասում:

— Բուխարեստը,— թելադրում եմ ես, խղճալով նրան:

— Բուխարեստը,— կրկնում է Պետրոսյանը վստահ:

Բայց Նիկոլայ Պետրովիչի սրատես աչքերը նկատում են, գուցե և սուր ականջներն են լսում, թե ո՛վ է թելադրողը— նա հանդարտ առաջ է գալիս դեպի իմ նստարանը և, ականջս բռնելով, ինչպես եզն են տանում լծելու, մոտեցնում է ինձ գրատախտակին:

— Կանգնի՛ր մինչև դասի վերջը, որ իմանաս, թե Բելգիայի մայրաքաղաքը ո՛չ թե Բուխարեստն է, այլ Բրյուսելը:

Եվ ես մինչև դասի վերջը կանգնած նայում եմ ընկերներիս, ու ոչ այնքան ամաչում, որքան հոգնում եմ. չարունակ մի ոտից հենվում եմ մյուսին և երանի տալիս ընկերներիս, որ նստած են:

Այսպես է Նիկոլայ Պետրովիչը: Նրա պատիժներըն են՝ «կանգնիր անկյունում», «այսօր կմնաս առանց ճաշի», «գնա ծնողիդ կանչիր»: Ամենից սարսափելին այն է, երբ ասում է «գնա տեսչի մոտ և արածդ պատմիր»: Եվ աշակերտը գնում է, գնում է այնպես, ինչպես դատապարտյալը կերթա խոշտանգումի, ու մի առ մի պատմում է իր արարքի կամ հանցագործության մանրամասնությունները, բայց չըթողնելով երբեմն և ոչ մի կետ, ենթադրելով, որ Նիկոլայ Պետրովիչը կարող է ստուգել ամենը:

Բայց Նիկոլայ Պետրովիչն ունի ուրիշ պատիժներ էլ: Սակայն նա դրանք տալիս է զինավարժության ժամանակ, միա՛յն զինավարժության ժամանակ:

Գարնան արևափայլ օր է. մենք զինվորական երկար շարք կազմած կանգնել ենք դպրոցի առաջ: Նիկոլայ Պետրովիչը գլուխը բաց, դեղին կոճակներով բաճկոնն արձակ (որի տակից երևում են նույնպես դեղին կոճակներով ժիլետը և ժամացույցի շղթան՝ մեջքից կախված խողով) գնում-գալիս է մեր առջևից և կարգի հրավիրում ծուռ կանգնողներին, որից հետո սկսում ենք քայլել ընդարձակ բակի երկարությամբ, ձախ ոտերնիս միշտ առաջ գցելով, և Նիկոլայ Պետրովիչը մեր քայլերի հետ շարունակ կրկնում է՝ աջ ձեռքը տակտով շարժելով.

— Ձախը՛: Ձախ՛ը: Ձախը՛...

Մենք քայլում ենք երկ-երկու, ապա վերադասավորվում ենք, քառյակներ կազմում և վարժություններ սկսում տեղում: Կռանում ենք, բարձրանում. շրջվում ենք այս կողմ, այն կողմ, և նորից քայլում:

Փողոցից բազմաթիվ երեխաներ ցանկապատի ճաղերին ընկած կամ ճաղերի արանքով նայում են մեզ, մարդիկ նույնպես կանգ են առնում մեզ դիտելու, և մենք աշխատում ենք լավ քայլել, աչքի ընկնել թե՛ Նիկոլայ Պետրովիչի առաջ, թե՛ փողոցից դիտողների: Դրա համար շատ ճիգ են թափում մանավանդ Սամսոնն ու Ապոստոլը: Եվ ահա այն տեղում, ուր Նիկոլայ Պետրովիչը կանգնում է հանկարծ և բացականչում. «Во фронт!»— շրջվող տղաները թափով դիպչում են անուշադիր Սամսոնին,— Սամսոնն ընկնում է, իր հետ գցելով և մի ուրիշ աշակերտի: Այնքան անսպասելի ու զավեշտական է լինում այդ բոլորը, որ ես չեմ կարողանում ծիծաղս զսպել ու քրքջում եմ:

— Ո՞վ է այդտեղ ծիծաղում,— առաջ է գալիս Նիկոլայ Պետրովիչը:— Արի այստեղ:

Ես, ծիծաղս հազիվ զսպելով, դուրս եմ գալիս շարքից և մոտենում նրան:

Նիկոլայ Պետրովիչը սաստիկ բարկացած է, բայց բարկությունը պահում, սանձահարում է. ես այդ զգում եմ նրա ձեռներից, որ այնպես, մագիլների պես սեղմում են ուսերս և երեսս շրջում դեպի արևը:

— Նայի՛ր,— ցույց է տալիս նա արևը:

Սա առաջին անգամը չի, որ Նիկոլայ Պետրովիչը զինավարժության ժամանակ զանցառու կամ կարգխանգարող աշակերտներին պատժում է այդ ձևով, որ տղաներն անվանում են «արևի պատիժ»: «Արևի պատիժ» ստացել են թե Սեդրակը, թե Ապոստոլ Կարամանիդին, թե Պետրոսյանը և թե շատ ուրիշները:

Բայց ես այդ պատիժն այսօր ստանում եմ առաջին անգամ:

Եվ որքան տարօրինակ պատիժ է այդ.— պետք է ուղիղ կանգնել ու բաց աչքերով նայել գարնան շլացուցիչ արևին:

Առաջին վայրկյանին բիբերս խաղում են և ես աչքերս փակում եմ:

Բայց Նիկոլայ Պետրովիչն իսկույն.

— Նայի՛ր, նայի՛ր...

Ես նորից աչքերս բաց եմ անում և անմիջապես կկոցում էլի.— այնպե՛ս կուրացուցիչ, այնպե՛ս շլացնող են ճառագայթները: Թվում է արևը միայն ինձ է նայում, թվում է իր հրաշեկ նիզակներն ու հրեղեն ասեղները նա ուղղել է միայն իմ աչքերին: Ու ես չեմ կարողանում դիմանալ այդ սուրսայր նիզակներին, նրանց փայլին. աչքերս փակում եմ դարձյալ կամ նայում գետնին: Սակայն Նիկոլայ Պետրովիչը չի մոռանում ինձ. նա շուտ-շուտ ետ է դառնում ու կարգադրում.

— Ուղի՛ղ արևի՛ն:

Ես նայում եմ և անմիջապես ձեռս հովանի անում:

Նկ. Ս. Թամամշյանի



— Նայի՛ր,— ցույց է տալիս նա արևը:

— Այդ չեղա՛վ, չեղա՛վ,— կրկնում է Նիկոլայ Պետրովիչը:

Ես այլևս չեմ համբերում. ձեռս թափ եմ տալիս ու գնում դեպի դպրոց:

— Ո՞ւր, ո՞ւր,— կանչում է Նիկոլայ Պետրովիչը ետևից և, չգիտեմ, հասկանո՞ւմ է արդյոք, որ տեսչի մոտ եմ գնում,— անմիջապես կարգադրում է.— Շարք կանգնիր, չա՛րք... Տո՛ւտ:

Ես, իհարկե շարք եմ կանգնում և մասնակցում վարժությանը: Սա ավելի լավ է, քան գնալ գանգատվել տեսչին, որ, ով գիտի, ինչպես կընդուներ իմ գանգատը: Բայց այն էլ հարց է— կհամարձակվե՞ի արդյոք գանգատվել: Դա միամիտ բանկո՞ւմ չէր իմ կողմից, որ հանդչեր պիտի թերևս մինչև դպրոցի շեմքը: Ո՞վ է ուսուցչից գանգատվում տեսչին: Ի՞նչ համարձակություն էր այդ:

Սակայն այս աշխարհում ամեն բան վերջ ունի:

«Արևի պատիժն» էլ իր վերջն ունեցավ:

Բայց դեռ քանիսը պատժվեցին մինչև այդ օրը:

Վերջին պատժվողները եղան դարձյալ Սեդրակը, Աղոստոսը և ուրիշները, իսկ ամենավերջինը՝ Մելիտեն: Այդ ժամանակ էր, որ Մելիտեն լաց եղավ և Սեդրակը բռնկեց, այն Սեդրակը, որին Նիկոլայ Պետրովիչը, անկարգության համար, «Պուգաչյով» էր անվանում:

— Տղերք, սա որ էսպես տանջում է մեզ, եկեք դրա գլխին մի օյին խաղանք,— ասում է Սեդրակը հուզված, փոքրիկ բռունցքը թափ տալով, և նրա սև աչքերը բոցկլտում են:

Մենք ընկերներով համաձայն ենք, միայն Զարգարյան Աշոտը՝ մեր թաղեցի այրի Նոյեմի տղան՝ Աշոտը դեմ է:

— Լավ չի,—ասում է նա սև գլուխն օրորելով,— լավ չի ուսուցչի գլխին օյին խաղալ: Անհարմար է, տղերք:

— Քեզ չի պատժել՝ դրա համար ես ասում հա՞, — հարձակվում է Սեդրակը նրա վրա: — Թո՛ղ հլա քեզ էլ կանգնեցնի արևի դեմ, տեսնեմ էդպես կասե՞ս:

— Ձեզ կարգին պահեք՝ չկանգնեցնի,— առարկում է Աշոտը հանգիստ:— Տեսնում եք բարկացող մարդ է...

Սեդրակն այլևս չի լսում նրան, մեզ առանձնացնում է և հարցնում, թե ինչ «օյին» կարելի է խաղալ:

Մտածում ենք երկար, բայց հարմար բան չենք գտնում:

Եվ գտնողը դարձյալ Սեդրակն ինքն է լինում:

Մեր դպրոցում այդ ժամանակ շատ ընդունված էր աթոռի տակ ասեղ դնելը:

Սեդրակն առաջարկում է այդ:

Ի՞նչ կա որ. մենք համաձայն ենք, եթե միայն հաջողվի:

—Դուք հանգիստ կացեք,— ասում է Սեդրակը,— միայն թե Աշոտը բանը չփչացնի:

Եվ ահա մի օր երկրորդ դասից առաջ, երբ աշակերտների մեծ մասը դուրսն են, Մելիտեն, Սեդրակի ղեկավարությամբ ու ցուցմունքներով, ասեղն ամրացնում է Նիկալայ Պետրովիչի աթոռին և թելի ծայրը տանում մինչև իր նստարանը:

Զանգը տալիս են: Աշակերտները խումբ-խումբ, աղմուկով մտնում են ներս:

Մելիտեն, թելի ծայրը բռնած սպասում է գունատ և ըստ երևույթին շատ հուզված: Նրա թելն անցնում է մեր նստարանի տակով, և ես տեսնում եմ, թե ինչպես է դողում թելը: Ես ամեն կերպ աշխատում եմ, որ Եվան՝ նստարանի իմ ընկերը՝ չնկատի այդ թելը: Դրա համար ցույց եմ տալիս նրան Իոհան Թագավորին, որ զայրացած պատռում է խանի թուղթը և տրորում ոտների տակ:

— Թագավորն էլ էդպես բարկանա՞,— ասում եմ ես:

— Ի՞նչ կա որ. դա պատկերումն է էդպես,— պատասխանում է Եվան, և չի կարողանում շարունակել. որովհետև այդ րոպեին ներս է մտնում Նիկալայ Պետրովիչը. նա, ինչպես միշտ, մի վայրկյան կանգ է առնում դռան մոտ, զննող հայացքը պտտում է դասարանում և արագ քայլերով մոտենում ամբիոնին:

Թելը ոչ թե դողում, այլ ցնցվում է հիմա:

— Նու, պատրա՞ստ եք,— տալիս է Նիկալայ Պետրովիչն իր սովորական հարցը:

— Այո, պատասխանում է դասարանը:

Թելը շարունակում է դողալ:

— Պետրոսյան, պատմի՛ր,— ասում է Նիկալայ Պետրովիչը և նստում:

Բայց հազիվ նստած՝ նա ծուլ է լինում խայթվածի պես, անսովոր մի «ա՛» անելով: Ապա ձեռքը տանում է դեպի աթոռը և նկատում ասեղը:

Ինչպես նկարագրեմ հիմա Նիկալայ Պետրովիչի այլայլված դեմքը, ջղաձիգ շարժումները և ատամների կրճտոցը, որ տևեց միայն մի վայրկյան և սարսուռ մաղեց դասարանի վրա, որից հետո նա անմիջապես հավաքեց իրեն ու չանթալի հայացքը պտտեց դասարանում:

— Ո՞վ է արել այս,— հանկարծ պողպատի պես հնչում է նրա ձայնը դասարանի քար լռության մեջ:

Դասարանը լուռ է:

— Ո՞վ է արել, հարցնում եմ:

Ոչ-ոք չի խոսում.

— Ասացեք, եթե ոչ տեսչին կհայտնեմ, և բոլորդ կարձակվեք:

Սպառնալիքը չի ազդում.— բոլորը լուռ են:

— Ես ձեզ հետ չեմ պարապի, մինչև չտաք հանցավորի անունը:

Ոչ-ոք դարձյալ ցանկություն չունի խոսելու:

Մենք վախենում ենք միայն Ֆիլիպ Զայցևից և Աչոտից, որ երկուսն էլ իբրև վախկոտ տղաներ, կարող են հանկարծ մի բան ասել. ու տագնապով նայում ենք նրանց կողմը— ես, Սեդրակը, Ապոստոլը, Մելիտեն: Աչոտը նստել է անտարբեր, իսկ Ֆիլիպը գլուխը կախել է գրքի վրա: Եվ թերևս նրա այդ կասկածելի դիրքը, թերևս մեր նայվածքներն են պատճառը, որ Նիկոլայ Պետրովիչն ինքն էլ դառնում է նրա կողմը:

— Զայցև. դո՞ւ ես արել:

Թերևս դա մի խորամանկ հարց էր, որովհետև ոչ-ոք և Նիկոլայ Պետրովիչն այդ համարձակությունը նրանից սպասել չէր կարող. բայց հարցը տրվում էր, գուցե, նրա համար, որ Զայցևը վախից հայտնի հանցավորի անունը:

Սակայն Զայցևն իմանալով հանդերձ, պատասխանում է.

— Ոչ, Նիկոլայ Պետրովիչ. ես չեմ արել:

— Հապա ո՞վ է արել:

— Չգիտեմ:

Նիկոլայ Պետրովիչը տաքանում է և ձեռքը զարկում սեղանին:

— Ասացեք հանցավորի անունը:

Դասարանը լուռ է:

— Կրկնում եմ՝ մինչև չասեք, չեմ պարապի:

Սպառնալիքը նորից չի ազդում:

Ոչ-ոք ձայն չի հանում:

Այդ ժամանակ կատարվում է տարօրինակ մի բան.— Նիկոլայ Պետրովիչը պոկվում է ամբիոնից և նետվում դուրս՝ այնպես այլայլված ու հուզված, որն ավելի է ազդում մեզ, քան նրա տված սպառնալիքը. թվաց—գնում է արտակարգ մի բան կազմակերպելու մեր դեմ: Եվ մենք չէինք սխալվում: Մի քանի րոպեից ներս է մտնում տեսուչը՝ Սանատրուկ Սերգեևիչը՝ մռայլ, սովորականից ավելի փութկոտ քայլերով և ունքամեջը մի մեծ կնճիռ: Ոչ թե ներս է մտնում, ավելի շուտ ցուններին դիպչելով՝ իրեն քցում է դասարանը, արագ մոտենում է ամբիոնին ու ձեռը նրան հենելով՝ կանգնում: Այսինքն կանգնում է համարյա իմ ու Եվայի առաջ. և ես նկատում եմ, թե Սանատրուկ Սերգեևիչի ձեռն ու եղջյուրանման բեխերն ինչպես են դողում:

— Երեխաներ,— սկսում է նա զայրացած ու մի պահ լուռ նայում դասարանին. նրա ծնոտը դողում է:— Դուք աշակերտնե՞ր եք, թե փողոցային, նու... սրիկաներ: Հը՞...

Դասարանը լուռ է:

— Դուք, կամ ձեզանից մեկը, Նիկոլայ Պետրովիչի հետ վարվել եք ամենաանթույլատրելի ձևով,—շարունակում է Սանատրուկ Սերգեևիչը, յուրաքանչյուր բառը չեչտելով:— Դուք, իհարկե, գիտեք ո՛վ է արել այդ բանը, ուստի պետք է հենց հիմա ազնվորեն հայտնեք ինձ անողի անունը... այլապես բոլորդ կտուժեք:

Դասարանը լռում է դարձյալ:

— Երեխաներ, եթե,— շարունակում է Սանատրուկ Սերգեևիչը, և նրա եղջյուրները դողում են երեսին,— եթե հենց այս րոպեին չհայտնեք հանցավորի անունը— ձեր ամբողջ դասարանը կարձակվի: Ընդմի՛շտ:

Դասարանը նորից անշարժ է ու լուռ:

Եվ այդ լռության մեջ ես զգում եմ (հետո ընկերներս պատմեցին, թե իրենք էլ նույնն են զգացել), որ դասարանում կախված է մի սպառնալիք, ահավոր մի բան, որ ամեն վայրկյան կարող է պայթել:— Վախենում եմ՝ մեր ընկերներից մեկը վեր կենա հանկարծ ու վախից հայտնի ամեն ինչ. ու ես դողում եմ ավելի Սեդրակի համար. չէ՞ որ կարող են անմիջապես դուրս անել նրան, և նա բոլորովին կդժբախտանա, որովհետև մայրը խորթ է, հայրը հարբեցող: Տանը նրան ոչ-ոք չի սիրում, և միայն դպրոցում է, որ իրեն ուրախ է զգում: Եվ այդ թաքուն երկյուղն է պատճառը,

որ երբ Աշոտը, մեր Թաղեցի այրի Նոյեմի տղա Աշոտը ձեռք բարձրացնում է՝ դասարանով մի սարսուռ է անցնում։—Ի՞նչ պիտի ասի արդյոք։ Երևի մատնելու է Սեդրակին,— անցնում է բոլորիս մտքով, և ատելության ու վրեժխնդրության պես մի բան է զարթնում ներսս։

— Խոսիր, Զարգարյան,— ասում է Սանատրուկ Սերգեիչն ուրախացած, որ մեկը, վերջապես, գտնվեց։

Աշոտը վեր է կենում։

Ամբողջ դասարանը դառնում է լռություն և ուշադրություն։

— Սանատրուկ Սերգեիչ,— սկսում է Աշոտը,— ես պետք է ասեմ, որ բոլորի պատճառը...

Նա կակազում է, կանգ առնում. իսկ դասարանը, շունչը պահած, սպասում է նրա խոսքի շարունակությանը, և այդ լռության մեջ Աշոտը շարունակում է բեկ-բեկ, առանց շուրջը նայելու, նայվածքը միայն տեսչի բեխերին ուղղած։

— Այս բոլորի պատճառը, Սանատրուկ Սերգեիչ, այն է, որ Նիկալայ Պետրովիչը, զինավարժության ժամանակ, տղաներին կանգնեցնում է արևի դեմ և ստիպում, որ բաց աչքերով նայեն արևին։

Սանատրուկ Սերգեիչը ձեռները շփում է։

— Ուրե՞մն,— ասում է նա սպասողական, և նրա փոխված, փոքր ինչ մեղմացած դեմքից երևում է, որ նա մոտ է իր նպատակին. շուտով կիմանա ո՛վ է հանցագործը։ Իսկ մենք— Սեդրակը, Մելիտեն, Ապոստոլը և ես՝ հոնքներիս տակից նայում ենք Աշոտին և տագնապով սպասում նրա վերջին խոսքին։

— Ուրե՞մն,— կրկնում է Սանատրուկ Սերգեիչը,— ո՞վ է արել այսօրվա...

Պատասխանելուց առաջ Աշոտը նայում է դասարանին, նայում է Սեդրակի և մեր ընկերների կողմը,

նայում է միայն մի վայրկյան և ապա նայվածքը հառում նորից տեսչի բեխերին։

— Ես կարծում եմ, Սանատրուկ Սերգեիչ, որ...

Աշոտը կանգ է առնում անհամարձակ։

— Նո՛ւ, նո՛ւ շարունակիր,— խրախուսում է տեսուչն անհամբեր։— Որ ի՞նչ։

— Որ եթե Նիկալայ Պետրովիչը տղաներին չըկանգնեցնի արևի դեմ, տղաներն էլ այդպես բան չեն անի։

— Ուրե՞մն՝ արևի դեմ կանգնեցնելու համա՞ր են արել,— հարցնում է տեսուչը։

— Այո,— գլուխը կախում է Աշոտը։

— Ուրեմն գիտե՞ս ով է արել։

— Ոչ. չգիտեմ։

— Հապա ինչո՞ւ ես ասում, թե արևի դեմ կանգնեցնելու համար են արել։— Տեսչի ձայնի մեջ նորից բարկության նոտաներ են հնչում։— Որտեղի՞ց գիտես այդ։

— Լսել եմ, որ տղաները դժգոհ են արևից։

— Ո՞ր տղաները։

— Նիկալայ Պետրովիչն ինքը գիտի,— պատասխանում է Աշոտը հանգիստ և էլի նայում մեր կողմը։

— Իսկ դու չգիտե՞ս։

— Ոչ, Սանատրուկ Սերգեիչ։— Կարծեմ բոլորը...

— Ես քեզ դուրս կանեմ, Զարգարյան։

— Դուք գիտեք, Սանատրուկ Սերգեիչ։ Միայն թե ես չեմ։

Տեսուչը բռնկում է հանկարծ և ոտը խփում հա-
թե ե՛ս չեմ։

— Ապերա՛խտ,— նետում է նա Աշոտի երեսին, և նրա եղջյուրները ցցվում են քթի երկու կողմը։— Որբ և հայր չունեցող տղայի՝ մենք քեզ ազատել ենք թոշակից և դու այդպես... Դու գիտե՞ս այն առածը, որ ասում է՝ գողին թագցնողն ինքը գող է։ Գիտե՞ս։

— Ոչ, Սանատրուկ Սերգեիչ,— գլուխը շարժում է Աշոտը։

Տեսուչը հիասթափված նայում է Աշոտին և գլուխն օրորում։

— Տխմա՛ր։ Ուրեմն գիտես և չես ասո՞ւմ։

— Ոչինչ չգիտեմ, Սանատրուկ Սերգեիչ։ Ես հայտնեցի միայն պատճառը։

Եվ այնուհետև որքան էլ տեսուչն ստիպում է, բարկանում, սպառնում—ոչ-ոք ոչինչ չի ասում։

Դասարանը լռում է մի մարդու նման։

Եվ այդ օրվանից Նիկոլայ Պետրովիչն էլ ոչ-ոքի չի կանգնեցնում արևի դեմ ու կարգադրում.

— Նայի՛ր։

Իսկ Աշոտը, Զարգարյան Աշոտը դառնում է մեր հերոսը և ամենամոտ ընկերը։

IX

ԼԻԴԱ ԼՎՈՎՆԱ

Նա դասարան է մտնում թռչունի քայլերով, կանգնում է ամբիոնի մոտ և ակնոցի տակից, աչքերը կկոցելով նայում է դասարանին. ու միշտ թվում է, թե դասարանը նոր է նրա համար. ուզում է ծանոթանալ, թե ովքեր են նստած։

Ոմանք ասում են, թե կարճատեսությունից է այդպես նայում, բայց կարճատեսությունը մեզ սուտ բան է թվում։ Մենք, ընդհակառակը, կարծում ենք, նա ձևանում է։ Մեզ թվում է նույնիսկ, թե ակնոցները, թե աղվեսի մորթին, և թե ձեռնոցները, որ հագնում է անգամ գարնանը և ամառը, նա կրում է ցուցամոլության համար։ Ամենից զարմանալին աղվեսի մորթին է, որ երբեմն դասարանում էլ ուսերից չի վերցնում։

Ապոստոլ Կարամանիդին նրան «Հնդուշկա» է անվանում, Սամսոնը՝ «Թրլոն»— վայրի աղավնի։ Իսկ մյուս աշակերտները լեզու են հանում նրա ետևից, նրա բացակայությամբ ձևացնում են նրան— քայլում են նրա պես բարձրակրունկ ու աչքերնին կկոցում մարդու հանդիպելիս։

Ասում են, որ նա Ռուսաստանից է եկել և այստեղ ոչ-ոք չունի—ո՛չ ընկեր, ո՛չ բարեկամ. Նրա միակ ծա—

նոթներն ուսուցիչներն են, տերտերը և գեղագործի կինը. ու մի՛շտ լուռ, չարտահայտվող ու ծածուկ մի բան կա նրա մեջ: Մյուս ուսուցիչների նման երբեք չի պատմում իր կյանքը կամ որևէ դեպք իր կյանքից, և այդ պատճառով թվում է խորհրդավոր անցյալի տեր. իսկ մենք այնպես ենք ուզում իմանալ նրա կյանքը, անցյալը—ո՞վ է, ի՞նչ ընտանիքից, ի՞նչ է սիրում... Եվ քանի որ նա չի պատմում իր մասին— թվում է արհամարհում է մեզ, չի ուզում սրտաբաց լինել մեզ հետ. այլ միայն՝ դասեր...

— Երեխաներ, մենք կարդացինք այս, հիմա կարդանք այս,— ու կարդում է դերասանի պես արտահայտիչ շարժ ու ձևերով՝ ձեռը բարձրացնելով, երբեմն կրծքին դնելով:

Այդ էլ տարօրինակ է թվում մեզ. բոլորովին նման չի մյուս ուսուցիչներին, և տղաներից մի քանիսը, ինչպես Մելիտեն ու Սեդրակը, դաս պատասխանելիս երբեմն ձևացնում, ավելի շուտ տնազում են նրան:

Լիդա Լվովնան հասկանում է այդ. ոտը թեթև զարկում է հատակին, կամ քանոնը խփում է ամբիոնին:

— Քո ձայնով կարդա,— ասում է նա զուսպ:

Նույնը լինում է երգեցողության դասին: Լիդա Լվովնան, ռուս լեզվից բացի, մեզ սովորեցնում է նաև երաժշտություն: Երգում է միշտ գլուխը բարձր պահած, մազերն ուսերին, և այդ ժամանակ պենսնեն դողդողում է նրա քթին. ու ստացվում է շատ տարօրինակ ու ծիծաղելի տեսարան. Լիդա Լվովնան, թվում է, ոչ թե երգում է, այլ ակնոցը խաղացնում է քթին, թե՝ ահա տեսեք—որքան էլ շարժեմ՝ երբեք չի ընկնի:

Այստեղ էլ Սեդրակը, Մելիտեն և երբեմն Սամսոնը՝ երգելիս ձևացնում են նրան— գլուխները ետ են

տանում, երեսնին դողացնում, բայց և այնպես նմանվել չեն կարողանում— ակնոց չունեն:

Այդ՝ Լիդա Լվովնան հասկանում է դարձյալ և կամերտոնը խփում է ամբիոնին.

— Սխալ ես երգում:— Նորից սկսիր.— դո—րե—միֆա՛...

Ու որքան էլ տղաները տնազներ, ծամածռություններ են անում՝ նա տանում է, ցույց է տալիս, թե իրեն չի վերաբերում— այդ Լիդա Լվովնան: Այնպես պահել գիտի իրեն այդ Լիդա Լվովնան:

Բայց մի անգամ ահա ի՛նչ է պատահում:

Լիդա Լվովնան սովորեցնում է մեզ «Вниз по матушке по Волге» երգը: Կամերտոնը ձեռին՝ երգում է նա, սովորականի պես պենսնեն դողացնելով. և նրա ձայնը նուրբ ելևէջներով գեղգեղում է դասարանի լռության մեջ... բայց մեկ էլ, երգի լարված պահին, Մելիտեն փռթկացնում է իմ ետև, նրան հետևում է մի ուրիշը, երրորդը... Ու հանկարծ կատարվում է անսպասելի մի բան:

Լիդա Լվովնան երգն ընդհատում է անմիջապես, մի պահ, մի փոքրիկ պահ նայում է դասարանին՝ կըկոցվող աչքերով, ապա անխոս ոտները զարկում է հատակին, կամերտոնը շպրտում է ու գլուխը դնում ամբիոնի վրա. ոչ թե դնում, այլ քցում է կարծես, այնպես թուլանում է նրա գլուխն ուսերի հետ: Մի վայրկյան մեզ թվում է ուշաթափվեց, բայց ահա լացի, հեկեկանքի ձայն ենք լսում.

— Մամա... մամա... դու մեռել ես... իսկ ես երգում եմ... և ինձ ծաղրում են... մամա՛...

Դասարանով սարսուռ է անցնում:

Այդ րոպեին նա մեզ թվում է այնքա՛ն խեղճ, անօգ, այնպես փոքր. ասես պատժված աշակերտուհի—լալիս է, հեկեկում ու չի կարողանում գլուխը բարձրացնել:

— Մամա՛... Մամա՛...

Աշակերտների մի մասը սառել են նստարանների վրա, մյուսները, և ես դրանց հետ, մոտեցել, շրջապատել ենք ամբիոնը, Լիդա Լվովնային, բայց ոչ մեկըս չենք համարձակվում ձեռ դիպցնել նրան, բարձրացնել, կամ մի խոսք ասել՝ մխիթարել կամ ներողություն խնդրել:

Վերջապես, դարձյալ Աշոտը, Զարգարյան Աշոտն է, որ համարձակ մոտենում է նրան:

— Լիդա Լվովնա,— բռնում է նա փարթուհու ձեռը և ասում կերկեր.— Ներեցե՛ք: Մենք մեղավոր ենք:

Այդ Աշոտը... Ինքը ոչ մի վատ բան չի արել, չի ծիծաղել, բայց իրեն էլ համարում է մեղավոր:

— Լիդա Լվովնա,— շարունակում է նա նույն կերկեր, համարյա լացակման ձայնով:

Լիդա Լվովնան գլուխը չի բարձրացնում:

Բայց Աշոտն ավելի համարձակություն էստանում և մեղմորեն ետ է քաշում Լիդա Լվովնայի ձեռը նրա երեսից.

— Լիդա Լվովնա, մենք ներողություն ենք խնդրում... Լիդա Լվովնա, մենք չգիտեինք, տղաները չգիտեին, որ ձեր մաման մեռել է: Ամբողջ դասարանի կողմից ես ներողություն եմ խնդրում, Լիդա Լվովնա... Ներեցե՛ք:

Լիդա Լվովնան գլուխը բարձրացնում է և աչքերը սրբում:

— Ոչինչ, ոչինչ: Նստեցեք տեղներդ...

Մենք տեղավորվում ենք՝ խորին ակնածությամբ ու հնազանդ, և երբ Լիդա Լվովնան պատմում է, թե մայրը մեռել է մի ամիս առաջ և ինքը չի կարողացել գնալ նրա թաղմանը, և այսօր հանկարծ հիշեց,— դասարանն այնպես է լռում, որ շնչառություն անգամ չի լսվում:

Այդ օրվանից մենք խղճում և սիրում ենք Լիդա Լվովնային ու հաճախ, մանավանդ գարնանը, ծաղիկներ ենք բերում նրան:

X

ՏԵՐ-ԳՅՈՒՏԸ

— Հը, անիրավներ, անիրավներ. հանգիստ չե՞ք կարող նստել,— ներս է մտնում տերտերը՝ սև շալն ուսերին, սպիտակ փափուկ ձեռները շփելով:— Դե հանգստացեք, տեսնենք ինչ ենք անում:

Դասարանը հանդարտում է, և տեր-հայրը հոգնած, իր խոշոր մարմինը դժվարությամբ տեղավորում է ամբիոնի մոտ և մատը մեկնում առաջին պատահած աշակերտին.

— Ամատունի, դասդ գիտե՞ս:

Ռուզան Ամատունին Եվայի նման աղջիկ է՝ հոնքերը բարձր, համարյա ճակատին: Նա գլխով է անում, որ, այո, գիտի:

— Դե կարդա, լսենք:

Եվ տեր-հայրը դանդաղ շարժումով կապայի գրպանից հանում է դեղնահատիկ տերողորմյան, արմունկը հենում ամբիոնին ու նայում լուսամուտից դուրս: Իսկ Ամատունին կարմրելով կարդում է օրվա դասը:

— Լուսնի եղջյուրը ծածկվեց Բերքե լեռան ետև...

— Ճիշտ է, ճիշտ է,— ասում է տեր-հայրը տերողորմյան գցելով, մտածումներով տարված: Մի քա-

նի նախադասությունը լսելուց հետո՝ առաջարկում է մի ուրիշին։— Շարունակիր, Սամսոն։

Սամսոնը, ինչպես միշտ դաս պատասխանելիս, բլուզի փեշերն ուղղում է, կոկորդը մաքրում և սկըսում արագ-արագ։

— Կամա՛ց, այ տղա, կամա՛ց. ետևիցդ ձի չեն քշում,— ասում է տերտերը և շարունակում հաշվել տերողորմյայի դեղին հատիկները, երեսը միշտ դեպի լուսամուտը, ուր պահակի պես կանգնած է մի ջահել ակացի։— Ճիշտ է, ճիշտ է,— գլխով է անում երբեմն տեր-հայրը։— Հիմա դու կարդա Մելիտե Խվանպուլլո։

Մելիտեն միշտ առանձին սիրով ու հպարտությամբ է կարդում հայերենը։

— Հեզ արծաթափայլ Արածանին գարնանային հեղեղներից կատաղել էր և պղտոր հորձանքներով ծածկել իր ափերը...

— Ըհը՛. շատ ճիշտ է։Այ տեսնո՞ւմ եք, հույն է, բայց հայերեն բոլորիցդ լավ է կարդում։ Կեցցե՛ս, Խվանպուլլո. կեցցե՛ս։ Է, հիմա դու շարունակիր, Սեդրակ։

Սեդրակը, որ դասի ամբողջ ընթացքում զբաղված է հարևանների հետ զրուցելով և գիրքը նույնիսկ չի բացել, դասի տեղն անմիջապես չի գտնում և, ընկերներին աչքով անելով, գիրքը ձեռին բռնած, արտասանում է վաղուց սովորած մի ոտանավոր. նա առհասարակ առանձին սեր ունի դեպի սահուն ոտանավորները։

Վաղ ժամանակ մի հայ շենում
Մի հարգելոր հարս է լինում։
Նրա բերնից կեսուր-կեսառ
Չէին լսել մի շունչ, մի բառ։
Չէին տեսել շուրթը մի օր...

Դասարանը զարմացած, ծիծաղազուսպ նայում է մերթ տերտերին, մերթ Սեդրակին, սպասելով, թե

ի՞նչ է լինելու. նկատելո՞ւ է արդյոք տերտերն այդ «խաղը», թե ոչ։

Տեր-հայրը, սակայն, տերողորմյան քցելով և հոգնած հայացքը դեպի դուրս, գլխով է անում և կրկնում.

— Ճիշտ է, ճիշտ է։

Բայց Սեդրակն այլևս, չկարողանալով իրեն պահել, ծիծաղում է, և նրա հետ ամբողջ դասարանը։

Տերտերն, սթափվելով, նայում է դասարանին։

— Ի՞նչ եք հռհռում, անիրավներ։ Հը՞։

Մեկը ծիծաղի միջից.

— Տեր-հայր, Սեդրակը դասի փոխարեն «Հոպոպը» կարդաց։

Տերտերը գլուխն օրորում է Սեդրակի վրա։

— Այ դու, անիրավ, ուրեմն դասդ չգիտես, հա՞։ Որ էդպես է, կմնաս առանց ճաշի. կսովորես՝ նոր տուն կերթաս։ Իմացա՞ր։

— Համ ասում է «ճիշտ է», համ ասում է՝ «չգիտես»,—քրթմնջում է Սեդրակը, շուրջը նայելով ու թեթև ծիծաղելով։

Դասարանը նույնպես ծիծաղում է։

Բայց այս անգամ տերտերը բարկանում է։

— Ապո՛ւշ, դաս չիմացողը պետք է լաց լինի, ոչ թե ծիծաղի։

Սեդրակը խոսքի տակ չի մնում.

— Տեր-հայր, ես դասս գիտեմ, դասիս տեղը չըգիտեմ,— ասում է նա կամացուկ, բայց դասարանը ծիծաղում է նորից։

— Լավ անիրավներ, լավ. հերիք է,— ասում է տեր-հայրը և տալիս է մի նոր դաս։

Կրոնի դասն անցնում է ավելի աշխույժ։Այդ ֆանտաստիկ բիբլիական աշխարհը հետաքրքրում է մեզ, միստիքական սարսափ է ազդում և առիթ տալիս բազմաթիվ հարցերի,— Ղովտի կինը ինչպես քարացավ.

այդյո՞ք հիմա էլ մարդիկ կարող են քարանալ,— մի՞թե մի քանի ձկնով կարելի՞ է ամբողջ հարսանիք կերակրել:— Այդ ի՞նչպես Մովսես Մարգարեն ոտով անցավ Կարմիր ծովը. ի՞նչու այդպիսի հրաշք հիմա չի պատահում... Մեր հարցերի տարափին տեր-հայրը պատասխանում է ձեռի թափահարումով.

— Լռեցեք, անիրավներ, հերթով խոսեք... Ի՞նչպես անցավ:— Մարգարե էր՝ անցավ: Հիմա չեն անցնում, որովհետև մարգարեներ չկան...

Մի անգամ «Համբարձման» դասին Սամսոնը հարցնում է.

— Տեր-հայր, այդ ի՞նչպես Հիսուսը բարձրացավ վերև. չէ՞ որ ծանր բաները վերև չեն գնում, ընկնում են:

Տերտերը գլուխը օրորում է:

—«Ի՞նչպե՛ս»: Մինչև հիմա այդ հասարակ բանն էլ չգիտե՞ս, անիրավ: Չգիտես, որ սուրբ էր՝ դրա համար բարձրացավ. դո՛ւ էլ սուրբ լինես, դու էլ կբարձրանաս, չնայած գլուխդ բավական հաստ ու ծանր է:

Աշակերտները ծիծաղում են Սամսոնի վրա, իսկ Սեդրակը հարցնում է.

— Ուրեմն սրբերը թե՞թև են լինում, տեր-հայր:

Տեր-հայրը նորից գլուխն օրորում է Սեդրակի վրա:

— Քո գլուխն է թեթև, անիրավ, քո գլուխը...

Մենք տեր-հոր հետ ավելի մոտ ենք, քան մյուս ուսուցիչների. նա պարզ է, մատչելի և զրուցասեր. ոչ միայն դպրոցում, փողոցում էլ հանդիպելիս հետաքրքրվում է ի՞նչ ենք անում, ո՞ւր ենք գնում: Երբեմն շուկայից միս, կամ որևէ մթերք է առնում և հանձնում տուն տանելու: Երբեմն առաջարկում է, որ գնանք եկեղեցում երգենք, կամ փոխ ասել սովորենք: Նա ճանաչում է բոլոր աշակերտներին. գիտի ո՛վ ում

տղան է. երբեմն հետաքրքրվում է, թե ով Թարխուն ունի կամ հազվագյուտ բույսի սերմեր:

— Եթե ունեք, հայրիկիդ ասա, մի քանի հատ ուղարկի:

Տեր-հայրն իր տան առաջ ունի մի ընդարձակ այգի, բանջարանոց և շատ ծաղիկներ: Փողոցի դռնից մինչև տան շեմքը գնում է ավազած մի ճամփա, երկու կողմը կանաչի երիզներ են ու ծաղիկներ, բազմատեսակ ծաղիկներ— մեխակներ, շուշաններ, կատվագանգակ, մախմուրներ, ծտի աչքեր և ուրիշ շատ տեսակներ, որոնց անունը անհայտ է մեզ: Հապա նրա խնձորնե՛րը... Դրանց նման խնձորներ չկան մեզանում— խոշոր ու հյութեղ, համը երկար ժամանակ չես մոռանում:— Իսկ նրա տանձերը—դրանք հրաշքներ են, որ միայն տեր-հոր մոտ կան. ամեն մի այգետեր գլուխ է պատռում պատվաստի համար ճյուղեր ունենալ այդ տանձենիներից: Եվ տեր-հայրն, ի հարկե, չի մերժում, միայն փոխարենը մի փոքրիկ ծառայություն է խնդրում,— մի սայլ քար՝ պարիսպը բարձրացնելու համար, կամ երկու սայլ ավազ՝ ճանապարհին փռելու, իսկ եթե խնդրողը հյուսն է, քարտաշ կամ ներկարար... այդ դեպքում տեր-հայրը խնդրում է մի նստարան շինել, քանդված պատը նորոգել կամ խոհանոցի դուռը ներկել:

Երբ տեր-հայրը մի բան է խնդրում— ոչ-ոք չի մերժում: Եվ ի՞նչպես կարելի է տեր-հորը բան մերժել. չէ՞ որ նա և՛ ուսուցիչ է և՛ մեր քաղաքի տերերի ամենամեծը— գործակալը: Երբ մեզ կանչում է տուն՝ իրեն «մի փոքր» օգնելու— մենք երբեք չենք մերժում: Գնում ենք բանջարանոցում սերմեր ցանելու, երբեմն քաղհանելու, իսկ աշնանը՝ խնձոր, տանձ քաղելու, կամ դեղնախնձոր հավաքելու:

— Գնանք, տղերք, թե չէ վատ թվանշան կդնի,— ծիծաղում են աշակերտները:

Եվ մենք գնում ենք ավելի ժամանցի համար, բայց և աշխատում ենք:

Մի անգամ չորս հոգով գնում ենք տեր-հոր համար ճակնդեղ ցանելու: Տեր-հայրն իր կովերը կերակրում է ճակնդեղով և բանջարանոցի մեծ մասը ճակնդեղ է ցանում— կարմիր ու սպիտակ ճակնդեղ:

Օ՛, գարնան թուլացնող արև, օ՛, փոքրիկ սերմնացաններ:

Հոգնում ենք շուտով, քրտինքը վազում է մեր ճակատներից, և ծունկերնիս ցավում է չարունակ բարձրանալուց-իջնելուց... Եվ ահա այդ ծանր գործից շուտով ազատվելու համար,—օ՛ պարզամիտ խորամանկություն,— մենք սերմը տոպրակով թաղում ենք հողում: Թաղում ենք ու նստում հանգստանալու: Փոքր անց երևում է տերտերը՝ առանց փարաջայի, միայն կապայով և հարցնում է հեռվից.

— Է, տղերք, վերջացրի՞ք:

— Այո, տեր-հայր, պատասխանում է Սեդրակը բոլորիս փոխարեն:

— Խաքա՞ն շուտ,— զարմանում է տեր-հայրը և ավելացնում իրեն հատուկ բարեհոգությամբ.— Է, օրհնյալ լինե՛ք...

Բայց երկու շաբաթ հետո մեր գաղտնիքը պարզվում է— դաշտի մի մասում բազուկը չի ծլում:

— Է, անխրատնե՛ր: Այդ ի՞՛նչպես եք ցանել, որ կեսը չի դուրս եկել:

— Երևի, սերմը վատ էր, տեր-հայր:

— Չեմ հասկանում. շատ կարելի է,— ասում է տեր-հայրը:— Նոր սերմ եմ առել, էգուց եկեք ցանենք, տեսնենք ինչպես է լինում:

Տեր-հայրը շատ մատչելի է. Նրա հետ խոսում, զրուցում ենք ամեն ինչի մասին. Հաճախ զանազան հարցեր ենք տալիս նրան և նա մեզ ամեն բան բացատրում է հանգամանորեն: Ամենահարցասերը մեր մեջ Սամսոնն է. նա երբեք չի բավարարվում ընկերների

պատասխաններով և միշտ դիմում է տեր-հորը իր կասկածներն ստուգելու:

Մի անգամ ահա Սամսոնը մոտենում է ինձ և ասում ամենայն զգուշությամբ.

— Գիտե՞ս, Սուրեն, մի էնպես բան եմ իմացել— կզարմանաս: Ասում են՝ մարդն առաջ է եկել կապիկից. այսինքն՝ մեր պապերի պապերն առաջ կապիկ են եղել:

Այս հայտնությունն ինձ զարմացնում է շատ:

— Ո՞վ է ասում,— հարցնում եմ տարակուսած:

— Մորաքրոջս ուսանող տղան: Երեկ հայրիկիս պատմում էր՝ լսեցի: Կապիկի՛ց, հասկանում ես:

Բայց մենք կասկածում ենք, որ այդպես լինի. այդ ուսանողն այնքան մեծ հեղինակություն չէ, որ նրան հավատանք անվերապահ: Ավելի լավ չէ՞ հարցնենք տերտերին, որն, իհարկե, ավելի շատ բան գիտի, քան Սամսոնի մորաքրոջ տղան, քան առհասարակ ամեն մի տղա:

Տեր-հայրը նկատելով դեպ իրեն ենք գնում, հասկանում է իսկույն, որ ասելիք կամ հարցնելիք ունենք:

— Հը՛, եկեք տեսնեմ, ի՞նչ կա:

— Տեր-հայր, կարելի՞ է մի բան հարցնել,— ասում է Սամսոնը քաշվելով, և բռնում է փեշս:

— Ասա տեսնենք:

— Տեր-հայր, ճի՞շտ է, որ մարդը կապիկից է ծնվել... առաջ եկել,— հարցնում է Սամսոնը կակազելով, կարծես սրբապղծություն է կատարում:

Տեր-հայրը գլուխն օրորում է:

— Կապիկը դո՛ւ ես, անխրատ,— հանդիմանում է նա:

Մենք ամոթից գլուխներս կախում ենք և ուզում ենք հեռանալ, բայց տեր-հայրը կանգնեցնում է անմիջապես.

— Սպասիր, Դավթյան,— ասում է նա Սամսո-

նին,— դու այդ որտեղի՞ց ես լսել այդ տխմար բաները:

— Մորաքրոջս տղից:

— Ո՞վ է մորաքրոջդ տղան:

— Ուսանող է:

— Ուսանող է, բայց հիմարություն է ասել, կամ, ինչպես երևում է, հանաք է արել: Գնա, էլ այդպես բաներ չխոսես:

Բայց Սամսոնը մնում է կանգնած. նա ճակատը քորում է և ասում.

— Հետո, տեր-հայր, նա ասում է աստված չկա. ճի՞շտ է:

Տեր-հայրը ձեռը դնում է շուրթերին և դեմքին սրբապղծություն լսողի արտահայտություն է տալիս:

— Սը՛ըսս. մյուս անգամ այդպիսի բան չլսեմ...

Տուն դառնալիս Սամսոնն ինձ հարցնում է.

— Ուրեմն մորաքրոջս տղան սո՞ւտ է ասում:

Կապիկի մասին ես ոչինչ չեմ կարող ասել, բայց ինչ վերաբերում է աստծուն, ես ուզում եմ Սամսոնին հայտնել իմ կասկածը, թե երևի, չկա. հավանորեն չկա. և ուզում եմ օրինակ բերել, թե ինչպես եղբորս համար մի գիշեր այնքան աղոթեցի, լաց եղա—աստված ոչ մի բան չարավ. մինչդեռ՝ եթե աստված լիներ, երևի մի բան կաներ. այնպես չի՞: Բայց ամաչում եմ ցույց տալ իմ թուլությունը, թե ես լաց եմ եղել: Որքան էլ Սամսոնն իմ ընկերն է, այնուամենայնիվ չեմ ասի,— հետո վրաս կծիծաղի.— ընկերներին կպատմի, և նրանք էլ կծիծաղեն վրաս: Եվ լռում եմ ու մտածում, որ Սամսոնի մորաքրոջ տղան էլ, այդ ուսանողը, երևի, ինձ նման մի բան է խնդրել աստծուց և աստված, երևի, չի կատարել նրա խնդիրքը. դրա համար ասում է «աստված չկա»: Բայց մի՞թե իսկապես չկա: Հապա ինչո՞ւ նա կա տատիս, պապիս, մորս և բոլոր մեր հարևանների համար... Լավ, եթե չկա, մտածում եմ, այս մեծ աշխարհը, մարդկանց,

անասուններին, թռչուններին ո՞վ է ստեղծել... ո՞վ է հապա ձյուն տալիս, անձրև, կարկուտ... և մի՞թե տերտերը սուտ է ասում: Կարո՞ղ է այդպիսի հաստակող, պատկառելի մորուքով մարդը սուտ խոսել:

Միտքս խճճվում է տարակուսանքների ցանցում. զգում եմ, որ շատ մութ, անհասկանալի բաներ կան, որ ես չեմ հասկանում:

Եվ երեկոյան, երբ մայրս սովորականի պես քնելուց առաջ աղոթում է, ես հարցնում եմ նրան.

— Մայրիկ, աստված կա՞, որ աղոթում ես:

Մայրս ուշադիր նայում է երեսիս, զարմանալով իմ հանկարծական հարցի վրա.

— Էդ ինչո՞ւ համար ես հարցնում:

Ես չփոթվում եմ մորս խիստ տոնից և ասում առանց այլևայլի.

— Սամսոնն ասում է՝ «աստված չկա», ճի՞շտ է:

Ասում եմ ամաչելով, թե չլինի վիրավորեմ մորս. չէ՞ որ նա այնպես երկյուղածությամբ է խոսում աստծու մասին, ներողության մեջ միշտ նրա անունն է տալիս, որպես արդարադատ մի գերագույն ուժի... Սակայն մայրս այսօր շատ անտարբեր է:

— Ես ի՞նչ գիտեմ,— ուսերը վեր է քաշում նա:— Քու ի՞նչ բանն է՝ կա, թե չկա. գնա դասդ սովորի:

Եվ հարցն էլի մնում է մութ:

XI

ԱՎՂԱՆԻՍՏԱՆ

Ավղանիստա՜ն... Որքան վիշտ ու զայրույթ է կապված այս անվան հետ: Առաջին անգամ ես այդ անունը լսում եմ Սամսոնից, այնուհետև նա դառնում է բոլորի խոսակցության առարկան:

Ամառային արձակուրդներին էլ մենք ընկերներով հաճախ միասին ենք լինում. գնում ենք դաշտ, անտառ, գետը լողանալու: Ամառը ամենից շատ մենք սիրում ենք այդ զուլալ գետը, որ աղմկաձայն իջնում է սարերից և քարեքար դիպչելով գալիս է անտառներով, իսկ քաղաքից վերև հանդարտում է այնպես, կարծես հանգստանում է երկար ճանապարհի հոգնությունից... և այստեղ տղաները լճակներ են կազմում ու լողանում, լողանում երկար, երբեմն ճաշից մինչև երեկո: Ու նրանց աղմուկից թնդում են գետափին ու մոտիկ անտառը: Այդ աղմուկին ամեն օր մասնակցում ենք և մենք— Սեդրակը, Մելիտեն, Ապոստոլ Կարամանիդին, Սամսոնը և ես: Երբեմն մեզ միանում են Ֆիլիպ Զայցևն ու Զարգարյան Աշոտը, բայց նրանք շատ քիչ են լողանում. երկուսն էլ մի քանի լող են տալիս և անմիջապես հագնվում ափի՝ արևից տաքացած քարերի վրա: Իսկ մենք, մանավանդ Սեդրակն ու Մելիտեն, ջրից դուրս չենք գալիս. երբեմն

նրանք քիթները բռնում են ու սուզվում ջրի տակ և հեռվում դուրս գալիս նորից՝ վայրկյաններ անցնելուց հետո:

Ամառն առհասարակ հաճույքներ շատ ունենք, բայց ամենալավ հաճույքը գետում լողանալն է. և այդ է պատճառը, որ հաճախ հացից զրկում ենք մեզ, բայց լողանալուց երբեք:

Բայց ահա մի օր լողանալու գնալիս՝ Սամսոնը հանկարծ կանգ է առնում ճանապարհի մեջտեղը և ասում տխուր.

— Գիտես, Սուրեն, ես էսօր մի վատ բան լսեցի: Ռուս թագավորը, ասում են, ուզում է մեր եկեղեցու հարստությունը, կալվածները խլե և մեզ բոլորիս, բոլոր հայերին քշի հեռու երկիր:

Այս բոլորը միանգամից լավ չեմ ըմբռնում. մի՞թե ռուս թագավորն այնքան աղքատ է, այնքան հող չունի, որ ուզում է մեր եկեղեցու կալվածքը խլի. և ինչո՞ւ պետք է մեզ հեռու երկիր քշի. մենք ռուս թագավորին ի՞նչ ենք արել:

— Ինչո՞ւ համար,— հարցնում եմ:

— Ես իմ,— ուսերը վեր է քաշում Սամսոնը:

— Ո՞վ ասավ:

— Հերս, հետո մորաքրոջս ուսանող տղան:

Սամսոնի ասածների մեջ ինձ, չգիտեմ ինչու, առանձնապես անհանգստացնում է «հեռու երկիր քշելու» լուրը: Ինչո՞ւ պետք է քշի, ի՞նչ է նշանակում քշել և ուր են ուզում քշել: Սամսոնը չգիտի ինչո՛ւ, բայց նա լսել է, որ քշելու են Ավղանիստան: Այո, Ավղանիստան. նա այդ անունը լավ է հիշում:

— Ավղանիստա՜ն... Ավղանիստա՜ն,— կրկնում եմ ես չմոռանալու համար:

Որքան տխուր, բայց և այնպես Սամսոնի ասածներն անհավատալի են թվում ինձ. ի՞նչպես կարող են միանգամից բոլորիս քշել. հապա մեր տները, մեր այգիները, մեր դպրոցը...

Այդ օրը մենք շատ քիչ ենք լողանում. կարելի է ասել, ջուրն ենք մտնում դուրս գալիս. ոչ ջուր ենք ցանում իրար վրա, ոչ ժայռից նետվում գետը, ոչ քիթ ու բերան փակած սուզվում ջրի տակ... Լողանում ենք առանց աղմուկի և վերադառնում տուն: Մինչև լողանալը Սամսոնը տղաներին պատմում է իր նորությունները և հիմա բոլորի միտքն զբաղված է այդ արտակարգ լուրերով:

Ես որոշում եմ տուն հասնելուն պես ամեն ինչ պատմել մորս:

Բայց մայրս արդեն լսել է. մերոնք՝ պապս, տատս, նույնպես գիտեն: Գիտեն և հարևանները:

Եվ այդ օրը ո՛ւմ նայում եմ՝ տխուր է երևում ու մտահոգ: Բոլորն էլ խոսում են այն մասին, որ շուտով ամեն տեղ՝ հայկական բոլոր գյուղերում ու քաղաքներում Թագավորի մարդիկ գրավելու են եկեղեցիների հարստությունը, կալվածները և մեզ՝ բոլորիս քշելու են Ավղանիստան, հեռո՛ւ, հեռո՛ւ մի երկիր: Ու ամենքին էլ, ինչպես ինձ, սարսափեցնում է ոչ թե եկեղեցու կալվածների գրավումը, այլ այդ անհայտ, հեռավոր անորոշ Ավղանիստանը, որ ով գիտի, աշխարհի որ ծայրումն է. ուր, ով գիտի, ո՛չ ջուր կա, ո՛չ ծառ, ո՛չ անտառ...

Եվ քանի գնում առավել շատ են խոսում այդ մասին, օրեց-օր նոր մանրամասնություններ են պատմում. լուրերն ուռչում են դառնում ահռելի ու ահարկու: Հարևանուհիները հաճախ, գործները թողած, հավաքվում են մեր դռանը՝ տատիս մոտ և խոսում հուզված, բարկացած: Իսկ տատս միայն անիծում է.

— Մեր հայ հավատն ուզում են փչացնեն, այ աստծու կրակը թափվի դրանց գլխին:

— Ամմե՛ն, ամմե՛ն,— ասում են կանայք:

Տատս փոքրիկ պառավ է. սուր փոքրիկ աչքեր ունի և սուր լեզու. մեր թաղի կանանց մեջ վայելում է

մեծ հեղինակություն: Հարևանուհիների հավանությունից ոգևորված՝ նա շարունակում է.

— Փուլ գա ռուս Թագավորի թախթը, խնդրել եմ աստծուց,— ասում է նա, ձեռները երկինք պարզելով:

Տատս այնքան անեծք գիտի, որքան ոչ մի կին մեր թաղում: Ու այդ բոլորն ասում է իրար ետևից և փոխե-փոխ կա՛մ ծնկերն է ծեծում, կա՛մ ձեռներն աղերսով երկինք պարզում:

— Ի՞նչ ենք արել մենք Թագավորին. որդին գոգին մորթե՞լ ենք, որ ուզում է մեզ դադարդյուն անի, աշխարհից-աշխարհ տանի:

Ու բոլորը միասին կամ անիծում են, կամ ողբորվում անզոր ու անձայն: Եվ ես զգում եմ նրանց վիշտը, հասկանում եմ ինչ է նշանակում նրանց գլլուխների տարուբերումը, ծնկներ տրորելը: Այդ բոլորը նշանակում է՝ մենք անզոր ենք ու անտեր...

Կանայք շարունակում են խոսել և ասում են այնպիսի բաներ, որ մարմինս փշաքաղվում է:

— Չեն թողնելու,— պատմում են նրանք,— մեզ հետ մի սել, մի ձի տանելու. քշելու են ոտով...

Այդ հեռանկարը սարսափ է բերում ինձ, և այդ սարսափի հետ միասին ես խորին ատելություն եմ զգում դեպի ռուս Թագավորը, որի մե՛ծ պատկերը՝ ահագին ոսկեգույն շրջանակով կախված է մեր դըպրոցում:

Այդ ատելությունն զգում են և ընկերներս, անգամ հույները՝ Ապոստոլ Կարամանիդին ու Մելիտեն:

— Ձեզ որ տանեն մենք մենակ կմնանք,— ասում են նրանք տխուր:

Իսկ Սեդրակի աչքերը բոցկլտում են զայրույթից:

— Գնանք դպրոց,— ասում է նա,— պատկերը վերցնենք՝ աչքերը հանենք:

Սեդրակը խոսում է Թագավորի պատկերի մասին. լսել է, որ մի քանի մարդ նրա պատկերի աչքերը հանել են, և ինքն ուզում է անել նույնը:

Եվ այժմ էլ, մեր դռանը հավաքված կանաց մեջ նա է, որ խոսում է իր տղամարդկային խզված ձայնով.

— Մեր ուսումնարանները փակեցին, մեր բեխանց աշխարհի սևին ու սիպտակին կարոտ թողին, հմի էլ ուզում են մեզ հողեց-հոգի կորցնե՞ն, հողեմ դրանց գլուխը,— բռունցքը թափ է տալիս նա:—Սմզանխստա՞ն... Կմեռնենք— մեր ոտը մեր հողից դենը չենք դնի: Կենդանի չենք դնա, թող մեռած տանեն...

Կանայք լսում են նրան ու տրորվում տխրամած:

Իսկ նա, իբրև այրի, ամբողջովին սևազգեստ, չարունակում է խույտ քարոզիչի նման նույն ոգով, մեկ-մեկ, հոնքերի տակից դաժան հայացքներ ուղղելով դեպի հեռուները:

Կանայք խոսում են, ես ու Սամսոնը հեռու կանգնած լսում ենք ուշադիր և մեր ենթադրությունների անում. մեկ էլ այն ենք տեսնում, որ բոլորը վեր կացած գնում են հուզված: Մի քանի խոսքից պարզվում է— գնում են տերտերի, մեր դասատու տեր-Գյուտի մոտ: Խոսում են և ամեն օր սպասում, որ թագավորի մարդիկ գալու են եկեղեցու հարստությունը տանեն, բայց ասում են, որ այդ ամենը տերտերը պահում է. և կանայք գնում են նրա մոտ, տեսնելու, որ ոչինչ չտա:

— Գնա՛նք, գնանք տեսնանք դա ի՞նչ ա ասում...

Ու առաջ են շարժվում Վառոյի գլխավորությամբ:

Գնում են դարձյալ հուզված խոսելով:

Ես ու Սամսոնը հետաքրքրությունից հետևում ենք նրանց: Ճանապարհին մեզ միանում են ուրիշ տըղաներ էլ, իսկ կանանց՝ ուրիշ կանայք՝ այս ու այն բակից, մենակ կամ խմբով, ո՛րը երեխան գրկին, ո՛րը գուլպան ձեռին, ու բոլորը հետաքրքրվում են, թե ու՛ր են գնում կանայք փեթակից դուրս եկած մեղուների պես բզզալով: Հանդիպող մարդիկ կանգնում՝ նայում են զարմացած, իսկ կանայք դարձյալ գալիս են միանում: Դաշտ գնացող մի կին՝ եզանն ուսին խառ-

նվում է կանանց, մի ուրիշը, որ բանջարանոց է չըրում—թաց բահը ձեռին միանում է կանանց:

Ու թափորը քանի գնում մեծանում է: Չգիտես՝ ի՛նչպես են իմանում կամ ի՛նչ են ենթադրում, որ հանկարծ մեկը դուռ չրխկոցով փակում է ու միանում, մի ուրիշը՝ երեխան տալիս է ջահել հարսին ու խառնվում թափորին: Մի երկու փողոց անցնելուց հետո՝ բազմությունն այնքան է մեծանում, բզզոցը փոխվում է ահռելի մրմռոցի, իսկ քիչ հետո նա թվում է հեղեղից աղմկող գետ... Բոլորը տնային, առօրյա հագուստներով են ու տնային գլխաշորերով. բոլորն էլ քայլում են զայրացած, խոսելով, բռունցքներ թափահարելով... Ինձ թվում էր միայն մեր թաղի կանայք են հուզված, բայց ճանապարհին պատահում են ավելի գրգռված ու ծղրտան կանայք:

— Ո՞ւմ են ուզում քշել, ո՛ւմ,— ճչում են նրանք:

Կանանց թափորը շարժվում է գրգռված, իսկ զանգերը շարունակում են ղողանջել՝ առաջվա պես տխուր ու աղիողորմ, ասես դարձյալ դուժ ու օգնություն են հայցում հեռուներից կամ հեկեկում հուսակտուր:

— Տի՛ն—դի՛ն, տի՛ն—դի՛ն...

Կարծես կողոպտում, մորթում են մեկին, և նրա վերջին հառաչանքներն են դրանք: Այդ ղողանջները սարսուռ են մաղում մեզ վրա, և կանայք, օգնության շտապող բանակի նման, բռնկված, մրրկված գնում են առաջ, գետինը դոփելով:

Իսկ ես ու Սամսոնը, մանուկների ու տղաների բազմության հետ, հետևում ենք նրանց, տեսնելու, թե ի՛նչ են անելու դրանք տերտերին կամ ի՛նչ է պատասխանելու տերտերը դրանց:

Բայց դեռ տերտերի տունը չհասած՝ կանանց թափորը կանգ է առնում հանկարծ:

— Լեսնիչն ա, լեսնիչը՛,— անցնում է կանանց շարքերով:

Անտառապետի անունը լսելով՝ ես ու Սամսոնն առաջ ենք վազում, տեսնելու ի՛նչ կա, կամ ինչո՛ւ համար են նրա անունը տալիս:

Ճիշտ որ— Թափորի առաջ կանգնած է մեր անտառապետը՝ մի երկար, հաղթանդամ ու չիկամորուս ռուս, որ միշտ ման է գալիս երկարաճիտ կոշիկներ հագած, կանաչ երիզով ու կակարդով գլխարկ դրած: Մեզանում բոլորը ճանաչում են դրան, մանավանդ գիտեն, թե ի՛նչպես է հետևում նա անտառում թաց ծառ կտրողներին. պատմում են, որ երբեմն, անտառապահներին ստուգելու համար, նա անձամբ գնում է անտառները հրջագայելու՝ լուսանկարչական ապարատը ձեռքին. կացնի ձայն լսելիս՝ վրա է հասնում և թաց ծառ կտրողին լուսանկարում թաքուն. ապա հարցնելով իմանում է նկարվածի ազգանունը և գործը դատարան տալով, առաջարկում է ծառ կտրողին տուգանել կամ բանտարկել: Քանի՛ այդպիսի զարմանալի դեպք է պատահել:— Ծառ կտրողները դատարանում ուրանում են, որ իրենք նույնիսկ անտառ չեն գնացել այդ օրը, զրպարտությո՛ւն է, սո՛ւտ մեղադրանք: Բայց անտառապետը նրանց ցույց է տալիս իրենց լուսանկարը... Կախարդ է, ոչ թե անտառապետ: Եվ դրա համար բոլորը մեզանում վախենում են նրանից ու չեն սիրում նրան: Այդ է պատճառը, որ ես ու Սամսոնը հետաքրքրությամբ վազում ենք առաջ:

Բայց մինչև մեր հասնելը՝ կանայք հրջապատում են նրան և խոսում ձեռներ թափահարելով, բարկացած, ծղրտոցով:

— Ինչո՞ւ համար եք մեր եկեղեցիների ունեցածը խլում, ինչո՞ւ եք մեզ Ավղանիստան քշում... Ի՞նչ եք ուզում մեզանից...

— Մենք կմեռնենք՝ Ավղանիստան չենք գնա. չենք գնա...

Խոսում են ու, ձեռներն թափահարելով, կարծես պատասխան են սպասում նրանից: Իսկ անակընկալի

եկած անտառապետը կանգնել է գունատված և չի իմանում ի՛նչ ասի իր հետ հայերեն խոսող կանանց: Նա, ըստ երևույթին, հայերեն մի քանի բառ գիտի միայն, և դրանք էլ կրկնում է, գլուխը տարուբերելով.

— Ես, нет, կույրիկ, нет...

Ասում է նա ու ձեռը՝ կա՛մ կրծքին է դնում կա՛մ շարժում բացասաբար, որ նշանակում է — ես բան չգիտեմ կամ բան չեմ հասկանում:

— Ո՛նց թե «нет»,—ձայնը բարձրացնում է հանկարծ Վառոն և, ըստ սովորության, ձեռը շարժում գլխից վեր: Այդպես է նրա խոսելու ձևը:—Դու նաչալնիկ մարդ՝ բան չգիտե՞ս: «Нет»— մետ չկա: Խնդրում ենք գրես ձեր թագավորին, որ մենք չենք ուզում մեր եկեղեցու ունեցածը ձեզ տալ, ոչ էլ ուզում ենք ուրիշ աշխարհ գնալ...

Քանի Վառոն խոսում է՝ բոլորը լուռ են, իսկ երբ նա վերջացնում է, նորից ձայներ ու ձեռներ են բարձրանում. կրկնում են Վառոյի խոսքերը, խնդրելով, որ անտառապետը թագավորին ու «նամեսնիկին» գրի, որ նրանք փոխեն իրենց կարգադրությունը: Այդ աղմուկի մեջ մի երկու անգամ լսում եմ և տատիս ծանոթ ձայնը:

Բայց քանի որ անտառապետը հայերեն չի հասկանում, կանայք առաջ են հրում մեր թաղեցի Երանոսի հարսին, և նա սկսում է ամաչելով ու գլխաշորը շուտ—շուտ ուղղելով:

— Господин леснич, пиши, говорит, что цар наш бож один бож... церков не дам, Авганистан не пойдем...

Վերջացնում է Երանոսի հարսը և ամաչկոտ ըսպասում անտառապետի պատասխանին: Նրա հետ ըսպասում է և կանանց շնչադուսպ բազմությունը: Բայց մինչև անտառապետը կպատասխանի, Վառոն թելադրում է.

— Ասա, դըի, մեր ուսումնարանները փակել եք քիչ ա՞, հըմի էլ ուզում եք եկեղեցինե՞րը...

Երանոսի հայրը, աչքերը գետնին, թարգմանում է: Իսկ անտառապետը կես խոսքից կարծես նրան հասկանալով, գլուխն օրորում է դարձյալ:

— Нет, нет, կույրիկ, нет!...

— Ի՞նչ ա ասում, ախչի,— հարցնում է Վառոն անհամբեր, գլխի ընկնելով, որ անտառապետը մերժողական պատասխան է տալիս:— Էդ ի՞նչ ա «նետ» ասում:

— Ասում ա՝ էդ իմ գործը չի,— բացատրում է Երանոսի հայրը:

Վառոն բարկանում է.

— Ասա՝ հողեմ գլուխդ, ձեռդ կկտրի՞, որ մի նամակ գրես, նաչալնիկ մարդ ես:

Անտառապետը, չգիտես, հասկանում է նրա խոսքերը, թե ուզում է հրաժարվել, ձեռը նորից շարժում է, որ այդպես բան չի կարող անել, և ուզում է դուրս գնալ: Սակայն կանայք ճանապարհ չեն տալիս. ուզում են դարձյալ ինչ-որ բան ասել, բայց անտառապետը սրտնեղվում է և ասում բարկացած.

— Ну, уходите!...

Այդ մի հասարակ բառը... երբեք չեմ մոռանա, թե ի՛նչ արավ այդ հասարակ բառը... Ես առաջին անգամ այստեղ հասկացա այն խոսքը, թե լուցկին հասարակ բան է, բայց գյուղ է վառում: Անտառապետի այդ մի հատիկ բառը լուցկի եղավ կանանց գրգռված բազմության համար: Գուցե բառը չէր մեղավոր, այլ անտառապետի բարկացած տոնը. սակայն այդ բառը բավական եղավ, որ կանայք իրար անցնեն: Հազիվ էր նա արտասանել այդ խոսքը, երբ զայրացած բռունցքներ բարձրացան և մեկը ճչաց հիստերիկ ծըղըրտոցով:

— Որ էդպես ա, մի՛րուքը պոկե՛ք...

Ու բոլորն ահա գազազած գրոհ են տալիս, խառն-

վում իրար, և անտառապետը կորչում է կանանց արանքում. չի երևում այլևս ոչ նրա հաղթ հասակը, ոչ միրուքը, ոչ կակարդով գլխարկը: Երևում են միայն սպառնալից շարժումներ, բռունցքներ, որ թափահարվում են անտառապետի քիչ առաջ կանգնած տեղն ու նրա շուրջը, ու լսվում են միայն ձայներ, որ գոռում են.

— Ի՞նչ եք ուզում մեզանից... Մենք ձեզ ի՞նչ ենք արել...

Խոսում են կարծես դարձյալ անտառապետի հետ, բայց անտառապետն ինքը չի երևում: Ես ու Սամսոնը որքան էլ բարձրանում ենք մեր ոտի ծայրերի վրա և աշխատում մի բան տեսնել,—ոչինչ չի երևում կանանց ալեկոծվող բազմության մեջ: Հետո մեզ պատմում են, որ անտառապետն իբր չոքել ներողություն է խնդրել կանանցից և խոստացել, որ նրանց ուզածը կանի, նամակ կգրի, միայն թե իրեն թողնեն:

Ու կանայք թողնում են: Նա հեռանում է խրոխտությունը կորցրած՝ կռվում պարտված աքլորի նման: Հեռանում է հագուստներն ուղղելով ու գլխարկը թափ տալով: Այդ խեղճ անտառապետը:

Բայց կանայք այլևս ուշ չեն դարձնում նրան: Նրանց թափորը նորից առաջ է շարժվում դեպի տերերի տունը: Եվ զանգերը դարձյալ ղողանջում են տխրաձայն:

— Տի՛ն-դի՛ն... Տի՛ն-դի՛ն...

Ասես բոլորին կանչում, հրավիրում են դուրս գալ տներից և միանալ կանանց թափորին: Ու ճանապարհին, կարծես ի պատասխան զանգերի ղողանջին, նորից երեխաներ ու կանայք են գալիս, միանում բազմությանը:

Հազիվ մի քանի քայլ ենք անում— մեզ մոտենում են Սեդրակը, Զարգարյան Աշոտը և Ապոստոլ Կարամանիդին, երեքն էլ հևասպառ ու քրտնած:

— Ճի՞շտ է, որ լեռնիչին ծեծեցին,— հարցնում են նրանք:

Մենք պատմում ենք մեր տեսածը:

— Բա հիմա ո՞ւր են գնում,— շարունակում են նրանք սաստիկ հետաքրքրված:

— Տերտերի տունը:

Տեր-Գյուտն ապրում է համարյա գյուղաքաղաքի ծայրին, իր ընդարձակ պարտեզի մեջ, որ շրջապատված է ճաղավոր պարիսպով. իսկ տունը, մանր լուսամուտներով ու փոքրիկ պատշգամներով ներկած տունը գտնվում է պարտեզի խորքում: Ավազով ծածկված նեղ ճանապարհը, որի երկու կողմը բազմագույն ծաղիկներ ու սեզեր են ցանված, փողոցի դռնից ուղիղ տանում է դեպի ներկած պատշգամը:

Եվ ահա կանայք, փողոցի փայտե դուռը բանալով, թշնամու նման խուժում են այդ ճանապարհի վրա ու գլվռոցով շարժվում դեպի ներկած պատշգամը: Ու մենք՝ ընկերներով՝ նրանց ետևից: Մենք դիտմամբ հեռու ենք մնում, որ տեր-հայրը մեզ չնկատի. որովհետև ո՛վ գիտի, կանայք ինչ են անելու. իսկ մեզ միայն հետաքրքրությունն է բերել այստեղ:

Բայց մինչև կանայք կհասնեն պատշգամ, տերտերը դուրս է գալիս տնից՝ փարաջայի փեշերն ըշտապ-շտապ վրա բերելով, որ ըստ երևույթին, նոր է հագել: Նրա ետևից դուրս է գալիս երեցկինը՝ շփոթված ու մի բարձ ձեռին:

Տնից պատշգամ դուրս գալով՝ տերտերը կանգնում է աստիճանների գլխին և անհանգիստ հայացք նետում բազմության, չհասկանալով նրանց գալու պատճառը:

Մեր խեղճ կրոնուսույցը, որ ոչ-ոքից չի քաշվում և առհասարակ սիրում է խոսել,— այստեղ շփոթված է երևում և իսկույն խոսք չի գտնում ասելու:

— Տե՛ս, տե՛ս, տեր-հայրն ինչպես է ռանգը քցել,— ասում է Սեդրակը:

Իսկապես, տերտերն այդ րոպեին գունատ է անտառապետից ավելի, նրա շփոթված հարցին, թե ի՞նչ կա, ինչո՞ւ են եկել,— Վառոն առաջ է գալիս՝ բարձրահասակ ու սևազգեստ:

— Տերտեր, մենք եկել ենք,— սկսում է նա իր տղամարդկային ձայնով, և նրա դեմքի խալերը կարծես ավելի են սևանում ու աչքի ընկնում,— եկել ենք իմանալու...

Նա խոսում է դարձյալ եկեղեցիների, փակ դըպրոցների և Ավղանխստանի մասին: Ասում է, որ տերտերը ո՛չ մի խաչ, ոսկեղեն չտա թագավորի մարդկանց և գրի կաթողիկոսին, որ նա էլ ոչ մի բան չտա, և հայտնի, որ իրենք չեն ուզում երկրից հեռանալ: Եվ հիմա, թող տերտերն ասի—ի՛նչ անեն:

Տերտերը շփոթված է: Նա կարծես խոսք չի գըտնում ասելու:

— Էջմիածինը... Էջմիածինը... ի՛նչ կարգադրի, ա՛յն էլ կանեմ: Իսկ դուք, խնդրեմ, հանգիստ կացեք և իզուր աղմուկ մի՛ք բարձրացնի...

Եվ ինքը տերտերը խոսում է անհանգիստ, շատ անհանգիստ. նա ասում է, որ աղմուկ բարձրացնելն ավելորդ է, որովհետև դրանով կբարկացնեն իշխանության և գործին, դույցե, ավելի վնասեն:

— Դե՛, հանգիստ գնացեք ձեր տները,— ավարտում է նա իր կարճ ճառը:

— Ցանի որ հանգիստ մնանք՝ բան չի՞ լինի,— ասում է Վառոն կասկածով:

— Այո, այո, պետք է հանգիստ մնալ: Ավելի լավ է հանգիստ...

— Ախր, այ տերտեր, ասում են մեծ քաղաքների եկեղեցիների ունեցած չունեցածն արդեն հավաքել-տարել են, հիմի գալու են մերը, էլ ո՞նց հանգիստ մնանք:

Տեր-Հայրը հիմա առաջվա պես չի․ այժմ նա խոսքեր է գտնում ասելու, որ ինքն ամեն ինչ կանի, և արդեն արել է, գրել է ո՛ւմ հարկավոր է։

— Դուք հանգիստ գնացեք ձեր տները,— կրկնում է նա մի տեսակ խորհրդավոր ու վստահություն ներշնչող եղանակով։

Չգիտեմ կանայք հավատում են նրա խոսքերին, թե ոչ, բայց չեն հանգստանում և իրենց տները չեն գնում։ Այնպիսի՛ լուրեր են պտտում, այնպիսի՛ բաներ են պատմում—ի՛նչպես հանգստանալ։ Գուցե հենց հիմա Թագավորի զորքը եկել՝ եկեղեցու դռները ջարդում է՝ մեջի հարստությունը վերցնելու․ գուցե հրաման է եկել ժողովրդին քշելու։

Եվ կանանց բազմությունը, տերտերի բակից դուրս գալով, ամբողջ Թափորով գնում է դեպի եկեղեցի, որտեղից զանգերը շարունակում են ղողանջել ավելի ողբագին ու ավելի հուսահատ.

— Տի՛ն-դի՛ն... Տի՛ն-դի՛ն...

Այս անգամ Թվում է ռուս զորքն եկել է արդեն և զանգերն օգնության են կանչում։ Եվ մենք ընկերներով գնում ենք կանանց հետ.— Հևասպա՛ռ, լարվա՛ծ, բորբոքվա՛ծ։

— Թագավորը հո մեր եկեղեցիները չի ուզում, — ասում է Սեդրակը,— չոր քարերը նրա ի՛նչին են պետք, նա ուզում է, որ մենք ռուս դառնանք։ Այ ինչ է ուզում։

—Դու որտեղի՞ց գիտես,—հետաքրքրվում է Զարգարյան Աշոտը։

— Լսել եմ։ Բազարում են ասում։

— Ճիշտ է,— ասում է Սամսոնը,— մորաքրոջս ուսանող տղան էլ է ասում։

Այս անգամ ճանապարհին պատահում են բազմաթիվ մարդիկ, տղաներ, կանայք, որ նույնպես եկեղեցի են գնում։ Ծուկայով անցնելիս՝ տեսնում ենք մարդիկ խանութները փակում են ու շտապում եկեղեցու

կողմը։ Ոչ միայն մեծերն են շտապում դեպի եկեղեցի, այլ և երեխաներ, երեխաներ... Հարյուրավոր երեխաներ մեզ նման հետևում են մեծերին։ Միայն հետաքրքրությունը չի տանում մեզ․ մենք ինքներս էլ հուզված ենք, գրգռված․ մենք հասկանում ենք աղետի մեծությունը․ մեծերի տխրությունն ու անհանգստությունը վարակում է և մեզ, ու այդ է պատճառը, որ բոլոր երեխաները լուրջ են և ոչ-ոք չարություն չի անում․ բոլորն էլ հանգիստ ու մտահոգ հետևում են Թափորին... Երբ խոսում են, որ ռուս զինվորները եկեղեցիները կողոպտելուց հետո՝ մեզ էլ պետք է լցնեն վագոններն ու քշեն հեռու, անհայտ, անծանոթ Ավղանիստան,— սիրտս մորմոքում է, երբ մտածում եմ, թե պետք է թողնենք մեր տները, մեր պարտեզները, մեր դաշտը, մեր գետը, մեր դպրոցը ու գնանք, ով գիտի, ինչ որ մի տխուր, տխուր երկիր։

— Պատահած սալդաթին խփելու եմ,— ասում է Սեդրակը, բռունցքը թափահարելով։

Սամսոնն ատամները սեղմում է իրար, իսկ Զարգարյան Աշոտը լացակումած է, և թվում է չի խոսում, որպեսզի լաց չլինի։

— Եթե մեր եկեղեցիները թալանեին,—ասում է Ապոստոլ Կարամանիդին,— ես բոլորին կսպանեի, բոլորի՛ն...

Նրա խոսքերը դիպչում են մեր ինքնասիրությանը, և մենք նրանից ետ չմնալու համար, կրկնում ենք համարյա միասին.

— Դու կարծում ես մենք չենք սպանի՞... Մենք էլ կսպանենք։

Եվ մեզ թվում է, թե կարող ենք, իսկապես, կռվել ռուս զորքի դեմ։

Մինչ այդ գրգռված բազմությունն աղմկելով մտնում է եկեղեցու բակը, որ արդեն լցված է ամեն տեսակ մարդկանցով, կանանցով, երեխաներով․ շատերը նստել կամ կանգնել են տապանաքարերին, երե-

խաները բարձրացել են ակացիները և նստել ճյուղերից բռնած. մեզ չափ մի քանի տղա գրկել են արձանները և նրանց հետ կանգնել՝ ավելի լավ տեսնելու: Իսկ բազմությունը եռում է հուզմունքից ու սպասողականությունից: Բոլոր դեմքերին ցասում կա. Թվում է՝ բոլորն էլ ինչ-որ բան են ուզում անել, լսել, պաշտպանել, բայց չգիտեն ինչ... Ու եռում են անհամբեր:

Եվ այդ ժամանակ ահա բազմության միջից բարձրանում է հանկարծ մի նիհար, սև երկար մազերով մարդ,— ոչ թե բարձրանում, այլ կարծես ծուլ է լենում ու կանգնում ինչ-որ մի բարձրության վրա, որը հետո պարզվում է— սեղան է: Նա կանգնում է, ճակատին Թափած մազերն ուղղում ու խոսում՝ բռունցքը շարունակ բարձրացնելով ու իջեցնելով. և ինձ միշտ Թվում է— ուզում է մի բանի խփել, բայց վրիպում է:

Նրա ասածների մի մասն ինձ չի հասնում, որովհետև շարունակ դառնում է ամեն կողմ, և երբ երեսը շրջում է ուրիշ կողմ— նրա խոսքերը ես չեմ լսում, իսկ լսածից մի մասը չեմ հասկանում. բայց այսքան եմ ըմբռնում միայն, որ ռուս Թագավորի ուզածը չի կատարվի, որ մենք նրան ոչինչ չենք տա:

— Խոսք տանք, որ կմեռնենք ու ոչինչ չենք տա,— վերջացնում է նա:

Դրան պատասխանում են բոլորը ծափահարությամբ և մի այնպիսի գոռոցով, որի մեջ էլ ոչ մի խոսք չի լսվում: Իսկ ծառին նստած մի տղա կանգնում է ու բղավում.

— Ուռռա՜ա՜...

Մեծ ժողովում ես առաջին անգամն եմ լինում, և ինձ Թվում է՝ ինչ ասում են, դա կարգ է, այդպես էլ պիտի լինի. խոսողից հետո պիտի ծափահարել ու գոռալ, իսկ տղաներն էլ պետք է կանչեն «ուռռա»:

Ապա խոսում է մի կարճահասակ, միրուքով մարդ: Նա էլ ասում է, Թե ռուս կառավարությունը ոչ միայն

Նկ. Ս. Ռուսամյանի



— Խոսք տանք, որ կմեռնենք ու ոչինչ չենք տա,—վերջացնում է նա:

եկեղեցիների ոսկին է ուզում հափշտակել, այլ մեր հոգիները, ձեր հոգիները. ուզում է ռուսացնել ձեզ, որ աշխարհի երեսին էլ հայ չմնա... և նա էլ դառնում է բոլոր կողմերի վրա ու մատով ցույց տալիս մարդկանց: Նա խոսում է մի խուլ, տխուր ձայնով. կարծես նրա ձայնը ոչ թե վերևից է լսվում, այլ գալիս է ինչ որ անդունդից, և այդ ձայնը սարսուռ է բերում ինձ, իսկ խոսքերը՝ սարսափ: Մանավանդ այն տեղը, երբ ասում է, թե ռուսներն ուզում են հափշտակել ձեր հոգիները— ես դողում եմ պարզապես. ես այդ հասկանում եմ բառացի. ինձ թվում է կանանց, մարդկանց ու երեխաների կրծքերից հանելու են նրանց հոգիներն ու տանեն Ռուսաստան:

Ինչպես առաջին հռետորի, այնպես էլ սրա խոսքերի մեծ մասը ես չեմ հասկանում, բայց տեսնում եմ, որ դրանք, երևի, շատ ուժեղ խոսքեր են, որովհետև կողքիս երկու պառավ արդեն լաց են լինում: Իսկ նրա վերջին խոսքերի վրա, թե ռուս կառավարությունն ուզում է, որ «աշխարհի երեսին էլ հայ չմնա»,— մի տղամարդ թաշկինակը հանում է ու թափ տալիս գլխից վեր.

— Կորչի՛, կորչի՛,— գոռում է նա:

Ինձ թվում է բոլորը հենց այդ խոսքին էին սպասում. և այդ խոսքն ասվեց թե չէ—հանկարծ միանգամից՝ տարբեր տեղերից բազմաթիվ ձեռներ են բարձրանում և բազմաթիվ ձայներ.

— Կորչի՛, կորչի՛...

Հռետորն ընդհատում է ճառը, ասես չիմանալով ինչ անի, բայց երբ բացականչությունները լռում են՝ նա մեկեն ձգվում է ու ձեռքը թափահարում օդում.

— Կորչի՛, բռնակալը,— ճչում է նա:

Ինչպես նրա բառերից շատերը, ես այդ բառն էլ չեմ հասկանում, բայց բազմությունը հանկարծ այնպես է աղաղակում, որ էլ հռետորի խոսքի շարունակությունը չի լսվում:

Ու բոլորն սկսում են հուզված, աղմկելով դուրս գալ եկեղեցու բակից. և զանգերը, որ ժողովի ժամանակ դադարել էին, նորից սկսում են ղողանջել, այս անգամ արդեն համարձակ ու խրոխտ:

— Տի՛ն-դի՛ն... Տի՛ն-դի՛ն...

Բազմությունը գնում է, իսկ մենք ընկերներով— ես, Սամսոնը, Սեդրակը, Ապոստոլ Կարամանիդին ու Զարգարյան Աշոտը, ուրիշ տղաների հետ, ավելի հասակավոր տղաների հետ՝ մնում ենք եկեղեցու բակում, որովհետև խոսում են, թե ամեն րոպե ռուս զորքը կարող է գալ, հարկավոր է պատրաստ լինել ու մոտ չթողնել: Մի քանի մեծ տղաներ ու երիտասարդներ հրացաններով զինված արդեն դիրք են մըտել գերեզմանաքարերի ետև, որ զորքը երևալուն պես կրակեն:

Մենք էլ՝ ընկերներով որոշել ենք այդ տղաների պես դիրք մտնել գերեզմանատանը և քարերով ետ մղել զորքը:

Ու շարունակ նայում ենք երկաթուղուն, որով պիտի գան նրանք: Մեծ տղաները խոսում են, թե լա՞վ չի լինի արդյոք գնան երկաթուղու մոտիկ կամուրջը քանդեն, որ նրանց գնացքը խորտակվի: Բայց ավելի մեծերը հասկացնում են, որ կարող է հանկարծ ուրիշ գնացք գալ՝ ուրիշ մարդկանցով և անմեղ մարդիկ կվնասվեն ի զուր:

Մի առ ժամանակ մենք շրջում ենք գերեզմանատանը՝ մեզ համար դիրք գտնելու: Գտնում ենք, վերջապես, մի քանի գերեզմանաքար իրար մոտ, որ հողից մի արշին բարձր են և կարող են պաշտպանել մեզ եկող զորքից: Անմիջապես քարեր ենք հավաքում, կիտուկներ անում այդ շիրմաքարերի մոտ և, մի-մի մահականման փայտ առած, վերադառնում ենք տուն այն որոշումով, որ գիշերը չենք քնի և, զորքի գալը լսելուն պես, կվազենք գերեզմանատուն՝ մեր դիրքից նրանց «քարապրանուկ» անելու...

Եվ ես ահա խրոխտ վերադառնում եմ տուն, ու ինձ թվում է՝ բոլորն իմ քայլերից պիտի հասկանան իմ որոշումը ու զարմանան, որ ես այդքան փոքր— այդպիսի մեծ հերոսություն եմ անելու: Ճանապարհին հանդիպում եմ Եվային, որ սովորականի պես մաքուր հագնված, սպիտակ պերելինով ու գոգնոցով, մազերը ժապավենով կապած—կանգնած է իրենց տան առաջ: Նա զարմացած նայում է մահակիս, որ, քաջությունս ցույց տալու համար, դրել եմ ուսիս:

— Այդ ի՞նչ է, Մանասյան, այդ չորանի փայտն ինչո՞ւ համար է,— ասում է նա քմծիծաղ:

Ես վշտանում եմ, որ նա իսկույն չի հասկանում իմ տրամադրությունն ու իմ մահակի նշանակությունը: Իսկ երբ բացատրում եմ, նա ժպտում է դարձյալ:

— Փայտո՞վ... Կռվում են հրացանով, ոչ թե փայտով ու քարով:

— Միևնույն է. մենք փայտով էլ կկռվենք, քարերով էլ. ով գա—կխփենք:

— Բոլորի՞ն էլ,— հարցնում է Եվան:

— Բոլորի՛ն:

— Իսկ եթե ալրիստավը գա՞:

— Նրա՛ն էլ:

Պատասխանելով՝ զգում եմ, որ Եվային ցույցադրում եմ իմ ուժը, և թվում է, այժմ գոնե, նա պիտի զարմանա իմ խիզախության ու քաջության վրա և գնահատի ինձ:

Բայց նա բարակ շուրթերն իրար բերելով, նորից քմծիծաղ է տալիս ու ասում.

— Ծիծաղելի՛ է:

— Թող էդպես լինի,— և ես հեռանում եմ հըպարտ. բայց այն գիտակցությունը, որ Եվան չի հավատում իմ քաջությանը, որ հեգնում է ինձ ու ծիծաղում վրաս,— այդ գիտակցությունը վշտացնում է ինձ և բարկացնում միաժամանակ:— Ես կապացուցեմ, թե ինչպես կկռվեմ. ես ցույց կտամ... կկռվեմ

ու դուցե մեռնեմ այդ կռվի մեջ... Եվ թող այն ժամանակ Եվան համոզվի... Այն ժամանակ նա կփոշմանի իր ասած խոսքերի համար և նրա խիղճը կտանջի նրան, որ ծաղրեց ինձ:

Երկու-երեք օր սպասում ենք ռուս զորքին. փայտերով զինված՝ ընկերներով գնում ենք գերեզմանատուն, վերադառնում: Զորքը չկա: Առավոտն ասում են՝ գալու են երեկոյան. իսկ երեկոյան ենթադրում են, թե կգան առավոտ: Բայց վախենում ենք, գան հանկարծ գիշերը և մենք չտեսնենք: Ու երբեմն հերթով մնում ենք արթուն, որ գալու դեպքում՝ իմացնենք իրար: Կռիվը մենք պատկերացնում ենք այսպես.—ռուս զորքը կրակում է հրացաններից. և որովհետև մենք թաքնված ենք շիրմաքարերի ետև, գնդակները մեզ չեն դիպչում. բայց մեր նետած քարերը— իրար ետևից զինվորներ ու սպաներ են տապալում, և մենք հաղթում ենք... Զինվորների մի մասն ընկնում է, մյուս մասը— զենքերը թողած փախչում, իսկ մենք դուրս ենք գալիս մեր թաքստոցներից ու դիրքերից, և ժողովուրդն ուրախ ծափահարում է մեզ. «կեցցե՛ք, քաջ տղերք... կեցցե՛ք...»: Իսկ եթե մեռնե՞նք... Եթե մեռնենք— մեզ, երևի, կթաղեն մեծ հանդիսով, ծաղիկներով, պսակներով ու բոլորը, ամբողջ ժողովուրդը կգա մեր ետևից. բոլորը կգովեն մեզ ու կհիշեն մեր արածը, ճառ կասեն, հերոսներ կանվանեն մեզ... Եվ այդ ժամանակ Եվան կամաչի իր խոսքերի համար:

Զանազան բաներ երևակայելուց բացի, երբեմն խոսում ենք, թե ինչո՞ւ, պատճառն ի՞նչ է, որ ռուս թագավորը վատ է վերաբերվում մեզ, զորք է ուղարկում մեզ վրա. մենք նրան ի՞նչ ենք արել... Այս հարցերին մենք պատասխան չենք գտնում, իսկ Սամսոնն այդ բացատրում է նրանով, թե՝ «թագավորը բռնակալ է— դրա համար»: Այդպես է ասել նրա մորաքրոջ ուսանող որդին: Բայց մենք չենք հասկանում ի՛նչ

բան է «բռնակալը», և ինքը՝ Սամսոնն էլ բացատրել չի կարողանում:

— Էդպես է ասում մորաքրոջս տղան,— կրկնում է նա:

— Զէ, բան չհասկացանք,— ասում է Սեդրակը: — Արի դու, ավելի լավ է, նրան մի կարգին հարցրու:

Սամսոնը խոստանում է, և մյուս օրը գալիս է ուրախ-ուրախ:

— Իմացա: Բռնակալն, ասում է, է՛ն է, որ ժողովրդին ազատություն չի տալի, ճնշում է, ազատ խոսողին բռնում է...

Այս անգամ Սամսոնի բացատրությունից որոշ բան հասկանում ենք, բայց դարձյալ լավ չենք պատկերացնում «բռնակալը»:

Անցնում է մի քանի օր՝ ռուս զորքը չի գալիս, մի օր էլ՝ լուր է տարածվում, թե այլևս չի գալու. թե ինչո՞ւ— մնում է անհասկանալի: Բայց մենք ընկերներով այդ հանգամանքը բացատրում ենք այնպես, որ նրանք հավանորեն վախեցել են մեզանից: Երևի լուր են առել մեր պատրաստության մասին ու չեն համարձակվել գալ:

Դա մեզ ուրախացնում է: Ուրեմն վտանգն անցավ: — Էլ մեզ հեռու երկիր չեն քշելու:

Բայց շուտով մի ուրիշ լուր է գալիս մեզ տխրեցնելու:

Մի առավոտ զարթնում ենք և լսում, որ մեր հարևանուհի Վառոյին, Երանոսի հարսին և երկու ուրիշ կնոջ բանտարկել են անտառապետին ծեծելու համար: Մեր թաղում բոլորն ափսոսում են Վառոյին, և մերոնք, մանավանդ տատս այն կարծիքն են հայտնում, թե նրան՝ Վառոյին, երևի, Սիբիր կքշեն:

Սիբի՛ր... դա ահարկու է հնչում բոլորի համար: Մենք գիտենք՝ դա այն տեղն է, ուր ուղարկվածն էլ ետ չի գալիս, այն հեռավոր ու ցուրտ երկիրը, ուր

մարդիկ մեռնում են մութ անհայտության մեջ, իրենց տանն ու հարազատներին կարոտ:

Ահավոր բաներ ենք լսել Սիբիրի մասին, և մեր փոքրիկ սիրտը տխրում, մորմոքում է Վառոյի համար: Բանտարկված մյուս կանանց լավ չենք ճանաչում, բայց Վառոյին գիտենք, նրա բարձրահասակ սևազգեստ կերպարանքը ծանոթ է բոլորիս. Նրա տղամարդկային բարկացկոտ ձայնը սաստել է և մեզ, ու շատ անգամ է նա մատ թափ տվել մեզ վրա, մանավանդ իմ, Սեդրակի ու Սամսոնի վրա, բայց և այնպես մենք խղճում ենք նրան, այդ խիզախ ու խրոխտ Վառոյին: Ոչ միայն խղճում, այլև՝ ընկերներով հավաքված մտածում ենք, թե չե՞նք կարող արդյոք նրան և մյուսներին, առանձնապես Վառոյին փախցնել բանտից, ինչպես մի քանի օր առաջ մեկին, մի տղայի, որ ապտակել էր պրիստավին, ընկերները փախցրել էին գիշերով:

— Ի՞նչ կա որ, կարող ենք,— ասում է Սեդրակը զարմանալի ինքնավստահ:— Մեզնից մեկը կերթա քարով կխփի պահակին, պահակը կընկնի խփողի ետևից, իսկ մենք կմտնենք՝ դուրս կբերենք Վառոյին ու մյուսներին: Մինչև պահակը վերադառնա՝ մենք արդեն հեռացած կլինենք: Միայն խփողը պետք է լա՛վ վազի, որ պահակը շատ հեռանա:

Զարդարյան Աշոտը գլուխն օրորում է. նա այն կարծիքի է, որ բանտի պահակը մարդու ետևից չի վազում, այլ հրացան է կրակում: Այդպես էլ քար խփողի ետևից նա չի վազի, այլ կկրակի և տեղն ու տեղը կսպանի:

— Դու ի՞նչ գիտես չի վազի,— տաքանում է Սեդրակը:

— Գիտեմ,— ասում է Աշոտը հանդարտ ու համոզիչ:

Այդ դեպքում Սեդրակն առաջարկում է կաշառել պահակին: Նա լսել է, որ պահակները փողով բան-

տարկյալներ են փախցնում: Կարելի է մի գումար հավաքել և տալ պահակին, այն ժամանակ նա կթողնի Վառոյին:

— Բայց ո՞ւր է փողը,— ասում է Սամսոնը:

Մեր գրպաններում գտնում ենք միայն 50 կոպեկ: Բայց որոշում ենք հավաքել մեր տներից ու ընկերներից:

— Լավ. ասենք հավաքեցինք, բա ո՞վ կտանի կտա պահակին,— հարցնում է Զարդարյան Աշոտը:

Մենք իրար ենք նայում: Իսկապես, դա էլ լուրջ խնդիր է. հեշտ բան չի փող տալ պահակին և ասել՝ ազատի կամ փախցրու Վառոյին: Մեզնից ո՞վ կարող է անել այդ:

— Ես,— ասում է Սեդրակը համարձակ:— Դուք փողը հավաքեք՝ ես տանեմ:

Այնպես ինքնավստահ ու համարձակ է այդ Սեդրակը:

Բայց մինչև մենք մտածում ենք փող հավաքել՝ Վառոյին փրկելու, լուր է տարածվում, որ Վառոյին, Երանոսի հարսին ու մյուս կանանց տանում են արդեն ուրիշ քաղաք:

Եվ մենք՝ ընկերներով բանտի դռանն ենք ահա: Բանտամերձ փողոցում ահագին ժողովուրդ է հավաքվել, մեծ մասը կանայք՝ ձեռներին ուտելիքի կապոցներ բռնած, որ բերել են Վառոյի և մյուսների համար: Չնայած պահակները քշում են, բայց կանայք, երեխաները չեն հեռանում. ետ են քաշվում մի քիչ, բայց բոլորովին չեն գնում: Իսկ երբ բանտի դուռը բաց են անում հանկարծ և երևում են պահակներով շրջապատված Վառոն ու մյուս կանայք, բոլորն առաջ են մղվում՝ ավելի լավ տեսնելու:

Ես, Սամսոնը, Սեդրակը բարձրացել ենք մի պատի, ճաղերից բռնած, նայում ենք նրանց, մանավանդ Վառոյին: Նա նույն խրոխտ բարձրահասակ Վառոն է, սևազգեստ ու խստադեմ. նույնն է և խալոտ թուխ

դեմքը։ Իսկ Երանոսի հարսը, թվում է, նիհարել է ու կուչ եկել։ Նա գլուխը կախ գետին է նայում չարունակ և ամաչում է բարձրացնել, ինչպես անտառապետի առաջ։ Նույնպես ամաչում ու քաշվում են մյուս երկու կինը։ Այն ինչ Վառոն, ինքը պահակներից բարձրահասակ, համարձակ նայում է աջ ու ձախ հավաքված մարդկանց, կանանց, և երբ մեկը բազմության միջից հանկարծ կանչում է—«Վառո քեքիր»— նա կանգ է առնում, հայացքը պտտելով ու հարցնում.

— Էդ ո՞վ էր, ախչի։

Այդ ժամանակ պահակը հրացանը դիպցնում է նրա թևին, որ չկանգնի, ու ինչ-որ բան է ասում։ Վառոն ձեռքը բարձրացնում է անխոս, դնում պահակի գլխին և հրում նրան։ Պահակը ետ-ետ է գնում, դիպչում է իր ընկերոջը և կանգ առնում՝ հանկարծակի եկած։

Լռությունը խորանում է փողոցում. բոլորը զարմացած, շնչազուսպ սպասում են, թե ինչ է լինելու. արդյոք պահակը չի՞ կրակի Վառոյի վրա կամ չի՞ խփի նրան։ Բայց ոչինչ չի լինում. պահակը ոչ միայն չի խփում նրան, այլ կարծես ամոթահար, քայլում է նրանից հեռու։ Իսկ ինքը Վառոն խրոխտ նայում է աջ ու ձախ և գլխով բարևում ծանոթներին։

Կանայք կապոցներ են ուզում տալ Վառոյին, մյուս կանանց, առանձնապես Վառոյին, բայց պահակները թույլ չեն տալիս մոտենալ՝ բան հանձնել, ինքը Վառոն էլ չի ուզում վերցնել։

— Շնորհակալ եմ, ա խալխը,—ասում է նա իր խզված, տղամարդկային ձայնով,— շնորհակալ եմ։ Տարեք ձեր տները, բեխատեր եք։

Նրանց տանում են դեպի կայարան, և կանայք, երեխաներ, մարդիկ հետևում են տխուր, ու մենք ընկերներով՝ նրանց հետ։

Կայարանին մոտենալիս՝ մի կին ձայն է տալիս հանկարծ։

— Վառո քեքիր, զե՛լ կաց, վախե՛լ մի…

Վառոն ետ է նայում և պահակների գլխի վրայով՝

— Ես վախըմ չեմ, դո՛ւք միք վախենալ… Մի օր էլել եմ, մի օր էլ կմեռնեմ. դո՛ւք լավ կացեք. հողե՛մ տրանց գլուխը։

Ու երկու ձեռով չանչում է ռուս պահակներին։

Վառոյի այս խոսքերն այնպես են հուզում մեզ՝ ընկերներիս, որ մենք որոշում ենք անտառապետին ծեծել անպատճառ կամ առնվազն քարով գլուխը պատռել։

Ու որոշում ենք այդ անել այն ժամանակ, երբ նա մի օր մթնով անցնելիս կլինի մեր թաղի փողոցներով։

— Մեջքին դագանակ եմ կոտրելու, դագանակ, — եզրափակում է Սեդրակը բորբոքված։

XII

ՄԱՆՈՒՇԻ ՆՇԱՆԸ

Այդ տարվա արձակուրդներին ես, չնայած եր–
բեմն հորս օգնում եմ դաշտային աշխատանքների մեջ,
մորս՝ տնային գործերում, բայց և այնպես ժամանակ
եմ գտնում շարունակ ընկերներիս հետ լինել և մաս–
նակցել նրանց խաղերին: Այն օրից, երբ զորքը չե–
կավ՝ մենք մեզ համարում էինք քաջ և անպարտ, և
չնայած Ավղանիստան տեղափոխելու խնդիրը մեզ այ–
լևս չի հուզում և զորքի գալուն էլ չենք սպասում,
բայց և այնպես շարունակում ենք շրջել փայտերով
զինված: Մենք տեղ և գործ ենք փնտրում մեր հերո–
սությունը ցույց տալու: Ու այդպես զինված, գնում
ենք գետը՝ լողանալու, գնում ենք դաշտ, անտառ,
բարձրանում ենք ծառերը՝ թռչունների բներ նայելու:
Ոչ մի բուն մենք չենք քանդում. ուզում ենք փորձել
միայն մեր ճարպկությունը և տեսնել, թե բնի մեջ
ինչ թռչունի ձագեր կան, և եթե մեծ են ու թևակա–
լած— վերցնենք տանենք տուն պահելու: Եվ այդ բո–
լորն անում ենք աղմուկով ու իրար հետ մրցելով:
Սակայն ամենից ճարպիկը մեր մեջ դարձյալ Սեդրա–
կըն է. նա այնպես է մագլցում ծառերը, կարծես ծնվել
է միայն ծառ բարձրանալու, և դրա համար տղաները
նրան ասում են «մկծեռ»— սկյուռ: Ամենաբարակ և

ամենաբարձր ծառն անգամ մատչելի է Սեդրակին.
բարձրանում է զարմանալի արագությամբ և կատարը
կամ թռչունի բնին հասնելու պես ճչում է «Ու–
ռա՜»... Անտառը դղրդում է նրա ձայնից: Մի անգամ
էլ ահա Սեդրակը բարձրացել է մի բարձր թեղի ծառ
ու դիտում է գրեթե գագաթին գտնվող մի բուն...
Հանկարծ, չգիտես որտեղից, երկու մեծ թռչուն, ար–
տաքինով արծվի նման, կռնչալով գալիս են դեպի
ծառը, դեպի Սեդրակի բարձրացած բունը ու պտը–
տվում, նախ վերև, ապա հետզհետե ծառի ցանցառ գա–
գաթին մոտ... Սեդրակն սկզբում բանի տեղ չի դնում
նրանց և չվացնում, հեգնում է թռչուններին. բայց
երբ թռչուններից մեկն իջնում է ցած, իջնում է հա–
մարյա մինչև բունը, այսինքն մոտենում է Սեդրակին,
— այդ ժամանակ Սեդրակը մի ձեռը պատ է տալիս
ծառով, մյուսը թափահարում է՝ թռչունին քշելու:
Արդյոք Սեդրակի ձեռի այդ թափահարումից, թե ճու–
տերին պաշտպանելու ցանկությամբ՝ թռչուններից
մեկը՝ իր ընկերոջից բաժանվելով, իջնում է ավելի
ցած... Մենք ներքևից սուլում ենք, ճչում, իսկ Սեդ–
րակը ձեռը թափահարում է շարունակ: Եվ մինչ մենք
սուլում ենք, իսկ նա թափահարում է ձեռը—թռչունն
իջնում է ավելի, մի պտույտ է գործում բնի շուրջը,
թեթև թևաբախումով նորից բարձրանում է մի փոքր
և մեկեն, անսպասելի իջնում է Սեդրակի գլխին...
Սեդրակը ճչում է և աշխատում ցած իջնել, իսկ
թռչունը բարձրանում է՝ Սեդրակի գլխարկը զույգ
ոտների մագիլների մեջ... Նա, ընկերոջը թողնելով
բնի վերև սավառնելու, ինքը գնում է հեռու... Նա,
երևի, կիջներ մի տեղ, և, կտուցով ավարը ծվատե–
լով, ոտները կազատեր այդ տարօրինակ կապանքից,
բայց, չգիտես ինչու, մինչև այսօր էլ ինձ թվում է,
որ նա սավառնում է այդպես՝ զույգ ոտների մագիլ–
ները գլխարկի մեջ:
Այս դեպքից հետո Սեդրակն, իհարկե, չթողեց

ծառ բարձրանալը: Ամենևին: Նա շարունակում էր դարձյալ ծառերը մագլցել՝ նախկին եռանդով ու ճարպկությամբ: Թվում էր, չկա մի բան, որ ընկճի Սեդրակի աշխույժն ու եռանդը: Ամեն տեղ նա խաղ ու զվարճություն էր գտնում: Եվ չնայած մայրը խորթ էր, հայրը հարբեցող. չնայած նրան հանդիմանում էին հաճախ ու նախատում, բայց նա երբեք չէր տխրում և իրեն միշտ ազատ էր զգում:

— Շատ որ անեն՝ տնից կհեռանամ, մենակ կապրեմ,— ասում էր նա երբեմն, ծնողներին ակնարկելով:

Բայց մի օր ահա Սեդրակը գալիս է տխուր, անսովոր տխուր ու ընկճված:

— Մեր Մանուշին նշանում են էսօր,— ասում է նա խորին թախիծով:

Տարօրինակ բան.— Սեդրակը տխո՛ւր... Եվ այն էլ քրոջ նշանի համար: Զարմանալի է. նշանի համար մարդիկ ուրախանում են, նշանը շնորհավորում են, իսկ սա տխրությունից չի կարողանում խոսել:

— Ի՞նչ, դու ուրախ չե՞ս, Սեդրակ,— հարցնում է Սամսոնը տարակուսած:

Սեդրակն իսկույն չի պատասխանում:

— Ի՛նչ ուրախ,— ասում է նա, գլուխը կախելով:— Մանուշին ուզում են Շարոյանց Արշակին տալ:

Ու ձեռը տանում է դեպի աչքերը:

Մենք ճանաչում ենք Մանուշին էլ, Շարոյանց Արշակին էլ: Մանուշը Սեդրակի միակ քույրն է առաջվա մորից. նա մի երկու տարով մեծ է Սեդրակից. եղբոր հագուստները միշտ լվանում-կարկատում է նա, խորթ մորից և հոր հարձակումներից միշտ պաշտպանում է նա, և Սեդրակը նրան այնպես է սիրում, որ ամեն անգամ ձեռն ուտելու բան ընկնելիս— «էս էլ տանեմ Մանուշին»,— ասում է, իսկ դաշտից կամ անտառից դառնալիս՝ վայրի պտուղ կամ ծաղիկներ է բերում նրան: Զարմանալի աղջիկ է Մանուշը. լռակ-

յաց և շարունակ աշխատանքով զբաղված. երբ խորթ մայրը բարկանում է Սեդրակի վրա, որ ասած գործը չի անում, Մանուշն անում է ինքը, որ Սեդրակի վրա չխոսեն: Մի անգամ էլ Սեդրակի հանցանքը— լամպը կոտրելը— Մանուշը վերցնում է իր վրա, և հայրը, Սեդրակի փոխարեն ծեծում է Մանուշին: Զարմանալի աղջիկ է Մանուշը... Իսկ Շարոյանց Արշակը— դա մորուքով մարդ է, Սեդրակի հոր ընկերը, նրա նման հարբեցող: Իսկ Մանուշը հազիվ 15—16 տարեկան է: Բացի դրանից՝ այդ Արշակն այնքան տգեղ է, չեչոտ. նրա ցանցառ բեխերը հիշեցնում են կատուի բեխեր, վիզն էլ երկար է, բկի ոսկորը դուրս ընկած: Ասում են, որ այդ Արշակի կինը մեռնելով՝ թողել է մի քանի երեխա... Այդ է պատճառը, որ Սեդրակը վշտանում է, թե ի՛նչպես կարող է Մանուշը այդպես մեծ մարդու կինը դառնալ և երեխա պահել:

— Ո՞վ է ուզում տալ,— հարցնում է Աշոտը:

— Հերս ու մերս:

— Իսկ Մանուշն ի՞նչ է ասում:

— Մանուշը,— հեկեկանքը հազիվ զսպում է Սեդրակը,— Մանուշը հրե՛ նստած լաց է լինում: Ասում է. «Սեդրակ ջան, ե՛ս չեմ ուզում. ջուրը կընկնեմ— նրան առնիլ չեմ»... Հրե գոմում նստած լաց է ըլում:

Եվ Սեդրակը, էլ չկարողանալով իրեն պահել, լաց է լինում:

Այն հանգամանքը, որ մեր անվախ, ուրախ ընկերը լաց է լինում, զգում ենք, թե ո՛րքան խորն է նրա վիշտը, և այդ վիշտն այնպես է ազդում մեզ, որ միառժամանակ ոչինչ չենք գտնում ասելու: Ես զարմանում եմ Սեդրակի հոր վրա, որ իր աղջկան ուզում է տալ այդ տարիքով ու տգեղ մարդուն. բայց որովհետև հարբեցող է— այնքան զարմանալի չի թվում. մանավանդ մայրն էլ խորթ է:

— Իսկ տերտերն ի՞նչ է ասում. թողնո՞ւմ է,— հարցնում է Զարգարյան Աշոտը:

Սեդրակը ձեռը թափահարում է հուսահատ:

— Տերտերին ի՛նչ:

— Ե՞րբ են ուզում նշանել,— շարունակում է Աշոտը:

— Էսօր իրիկուն ուզում են համ նշանեն, համ տանեն. ամեն բան վերջացած է: Մենք՝ ես ու Մտանուշն էլ էսօր իմացանք... Մանուշը հրեն նստած լաց է ըլում...

Սեդրակի ձայնը դողում է նորից և նա երեսը շրջում է, որ արցունքները չտեսնենք:

Մենք հասկանում ենք, որ դա մեծ վիշտ է Սեդրակի համար, բայց մխիթարանքի խոսքեր չգիտենք,որ սփոփենք նրա վիշտը: Եվ այդ հանգամանքը, որ չենք կարող նրան սփոփել, ճնշում է մեզ:

— Ասում ես՝ էսօր ուզում են տանե՞ն,— հետաքրքրվում է Սամսոնը:

— Հա, բայց Մանուշը չի ուզում...

— Իսկ էդ հարբան Արշակն ուզո՞ւմ է անպատճառ,— շարունակում է Սամսոնը:

Սեդրակն այնքան լցված է, որ միայն գլխով է անում:

— Զրնենք դրան մի լա՛վ,— բռունցքը ցույց է տալիս Սամսոնը, ազդված Սեդրակի խոսելու եղանակից. մեր մեջ Սեդրակն է, որ սիրում է բոլոր խընդիրները լուծել ծեծով կամ լուծելու համար առաջարկել ծեծ. նա առանձնապես սիրում է քարածեծը: Զինվորներին քարով քշելու հեղինակն էլ նա էր: Առհասարակ որտեղ քարով, փայտով ծեծելու գործ էինք ունեցել—բոլորը Սեդրակից էր բղխել, և Սամսոնը ազդվել էր նրանից:

Եվ ահա Սամսոնի առաջարկն ընդունվում է. միայն ես եմ, որ կասկած եմ հայտնում.

— Իսկ եթե էդ Արշակը մեզ ճանաչի՞...

— Էնպես ժամանակ կանենք, որ չի ճանաչի,—

հանգստացնում է ինձ Սամսոնը:— Մթնով անցնելիս վրա կտանք ու...

— Էլ ե՞րբ,—տնքում է Սեդրակը հուսահատ:—Էս իրիկու Մանուշին տանելու են: Մերոնք հրե պատրաստություն են տեսնում, բայց Մանուշը նոր շոր չի ուզում հագնել...

Եվ Սեդրակը, քրոջը հիշելով, լացակնում է նորից:

Մեզ համար ծանր է տեսնել մեր ընկերոջ, մեր համարձակ ընկերոջ վիշտը և պատրաստ ենք ամեն բան անել նրան սփոփելու. ու որոշում ենք, երբ իրիկունն այդ հարբեցող Արշակը՝ իր ընկերներով, կամ բարեկամներով գա Սեդրակենց տուն— քարերով խըփենք նրան: Մեր որոշումը Սեդրակին դուր է գալիս և նա նորից խմբի ղեկավարությունն իր ձեռն է առնում. սկսում է խորհուրդներ տալ, թե ի՛նչ և ի՛նչպես պիտի անել: Նա գտնում է, որ էլ ուրիշ հնար չկա, միայն ծեծելն է մնացել, և դա հեշտ է, որովհետև Արշակն այրի լինելով, գալու է առանց զուռնայի, և մի երկու մարդու հետ: Այդպես են ասել իրենց տանը:

— Ես չեմ թողնի, որ նա Մանուշին տանի,— հուզվում է նորից Սեդրակը:

— Այդ լավ: Բայց ի՞նչպես անենք, որ չբռնվենք, — ասում է Զարգարյան Աշոտը: Այնքան զգույշ է այդ Աշոտը:

Սեդրակն անմիջապես հանգստացնում է նրան: Իզուր է Աշոտը կարծում, թե կբռնվենք. մենք այնպիսի տեղից «քարապրանուկ» կանենք նրանց, որ երբեք չենք նկատվի, իսկ եթե նկատվենք էլ— չենք բռնվի: Մենք հարձակում կսկսենք կտուրներից... Իսկ փախչելու համար Սեդրակն այնպիսի տեղեր գիտի, որ սատանան էլ իր ծուռ ոտով չի հասնի մեզ:

Սեդրակենց տունը գտնվում է մեր թաղում և հեռու չի մեր ու Սամսոնենց տնից: Նրանք Աշոտենց

հարևան են: Աշոտն ինքն էլ գիտի այդ տեղերը, և այլևս չի առարկում:

Ու սկսում ենք պատրաստություն տեսնել:

Սեդրակն իսկույն տանում ցույց է տալիս մեզ այն կտուրները, ուր պետք է դիրք մտնենք և «քարտապրանուկ» անենք իր փեսացուին՝ Արշակին և նրա հետ եկողներին: Նա ցույց է տալիս իրենց տունը տանող նեղ փողոցի երկու կողմը գտնվող տների տափակ կտուրները. դրանցից մեկն Աշոտենց կտուրն է: Պիտի բարձրանանք այդ կտուրներն ահա և վրա տանք փողոցի երկու կողմից:

— Այ, ծիծաղելի բան կլինի հա՛: Գալիս են Եշած և հանկարծ— քարե կարկուտ,— ծիծաղում է Սամսոնը:

Սկսում ենք քար կրել կտուրները. մանր-մանր քարեր: Աշոտի խորհրդով գրպաններով ենք կրում, որ իր՝ Աշոտի մայրը և առհասարակ տեսնողները գլխի չընկնեն: Ուզում ենք ցույց տալ, որ խաղում ենք իբրև թե: Երբ մի երկու անգամ բարձրանում ենք իջնում, Աշոտի մայրը՝ այրի Նոյեմը հարցնում է, թե այդ ինչ ենք անում վերև:

— Հե՛չ, խաղ ենք անում,— պատասխանում է Աշոտը:

— Ի՞նչ խաղ է, որ բարձրանում-իջնում եք շարունակ,— կասկած է հայտնում այրին:

— Նոր խաղ է,— չի շփոթվում Աշոտը:

— Զարմանալի է,— ասում է այրին և գնում է մի ինչ-որ տնից լվացքավարձ ստանալու:

Իսկ մենք նորից բարձրանում ենք անդադրում, իջնում, բարձրանում ենք իջնում, և մեր այդ խաղի հետևանքը լինում է այն, որ ամեն մի կտուրի վրա գոյանում են քարերի, նետելի մանր քարերի մի քանի կիտուկներ:

Նախապատրաստական այս աշխատանքից հետո՝ սպասում ենք օրը մթնի: Մինչ այդ՝ գործը հաջող

տանելու համար՝ Սամսոնն առաջարկում է Մելիտոնին ու Ապոստոլին էլ հրավիրել. Աշոտը դեմ է. նա վախենում է գաղտնիքը «դուրս գա». բայց մենք երեքով որոշում ենք կանչել, և Սամսոնին ուղարկում ենք նրանց ետևից: Նրանք գալիս են, և մեզ հետ սպասում, որ օրը մթնի: Իսկ երբ օրը մթնում է—ես, Մելիտոն, Աշոտը ծածուկ բարձրանում ենք Աշոտենց կտուրը, իսկ Սեդրակը, Սամսոնն ու Ապոստոլը՝ հարևանի: Բարձրանում, դիրք ենք մտնում ու նայում փողոցին, թե երբ պիտի գա հարբեցող Արշակն իր մարդկանցով:

Երեկոն մութն է, աստղերը հազիվ են երևում. դիրք մտած լսում ենք ինչպես են շները հաչում հատ-ընդհատ, ուշ վերադարձող կովերը բառաչում են փողոցներում. մի դուռ ահագին ճռռոցով փակվում է. Դա Սարեթի դուռն է, որ առավոտը բացվում է և երեկոյան միայն ծածկվում: Մեր թաղի բոլոր դռների ձայնը ծանոթ է մեզ: Ինչպես ճանաչում ենք ո՛ւմ կովն ի՛նչպես է բառաչում, ո՛ւմ շունն ի՛նչպես է հաչում, այնպես էլ գիտենք, ո՛ւմ դուռն ի՛նչ ձայն է հանում: Եվ մենք ուրախանում ենք, որ թաղի դռները ծածկվում են իրար ետևից: Այդ լավ է— քար նետելիս մեզ չեն տեսնի: Բայց ո՞ւր են նշանավորները. նրանք դեռ չեն երևում: Փողոցով անցնում են մեկ-մեկ մարդիկ, իսկ նրանք չկան: Մենք գիտենք, որ նրանք պիտի գան խմբով, Սեդրակը նույնիսկ իմացել է, որ նրանք չորս թե հինգ հոգի պիտի լինեն և հետները միրգ ու նվերներ պիտի բերեն խնամիների ու հարսնացուի համար: Այդ մենք էլ գիտենք—այդպես է սովորությունը...

Բայց ինչո՞ւ են ուշանում:

Մենք՝ ես, Աշոտն ու Մելիտոնն շատ անհամբեր ենք. շուտ-շուտ բարձրանում ենք նայում դեպի փողոցը կամ դեպի այն կտուրը, ուր Սեդրակն ու Սամսոնն են դիրք մտել. Նկատելի է, որ նրանք էլ նայում են մեզ

և ես զգում եմ, թե ինչպես է սիրտս բաբախում և շնչառությունս ծանրանում։ Աշոտն ու Մելիտեն ոչինչ չեն խոսում, իսկ ես անհանգիստ եմ շատ։

— Հանկարծ, Աշոտ, ուրիշ անցորդների չխփե՞նք,— ասում եմ ես։

— Չէ։ Ես գիտեմ, նրանք խմբով, մրգով են գալու։

Այդ ճիշտ է։ Բայց հանկարծ թյուրիմացության մեջ ընկնենք,— մտածում եմ ես, աչքս միշտ փողոցի ծայրին, որտեղից պիտի երևան նրանք։

Նորից մի երկու մենավոր անցորդներ, մի պառավ քշում է իր կովը, հայհոյելով մեկին, որ ուշացրել է կովը. մի այծ մկկալով վազում է կովի ետևից։

Իսկ մեր սպասած մարդիկ չկան ու չկան։

Վերջապես, փողոցի ծայրում երևում են ահա ստվերներ։

— Գալի՛ս են,— շշնջում է Մելիտեն, վիզը կտրից երկարելով։ Ես դող եմ զգում մի վայրկյան, բայց ամաչելով թե ռուսի լրջությունը գիտակցելով, հավաքում եմ ինձ և աջ ձեռս ինքնաբերաբար գնում է դեպի քարերի կիտուկը։

Աստղալուսով երևում է, որ եկողը խումբ է. մեկը գալիս է առջևից՝ մի լայն բան գլխին (դա երևի, միրգն է, մտածում եմ). մի ուրիշը նրա կողքին՝ մի կապոց բռնած (այդ էլ, երևի, հարսի շորերն են կամ նվերները), իսկ նրանց հետևում են մի քանի հոգի, որ շարժվում են հանդիսավոր ու դանդաղ քայլերով։

— Նրա՛նք են,— շշնջում է Աշոտը, ինքն էլ քարեր վերցնելով։

Աշոտի խոսքերին անմիջապես հետևում է Սեդրակի պայմանական սուլոցը հարևան կտուրից և թռչում է առաջին՝ քարը...

Այնուհետև ես էլ ոչինչ չեմ տեսնում աչքես. քարեր են, որ ես, Աշոտն ու Մելիտեն նետում ենք դեպի փողոց, դեպ այն կողմը, ուր երևացել են այդ բա-

Նկ.՝ Ս. Ռոստամյանի

Քարեր են, որ ես, Աշոտն ու Մելիտեն նետում ենք։

վերները: Երբեմն նկատում եմ միայն, որ հարևան կտրանը նույնպես կռանում-բարձրանում են Սեդրակը, Ապոստոլն ու Սամսոնը, իսկ թե ի՛նչ է լինում փողոցում, ո՛ւր են ընկնում մեր քարերը՝ ես չեմ տեսնում, ոչինչ չեմ նշմարում: Մեկ էլ ականջիս է հասնում նախ մի կոպիտ հայհոյանք, հետո մի «վայ»... ու լսում եմ դարձյալ, թե ինչպես են մեր քարերը թփթփում գետնին, կարծես եղներ են փախչում փողոցով, մութի մեջ:

— Արա՛, էդ ո՞վ էր,— լսվում է նորից մի ձայն:

Նորից լռություն, նորից քարեր, քարեր, հայհոյանք, կանչ-աղմուկ. դռներ են բացվում ու ծածկըվում. բայց մեր քարերը տեղում են չարունակ և այդ բոլորի մեջ հանկարծ էլի մի խեղդված ձայն.

— Փախե՛ք. էստեղ մի թալակ կա...

Եվ այդ խոսքերին հետևում են էլի հայհոյանքներ ու ոտների թրփթրփոց:

— Փախա՛ն,— ասում է Մելիտեն շշուկով, չդադարեցնելով իր «քարապրանուկը»:

Իսկապես փողոցում՝ առաջվա տեղն էլ ստվերներ չեն երևում: Բայց տղերքը դեռ շարունակում են քարեր նետել, մանավանդ Սեդրակն իր ընկերներով ազարտի մեջ են. Նրանց քարերը թափվում են անընդհատ: Նորից մի դուռ է բացվում փողոցի վրա: «Էտ ո՞վ ա», ասում է մեկը և, պատասխան չստանալով թե քարերից վախենալով՝ դուռը դնում է չրխկոցով:

Սեդրակը սուլում է կրկին. դա նշան է, որ կարող ենք իջնել: Հևիհև իջնում ենք քրտնած և մեկ-մեկ, ամենայն զգուշությամբ, գնում ենք փողոց: Չենք հավատում, որ նշանավորները փախած լինեն, և առաջ ենք գնում ստուգելու: Հազիվ մի երկու քայլ ենք անում, Սամսոնի ոտն ինչ-որ բանի է դիպչում, նա կռանում է և բացականչում.

— Հրե՛ս մի խնձոր...

Անսպասելի բան... Մի քանի րոպեի մեջ մենք,

տանից լուցկու և լույսի գտնում ենք խնձոր, կանֆետ և ընկույզ և, ուտելով՝ ցրվում մեր տները, ուրախ, որ Մանուշին ազատեցինք այդ տգեղ մարդուց:

Բայց արդյո՞ք ազատեցինք...

Մյուս օրը Թաղում լուր է տարածվում, թե Մանուշը սիրեկան է ունեցել և թե այդ սիրեկանը քարերով փախցրել է նշան բերող Արշակին՝ իր բարեկամների հետ: Եվ խորթ մայրը՝ դրանից հետո սկսում է ավելի վատ վերաբերվել նրան: Նա հաճախ կռվում է Մանուշի հետ և կրկնում.

— Սրան տեսեք, սիրեկան ա պահում. հողեմ քու գլուխն էլ, սիրեկանիդ գլուխն էլ. դե ինձ խանգարեց, հնենց էլ թող գա ամուսնանա: Բա խի՞ չի գալի, թե կարգին տղա ա...

Եվ մենք, ամեն անգամ այդ խոսքերը լսելիս, չըգիտենք ծիծաղենք, թե տխրենք:

Աշխարհը, ինչպես երևում է, խաղալիք է երեխայի համար:

XIII

ԵՐԿՐՈՐԴ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Այս երկրորդ քաջագործությունը ես կատարում եմ մենակ, մի քաջագործություն, որ այսօր հիշելիս անգամ տխրում է սիրտս:

Մեր բակում մեծ աղմուկ է: Հայրս, պապս, հորեղբայրս, մայրս ու տատս, իրար խառնված, վիճում են նորից բաժանքի մասին:

— Ես իմ բաժինն եմ ուզում,— ասում է հայրս:

— Քեզ բաժին չկա...

Այդ վեճերը... Դրանք սկսում են սովորաբար աշնանը և գարնանը. ընդհանուր դժգոհություններ լինում են միշտ, ամեն առթիվ. խռովում, չեն խոսում իրար հետ երկար, ամիսներով. բայց գարնանը, երբ հարեվանները պատրաստություն են տեսնում հողերն ու բանջարանոցները ցանելու, և աշնանը, երբ դարմանն ու անասունները պետք է տեղավորել—խռով լեզուները բացվում են և հին վեճերը նորոգվում, ու տեվում օրեր, շաբաթներ. նորից հիշում են այն բոլորը, ինչ եղել են անցյալ, նախանցյալ տարիները— վիրավորանքներ, խոսքեր, վարմունքներ: Այդ վեճերին, ինչպես միշտ, մասնակցում է մայրս, որ իհարկե պաշտպանում է հորս և նոր բաներ հիշում իր կողմից. մասնակցում է և տատս, որ աշխատում է լռեցնել կողմերին և ամաչեցնել. մասնակցում է և Սանամ-զլզին՝ պատշգամից սենյակ մտնելով կամ սենյակից պատշգամ դուրս գալով. Նա արհամարհան-

քով մի երկու խոսք է ուղղում հատկապես մորս կողմը և խուլ երեսը շրջում։ Այդ վեճերի միջոցին երբեմն հիշում են և իմ շաքար ուտելը, որից ես ամաչում եմ շատ։ Այդ միշտ մայրս է հորեղբորս երեսովը տալիս, որ մի կտոր շաքարի համար ծեծել է ինձ... Այդ վեճերը երբեմն այնպես են վշտացնում ինձ, որ քիչ է մնում լաց լինեմ, կամ հեռանամ, որ ոչինչ չլսեմ և չտեսնեմ, որովհետև հարևանները, մանավանդ կանայք, երեխաներ հավաքվում ականջ են դնում և հետո պատմում—ծիծաղում...Ես ամաչում եմ թե՛ հարևաններից, թե իմ ընկերներից՝ Սամսոնից, Աշոտից.. ոչ մեկի տանն էլ այդպիսի կռիվներ չեն լինում...

Այս անգամ բաժանքի կռիվը բորբոքվել է մարագի պատճառով։

Ինչպես ամեն տարի, այս աշնանն էլ հայրս ուզում է գարմանը լցնել մեր հին, միակ ու ընդհանուր մարագը, ուր իր տավարի կերն է լցնում և պապս։ Այդ մարագն այնքան մեծ է, որ ամեն մեկն իրենը լցնելով՝ դեռ բավական տեղ է մնում շարժվելու, ժմրան փայտ դարսելու։ Բայց, չնայած դրան, պապս ու հորեղբայրս դեմ են, որ հայրս գարման լցնի այնտեղ. նրանք կանգնել են գարմանի սայլի առաջ և չեն թողնում, որ հայրս մոտենա մարագին։

—Քանի որ ամեն ինչդ ջոկ ա, մարագն էլ ջոկի,— ասում է պապս։

Հայրս զայրացած, բայց անխոս սայլն ուզում է քշել առաջ։

Պապս տերողորմյան խփում է եզների դնչին ու կանգնեցնում նրանց, իսկ հորեղբայրս վազում է մարագի դուռը փակում կողպեքով և ժպտում չարախինդ։

— Բա էդպես հեր կլնի՞, որ որդուն զրկում է ամեն ինչից,— ասում է մայրս.— մարագը հենց չե՞ս տանելու։ Դարման ա,— ամեն տարի լցրել ենք, թող էս տարի էլ լցնենք։

— Հարկավոր չի,— ասում է պապս հանդարտ, բայց տիրական,— էդուց պակասեց, պտի ասես— դողացել ենք։

— Դա մահանա է, որ չթողնես,— հուզվում է մայրս։ —Պարզ ասա՝ «չեմ թողնում», պրծավ գնաց։

Պապս դադարեցնում է տերողորմյան շրխկացնելը և մի սուր հայացք է գցում մորս վրա։

— Հենց չեմ թողնում։ Ասելդ ի՞նչ է։

— Ինչո՞ւ,— խեղճանում է մայրս։

— Էդպես,— պապիս փոխարեն պատասխանում է հորեղբայրս, որ մինչ այդ խեթ նայում է մորս։— Գնա քեզ համար մարագ շինի, մեջը լցրու։

— Դու ո՞վ ես, մարագը հո քոնը չի՞,— դառնում է նրան հայրս,— մարագը բոլորինս է, մարագը չի բաժանված...

— Չի՛ բաժանված,— քմծիծաղ է տալիս հորեղբայրս։— Տերը սա է՝ չի թողնում,— մատնացույց է անում նա պապիս,— ի՞՛նչ պտի անես։

Մայրս չի համբերում։

— Դուք խիղճ չունեք. ձեր խիղճը կատուն կերել է։

— Կատուն էրեսդ ուտի, անամոթ,— հանդիմանում է տատս։— Կորի՛ր էստեղից։ Դուք էլ ձեններդ կտրեցեք,— դառնում է նա մյուսներին, ձայնն իջեցնելով։— Դուռ ու դրկից լսում են, ամո՛թ ա։

Բայց տատիս խոսքերը չեն ազդում, և նրանք շարունակում են. ավելի վիրավորում են իրար, քան թե բան են ուզում հասկացնել։ Իսկ հարևանները, մանավանդ կանայք, իրենց պատշգամներում ու ցանկապատների մոտ լսում են ու ծիծաղում, լսում են ու չարախնդում, և ես մտածում եմ, որ քիչ հետո պիտի պատմեն մյուսներին.

— Էսօր Մանասենք էլի ուտում էին իրար...

Ամենից շատ զարմացնում է ինձ պապս. որքան հայրս տաքարյուն է, բռնկվող, պապս նույնքան սառն

է, անտարբեր: Հայրս չարունակ խոսում, բաժին է պահանջում, իսկ պապս լսում է ու լռում, լսում է ու տերողորմյայի հատիկները չխկացնում, և այդ պատճառով հորս համառությունը տխրեցնում, բարկացնում է ինձ, որ ձեռ չի քաշում պապիցս և չարունակ բաժին է ուզում:

Լեզվակռիվն այնքան է տաքանում, որ հայրս հայհոյում է հորեղբորս·

— Խաբերա՛: Սուտ կշեռք բանեցնող: Մի կշեռքով առնում ես, մի ուրիշով ծախում:

— Գյադա՛,— ասում է հորեղբայրս երկարացնելով, և դեմքն այնպես է ծամածռում, այնպիսի արհամարհանքով, որ հայրս չի համբերում, ճիպոտը ձեռին գնում է դեպի նա, գնում է ինքն իրեն մոռացած և աչքերն արյունով լցված:

Բայց տատս մի զարմանալի ճարպիկ շարժումով, մի շարժում, որ ինձ հիշեցնում է հավի թեթևություն· այո, հավի թեթևությամբ թռչում— կանգնում է նա հորս առաջ և ծունկ չոքում·

— Ամա՛ն...

Հայրս կանգ է առնում՝ ճիպոտը բարձր բռնած, հորեղբայրս իրեն գցում է պատշգամ ու դուռը դնում, իսկ Սանամ-գիգին, չփոթված, ավելը տալիս է մարդուն, պաշտպանվելու: Եվ երկուսով միասին խրոխտում են պատշգամից:

Հայրս տնքում է, գլուխն օրորում է ու ետ դառնում: Նա չի ուզում տատիս տրորելով առաջ գնալ:

Ինչպես միշտ, այս կռվից էլ ծնողներս վերադառնում են հուսահատ ու երկար խոսում են այն մասին, որ բախտ չունեն: Ապա մայրս նստում լաց է լինում, թե պապս, հորեղբայրս ապրում են ճոխ, առատ, մեծ սենյակներում, իսկ իրենց՝ մարագի մի անկյունն էլ շատ են համարում: Ու հանդիմանում է հորս, որ չի կարողանում իր բաժինն ստանալ· որ թույլ է, դատարան չի

դիմում· որ եթե խիստ լինի և խիստ խոսի՝ պապս ու հորեղբայրս տեղի կտան:

Հայրս, առանց այն էլ հուզված, մորս հանդիմանությունից ավելի է հուզվում և, իր հերթին, հանդիմանում է մորս, որ իրենց վեճին խառնվելով՝ խիստ լեզու է բանեցնում և դրանով ավելի գրգռում պապիս ու հորեղբորս, և նրանք, եթե ուզեն էլ բաժանք անել— զայրանում են ու չեն անում: Մայրս համաձայն չի այդ կարծիքին, առարկում է հորս, և հիմա էլ իրենք են վիճում, թե իրենցից ով է մեղավոր, որ պապս բաժանք չի անում: Վիճում են երկար ու կռվում համարյա և ապա, իրարից խռով ու կռվաթաթախ, պառկում քնելու:

Եվ այս բոլորը՝ թե ծնողներիս կռիվը պապիս ու հորեղբորս հետ, թե հորս ու մորս վեճը միմյանց հետ,— խորին տխրություն ու վիշտ են բերում ինձ:

Այդ երեկո անկողին մտնելով՝ ես չեմ կարողանում հանգստանալ· չարունակ մտածում եմ բաժանքի կռիվների մասին և նորից համեմատում եմ մեր ընտանիքը՝ ընկերներիս ընտանեկան կյանքի հետ ու ավելի տխրում· ինչո՞ւ նրանց տներում էլ բաժանք ու վեճ չկա, և միայն մեզ մոտ է այսպես: Ու սիրտս քիչ է մնում տրաքի բարկությունից, զայրույթից, վշտից:— Ա՛խ, ինչու մեծ չեմ, որ կարողանամ օգնել հորս, որ նա ազատվի նեղությունից և հրաժարվի հոր բաժնից, ու էլ չմտածի բաժանքի մասին... Մտածում եմ և այն մասին, թե ինչո՞ւ է պապս այդպես վարվում· ի՞նչու ամեն բան պահում է իրեն ու մյուս տղային, իսկ հորս ոչինչ չի տալիս: Ի՞նչն է սրա պատճառը... Չլինի՞ հայրս մի որևէ վատ բան է արել պապիս ու բարկացրել է նրան, և նա այդ պատճառով զրկում է հորս: Բայց եթե այդպիսի պատճառ լինի—պապս կասեր մի օր, կամ հորեղբայրս կասեր: Ուրեմն ի՞նչ կա... Միտքս բացատրություն չի գտնում, չնայած որ չարունակ լսում եմ, թե պապս ժլատ է (ժլատ բառն էլ ես լավ

չեմ հասկանում), թե իր ունեցածից չի ուզում զրկվել, թե ի՛նչ աչքը տեսել է, իրենն է եղել—ցանկանում է նույնը մնա ձեռին մինչև մահ…

Իսկ այդ բոլորն ինձ թվում են անհասկանալի, շատ անհասկանալի: Ի՞նչպես թե մարդ չի ուզում տեսածից զրկվել…

Բայց ոմանք էլ, ինչպես բանտարկված Վասո քիքիրը և Սամսոնի մայրը՝ Թերեզա մորքուրը այն կարծիքի են, թե պապս հորեղբորս խոսքովն է «նստում-վեր կենում», թե հորեղբայրս է նրան ներշնչում այդպես վարվել: Այնուամենայնիվ, (մտածելով, որ հայրս մեղք չունի) ես պապիս համարում եմ չար, անխիղճ, որ հորս տանջում է իզուր…Եվ մտածում եմ, թե ի՛նչը կարող է արդյոք ազդել պապիս, որ նա մեղմանա, որ ինչպես Վասոն է ասում «հողին մոտը գցի»— այդ բաժանքը կատարի, քանի որ ոչ Թաղի ծերունիների, ոչ բարեկամների միջնորդությունն է օգնում, ոչ տերտերի խորհուրդները, ոչ հորս խնդրանքը, ոչ մորս սպառնալիքը, թե կերթա եկեղեցում մոմ կվառի, որ աստված նրան պատժի… Մորս այս սպառնալիքը միշտ զարմացնում էր ինձ, թե ինչո՛ւ մոմ վառելուց պետք է աստված նրան պատժի. մի՞թե առանց մոմի չի լինի, և ինչ զորություն ունի արդյոք մոմը, որ աստված, այդ վառելուց հետո միայն պետք է գործ տեսնի: Եթե այդպես է մոմի զորությունը— ինչո՞ւ մայրս մինչև հիմա մի քանիսը, թեկուզ մի քանի տասնյակ մոմ չի վառել. չէ՞ որ որքան շատ լինեն մոմերը, այնքան մեծ կլինի նրանց զորությունը:

Սակայն, չնայած այս բոլորին, պապս մնում է անդրդվելի…

Ի՞նչ կարելի է անել ուրեմն, որ նա մեղմանա, վերջապես— հորս բաժինն տա, որ հայրս չտանջվի այնպես և մայրս չտխրի, լաց լինի, և մանավանդ կռիվներ ու վեճեր չլինեն և հարևանները չծիծաղեն

մեզ վրա և ես չամաչեմ ընկերներիս առաջ: Ինձ ամենից մտահոգողը այս հանգամանքն է:

Անկողնում պառկած՝ ես երկար, երկար մտածում եմ այս ամենի մասին: Մերոնք՝ հայրս, մայրս, քույրս ու փոքրիկ Վաչոն քնել են վաղուց, բայց ես քնել չեմ կարողանում: Այսօրվա կռիվներից ու վեճերից հետո—ամոթն այրում է ինձ, հարևանների զըսպված ծիծաղը հնչում է ականջիս, տեսնում եմ նրանց հեգնանքը և չարախինդ ժպիտները… Ու մտածում եմ միաժամանակ, թե արդյոք ընկերներս՝ Սամսոնը, Աշոտը, Սեդրակը, և մյուսները տեսան, թե ինչպես հայրս ճիպոտը ձեռին հարձակվեց հորեղբորս վրա և տատս ծունկի գալով՝ ընկավ նրա ոտները… Եթե տեսել են— պիտի կարծեն, որ հայրս վատ, կատաղած մարդ է. և դրանից կարող են ենթադրել, թե հայրս, երևի, ճիպոտով միշտ ծեծում է ինձ: Էլ չեն մտածի, թե ի՛նչն է իսկապես այդպես չարունակ բարկացնում, զրգռում հորս:

Մտածելով այս ամենի մասին՝ ես համառորեն շարունակում եմ խորհել այն միտքը, թե ինչպես կարելի է պապիս մեղմացնել իսկապես, ինչպես կոտրել նրա համառությունը, որ նա բաժանք անի և էլ առիթ չտա նոր վեճերի ու կռիվների:

Մեկ էլ, անհայտ է ինչպես, արդյոք տատիս ու մորս հին պատմությունների ազդեցության տակ, թե՞ հարևաններից լսածների շնորհիվ հիշում եմ զարզանդբերող պատմություններ, թե ինչպես մեռելները գիշեր ժամանակ մենակ, իրենց ճերմակ պատանով դուրս են գալիս գերեզմաններից, գնում վատ մարդկանց տները և երթիկներից կամ լուսամուտներից ամաչեցնում ու սպառնում նրանց, որ հրաժարվեն չար գործերից, այլապես վատ կլինի:

Հիշում եմ նույնանման պատմություններ և հրեշտակների մասին, որ նույնպես մեռելների նման, գալիս-կանգնում են չար մարդու լուսամուտի առաջ

և սպառնում նրան։— Ինչո՞ւ հապա մի այդպիսի հըրեշտակ կամ մեռել չի գալիս պապիս վախեցնելու. չէ՞ որ նա էլ չար մարդ է,— մտածում եմ, երևակայելով, թե որքա՛ն լավ կլիներ, եթե մի այդպիսի հըրեշտակ կամ մեռել գար պապիս սպառնար. և նա, երևի, այնքան կվախենար, որ ահից անպատճառ կըկատարեր նրանց կարգադրությունը։

Իմ մտքերն ինձ տանում են հեռուները... Ես խորհում եմ, ես ուզում եմ վերջ տալ այդ ծանր, ամոթալի կյանքին և խաղաղություն ստեղծել մեր տանը. ուզում եմ ոչ-ոք վատ չխոսի մեր մասին։ Գիշերը ծանրանում է, լռությունը խորանում մեր տանը, և ես դեռ համառ ու անվերջ խորհում եմ այն միտքը, թե ի՛նչպես, ի՛նչ հնարքով կարող են դադարել բաժանքի կռիվները... Եվ ես, վերջապես, գտնում եմ այդ հնարքը.—ամենից լավն այն չէ՞, որ գնամ պապիս մոտ և խնդրեմ, որ հորս բաժինը տա, որ էլ վեճ, կռիվներ չլինեն։ «Պապի, այ պապի,— կասեմ ես նրան,— ամոթ է, հարևանները ծիծաղում են քեզ վրա, մեզ վրա»... Եվ նրա ձեռը համբուրելով, լաց կլինեմ։ Եվ պապս կխղճա ինձ և կկատարի իմ խնդիրքը, և հետո բոլորը գոհ կմնան ինձնից, որ կարողացա վերջ տալ տարիներ տևող բաժանքի կռիվներին։

Ու ահա գիշեր է խաղաղ. մերոնք հանգիստ քնած են խավար սենյակում։ Ես զգուշությամբ վեր եմ կենում անկողնից և կամաց-կամաց գնում եմ դեպի դուռը. զգույշ վերցնում եմ երկաթե փակը, և ես բակումն եմ— գիշերային ճերմակ շորերով քայլում եմ դեպի պապիս լուսամուտը...

Բակում մեր եզները նստած որոճում են հանգիստ, և լուսնի լուսով շողում են նրանց դնչերից կախված արծաթ թելերը։ Պարտիզի ծառերն անշարժ նայում են լուսնի լույսին, աստղերին, ու, թվում է, ականջ են դնում ինչ-որ հեռավոր, հեռավոր ձայների։ Բայց հեռուներում միայն շներն են հաչում երբեմնակի և էլ ոչինչ, ոչինչ չի լսվում։ Ես, շուրջս նայելով, զգույշ

քայլեր եմ անում դեպի պապիս սենյակի լուսամուտը, ոչ թե այն լուսամուտը, որ նայում է պատշգամբին— (օ՜, պատշգամ բարձրանալը վտանգավոր է. հորեղբայրս կարող է զարթնել...) ես գնում եմ դեպի այն լուսամուտը, որ գտնվում է տան ծայրին ու նայում է դեպի պարտեզ։

Եվ, վերջապես, ահա ես պապիս լուսամուտի առաջին եմ։ Ի՞նչպես խոսեմ հիմա... Բայց նախ պիտի լուսամուտը ծեծել։ Իսկ եթե պապիս փոխարեն տատս զարթնի— ի՞նչ ասեմ այն ժամանակ. Թողնեմ-հեռանա՞մ, թե՞ խնդրեմ, որ պապիս զարթնեցնի։ Այո, տատս բարի է, նա կզարթնեցնի պապիս և ինձ կօգնի՝ պապիս համոզելու։ Բայց ի՞նչպես պիտի սկսեմ,— մտածում եմ պապիս սենյակի լուսամուտի առջև կանգնած, մտածում եմ երկար. ու մտածումների մեջ, թվում է, ժամեր են անցնում... Մեկ էլ մի ծանր հևք եմ լսում ետևս, մեկը դոփում է ինձ ու թաթերը դընում ուսերիս...

Ես, ճիչ արձակելով, ընկնում եմ գետին։

Այս առավոտ է. ես պառկած եմ անկողնում. կողքիս նստոտած են մայրս, Թերեզա մորքուրը և տատս։ Մայրս ճակատս շփում է ջրով և հարցնում, թե ինչո՞ւ եմ գիշերը դուրս գնացել։ Ես, հիշում եմ բոլորը, բայց դժվարանում եմ խոսել. ես ոչինչ չեմ պատասխանում։

— Շատ կարելի ա տաքության մեջ ա էլել,— ասում է տատս տխուր, հուղարկավորի ձայնով և բոլորը ենթադրում են, որ ես բակն եմ դուրս եկել հավանաբար տաքության մեջ։

Որովհետև այդ ժամին արդեն բարձր տաքության մեջ եմ։ Բայց, չնայած տաքության, ես պարզ լսում եմ կանանց զրույցը, և նրանց ասածներից հասկանում եմ, որ հայրս գիշերը, երբ դուրս է եկել եզներին նայելու, գտել է ինձ պապիս լուսամուտի տակ ընկած. և իմ կողքին նստած է եղել մեր Թոբլանը՝ կտրած կապը վզին....

XIV

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՈԳՈԼՆԵՐ

Ահա և ավարտական քննությունները:

Քանի օր է մեծ հոգսերի մեջ ենք. վերջին դասարանի բոլոր աշակերտները խումբ-խումբ կամ մենակ լարված պարապում— պատրաստվում են քննության: Դուրսը գարուն է, պայծառ, դյութական գարուն. ամեն կողմից հրապուրիչ տեսարաններ են կանչում մեզ. դաշտում ա՛յնքան ծաղիկներ կան. գարնան անտառն այնպես է գրավում, ինչպես քաղցածին ճոխ, առատ սեղանը. իսկ բակերում ա՛յնքան խաղ կա...

Բայց մենք համառորեն փակվել ենք տներում. խուսափում, թաքնվում ենք մարդկանցից, ընկերներից: Կարդում, կրկնում ենք մեր դասերը, որ ոչ միայն դասարանում չմնանք, այլ և ավարտողների մեջ առաջինը լինենք:

Գոնե այդպես ենք մտածում ես ու Սամսոնը: Մենք աշխատում ենք միասին, ճաշում ենք ոտի վրա և ճաշը կիսատ թողած՝ նորից վազում գրքերի մոտ:

— Բան կերեք, որ դիմանաք,— ասում է կամ Սամսոնի մայրը կամ իմ մայրը:— Խելքներդ կմաղի, էդքան կարդալ չի լինի, որ դուք եք կարդում:

Բայց մենք ուտելու ժամանակ չունենք— գրքերը կանչում են, ընկերները հիմա առաջ անցան: Հիմա

Աշոտն ու Ծեդրակը, ով գիտի, ինչքան բան են սովորել, իսկ Ապոստոլ Կարամանիդին ու Ֆիլիպ Զայցևը (տրանք էլ միասին են) բոլորիս կանցնեն, երևի. չէ՞ որ նրանք ռուսերեն գիտեն բոլորից լավ... Պետք է այնպես անել ուրեմն, որ մեզնից լավ իմացող չլինի, և ոչ մեկը մեզնից առաջ չանցնի... Ու թվաբանությունից անցնում ենք ռուսաց լեզվին, լեզվից՝ աշխարհագրության... Ամենից շատ նեղում է մեզ երկրաչափությունը, իսկ ռուսաց ու հայոց քերականությունները... օ-օ-օ՛,— չենք սիրում մենք այդ քերականություն ասածը. բայց պետք է այնպես իմանալ, այնպե՛ս, որ ոչ մի սխալ չանենք, եթե ոչ այդ հոլովները, դերանունները, ածանցյալներն ու մակբայները կարող են հանկարծ մեզ խայտառակել:

— Դու ինձ քննիր,— ասում է Սամսոնը,— տես գիտե՞մ:

Եվ ես քննում եմ նրան. մերթ ձևանում եմ Նիկոլայ Պետրովիչ և, դեմքիս խոժոռ արտահայտություն տալով, աչքերս սևեռում եմ նրա աչքերին ու կարճ հարցեր տալով՝ սպասում նրա պատասխաններին. մերթ տեսչի՝ Սանատրուկ Սերգեիչի նման, ձեռներս հետևս դրած, գնում-գալիս եմ ու, առանց նրան նայելու, գլխով եմ անում կամ ուղղում մեկ-մեկ: Իսկ երբ անցնում եմ հայոց լեզվի քննության— Սամսոնը հայտարարում է, թե հայոց լեզուն դատարկ բան է, ջրի պես գիտի, թե տերտերը, միևնույն է, խստապահանջ չէ մյուս ուսուցիչների նման:

— Իսկ եթե տերտերը հարցնի՝ ո՞րն է ածանցյալ դերբայը:

Սամսոնը կանգ է առնում շվարած:

— Չգիտես, անիրավ, չգիտես,— ասում եմ տերտերի ձևով, ձեռներս շփելով, ձայնս նրա ձայնին նմանեցնելով:

Հերթը հիմա Սամսոնինն է ինձ քննելու:

— Ասա, Մանասյան, որտե՞ղ է գտնվում Ապի-

տակ ծովը,— ձգվում է նա Նիկոլայ Պետրովիչի նման դեմք ու աչքերը սևեռում աչքերիս:— Լավ: Իսկ Հռո՞մը:

Իմ ճիշտ պատասխանից հետո նա շարունակում է նոր խրթին հարցեր տալ աշխարհագրությունից, քերականությունից ու գրականությունից: Ապա անցնում է զինավարժության:

— Բայց մենք զինավարժությունից քննություն չենք տալու,— առարկում եմ ես:

— Դու հարցերիս պատասխանիր,— ոտը գետնին է խփում նա, Նիկոլայ Պետրովիչի պես:— Գունդը քանի՞ վաշտ ունի:

— Երեք:

Նա դեմք մոտենում է աչքերը երեսիս դցած ու... մեկ էլ աջ այտիս շրխկում է մի ուժգին ապտակ:

Ես հանկարծակի եմ գալիս ու երեսս բռնում:

— Սա ի՞նչ բան է:

Սամսոնը ոտը թափ է տալիս վրաս.

— Կա՛նգնիր արևի դեմ:

Ես վիրավորված նրան եմ նայում:

— Դե, լա՛վ, հանաք արի,— ծիծաղում է նա:

Ծիծաղում եմ և ես: Նա շարունակում է նորից հայոց լեզվից ու քերականությունից հարցեր տալ ինձ. նստում է երեսը դեպի լուսամուտը և երբեմն գլուխը տմբացնում տերտերի նման ու ինքն իրեն ասում է մի բան, որ բնավ կապ չունի իմ պատասխանի հետ.

— Դե՛րանուն... ներգոյական հոլով... Նո՛ւ, լավ, անիրավ, լավ...

Ես լռում եմ: Այդ ժամանակ նա երեսը դարձնում է իմ կողմը և, իբրև թե դառնում է ամբողջ դասարանին, ասում է.

— Էսօր, տղերք, եկեք ինձ մոտ... մարգերը քաղհանենք մի քիչ:

— Ես մի քիչ հիվանդ եմ, տեր հայր:

— Հիվանդացիր քաղհանից հետո, անիրավ,— ասում է Սամսոնը տերտերի պես լուրջ և հետո ծիծաղում, ծիծաղո՜ւմ:

Ծիծաղում եմ և ես: Ծիծաղում ենք միասին:

Այս ծիծաղն է մեր հանգիստը: Բայց մեր ծիծաղի վրա քույրս ներս է մտնում, կարծելով էլ չենք պարապում, ուզում է ինքն էլ մասնակցել մեր ծիծաղին: Բայց մենք նրան ետ ենք ուղարկում. ոչ, դեռ ազատ չենք:

— Ի՞նչ ես կարծում, Սամսոն, քննություն կըբռնե՞նք,— հարցնում եմ ես:

— Ո՞վ է իմանում,— մտահոգվում է նա,— հանկարծ էնպես բան հարցնեն՝ չկարողանանք պատասխանել:

Մտահոգությունը, անորոշությունը, կասկածները ծանր քարերի պես ճնշում են մեր սիրտը: Այդ նկատելի է բոլոր աշակերտների դեմքին: Այդպես է և Եվան, իմ նստարանի փոքրիկ հարևանուհին, որ պարապում է հիմա մենակ: Ես ա՛յնպես կուզեի իմ բոլոր իմացածը տալ, բացատրել նրան. այնպես անել, որ ամենից լավ քննություն տվողը լինի նա, բոլորից լավ փայլի նա: Ես պատրաստ եմ ամեն ինչ անել նրա համար, եթե միայն առաջարկի: Բայց նա իրեն պահում է զուսպ և ոչի՛նչ չի ասում: Իսկ ես չեմ համբերում և հարցնում եմ.

— Մենա՞կ ես պատրաստվում, Եվա:

— Այո:

Ես ուզում եմ իմ ծառայությունն առաջարկել նրան, բայց նա այնքան ինքնավստահ է ասում այդ «այո»-ն— ես լռում եմ. նույնիսկ մտածում եմ, որ նա հասկացավ իմ միտքը— դրա համար այդպես պատասխանեց. բայց և այնպես՝ ես կուզեի, որ նա բոլոր աղջիկներից և բոլոր տղաներից, թեկուզ և ինձնից, լավ քննություն տա և լավ ավարտի:

Այդ քննությունները... մեր էությունն ամբողջ

կլանված է դրանցով. հաց եմ ուտում, թե փողոց եմ դուրս գալիս՝ դրա մասին եմ մտածում. գիշերը երբեմն մայրս զարթնեցնում է ինձ քնած ժամանակ:

— Սուրեն, Սուրեն...

Աչքերս բանում եմ քնաթաթախ:

— Այդ ինչե՞ր ես խոսում:

— Ի՞նչ:

— «Աֆրիկան» ի՞նչ է, որ կրկնում ես միալար: Հետո՝ «Կոնուս, Կոնուս»... դա ի՞նչ բան է...

Ես աչքերս տրորում եմ ու նորից պառկում:

Վերջապես քննությունները սկսվում են:

Բոլորիս, վերջին դասարանի բոլոր աշակերտներիս մեկ-մեկ կանչում են գրատախտակի կողքին դրված սեղանի մոտ ու առաջարկում այդ սեղանի վրա դարսված շաքարամանի նմանվող վաղից կտրած մի թուղթ վերցնել— վիճակ հանել: Այդ թղթի մեջ է մեր բախտը և դժբախտությունը, որովհետև այնտեղ գրված են այն ճակատագրական հարցերը և թեմաները, որոնց մասին պիտի խոսենք կամ պատմենք:

Երկրորդ օրն է կատարվում են քննությունները, և երկրորդ օրն է հյուրերը գալիս են նստում ու լսում մեզ:

Այսօր էլ ահա շրջան բոլորած՝ հանդիսավոր նստած են դասարանի առաջ— պրիստավը՝ ուսադիրներով ու թուրը կողքից կախ, որի վրա նա հաճախ հենվում է արմունկներով,— հաշտարար դատավորը՝ լիքը դեմքով մի բարեհոգի մարդ, որ շարունակ ժպտում է աշակերտի թե լավ, թե վատ պատասխանների վրա.— ծերունի պոստապետը՝ այծի մորուքով ու տարակուսական նայվածքով, մի նայվածք, որից կարելի է ենթադրել, թե այն բոլորը, ինչ լսում է— նորություն է նրա համար կամ վաղուց մոռացված մի բան: Այստեղ նստած են ուսադիրներով և դեղին կոճակներով ուրիշ պաշտոնյաներ էլ և այն բժիշկը, որ

լավացրեց հորս աչքերը: Հյուրերի հետ խառը նստած են նաև տեսուչը՝ Սանատրուկ Սերգեիչը. նրա եղջյուրանման բեխերն այսօր առանձնապես ոլորված են ու ցցված, տերտերը՝ նոր մաքուր փարաջա հագած ու գլխի մազերը փոքր ինչ կարճեցրած.—Նիկոլայ Պետրովիչը, Լիդա Լվովնան և մյուս ուսուցիչները՝ բոլորն էլ տոնական զգեստներով:

Ամեն բանից և ամեն պատասխանից դժվարը հյուրերի առաջ դուրս գալն է: Ես առանձնապես վախենում եմ պրիստավից— այնպես սուր հայացք ունի. թվում է նա իր այդ հայացքով կարող է տեսնել, թե ի՛նչեր կան մարդու հոգում թաքնված, և, թերևս, հյուրերի ներկայությունն է պատճառը, որ ամեն ինչ ինձ թվում է երազի նման: Ես ինձ մոռանում եմ հաճախ և միայն սիրտս եմ զգում, որ տրոփում, տրոփում է անվերջ և, թվում է, իբր մի ծայրով զարկում է քունքերիս:

Առաջինը գնում է ահա Ասլանյան Աստղիկը. վերցնում է կտրած թուղթը, կարդում, ապա, կակազելով, ամաչելով պատասխանում է, աչքը շարունակ հյուրերի կողմը: Բոլորի սիրտն ահ է ընկնում: Այդ հյուրերը՛... մի՞թե առանց դրանց չէր կարելի. ինչո՞ւ համար են դրանք: Մարդ կարող է իր իմացածն էլ մոռանալ դրանց ներկայությամբ: Բայց, երևի, կարգ է:

Աստղիկին հետևում են ուրիշները— ուրիշ տղաներ ու աղջիկներ. ապա գնում է Ապոստոլ Կարամանիդին. նա, ինչպես միշտ, բոլոր հարցերին պատասխանում է կուրծքը դուրս քցած, գլուխը ետ բռնած: Նրանից հետո գնում են Սամսոնը, Սեդրակը, Զարգարյան Աշոտը... Գնում, խոսում են բոլորը, ու ամենն ինձ թվում է երազի մեջ, և ահա հերթը, վերջապես, գալիս է ինձ... Պատասխանում եմ և, երազի մեջ եմ դարձյալ:— Իրականությունը չեմ զգում, չեմ զգում նաև, թե ինչպես են ընդունվում իմ պատաս-

խանները․ տեսնում եմ միայն, որ տերտերը գլխով է անում չարունակ․ իսկ այդ դեռ ոչինչ չի նշանակում․ Նա գլխով է անում թե՛ ճիշտ, թե՛ սխալ պատասխանների դեպքում էլ: Եվ ես չշփոթվելու համար, աշխատում եմ ոչ-ոքի չնայել․ աչքերս պատի նկարներին՝ ասում եմ, ինչ գիտեմ:

Ու, վերջապես, ահա ես դուրս եմ գալիս բակը: Այդպես է կարգը— քննվելուց հետո թույլ են տալիս դուրս գալ: Երևի բանտից ու կապանքներից ազատվողը կամ խավար աշխարհից լույս աշխարհ ընկնողը նույն զգացումներն է ունենում, ինչ ես եմ ունենում այդ րոպեին:

Արևն այնքան դուրեկան է ու պայծառ: Ի՜նչ հաճելի է նրա ջերմությունը: Թվում է բոլոր ձայները լռել էին, հիմա նոր միայն սկսում են հնչել:— Ի՜նչ հաճելի են երգում թռչունները— սարյակները, ծտերը··· Եվ ի՜նչ թարմ է օդը:

Անցնում են քննությունները, և նրանց հետ մեր չարչարանքի օրերը, ու այդ ծանր օրերից հետո ահա մեր դպրոցական հանդեսը, ուր պիտի հայտնվի, թե ո՛վ է մեզանից ավարտում: Այսօր հրավիրված են բոլոր ծնողները և շատ հյուրեր: Բայց եկել են միայն հայրերը: Ավարտողներին բաժանելու են վկայականներ: Տեսուչը և ուսուցիչները հագել են իրենց տոնական զգեստները: Սանատրուկ Սերգեիչը բեխերն ավելի է սրել դեպի վեր, Լիդա Լվովնան հագել է գարնանային բաց կապույտ շրջազգեստ, կրծքին ամրացրել է մի բազմաթերթ կարմիր վարդ․ նրա ակնոցի ապակիներն ավելի են պլպլում․ նա այնպե՛ս ուրախ է այսօր: Տերտերը նույնպես ուրախ է թվում իր նոր փարաջայի մեջ, իսկ Նիկոլայ Պետրովիչը···Նրա գլուխը կարծես նոր շինած չեկ խոզանակ լինի կամ թաղարում ծլած գարի, այնպես կանոնավոր, հարթ և հատ-հատ երևում են նրա մազերը: Հանդեսին եկած

Նկ. Ս. Ռասմանյանի



Տեսուչը՝ Սանատրուկ Սերգեիչը կանչում է ինձ իր մոտ…

ծնողները նույնպես ոչ առօրյա զգեստներով են. բոլորի դեմքն ու արտահայտությունը տոնական է ու մտահոգ: Բազմությունը, այն էլ ոչ սովորական բազմությունը շուք է տալիս մեր դպրոցին, իսկ մեզ երկյուղ է ներշնչում, քանի դեռ ավարտական վկայականները չենք ստացել: Ավարտողի ուրախությունը, երևի, ավելի մեծ կլինի այս հասարակության առաջ, իսկ մնացողի ամոթը կրկնակի:

Նույն ապրումներն ու մտքերն են պաշարել ինձ այժմ, ինչ որ դպրոց ընդունվելու օրը, ինչ որ քննության ժամանակ: Ընդունվելու օրվա նման ներկա են բոլոր ուսուցիչները, ծնողները: Հայրս էլի նստած նայում է իմ կողմը, և նրա դեմքին ես նկատում եմ մտահոգություն ու անհանգստություն. «ամոթով չանես»...

Դահլիճը զարդարված է կանաչ ճյուղերով, ծաղիկներով: Եվ թե՛ աշակերտները, թե՛ հյուրերը, տեղավորված, անհամբեր սպասում են հանդեսի բացվելուն:

—Ի՞նչ ես կարծում, Մանասյան, ես կավարտե՞մ, — հարցնում է Եվան մտահոգ:

— Իհարկե,— սիրտ եմ տալիս ես նրան,— որ դո՛ւ չավարտես՝ էլ ո՞վ պիտի ավարտի:

Եվան հանգստանում է և իր հերթին սիրտ տալիս ինձ.

— Իսկ դու՝ անպայման:

Վերջապես ահա Սանատրուկ Սերգեևիչը բեխի մեկը ոլորելով բարձրանում է ամբիոն, մի վայրկյան հայացքը պտտում է դահլիճում, նայում է մեզ ու ըսկսում է իր ճառը—երկա՜ր, թվերով...

Սանատրուկ Սերգեևիչից հետո ամբիոն է բարձրանում Նիկոլայ Պետրովիչն ու կարդում ավարտողների ցուցակը:

Ո՞ր աշակերտը կարող է այդ պահին հետևել ուրիշ որևէ բանի: Այդպես էլ ես՝ Նիկոլայ Պետրովի-

չի շուրթերից կախված ուզում եմ լսել իմ անունը: Ու սիրտս զարկում է արագ:— Ահա Սամսոնը... Սեդրակը, Եվան... Աշոտը... ավարտում են: Իսկ ե՞ս... Հանկարծ մնամ...

Նայում եմ հորս:— Նա անհանգիստ է, նույնպես լռողություն դարձած: Այս ի՞նչ է. մի՞թե իմ անունը չկա... Ես մոռացել եմ, որ կարդում են այբբենական կարգով:— Ահա և Ապոստոլ Կարամանիդին...

Ահա և իմ անունը:

Ավարտում եմ:

Դահլիճն ավելի է լուսավորվում. բոլորը դառնում են սիրելի, իսկ Նիկոլայ Պետրովիչն— առավել սիրելի...

Նորից նայում եմ հայրիկիս կողմը:— Նրա հոգնած դեմքը ցնծում է, աչքերը խաղում են երեսին: Տարիներով նա այդպես ուրախ չի լինում մի օր. դա մի հազվադեպ բան է նրա մշտապես մռայլ, մտահոգ դեմքի վրա: Նա ավելի է ցնծում, երբ տեսուչը՝ Ծանատուրով Սերգեյիչը կանչում է ինձ իր մոտ և, սեղանից վերցնելով երկու փառակազմ գիրք— ժպտալով տալիս է ինձ: Գրքերի վրա խոշոր, ոսկե տառերով գրված են «Гоголь»:

Հայրս ուրախությունից վեր է կենում տեղից և ձեռք մեկնում ինձ: Նա ուզում է տեսնել ստացածս նվերները: Ես մոտենալով գրքերը տալիս եմ նրան, և նա անզուսպ ուրախությամբ ու հետաքրքրությամբ նայում է նրանց կազմը, ներսը, մատը քսում ոսկե ուռուցիկ տառերին, ու հիացմունքի ժպիտը երկար չի հեռանում նրա դեմքից:

— Լա՛վն ա,— ասում է նա, այդ մի հատիկ բառի մեջ դնելով իր հայրական խինդն ու գոհունակությունը:

Իսկ իմ ուրախությանը չափ չկա: Այդ արտակարգ ուրախության պատճառը ո՛չ այնքան ավարտելս է, որքան, թերևս, այդ ոսկետառ գրքերը, որոնցից ոչ-

ոք չստացավ: Մյուսները, միայն երեք հոգի, ստացան ուրիշ գրքեր, բայց մեկ-մեկ հատ և փոքրիկ: Իսկ իմոնք երկուսն են, և՛ մեծ և՛ շքեղ... Տեսնես Եվան ի՞նչ կասի. նա ինքը ոչ մի գիրք չստացավ:

Հանդեսից հետո աշակերտները մոտենում են, նույնպես շոշափում գրքերը, նայում միջի պատկերները և կրկնում.

— Գոգո՛լ, Գոգո՛լ...

Անունն, իհարկե, ծանոթ է բոլորին. բայց այսքան մե՜ծ, գեղեցիկ գրքեր...

Ուզում եմ հանդիպել Եվային և ցույց տալ: Նա էլ, երևի, կհետաքրքրվի: Բայց նա ինքն անցնում է մոտովս և ասում անցողակի:

— Դու Գոգոլ ստացա՞ր, Մանասյան: Վատ գիրք չի:

— Կուզես առ կարդա, Եվա:

— Առայժմ ոչ,— ասում է նա անտարբեր:— Ես կարդալու գրքեր շատ ունեմ:

Ավարտելս և ստացածս նվերը ավելի մեծ ուրախություն են պատճառում մորս: Նա անմիջապես ձըվածեղ է անում ու դնում առաջիս: Դա ամենամեծ պատիվն է, որ նա անում է միայն թանկագին հյուրերի համար: Եվ մինչ ես ուտում եմ ոսկեգույն ձվածեղը, նա դուրս է գալիս փողոց և պարծանքով հարևանուհիներին պատմում իմ հաջողությունները:

— Սուրենն ավարտել ա, հետն էլ Գոգոլներ ա տացել նվեր...

XV

ՕՐԵՐԸ

Դեռ դպրոցը չավարտած՝ ես չարունակ մտածում էի, թե ավարտելուց հետո ո՞ւր պիտի գնամ կամ ի՞նչ պիտի անեմ, և ամեն ինչ այնպես դյուրին էր թվում ու բոլոր ճանապարհներն այնպես բաց։ Մի ժամանակ ես երազում էի լինել հեռագրիչ, հագնել դեղին կոճակներով կապույտ բաճկոն, դնել կոկարդով գլխարկ. ինձ գրավում էր մանավանդ նրանց արհեստը, որ թվում էր անհասանելի հնարագիտություն. նստել փոքրիկ ապարատի առաջ ու խոսել աշխարհի բոլոր քաղաքների և երկրների հետ. դա թվում էր ամենաբարձր գործը, որ երբևէ կարող է անել մարդ։ Ապա ես ցանկանում էի, որ հայրս ունենար Մելիտեի հոր նման մի խանութ, ու ես լինեի այնտեղ, գրպանս լցնեի ամեն տեսակ մրգով ու հայդա՜—դեպի դաշտ, դեպի անտառ, դեպի գետը. միրգը բաժանեի ընկերներիս, որ նրանք ավելի լավ ընկերություն անեին հետըս. միրգ տայի և Եվային, որ երբեմն վերևից չնայեր ու միշտ մտերիմ մնար ինձ։ Հետո երազում էի դառնալ ուսուցիչ, տեսուչ—փորմայով հագնվել, բայց ոչ մի աշակերտի չպատժել, այլ սիրել և օգնել, օգնել... Ու էլ ինչե՞ր, ինչե՞ր չէի երազում, և ամեն

բան այնպես դյուրին ու հեշտ իրագործելի էր թվում։ թվում։

Եվ ահա դպրոցն ավարտելուց հետո ինձ նորից զբաղեցնում է այն հարցը, թե ինչ պիտի անեմ հիմա։ Ոչ միայն զբաղեցնում, այլ հոգս է դարձել ինձ համար, ալեկոծող հոգս.— ի՞նչ պիտի անեմ... Ավարտող ընկերներս արդեն որոշել են իրենց անելիքը։— Սամսոնը գնալու է քաղաք՝ սովորելու. նրա մորաքրոջ ուսանող տղան պատրաստելու է նրան և աշնանը տալու է գիմնազիա։ Աշոտը գնում է Թիֆլիս՝ քեռու մոտ՝ Ներսիսյան դպրոց ընդունվելու. Ապոստոլ Կարամանիդին մտադիր է գնալ Հունաստան, Մելիտեն օգնելու է հորը՝ նրա խանութում, Ֆիլիպ Զայցևի հայրը դիմում է տվել արդեն նրան երկաթուղային դպրոց ընդունելու համար, իսկ Եվան մտադիր է այս տարի պատրաստվել և եկող տարի մտնել Հովնանյան դպրոց։

Մնում ենք ես ու Սեդրակը. Սեդրակն էլ որոշել է՝ հեռանալ հարբեցող հորից ու խորթ մորից և գնալ ծառայել մի տեղ։ Մնում եմ, ուրեմն, միայն ես։—Ի՞նչ պիտի անեմ և ո՞ւր պիտի գնամ։ Ոչ մի հեռանկար և ոչ մի հույս։

Նույն մտահոգության մեջ է, ինչպես երևում է, և հայրս։ Դպրոցն ավարտելուց երկու օր հետո նա խոսք է բաց անում այն մասին, թե ինչ գործով պիտի զբաղվեմ հիմա, որ օգտակար լինեմ տանը։ Քանի չէի ավարտել, նա երբեք չէր խոսում այդ մասին. նա մորս նման չի, որ միշտ ծրագիրներ ու երազներ է պարզում իմ առաջ. նա այդ մասին խոսում է հիմա իբրև հերթական անելիքի մասին, ինչպես իր գործերն է անում հերթով. ինչպես, օրինակ, արտը հնձելուց հետո՝ կրում է կալը, ապա կալսում։ Այդպես չի մայրս. նա հաճախ իր ցանկությունները կամ, ինչպես ինքն է ասում, իր «սրտի խորհուրդները» պարզում է իմ առաջ ու ոգևորվում։ Այն օրվանից, երբ

նա ուխտագնացության ժամանակ էջմիածնում տեսել է ճեմարանը՝ իր մաքուր, միատեսակ հագնված աշակերտներով, միշտ կրկնում է. «Երանի նրան, ով այնտեղ երեխա կունենա»:— «Բայց կընդունե՞ն որ»,— կասկած է հայտնում ինքը: «Ինչո՞ւ: Շատ փող են ուզո՞ւմ», հետաքրքրվում եմ ես: «Շա՜տ... համ էլ էնտեղ ընդունում են միայն տերտերի, հարուստի որդաներ»: Այդ ճիշտ է. մեր տերտերի՝ տեր-Գյուտի տղան էլ այնտեղ է սովորում:

Եվ ահա, երբ հայրս խոսք է բաց անում «ինչ անելուս» մասին, մայրս ասում է.

— Հըլա մի փորձենք, ա՛յ մարդ, գուցե ճեմարան ուղարկենք:

— Ճեմարան,— ասում է հայրս:— Հե՞՛շտ բան է ճեմարանը...

Այս մտորումների մեջ են մերոնք—մեկ էլ հայտնվում է մի մարդ, որ խոստանում է երջանկացնել ինձ ու ծնողներիս:— Օրերը:

Այդ մարդը հայտնվում է այնքան անսպասելի և այնքան հույսեր է վառվում մեր տանը, իմ սրտում... ու այնքան նախանձ է շարժում իմ շուրջը— իր խոստումներով:

Մի երեկո կայարանից՝ հորս հետ մեր տուն է գալիս երկաթուղային մի կոնդուկտոր՝ փոքրիկ ճամպրուկը ձեռին: Գալիս է նա մի գիշեր մնալու: Հարցրել է հորս, թե ո՞րտեղ կարող է գիշերել, ծանոթ չունի, և հայրս նրան հրավիրել է մեր տուն... Եվ ահա գալիս է այդ մարդը՝ սպիտակ մետաղե փայլուն կոճակները կրծքին շարած: Շատ հարգանքով բարևում է մորս, ապա գրպանից կանֆետներ է հանում ու տալիս ինձ, քրոջս ու փոքրիկ Վաչոյին: Իսկ հայրս կամացուկ ինչ-որ բան է ասում մորս, և մայրս անմիջապես սեղան է սարքում. իրիկվա թեյն արդեն պատրաստ է, մայրս մուրաբա է հանում, մի բան,

որ անում է շատ հազվադեպ, միայն «ազիզ» հյուրերի համար:

Մինչ մեր հյուրը թեյ է խմում, ես ու քույրս՝ Վարդուշը, նայում, ուսումնասիրում ենք նրան: Ամենից շատ ինձ դուր են գալիս նրա երկարաճիտ ծալծալ կոշիկները, բայց զարմացնում է այն, որ մատանին դրել է բութ մատը, և բեխերն ա՛յնքան է կտրել, որ վերևի շուրթը մնացել է բաց. զարմանալի են և աչքերը, որ շարունակ նայում են այս ու այն կողմ. կարծես սովոր չեն հանգիստ մնալու: Մի քանի անգամ ինձ նայելուց հետո՝ նա ժպտում է հանկարծ:

— Լա՛վ տղա ունես,— դառնում է նա հորս, ու կանչում ինձ,— արի տեսնեմ, տղաս:

Ես մոտենում եմ. նա գլուխս շոյում է, մատանին ճակատիս դիպցնելով, ապա ձեռն ուսիս է դնում ու հարցնում, թե կարդալ գիտե՞մ արդյոք:

Ես գլխով եմ անում.— այո:

— Մեր դպրոցն ավարտել է,— միջամտում է հայրս:— Երկու գիրք էլ նվեր է ստացել:

— Թվաբանությունից ո՞նց ես:

— Գիտեմ...

— Հա՞: Հազարի կեսն ի՞նչ է:

Ինձ թվում է այդ մարդը հանաք է անում, բայց և այնպես լուրջ պատասխանում եմ:

— Հինգ հարյուր:

Նա գովում է ինձ և նորից դառնում հորս:

— Աչքաբաց տղա ունես. շատ առաջ կերթա:

Հայրս ուրախանում է և հպարտ ու գոհունակ նայում ինձ. իսկ ես մտածում եմ— հապա թող ուրիշ բաներից հարցնի՝ տես ինչպես կպատասխանեմ: Այնուամենայնիվ ես հպարտորեն նայում եմ քրոջս՝ Վարդուշին ու գլուխս իջեցնում:

— Կուզե՞ս երկաթուղու վրա գործ ունենաս,— հարցնում է նա:

— Ինչո՛ւ չէ,— իմ փոխարեն պատասխանում է

հայրս։— Ինքն էլ ռուսերեն գիտի։ Եթե էդպես մի բան անե՛ս։

— Աչքիս վրա,— ասում է մեր հյուրը։— Քու խաթեր համար կարող եմ տանել, կուզես մաշինիստ դարձնել, կուզես, ես իրավունք ունեմ իմ կողմից մի տղա տալ ժելեզնո-դարոժնի ուսումնարան. Թող սովորի, մարդ դառնա։ Ես ինձ վրա կվերցնեմ քու էս լավ տղի ուսումը։ Կուզե՞ս ուրիշ պաշտոն... Տեսնում եմ աչքաբաց տղա ա, շատ առաջ կերթա։ Կարող է կանտրալյոր դառնալ, ստանցիոննի նաչալնիկ... Մի խոսքով էնպես մարդ, որ գեղումը մատով ցույց տան։ Հը, փոքրիկ, կուզես չէ՞, որ քեզ տանեմ։

Սովորելը հենց իմ ցանկությունն է. Ֆիլիպ Զայցևի հետ կսովորենք Երկաթուղային դպրոցում։ Եվ ես գլխով եմ անում։

— Այ, լա՛վ։ Ես տղա չունեմ, տանեմ քեզ պահեմ իմ տղայի պես։

Մայրս ցնծում է, իսկ հայրս, որ ուրախությունն արտահայտելու մեջ զուսպ է միշտ, նույնպես խնդուն դեմք ունի։

Ու օբերը բացատրում է, որ մի քանի տարի սովորելուց հետո՝ կարող եմ ուզածս պաշտոնն ստանալ· բայց պետք է լա՛վ աշխատեմ։

— Ինչքան աշխատես՝ էնքան առաջ կերթաս։ Հասկանալի՞ է,— ասում է օբերը։— Այ, ես օբեր եմ· բայց մինչև օբեր դառնալս ինչքա՛ն եմ աշխատել։

Հայրս ու մայրս նրա շուրթերից կախված՝ բաց չեն թողնում նրա և ոչ մի բառը, ու գլխով շարունակ հավանություն են տալիս նրա ասածներին։

Օբերն ասում է, որ հագուստը, նավթը, փայտը կստանամ ձրի· երկաթուղով ճամփորդելը կլինի ձրի. կարող եմ նաև մորս ու քրոջս ձրի տանել, ման ածել ուրիշ-ուրիշ քաղաքներ...

— Բա հերն իրավունք չունի՞,— հետաքրքրվում է հայրս։

— Չէ՛, բիձա։ Հորն իրավունք չկա։

Հայրս կոտրվում է։

— Լավ, թող էդքանն ըլնի, ես ինձ համար չեմ մտածում,— ասում է հայրս։

— Ուրեմն համաձա՞յն ես,— նորից դառնում է օբերն ինձ։

Ես նորից գլխով եմ անում։— Այո՛

— Ասա, շնորհակալ եմ,— թելադրում է հայրս և, ինձ ժամանակ չտալով, ինքը շնորհակալություն է հայտնում նրան։

Իսկ երբ քիչ հետո օբերը դուրս է գնում՝ «բազար»— խանութների փողոցը՝ հայրս ու մայրս ուրախությունից իրար են նայում ու անխոս ժպտում։ Ես հիմա էլ հիշում եմ այդ ժպիտները· այնքան գոհունակություն կա նրանց դեմքին· ինձ թվում է, ուրախությունից չեն կարողանում խոսել։

— Է, բախտդ բացվեց,— ասում է, վերջապես, հայրս։— Գնա մարդ դառ։ Գնա թշնամու աչքը հանի։

Նա ակնարկում է հորեղբորս· ես այդ հասկանում եմ։

— Էնպես արա՝ ազնիվ մարդ դառնաս, բո՛լորը քեզ երանի տան։ Եթե ես չտեսնեմ էլ, գոնե գերեզմանիս մեջ ուրախանամ,— հորս ձայնը բեկվում է հանկարծ, կոկորդի ոսկորը խաղում է բկին։— Խոսքս չմոռանաս։

Նրա ձայնը դողում է նորից, մի բան, որ նրան քիչ է պատահում, և առհասարակ նա իր զգացմունքներն արտահայտելու մեջ շատ ժլատ է, բայց այս անգամ, չգիտեմ ինչու, զգացվում է շատ, և ես, գլխով անելով, խոստանում եմ կատարել նրա կամքը։

— Հա, էդպես,— ասում է նա ու ծալած ցուցամատով սրբում աչքից կախված արցունքը։

Այդ վայրկյանին ես խղճում եմ հորս, տեսնում

եմ՝ նրա սիրտը լիքն է, բայց նա չի արտահայտում: Սակայն նրա այդ տրամադրությունը երկար չի տևում: Շուտով նրա դեմքը պայծառանում է կրկին:

Ծնողներիս հետ ուրախ եմ և ես, որ պիտի նորից գնամ և սովորեմ, որ ես չեմ մնա իմ ընկերներից... բայց միևնույն ժամանակ մի թախիծ, մի թեթև տխրություն կա իմ սրտում, որ պիտի թողնեմ մեր գյուղը, ընկերներիս մի մասին, Եվային... բայց որքան դա ծանր, անսովոր, նույնքան և հետաքրքրական է— մեր գյուղից ես դեռ որևէ տեղ չեմ գնացել, դեռ մեծ քաղաք չեմ տեսել...

Իրիկունն օրերը քնում է ամենամաքուր անկողնում, որ մայրս պատրաստում է հորս մահճակալի վրա․ մաքուր սավան է փռում, երկու բարձ է դնում, որ փափուկ լինի:

Իսկ ես, անկողին մտնելով, երկար քնել չեմ կարողանում: Երևակայում եմ ինձ արդեն օտար միջավայրում, բարձր պաշտոնում, գեղեցիկ շորեր հագած:

Օրերը մի գիշերվա փոխարեն մեր տանը մնում է մի քանի օր, նույնիսկ մի ամբողջ շաբաթ՝ ինչ-որ գործերի համար․ և այդ օրերի ընթացքում շուտով մեր թաղում տարածվում է, որ օրերն ինձ տանելու է Երկաթուղային դպրոց, և ապա պաշտոն է տալու: Ընկերներս, առաջին հերթին Սամսոնն ու Սեդրակը գալիս են իմանալու—ճի՞շտ է արդյոք:

Ես հպարտությամբ հաստատում եմ նրանց ասածը:

— Այո, շուտով գնալու եմ:

Իսկ հորաքույրս, որ հեռու թաղումն է ապրում և մեր տանն առհասարակ քիչ է երևում, հանկարծ գալիս է գանգատով, թե ինչո՛ւ հայրս տեղ է արել ինձ

համար ու չի մտածում իր Կարոյի մասին, որ այնքան ժամանակ պարապ է:

— Ի՞նչ կլինի էդ մարդուն խնդրես, որ Կարոյիս էլ տանի:

Ու նեղացած թոնթորում է, որ եղբայրները միշտ մոռանում են իրեն և բանի տեղ չեն դնում:

— Ձեզ ասի՝ քույր ունե՞նք, քույրնիս՝ տղա ունի՞: Սառը սրտի տեր եք, սա՛ռը...

Նրանց զրույցի միջոցին ներս է մտնում օրերը:

— Նիկոլ ախպեր, էս իմ քիրն ա,— ասում է հայրս, նրանց ծանոթացնելով և բացատրում է, որ քույրն էլ մի տղա ունի իմ չափ: — Չի կարելի, որ նրան էլ տանես մի գործի դնես․ հը՞: Շատ եմ խընդրում:

Օրերը շվարած նայում է հորաքրոջս, նայում է հորս և ասում․

— Շատ դժվար ա, բայց որ խնդրում ես, Ներսես ախպեր, խաթրդ չեմ կոտրի, թող գա:

— Շնորհակալ եմ,— գլուխ է տալիս հորաքույրս:— Իմ տղայի անունը Կարո է․ շատ աչքաբաց տղա ա․ ինչ ասես կանի, միայն լավ նայես:

Օրերը խոստանում է իհարկե, այդ մասին խոսելն ավելորդ է․ նա որ տանում է, նշանակում է, իհարկե...

Այդ օրը չիբուխը բերնին մեր տուն է գալիս և մեր քեռի Փիլոն, նա՛, որ երբեմն գալիս էր մեր բաժանքի վեճերին հաշտարար դեր կատարելու․ գալիս է և անձամբ խնդրում օրերին, որ իր Վարդանին էլ «վերցնի»-տանի․ ի՛նչ գործի ուզում է դնի, միայն թե երկաթուղում պաշտոն ունենա: Փիլո քեռին նրա լավությունը չի մոռանա և՛ որդեց-որդի կհիշի:

Օրերը բարի մարդ է երևում․— խոստանում է նրա որդուն էլ տանել: Բայց երեկոյան հորս հայտնում է, որ չնայած խոստանում է նրանց տանել, բայց

միայն ինձ պիտի տա դպրոց, իսկ մյուսներին արդեն գործի կդնի։

Հայրս շնորհակալություն է հայտնում այդ հատուկ ուշադրության համար։

Եվ այնուհետև հորաքույրս ու քեռի Փիլոն, իրար ետևից, օրերին հրավիրում են ճաշի, որ, ինչպես մայրս էր բացատրում, «աղ ու հացը կապի» և իրենց որդիներին լավ աչքով նայի։ Ինչպես հետո եմ իմանում, նրանք կարծել էին, որ օրերի ինձ տանելու որոշման պատճառը եղել է մեր հյուրընկալությունը։

Ամբողջ շաբաթ օրերը մնաց մեր տանը, և այդ օրերին նա շարունակ դուրսն էր լինում. տուն գալիս էր միայն երեկոյան։ Հայրս նեղանում էր, որ տանը չի ճաշել, իսկ նա արդարանում էր միշտ նրանով, թե գործերը շատ են, պետք է վերջացնի, ցորեն ունի իրեց գյուղում, պետք է ծախի. դրա համար պայմանագրեր է կապում վաճառականների հետ, ուրիշ արհեստի մարդկանց հետ... Հորաքրոջս ու քեռի Փիլոյի տանն էլ ճաշի վրա նա խոսք էր բացել ցորենի մասին և կանխավճարներ վերցրել։

Մինչ նա աշխատում է իր գործերը վերջացնել,— ես զբաղվում եմ իմ երազներով։— Կերթամ ահա երկաթուղային դպրոցը կավարտեմ, պաշտոնի կմտնեմ և աշխատածս փողով մորս, քրոջս ու փոքրիկ Վաչոյի համար նոր հագուստներ կառնեմ։ Այդ բոլորից բացի քրոջս՝ Վարդուշի համար կառնեմ զարդեր, ականջօղեր, որ զարդարվի ուրիշ աղջիկների նման։ Նվերներ կառնեմ նաև Եվայի համար, թե ի՞նչ— առայժմ որոշել չեմ կարող, բայց անպատճառ մի լավ բան։ Նվերներ կառնեմ և տատիս և... այնքա՛ն ուրախ եմ, սիրտս այնպես է լցված— ուզում եմ բոլորին սիրել... Ու որոշում եմ գնալու ժամանակ մնաս բարով տալ բոլոր ընկերներիս ու հարևաններին։ Բայց առայժմ դուրս եմ գալիս դաշտ ու մտքով «մնաս բարով» ասում ամեն ինչի— դաշտին, անտառին, ջրերին. կանգնում

եմ, նայում կարոտով և անխոս հրաժեշտ տալիս, մըտածելով, թե մեկ էլ ե՞րբ արդյոք կտեսնեմ նրանց։ Սիրտս ճնշում է մի անծանոթ ծանրություն. արցունքները բռնում են կոկորդս, բայց արտասվել չեմ կարողանում։

Օրերն ինձ թվում է մեծ, ամենազոր մարդ, մի մարդ, որ ամեն ինչ կարող է անել— ո՛ւմ ուզի կարող է պաշտոն տալ, բարձրացնել, երջանկացնել... Ու թվում է, թե այն պատիվը, որ տալիս են նրան հայրս ու մայրս,— դա մի չնչին բան է, համեմատած այն բարիքի հետ, որ անելու է օրերն ինձ։

Այդ բանն զգում են և ծնողներս, բայց ինչպես երևում է, ավելին անել չեն կարող։ Մայրս, օրինակ, ասում է, թե այդպիսի մարդու համար պետք է առանձին պատրաստություն տեսնել՝ գառ մորթել, գինի, կոնյակ առնել. բայց հավից, ձվից և մուրաբից ավելի բան չի կարողանում դնել սեղանի վրա։

— Հետո գաթա կթխեմ կուղարկեմ, նրա լավության տակ չեմ մնա,— ասում է մայրս ընկճված։

Իմ գնալու լուրը արդեն գիտեն շատերը։ Փողոցով անցնելիս, լսում եմ, թե ինչպես մեր հարևան կանայք ասում են իրար.

— Բախտ ա. ասված որ ուզի կտա առանց մատաղի էլ. դուռը փակես—կտուրը կթափի։

Ես թեև տխուր եմ, որ շուտով պիտի հեռանամ մեր գյուղից, ծնողներից ու ընկերներից. բայց հպարտանում եմ այս խոսքերից։ Կան ընկերներ ու հարևաններ, որ անկեղծ շնորհավորում են ինձ, ուրախանալով, որ գնում եմ լավ դպրոց ընդունվելու. մինչև անգամ պապս, որքան էլ հորիցս խռով, կանչում է իրենց պատշգամբը և խրատում, որ լավ սովորեմ ու խելոք մնամ։ Իսկ տատս, իմ փոքրիկ տատը համբուրում է ինձ, լաց է լինում, հետո հավաքում է իրեն ու ասում.

— Գնալուդ օրն ինձ կիմացնես, Սուրեն ջան։

Նույնիսկ հորեղբայրս անտարբեր չի մնում:

Ծուխայով անցնելիս՝ ձեռով կանչում է ինձ:

Վա՛ղուց, շատ վաղուց նա հետս չի խոսում. չեմ հասկանում ինչու՝ այս անգամ կանչում է: Մոտենում եմ տարակուսանքով ու զգուշությամբ:

— Հը՛, Տրապիզոն ես գնո՛ւմ,— ասում է նա:

Ես հասկանում եմ նրա այդ հեգնանքը. ուզում է ասել՝ հեռու տեղ ես գնում:

— Ուզում ես նաչալնիկ դառնաս, կոճակներով շորեր հագնե՞լ, հա՞... Քանի թուման պիտի առնես ամսական:

Նա ծաղրում է, իսկ ես մտքումս ասում եմ. «Այ, կերթամ-կսովորեմ, լավ պաշտոն կստանամ—էն ժամանակ կտեսնես»: Եվ ուզում եմ հեռանալ: Բայց նա նորից կանգնեցնում է ինձ.

— Սպասիր. էդ օրերը հանկարծ ժուլիկի մեկը չլնի: Նա ով է, որ մարդու դպրոց տա, պաշտոն տա: Ինչ իշխանության տեր է:

Երբ քիչ հետո հորս ու մորս պատմում եմ նրա ասածները, երկուսը միասին չեն համբերում.

— Նախանձում է... Չի ուզում, որ մարդ դառնաս:

Մայրս եռանդուն պատրաստության մեջ է. հագուստներս կարգի է բերում, լվանում, հարթուկում: Նույնն անում են հորաքույրս ու Փիլո քեռու կինը՝ Զարդարը: Դրանից բացի՝ երեք տանն էլ պաշարի համար գաթա են թխում, հավ են մորթում, ձու են եփում: Իսկ երեք մեկնողներս՝ հորաքրոջս տղան՝ Կարոն, քեռի Փիլոյի որդին՝ Վարդանը— շուտ-շուտ հանդիպում ենք իրար և միմյանց հայտնում, թե ո՛ւմ տանն ի՛նչ է արվում: Պարզվում է, որ երեքիս տանն էլ միևնույն բաներն են պատրաստում:

Հայրս ինքն էլ է մասնակցում պատրաստության. շապիկ, վերնաշապիկ կտորներ է գնում շուկայում,

փայտ է կտրում փուռ վառելու, իսկ պարապելիս՝ շարունակ խրատում է ինձ. Նրան միանում է և մայրս:

— Ձեռդ փող ընկնելիս՝ պահի կամ ղարկի: Անտեղի, ավելորդ ծախս չանես...

Վերջապես բոլոր պատրաստությունները վերջացել են ահա. ամեն ինչ կապոցներ ենք արել, և որոշման համաձայն, իմ երկու ընկերները, իրենց ծնողների հետ, հավաքվել են մեր տանը՝ միասին կայարան գնալու:

Նորից, քանի երորդ անգամը, խրատում են, թե ի՛նչպես պիտի պահենք մեզ ճանապարհին, օտար մարդկանց մոտ, ծառայության մեջ:

— Հը՛, տղերք, Սուրեն, Կարո, Վարդան, չլնեմ-չիմանամ պապիրոս եք քաշել, գինի եք խմե՛լ... Իմանամ՝ կգամ Թիֆլիսը գլխներիդ փուլ կածեմ,—ասում է քեռի Փիլոն:— Օրինավոր կացրեք, օրինավոր կպահեք ձեզ: Ջրորհնեքին ու Զատկին կգաք միասին: Էդ օրերը ձեր բարերարն ա— ինչ որ ասի՝ կլսեք: Նա ձեր վատը չի կամենա...

— Հա՛, հա՛,— հավանություն է տալիս հորաքույրս, թաշկինակն աչքերին տանելով:— Քեռին լավ ա ասում:

Խոսելով՝ սպասում են օրերին, որ ընթրենք ու միասին գնանք կայարան. բայց նա, չգիտես ինչո՛ւ ուշանում է: Օրը մթնում է արդեն, կայարան գնալու ժամանակն է, սակայն նա չի երևում: Կես օրին փոքրիկ ճամպրուկը վերցրել, գնացել է շուկա:

— Մի երկու բան եմ առնելու, մեջը դարսեմ,— ասել է նա մորս ու գնացել, բայց անհայտ է, թե ինչո՛ւ ուշանում է:

— Հիմի կգա էլի,— հանգստացնում է մայրս, բայց ինքն էլ անհանգիստ, շուտ-շուտ գնում է բակը, դալիս ներս, ականջը միշտ դռնաձայնի:

Անցնում է բավական ժամանակ, լամպերը վառվում են, անհանգստությունը մեծանում է։

Քեռի Փիլոն խորհուրդ է տալիս կայարան գնալ. չատ հավանական է՝ մարդն այնտեղ սպասում է մեզ։

— Գնանք,— ասում է հայրս և վերցնում է իմ պաշարի կապոցներից մեկը։

Մենք և մեզ ուղեկցողները վերցնում ենք մյուս կապոցները, իսկ մնացողները համբուրում են մեզ, բարեմաղթություններ անում։

Այս անհանգստության մեջ ես մոռանում եմ, որ պետք է տատիս տեսնեմ և «մնաս բարև» ասեմ. բայց նա հասնում է ինձ ճանապարհին և ձեռս մի թուղթ է դնում ու ինձ համբուրում.

— Բան կառնես, կուտես, մատաղ. քեզ լավ կը պահես...

Կայարանում հայրս, ձեռի կապոցը մեզ հանձնելով, գնում է օբերին փնտռելու։ Գնում է և մի քանի րոպեից գալիս, թե չի երևում, բայց հիմա կգա, երևի։ Մենք բոլորս այս ու այն կողմ ենք նայում—բազմության մեջ նրան փնտռելով.— չի երևում։ Գալիս է տոմս առնելու ժամանակը— օբերը չկա։ Մերոնք մտածում են տոմս առնել առանց նրան, սակայն քեռի Փիլոն գտնում է, որ միտք չունի. բայց և այնպես խելացի ենք համարում հերթ կանգնել տոմսի համար, որ օբերը երևալուն պես—գնենք և ետ չմնանք։

Զանգը տալիս են։ Գնացքը գալիս է։— Ծրխկոց, սուլոց, իրարանցում—օբերը չկա։

— Չկա՞։ Չի՞ երևում,— ձայն են տալիս մերոնք իրար բազմության միջից։— Չկա՞։ չէ՞...

Ճանապարհորդները բեռներով գնում-նստում են— օբերը չկա։

— Ի՞նչ եղավ էս մարդը, չլնի՞ մի բան պատահեց խեղճին,— անհանգստանում է մայրս,— ղարիբ է, ով գիտի...

Ու բոլորը նույն ենթադրությունն են անում,— այլապես ինչո՛ւ պիտի ուշանար գնացքին։

Հայրս, այնուամենայնիվ, գնում է կայարանի ծանոթ ծառայողներին հարցուփորձելու, թե չե՞ն տեսել այն մարդուն. և վերադառնում է, հայտնելով, թե մի երկուսն ասում են՝ չենք տեսել, իսկ երկու հոգի, թե այստեղ էր, մի «պստիկ չեմոդան» ձեռին։

Այդ ժամանակ մոտենում է մի ուրիշ երկաթուղային։

— Ո՞ւմ եք հարցնում...

Հայրս նկարագրում է օբերին։

Երկաթուղայինը թափահարում է ձեռը։

— Է՜, ճաշի գնացքով գնաց, մի պստիկ չեմոդան ձեռին...

Մյուս օրը, երբ հայտնի է դառնում, որ օբերը փախել է, մեր տունն իրար ետևից մարդիկ են գալիս, թե օբերը իրենցից փող է վերցրել, «մեչոկներ» է վերցրել, որ ցորեն ուղարկի, ու մեզ հարցնում են, թե ինչպես կլինի հիմա, ո՛վ իրենց փողը ետ կտա։

— Ես ի՞նչ գիտեմ,— ասում է հայրս շվարած։

— Ո՞նց թե, մեզ ասել է ձեր տանն է ապրում, ձեր բարեկամն է. մենք էլ հավատացել ենք, տվել։

Հայրս չի իմանում ինչ ասի, իսկ մայրս բոլորին կրկնում է միևնույնը.

— Ի՞նչ «բարեկամ». անծանոթ մարդ էր, եկավ մի քանի գիշեր մնաց—գնաց։

Նրանք դրանով չեն բավարարվում, խոսում են, էլի, ապա հայհոյելով ջոկում-տանում են իրենց «մեչոկները»։

Իսկ ե՞ս... ես ամոթից չեմ երևում մարդկանց, խուսափում եմ ընկերներից, բարեկամներից և չգիտեմ ո՛ւր գնամ, որ ինձ չտեսնեն։ Բայց հենց առաջին օրը պատահում է մեր թաղի տղաներից մեկը.

— Հը, օբեր, ո՞նց ես։

Ես հեռանում եմ առանց պատասխանելու: Իսկ հորեղբայրս, հենց նույն օրն առավոտ, ինձ տեսնելուն պես, հարցնում է պատշգամբից.

— Հը՛, Տրապիզոն գնացիր-եկա՞ր, տղա... Հա՛-հա՛-հա-հա՛... Նաչալնիկ դառար, հա՞...

Ու ծիծաղում է: Նրա հետ անձայն չարախնդում է և Սանամ-զիզին:

Այդ օրվանից ես ամաչում եմ նրա աչքին երևալ, կանգնել նրանց պատշգամբի առաջ: Ոչ միայն նրա, այլ և առհասարակ երևալ մարդկանց: Ամեն հայացք խռովում է սիրտս, ամեն նայվածք շփոթում է ինձ: Ամաչում եմ տեսնել ընկերներիս, մանավանդ Եվային. ի՞նչ անել, որ նա այս բանը չիմանա...

Ավելի ծանր է զգում իրեն մայրս. նա ամոթից չի իմանում ի՛նչ անի. շարունակ ծունկը ծեծում է ու կրկնում.

— Խայտառակվեցինք, խայտառակվեցինք...

Իսկ հայրս, ասես մի ծանր երազից զարթնած, զարմանում է շարունակ:

— Բա էդ սատանի զավակն էլ մարդ չգտավ, եկավ ինձ խաբելո՞ւ... Չէ, ես հավի՛ խելք ունեմ, հավի՛:

Ու էլ խոսք չի գտնում ասելու, անգամ հայհոյելու:

Դա առաջին հիասթափությունն է, որ կրում եմ ես մարդկանցից, այն էլ փայլուն կոճակներ ունեցող մարդուց: Իսկ այդպիսի կոճակներ, այդպիսի կակարդ ունեցող մարդկանց ես համարում էի այնքա՛ն լավ, այնքա՛ն ազնիվ ու բարձր: Դրանից հետո անծանոթ կոճակավորներ տեսնելիս, բնազդաբար թե վախից, ենթադրում եմ, որ խաբեբաներ կլինեն օբերի նման, ու մտքումս որոշում եմ, որ եթե մի բան ասեն—չհավատամ: Ես չնայած խուսափում եմ ընկերների շրջա-

նից, ամաչում եմ փողոց դուրս գալ, բայց ընկերներս երբեմն գալիս մխիթարում են ինձ.

— Բանի տեղ մի դնի՛,— ասում է Սամսոնը,— հե՛րն անիծած:

Իսկ Սեդրակը ատամները կրճտում է միշտ.

— Կպատահի՛— դագանակը մեջքին կոտրելու եմ...

Մյուս ընկերներս՝ Աշոտ Զարգարյանը, Ապոստոլը, Մելիտեն նույնպես զայրացած են նրա դեմ: Բայց այդ ամենը տակավին չեն սփոփում իմ վիշտը, որ խորն է այնքան, որ ես մենակություն եմ փնտրում շարունակ, և պարապ չմնալու համար կարդում եմ պարտիզում առանձնացած կամ բարձրանում եմ տանիքը, որ ոչ-ոք չտեսնի ու չխանգարի ինձ: Գոգոլն է միայն ցրում իմ տխուր ժամերը, նա է վերացնում շրջապատից ու սփոփում ինձ: Կարդում եմ և իմ հին դասերը, այն կտորները, որ երբևէ դուր են եկել ինձ: Բայց ամեն անգամ, երբ հայրս գործից տուն է գալիս— նեղանում է ինքն իրենից, որ ես պարապ եմ մնացել:

— Աշխատիր, ա՛յ որդի, մի գործ գտնել. պարապ լավ չի,— ասում է նա ընկճված: Եվ երբեք խոսքը չի վերջացնում. միշտ մի բան, ասես, դեմ է առնում բըկին:

Ես ամաչում եմ և պարզապես չեմ իմանում ի՛նչ ասեմ: Ամաչում եմ, որ չեմ կարողանում օգտակար լինել մեր տանը և չգիտեմ էլ, թե ինչով կարող եմ օգտակար լինել: Քանի անգամ որոշել եմ գնամ մի տեղ ծառայության մտնեմ, բայց միշտ էլ դեմս ծառացել է մի հարց. «որտե՞ղ»: Այդ «որտեղ»-ն է, որ դժվար է որոշել ու գտնել:

Եվ ահա մի օր էլ որոշում եմ— գնամ հորս օգնեմ: Եթե նրան օգնեմ, երևի, չի նեղանա: Այժմ նա երկաթուղու համար ավազ է կրում. առավոտը գնում է, երեկոյան վերադառնում հոգնած: Այո, պետք է օգ-

նել,— ասում եմ ես։ Եվ երբ որոշումս հայտնում եմ մորս— նա և՛ տխրում է, և՛ ուրախանում։

— Է՛, որ ուզում ես գնա... հերդ մեղք ա...— ասում է նա կարեկցանքով, բայց խոսքը չի վերջացնում։

Նրա հառաչանքը ես հասկանում եմ այնպես, որ նա չէր ուզի որ ես այդպիսի գործեր անեմ, բայց քանի որ ես որոշել եմ հորս օգնել—դեմ չի, որովհետև մայրս նրան խղճում է. հայրս աշխատանքից հետո այնպես հոգնած է տուն գալիս, որ հազիվ ընթրելով՝ անմիջապես պառկում է հանգստանալու։

Սակայն, երբ որոշումս հայտնում եմ հորս, նա գլուխը տարուբերում է տխուր։

— Ես դրա համար չեմ քեզ ուսումի տվել, որ դառ ինձ նման ավազ կրող դառնաս։ Չէ, ախպեր... դու քեզ համար քու սրտի ուզած պաշտոն գտի։ Եթե չես կարող՝ ես կգտնեմ,— ասում է նա հանդարտ, բառերը հատիկ-հատիկ։

Եվ նա կատարում է իր խոստումը. չի անցնում մի շաբաթ, իր ծանոթ երկաթուղայինների միջոցով, պաշտոն է գտնում ինձ համար։

XVI

ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԾԱՄԱՍԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ

Ահա մի մեծ, բարձր սպիտակ տուն, չորս կողմի վրա բացվող պայծառ լուսամուտներով։ Ծաղկած ակացիաները և ճերմակ ու կապույտ հասմիկները հանդարտ օրորվում են այդ լուսամուտների առաջ։ Նրանց թարմ բուրմունքը, մանավանդ երեկոները տարածվում է բակում ու բաց լուսամուտներից մտնում ներս։

Սա իմ առաջին պաշտոնատունն է—երկաթուղային 15-րդ գծամասի գրասենյակը։ Քանի օր է աշխատում եմ այստեղ, բայց դեռ ինձ զգում եմ այնպես, ինչպես երեկ։

Մեծավորս՝ գործերի կառավարիչը, որին Գլեբ Մաքսիմիչ են ասում, ձեռքս շատ հավանեց և առաջին իսկ օրը արտագրություն տվեց, կամ՝ ինչպես ինքն է ասում, «պատճեն հանելու»։ Սենյակը, ուր աշխատում եմ— հինգ սեղան է դրված։ Այդտեղ աշխատում են ինքը Գլեբ Մաքսիմիչը և դրագիրները՝ յուրաքանչյուրը մի սեղանի առաջ։ Իմ սեղանը գրեթե դռան մոտ է։ Ներս մտնողները, այցելուները,— և որքա՜ն շատ են դրանք,— անցնում են շարունակ իմ կողքից, նրանք համարյա քսվում են իմ սեղանին, հաճախ կանգ են առնում ինձ մոտ և զանազան հարցումներ անում։ Գա-

լիս են մեծ մասամբ բանվորներ, գծի վարպետներ, ամեն տեսակ կապալառուներ։ Առաջին անգամ այստեղ եմ իմանում, որ երկաթուղու գծերը նորոգում են և այդ գծերը նորոգելու վրա այդքան մարդ է աշխատում, և այդ բոլորը ղեկավարում է գծամասի պետը— Կառլ Կառլիչը։ Եվ այստեղ եկողների մեծ մասը հարցնում են գլխավորապես նրան։

— Էստե՞ղ է պետը։ Էստե՞ղ է Կառլ Կառլիչը...

Մեծավորս՝ Գրեբ Մաքսիմիչը հիսունի մոտ բարի ռուս է— հանաքչի, սիրալիր, բայց պետի մոտ լուրջ ու վախկոտ։ Ինչ որ չեմ հասցնում գրասենյակում՝ թույլ է տալիս տանել տուն և երեկոյան կամ գիշերը վերջացնել, եթե շտապ է։

Ինչպիսի՛ դողով և երկյուղով եմ աշխատում, ինչպիսի՛ ուշադրությամբ ու խնամքով, որ սխալներ չանեմ և դիտողություն չստանամ։ Երբ տանը նստում եմ աշխատելու, մայրս մոտ է գալիս ոտների ծայրի վրա. աշխատում է ոչ մի բանով, ոչ մի ձայնով չըխանգարել ինձ, և շարունակ զգուշացնում է երեխաներին.

— Ը՛սս... Սուրենը գրում է։

Եվ քույրս՝ Վարդուշը և փոքրիկ Վաչոն ոչ միայն լռում են, այլ և իրենք էլ, մորս նմանեցնելով, քայլում են ոտների ծայրերի վրա և, ձեռնին շուրթերին տանելով, զգուշացնում իրար.

— Ը՛սս... Սուրենը գրում է։

Այնպիսի լռություն է իջնում, որ ասես սրբազան արարողություն եմ կատարելու։ Մայրս գուլպան ձեռին նստում է ժամերով ու լռում. բոլորը քնում են տանը, նա մնում է արթուն ու լուռ, և սենյակի լռության մեջ լսվում է միայն իմ գրչի ճռիչը և նավթի լամպի պատրույգի երբեմնակի թրթռոցը։ Եվ այսպես մինչև ուշ երեկո, մինչև գիշեր։ Աշխատում եմ շատ գրել, անսխալ գրել, և, որքան հնարավոր է, գեղեցիկ գրել, որ Գլեբ Մաքսիմիչը հավանի և գովի ձեռագիրս։

Իմ պաշտոնն այնպիսի ուրախություն է բերել ծընողներիս, որ նրանք էլ չեն տրտնջում իրենց բախտից. ու այնպես գոհ են, այնպես հպարտ. չէ՞ որ իմ ընկերներից և ոչ մեկը դեռ այդպիսի պաշտոն չունի։ Ճիշտ է, միքանիսը պիտի գնան ուրիշ քաղաքներում սովորելու, մի քանիսն օգնում են իրենց հայրերին՝ խանութներում, ինչպես օրինակ Մելիտեն,— բայց և ո՛չ մեկը փող չի աշխատում, ինչպես ես։ Այդ է պատճառը, գուցե, որ հորեղբայրս ու պապս նայում են ինձ զսպված նախանձով։ Նրանք այդ ոչ մի խոսքով չեն արտահայտում, իհարկե. բայց ես զգում եմ, որ նրանք ուրախ չեն լինում, երբ ես կարտոնե թղթապանակը թևիս տակ գնում եմ գրասենյակ։ Այդ երևում է և այն ժամանակ, երբ հայրս մի օր խոսք է բանում բաժանքի մասին։

— Տղադ հիմա աշխատում է, էլ ի՞նչ ես ուզում, — ասում է պապս հանդարտ, տերողորմյան քաշելով։

— Տղան իրա՛ համար, հողն իրա՛,— ասում է հայրս։

Պապս լռում է և շարունակում տերողորմյայի հատիկները չխկացնել իրար ետևից։

Իսկ երբ առավոտները, թղթապանակը կռնատակս դրած, երբեմն և առանց դրան, բայց մանավանդ թղթապանակով ես աշխատանքի եմ գնում այնպիսի վեհ, հպարտ քայլերով, ասես աշխարհի բարձրագույն պաշտոնն իմս է։ Գրասենյակ գնում եմ բոլոր պաշտոնյաներից շուտ, վախենալով, որ եթե ուշանամ կարող են հանկարծ «դուրս անել», ինչպես ասում, ներշնչում է մայրս։ Ու, թերևս, այդ է պատճառը, որ լույսը հազիվ բացված՝ նա վեր է կենում, թեյ պատրաստում ու ինձ զարթեցնում.

— Վեր կաց, թե չէ կուշանաս։

Ու երբեք չեմ ուշանում։ Գնում եմ՝ մենակ նըրա-

տում սեղանիս առաջ ու կարդում արտագրածս թղթերը: Ամբողջ մտահոգությունս այն է, որ սխալ չլինի, թե չէ հանկարծ...

Ինձնից հետո գալիս են գրասենյակի մյուս աշխատակիցները— երկու ռուս գրագիր և մի արտագրող աղջիկ, որ միշտ օգնում է ինձ— կարդում է ձեռագրերի անընթեռնելի տեղերը, ցուցմունքներ է տալիս և առհասարակ աշխատում է, որ պարզ ձեռագիրները ես վերցնեմ արտագրելու: Մյուս գրագիրները չեն խառնվում մեր գործերին: Իսկ Գլեբ Մաքսիմիչը— գործավարը, նա ամեն ինչ է մեզ համար. նա ինքը՝ հեղինակություն է, խոսքը օրենք: Թեև բարի, բայց խստապահանջ է ու մաքրասեր: Չի սիրում տառի կամ կետի սխալ, թանաքի մի ավելորդ բիծ: Այդպիսի բան տեսնելիս՝ փոքրիկ դանակը հանում է ու քերում անմիջապես.

— Օյ, նելզյա, գալուբչիկ, նելզյա...

Գլեբ Մաքսիմիչը... Նա հագնվում է միշտ մաքուր, մազերը սանրում է երկու կողմի վրա և մեջտեղից ճեղքում: Սիրում է առանձնապես մաքուր պահել պաշտոնազգեստի կոճակները և կակարդը. գրասենյակում թեյելիս եթե մի կաթիլ ընկնում է կոճակին՝ նա գրպանից հանում է կավիճի կտորը և քսում թրջած կոճակին ու նորից սրբում թաշկինակով. նույնը անում է անձրևի տակ ընկնելու ժամանակ.— ա՛յնքան մաքրասեր է այդ Գլեբ Մաքսիմիչը: Եվ նույնքան խոնարհ ու հնազանդ մեծավորի առաջ: Երբ մեր պետը, այսինքն 15-րդ գծամասի պետ Կառլ Կառլիչը ներս է մտնում, Գլեբ Մաքսիմիչը, որքան էլ զբաղված, վեր է թռչում տեղից, և գլուխը հարգանքով խոնարհում այնպես, որ ծնոտը դիպչում է կրծքին. թվում է նա այդ անում է գրասենյակի բոլոր աշխատակիցների կողմից, իբրև ներկայացուցիչ, իբրև պատասխանատու...

Իսկ Կառլ Կառլիչը նրա ողջույնն ընդունում է

սովորաբար անխոս, անգամ առանց գլխի շարժումի: Նրա մասին ասում են, որ նա ռուսացած գերմանացի է. թե ի՞նչ է նշանակում «ռուսացած գերմանացի»— ես այդ լավ չեմ հասկանում, բայց նրա բարևի անխոս ձևը վերագրում են դրան. երևի ռուսացած գերմանացիներն այդպես են ընդունում մարդկանց բարևը: Նա միջահասակ է, ամուր ու չեկ բեխերը միշտ վեր սրած, և ինձ թվում է, որ բոլոր ռուսացած գերմանացիները հենց այդպես են լինում: Ներս մտնելիս՝ նա չի էլ նայում մեզ, այլ գնում է ուղիղ իր կաբինետը. իսկ եթե նայում է,— նայում է այնպես, ասես թյուրիմացությամբ, բերանի մի անկյունը միշտ ծխամորճ դրած: Կառլ Կառլիչը նաև շատ սակավախոս է. օրերով գրասենյակում խոսք չի ասում, և նրա լռությունը ճնշում ու վախ է ազդում բոլորին: Անխոս լսում է գծի վարպետների, տեխնիկների, գործերի կառավարչի զեկուցումները և մի երկու խոսք ասում, կամ հետո գրավոր կարգադրություն անում: Իսկ հաճախ, շատ հաճախ նա դրեզինով գնում է գծի նորոգումները տեսնելու և, վերադառնում է բարկացած. ու ամեն անգամ հեռացնում է գործից կա՛մ ավագին, կա՛մ բանվորներին: Իսկ լռությունից հետո, երկարատև լռությունից հետո, երբ նրա ձայնը հնչում է հանկարծ, չգիտեմ ինչո՞ւ, դող է առաջացնում ծառայողների մեջ, և ամենից ավելի Գլեբ Մաքսիմիչի. նա անմիջապես վեր է թռչում տեղից և ականջ դընում, թե ի՞նչ է ասում Կառլ Կառլիչը և ի՞նչն է արդյոք նրա բարկության պատճառը:

— Ը՛սս,— ասում է նա, գլուխն ուսերի մեջ խըրած,— ը՛սս...

Ու քանի Կառլ Կառլիչի ձայնը բարձրանում է, նա այնքան ավելի է կուչ գալիս ու լռություն դառնում: Իսկ երբ Կառլ Կառլիչը գոռում է հանկարծ — Գլեբ Մաքսիմիչը նորից գունատված վեր է թըռչում ու նստում. և այդ կրկնվում է մի քանի անգամ:

Իսկ Կառլ Կառլիչն այդպես գոռում է երբեմն գծամասի վարպետների, ավագների և բանվորների վրա. ձեռը զարկում է սեղանին կամ ոտը խփում հատակին ու բացականչում. «ВОН!» և ամեն անգամ ինձ թվում է նրան վիրավորում են —դրանից է այդպես գոռում: Ու նրա ձայնի վրա՝ նրա խոսակցին անմիջապես— լինի դա վարպետ, բանվոր թե ծառայող— նրա կաբինետից դուրս է գալիս կարմրատակած ու շուրթերը կծելով:

Բոլորը գլուխները կախում են սեղանների վրա և շնչազուսպ սպասում, թե ի՛նչ պիտի լինի այնուհետև: Եվ այդ լռության մեջ լսվում է հանկարծ Կառլ Կառլիչի ձայնը.

— Մաքսիմի՛չ:

Գլեբ Մաքսիմիչը ոտերի ծայրերի վրա գնում է ներս՝ հնազանդության ու խոնարհության բոլոր ձևերով:

— Ոչ մի մարդ չթողնեք ներս,— կարգադրում է Կառլ Կառլիչը բարկացած:

— Լսում եմ,— ասում է Գլեբ Մաքսիմիչը խոնարհ, մեջքը դեպի դուռը ետ-ետ գնալով:

Կառլ Կառլիչն առանձնապես խիստ է բանվորների հետ. երբ մեկն ու մեկը կամ խմբով գալիս են մի բան խնդրելու,— նա կա՛մ չի ընդունում, կա՛մ լսելով հեռացնում է բարկացած:

— Նա չի ուզում բանվորների հետ գործ ունենալ, — բացատրում է ինձ արտագրող աղջիկը,— նա միայն վարպետի հետ պետք է խոսի, իսկ վարպետը՝ բանվորների: Բայց սրանք գալիս են իզուր նրան բարկացնում և մեզ խանգարում:

Եկել են ահա նորոգող բանվորները իրենց տասնապետների հետ. եկել են բողոքելու գծի վարպետի դեմ, որ խիստ է և կոպիտ է վարվում իրենց հետ:Նրանք խնդրում են Գլեբ Մաքսիմիչին, որ իրենց գա-

լու մասին հայտնի Կառլ Կառլիչին: Գլեբ Մաքսիմիչը չի համաձայնում.

— Չեմ կարող, голубчик, կարգադրել է ոչ-ոքի,— ասում է նա և, թերևս, խոսքին ուժ տալու համար, ձեռը բացասաբար շարժում է բերանի մոտ:

— Նո՛ւ, Գլեբ Մաքսիմիչ, ասեք շատ կարևոր գործի համար է:

Գլեբ Մաքսիմիչը զիջում է. գնում է դեպի դուռը, բայց կես ճանպից ետ է դառնում.

— Չեմ կարող:

Բանվորները նորից.

— Գլեբ Մաքսիմիչ, ասեք գծի վարպետի դեմ գանգատ ունենք:

Բարի է Գլեբ Մաքսիմիչը. գնում է երկրորդ անգամ և վախվխելով ներս մտնում:

Բայց այս անգամ ներսից միայն գոռոց է լսվում.

— Ես ձեզ ասացի՝ ո՛չ-ո՛քի...

Գլեբ Մաքսիմիչը դուրս է գալիս թղթի պես սպիտակած և, պատասխանի փոխարեն, ձեռը տանում է դեպի բերանը, որ նշանակում է լռություն:

Բայց— տարօրինակ բան— բանվորները, ուրիշ անգամվա նման, ո՛չ լռում են և ո՛չ հեռանում, և գրասենյակը լցվում է նրանց դժգոհ ձայներով. այնպես են խոսում, որ պարապելը դառնում է անկարելի: Խոսում են հիմա առանց քաշվելու, հուզվա՛ծ, գրգռվա՛ծ— մեկը մյուսին ընդմիջելով: Եվ նրանց ասածներից ես այնքան եմ հասկանում, որ իրենց աշխատեցնում են մինչև մութը, աշխատեցնում են և կիրակի օրերը, բայց անցած ամսվա օրավարձերը— «պալուչկան» դեռ չեն ստացել. նրանք խոսում են և այն մասին (և ամենից շատ խոսում է մի թուխ կարճահասակ բանվոր), թե գծի վարպետը կոպիտ է վարվում, փողը ժամանակին չի տալիս և փոքր ինչ դժգոհող բանվորին արձակում է աշխատանքից, թե պետք է կարգադրել այդպես: Եվ այժմ նրանք եկել են ստուգե-

լու, թե այդպե՞ս է արդյոք: Երեկ էլ վարպետը մեկին խփել է, ուշագնաց տարել են գետը և ուշքի բերել: Եկել են ահա այս ամենը պետին հայտնելու և անցած ամսվա «պալուչկան» խնդրելու: Բայց նրանք ենթադրում են, որ այդ «պալուչկան» կերել է վարպետն ինքը: Այդպես է բացատրում կարճահասակ թուխ բանվորը Գլեբ Մաքսիմիչին:

Իսկ մյուսները խոսում են, թոնթորում, և բոլորը միասին, ինչպես գյուղական ժողովներում, ոմանք ծխում են ջղայնացած, պապիրոսները գցում են հատակին և, թքոտելով տրորում: Այս բոլորն ինձ համար և նոր է և զարմանալի, ու ես ուշադիր հետևում եմ նրանց ու զարմանում, թե ինչպես Կառլ Կառլիչից չեն ամաչում, չեն վախենում. այստեղ ամեն մի եկող խոսում է այնպես զգո՛ւյշ, կամա՛ց, իսկ սրանք այնպես դեղավարի— առանց քաշվելու: Նայելով նրանց՝ ես շարունակ մտածում եմ, որ նրանց ձայնը հասնում է անշուշտ Կառլ Կառլիչին և նա ջղայնանում է, երևի, իր առանձնասենյակում: Իմ ծառայության առաջին օրից ես այսպիսի հուզում և բանվորների կուտակում չեմ տեսել մեր գրասենյակում: Սովորաբար գալիս են մի կամ մի քանի հոգով, իրենց գործը տեսնում համեստորեն ու գնում: Բայց այսօր հուզված են անսովոր ու խոսում են այնպես գրգռված, որ չեն մտածում, թե ո՛ւր են գտնվում: Չի օգնում և այն, որ Գլեբ Մաքսիմիչը շուտ–շուտ տեղից ելնելով՝ ձեռը բերանն է տանում: Նրանք շարունակում են:

Եվ նրանց այդ հուզված խոսակցությունն անհանգստացնում է ինձ. թվում է շարունակ, որ այդ հանգամանքը կարող է բարկացնել Կառլ Կառլիչին. ես գիտեմ, որ նա աղմուկ և բարձր խոսակցություն չի սիրում: Չէ՞ որ իզուր չէ Գլեբ Մաքսիմիչը միշտ լռությունն պահպանում գրասենյակում:

Եվ ես չեմ սխալվում իմ ենթադրության մեջ:

Նկ. Ս. Ռասմանյանի



— Հեռացրեք սրանց,—ասում է նա:

Նրանց ձայների վրա կաբինետի դուռը բացվում է հանկարծ և երևում է Կառլ Կառլիչի խուզած գլուխը.

— Ի՞նչ աղմուկ է,— պայթում է նրա ձայնը:

Գլեբ Մաքսիմիչը վեր է թռչում կանգնած տեղը և ետ ու առաջ անում մի քանի անգամ: Թվում է չի իմանում՝ ներողություն խնդրի՞ պետից, թե՞ բանվորներին սաստի: Խե՛ղճ Գլեբ Մաքսիմիչ. որքան տարօրինակ էիր դու այդ վայրկյանին, որքան շըփոթված ու անճարակ... Բայց քեզ հետ միասին դողում էի և ես և մյուս աշխատակիցները... Ի՞նչ պիտի լինի մտածում էինք մենք և սպասում քո խոսքին: Բայց մինչ դու մի խոսք կասեիր— բանվորների միջից առաջ եկավ այն թուխ կարճահասակ տղան և...

— Պարոն պետ...

Կառլ Կառլիչն իր խոժոռ հայացքը ոլորում է նրա վրա և դառնում Գլեբ Մաքսիմիչին.

— Հեռացրեք սրանց,— ասում է նա և դուռը շըրխկացնում թուխ տղայի երեսին:

Բանվորները զարմացած իրար են նայում:

— Գնա՛նք, տղերք, գնա՛նք,— ասում է նրանցից մեկը:— Բան չի դուրս գա, գնանք:

Թուխ տղան կարմրում է, սպրդնում. նա հայացքը բևեռում է պետի դռան վրա, և նրա աչքերը փայլատակում են:

— Դե՛, դե՛,— նրա թևը քաշում է հասակավոր մի բանվոր:— Գնա՛նք:

Ու գնում են: Նրանք սենյակից դուրս են գալիս իրար սեղմված ու մռայլ: Նրանց հայացքը կանգ չի առնում և ոչ մի բանի վրա:

Գլեբ Մաքսիմիչը վրդով նայում է նրանց ետևից, որ այդպես անհանգստացրին Կառլ Կառլիչին: Գլեբ Մաքսիմիչը չի սիրում առհասարակ, երբ կապալառուները, գծի վարպետները կամ բանվորները գալիս են պետի տրամադրությունը փչացնում, որովհետև դա, վերջի վերջո, անդրադառնում է գրասենյակի,

մանավանդ իր՝ Գլեբ Մաքսիմիչի վրա: Եվ, իսկապես, մի երկու այդպիսի դեպքից հետո տեսել եմ, թե ինչպես Կառլ Կառլիչը դուրս է գալիս և իր դժգոհությունը հայտնում կամ սրտնեղում Գլեբ Մաքսիմիչի վրա, որ սխալ է կատարել այս կամ այն կարգադրությունը կամ ուշացրել է և կամ իր սեղանի վրա թուղթ չկա․ քանի անգամ է ասել, որ իր սեղանի վրա ամեն ինչ պետք է լինի իր տեղում:

Այդպիսի դեպքերում Գլեբ Մաքսիմիչն իրեն կորցնում է և թուղթ, թանաք հավաքում տանում Կառլ Կառլիչի կաբինետը, միշտ ոտի ծայրերի վրա, միշտ զգույշ շարժումներով, այդ թերևս նրա համար, որ չլինի թե առիթ տա նոր զայրույթի:

Գլեբ Մաքսիմի՛չ... ի՛նչպես մոռանամ քեզ, քո երկու մասի սանրած մազերը, քո խոնարհ ժպիտները, քո զգույշ շարժումներն ու քայլվածքը: Դու քայլում էիր այնպես, որ չխանգարես Կառլ Կառլիչի հանգիստը և ձեռդ բերանիդ էիր դնում ա՛յնպես, որ դրասենյակ եկող բանվորները լսեն: Կամ ինչպես մոռանամ քո այն խոսքերը, որ ասում էիր երբեմն ուշացող ծառայողներին:

— Նելզյա, միլիյ, նելզյա․ պետք է ժամանակին գալ․ թե չէ Կառլ Կառլիչը— անհարմար է:

Ես, առանց այդ էլ Կառլ Կառլիչից վախենում եմ և աշխատանքի եմ գալիս բոլորից շուտ․ այդ ամենից ես այն կարծիքն եմ կազմել արդեն, որ բոլոր պետերը, երևի, բարկացկոտ են լինում․ հավանորեն, մտածում եմ ես, նրանց պաշտոնն այնպես է, որ և խիստ պիտի լինեն և խստապահանջ: Այդպես ինձ թվում է մանավանդ այն պատճառով, որ Կառլ Կառլիչը դուրսը՝ կնոջ, երեխաների հետ զբոսնելիս— շատ հանգիստ ու մեղմ մարդ է․ ժպտում է, երեխաներին գրկած իջեցնում կառքից․ սիրում է և որսի գնալ ճաշից հետո․ դաշտում որսում է լորեր ու այլ թռչուններ: Շատ եմ տեսել, թե ինչպես նա պաշտոնազգեստը

փոխած, երկարաճիտ կոշիկներով, որսապարկերն ազդրերին կախած անցնում է դաշտով, մտնում արտերը, բարձրանում բլուրները, իր սրճագույն պոչատ շունը միշտ հետը, որ սրընթաց սլանում է խփված որսի ետևից և, բռնելով, բերանով բերում մատուցում տիրոջը: Եվ Կառլ Կառլիչն այդ ժամանակ սիրով շոյում է շանը, փայփայում:

Ուրեմն նա չար չի, ինչպես ասում են:

Նա միայն խստապահանջ է դրասենյակում, ու ինձ թվում է, երևի, այդպես պետք է լինեն բոլոր պետերը: Եվ ես աշխատում եմ գրել լավ, մաքուր ու անսխալ, որ եթե արտագրածս ձեռն ընկնի մի օր—նըկատողություն չստանամ հանկարծ կամ չհեռացնի ինձ վատ գրելուս համար: Իսկ դա նշանակում է խայտառակություն:

Ի՜նչ ամոթ: Ի՞նչ կասեն մարդիկ․ հազիվ ծառայեց մի ամիս— հեռացրին: Ուրեմն չի կարողացել աշխատել: Որքա՜ն կուրախանա հորեղբայրս: Ի՞նչ կասեն ընկերներս, ի՞նչ կասի Եվան: Մանավանդ Եվան...

Եվան... Իմ դպրոցական ընկեր Եվան: Նա այժմ համարյա մեծ աղջիկ է դարձել: Դպրոցն ավարտելուց հետո հանել է դպրոցական հագուստները և հագել հասուն օրիորդի զգեստներ ու բարձրակրունկ կոշիկներ, որից բավական բարձրացել է իր սովորական հասակից․ ու ման է գալիս մի քիչ կոտրտելով․ գուցե այդ միայն թվում է ինձ, և դրա պատճառը թերևս բարձրակրունկ կոշիկներն են ու փոթ-փոթ, ուսագլուխներին ուռչող թևքերը, որ այնպես սազում են նրան․ իսկ երկար հյուսը նա երբեմն հավաքում և հերկալներով ու սանրերով ամրացնում է գլխի ետև: Այդ արդեն բոլորովին մեծ աղջկա կերպարանք է տալիս նրան: Եվ ինքն էլ լրջացել է այնպես:

Պաշտոն ստանալու օրից մենք հաճախ հանդիպում ենք իրար: Փողոցում պատահելիս՝ նա բարևում է, ժպտում և երբեմն առաջինն ինքն է մոտենում․

— Բարև, Մանասյան. ի՞նչպես ես:

Նա բարևելու եղանակն էլ է փոխել. բարևելիս հիմա՝ նաև գլխով է անում:

Ես էլ, իհարկե, ետ չեմ մնում նրանից. Թղթապանակը թևիս տակ, գլխարկս վերցնում եմ լուրջ ու մեծի պես բարևում. Թող բոլորը, և դրանց հետ Եվան, տեսնեն, որ ես այլևս դպրոցական չեմ, այլ 15-րդ գծամասի պաշտոնյա:

Բարևելուց հետո՝ Եվան առաջինն է հետաքրքրվում ինձանով. հարցնում է գործիս մասին, պաշտոնակիցներիս մասին, ռոճիկիս մասին: Ես պատասխանում եմ ուրախությամբ, փոքր ինչ պարծենկոտ, բայց միշտ լուրջ, իսկ նա շարունակ ժպտում է.— այնպե՛ս չարաճճին է այդ Եվան:

— Դու ինչո՞ւ ես ծիծաղում, Եվա,— հարցնում եմ:

Եվան նորից ծիծաղում է:

— Դու այնպես լուրջ ես պահում քեզ, կարծես մեծացել ես:

Ինչպես թե «կարծես». միթե՞ արդեն մեծ չեմ... Ես վիրավորվում եմ Եվայի այդ նկատողությունից, բայց, իհարկե, ոչինչ չեմ ասում, և մենք միասին խոսելով անցնում ենք փողոցով: Երբեմն ես նրան ուղեկցում եմ մինչև իրենց տուն. Նա զանազան պատմություններ է անում և, ի միջի այլոց, պատմում է, որ շուտով այս աշնանը գնալու է Թիֆլիս մորաքրոջ տուն. այնտեղ պիտի պատրաստվի և եկող տարի մտնի Հովնանյան դպրոցը:

— Իսկ դու պիտի մնա՞ս այստեղ,— հարցնում է նա:

Ես չգիտեմ ինչ պատասխանեմ:

— Առայժմ դեռ կմնամ. հետո, գուցե, ես էլ գամ:

— Այդ լավ կլինի,— ասում է Եվան:— Անպատճառ արի... է՛, ցտեսություն:

Ու շտապում է տուն, իսկ ես վերադառնում եմ Եվայի ուշադրությունից ուրախացած, վերացած. ա՛յ, մեր ընկերների մեջ Եվան միայն ինձ հետ է մտերիմ. մյուսներին բանի տեղ չի դնում, իսկ ինձ հետ խոսում է երկար, ման է գալիս փողոցում: Եվ այս հանգամանքն ինձ բարձրացնում է իմ աչքում: Իհարկե, եթե ես մյուսներից լավ չլինեմ, Եվան ինձ հետ ուրիշ կերպ կվարվի,— մտածում եմ ես:

Ճանապարհին պատահում է Սամսոնը: Ձեռները գրպանը դրած կանգնում է առաջիս ու ժպտում խորհրդավոր, խորամանկ ժպիտով, սև աչքերը խաղացնելով սպիտակ դեմքին:

«Ի՞նչ է պատահել սրան, ինչո՞ւ է ժպտում»:

— Ո՞րտեղից ես գալիս,— հարցնում է նա:

— Գրասենյակից:

Նա ժպտում է:

— Գրասենյակն այն կողմն է, ոչ թե այս կողմը:

Ճիշտ որ. ես գալիս եմ հակառակ կողմից: Այդ հանգամանքը ես մոռացել եմ:

Իմ շփոթությունը տեսնելով՝ նա ժպտում է դարձյալ և ասում, ձայնն իջեցնելով:

— Դու Եվային սիրո՞ւմ ես:

Սե՛ր... Ես չգիտեմ— սե՞ր է այն, որ մենք երբեմն հանդիպում ենք իրար և ես ուղեկցում եմ նրան մինչև իրենց տուն, թե՞ մի պարզ ընկերություն է դա, լավ վերաբերմունք, գուցե լավ ուշադրություն: Բայց— սե՛ր... ես այդ մասին չեմ էլ մտածել: Մի՞թե այդ բոլորը միասին կարող են կոչվել սեր:

— Ի՞նչ է, քեզ դո՞ւր չի գալիս, որ մենք խոսում ենք իրար հետ:

Սամսոնը ծիծաղում է:

— Ինչքա՛ն ուզում եք խոսեք, ինձ ի՛նչ,— ուսերը վեր է քաշում նա և շուրթերը սեղմում իրար:— Այնպես ծիծաղելի՜ եք...

— Ինչո՞ւ,— լրջանում եմ ես, մտածելով, որ ոչ մի ծիծաղելի բան չկա մեր արածի մեջ:

— Ոչինչ, ես հանաք եմ անում,— նորից ծիծաղում է Սամսոնը և մենք խոսելով գնում ենք տուն:

Իսկ երկու օր հետո, երբ ես գալիս եմ դրասենյակից, Սամսոնը կանգնեցնում է ինձ և ասում լուրջ, շատ լուրջ.

— Գիտես, ես այսօր պատահեցի Եվային. հարցրեց քո մասին. ասում է «ինչո՞ւ չի երևում»: Ուզում է քեզ տեսնել:

— Ճի՞շտ:

— Այո. ինչո՛ւ պիտի ստեմ:

Ես ցնծում եմ: Ահա— եթե ուզում է տեսնել, դա նշանակում է սեր է: Բայց եթե ուզում է տեսնել— ինչո՞ւ ինքը չի երևում: Երևի ամաչում է,— մտածում եմ և եզրակացնում, թե որքան համեստ աղջիկ է Եվան: Այո, երևի սերը հենց այդ է: Նա ուրեմն սիրում է ինձ, բայց ամաչում է խոսել: Ինձ թվում է, որ իսկական սերը, երևի, հենց այդպես է լինում: Ուրեմն սկսվում է, մտածում եմ ես մի թաքուն ահով և ուրախությամբ:

Եվ ահա, երբ ամռան երեկոն իջնում է խաղաղ, ես, գրպանումս ընտիր խնձորներ պահած, անհամբեր գնում-գալիս եմ Եվայենց տան շուրջը: Նրանց տունը, որ գտնվում է երկու փողոցի անկյունում, ցածրիկ պարսպի ետև, շրջապատված է ծառերով. իսկ պատշգամբի առջև այնքա՜ն ծաղիկներ կան: Փողոցում ես նույնիսկ բուրմունք եմ զգում, մի բուրմունք, որ կարող է հարբեցնել: Բայց դա, գուցե, միայն թվում է: Ցերեկով ես շատ եմ տեսել նրանց տունը և բակի ծաղիկները, թերևս այդ է պատճառը, որ ես բուրմունք եմ զգում... Բայց այժմ նրանց տունն էլ ինձ թվում է ամենագեղեցիկը, ամենալուսավորը բոլոր տների մեջ: Գնում-գալիս եմ թեթև, թեթև

քայլերով, և ամեն անգամ անկյունին մոտենալիս (այդտեղ անցնող սայլերը պարսպի պատից քարեր են գցել) կանգնել եմ լապտերի սյան մոտ և ոտս դնում ընկած քարի տեղը ու, ձգվելով, պարսպից նայում ներս— պատշգամբին, լուսամուտներին: Եվան չի երևում...: Պարսպի դուռը թակիչ ունի. չթակե՞մ արդյոք...: Ոչ, ավելորդ է. կարիք չկա, որ նրանց տնեցիներն իմանան իմ գալը. Եվան ինքն էլ, երևի, չի ցանկանա այդ: Բայց որքա՛ն կուզեի որ շուտ դուրս գար և տեսներ ինձ այստեղ՝ իրեն սպասելիս...: Իսկ դուրս գա թե չէ, ես անմիջապես կասեմ. «Եվա, եկել եմ», ու գրպանիս խնձորները կտամ նրան, ինչպես մի ժամանակ տալիս էի Սամսոնի քրոջը—Սիրանին: Այնուհետև... այնուհետև կխոսենք ու կզբոսնենք: Եվ հետո ես կհարցնեմ, թե ինչո՞ւ է կանչել ինձ:

Բայց,չգիտեմ ինչու,Եվան չի երևում: Մի՞թե մոռացել է, որ կանչել է ինձ: Թե՞ Սամսոնը խաբեց:

Ես գնում-գալիս եմ նորից և, վերջապես դուռը ճռռում է ահա և Եվան— մի գիրք ձեռին դուրս է գալիս փողոց: Սամսոնն ուրեմն ճիշտ էր ասում:— Ահա՛ Եվան... Բայց նա իմ կողմը չի նայում:: Ես ուզում եմ ճչամ, կանչեմ, որ եկել եմ, այստեղ եմ: Սակայն մի բան, ամոթը գուցե, զգացմունքների առատությունը թերևս խանգարում է ինձ մի առ ժամ. բայց և այնպես ասում եմ կամացուկ.

— Եվա՛:

Նա զարմացած նայում է ինձ ու բացականչում.

—Մանասյա՞ն:

Ես հազիվ եմ զսպում ուրախությունս.

— Եկել եմ...

Ու նետվում եմ առաջ:

Բայց Եվան կանգ է առնում զարմացած:

— Ի՞նչպես:

Նա կարծես լավ չի լսել իմ խոսքը:

— Եկել եմ։

— Ի՞նչ կա։ Ինչո՞ւ համար։

Այժմ զարմացողը ես եմ։

— Չէ՞ որ դու կանչել ես։

— Ե՞ս,— Եվան գլուխն օրորում է զարմացած, ու ծիծաղում է։

«Ուրեմն Սամսոնը կա՞տակ արավ», մտածում եմ և, այդ մասին ավելորդ չխոսելու համար, ասում եմ.

— Դե՛, ինչ որ է, Եվա. ա՛ռ, քեզ համար խնձոր եմ բերել... մեր ծառերից է։

— Շնորհակալ եմ,— ասում է Եվան և չի ուզում կարծես վերցնել խնձորները, թերևս անհարմար է համարում։ Բայց քանի որ գրպանից հանել, մեկնել եմ իրեն— չի ուզում վիրավորել ինձ, վերցնում է մեկը, միայն մեկը և ասում.

— Կվերցնեմ, բայց մյուս անգամ էլ էսպես բան չանես։

Ձայնից զգում եմ, որ նրա այդ խոսքերի տակ կա և թաքուն ուրախություն, որ ես ուշադիր եմ դեպի իրեն, որ մինչև անգամ մեր ծառերից խնձոր եմ բերել։ Ինձ ուրախացնում է մանավանդ այն հանգամանքը, որ նա չի մերժում։ Չէ՛, Եվան բարի սիրտ ունի... որքան էլ ասավ «մյուս անգամ էսպես բան չբերեմ», բայց ես կբերեմ։

— Դու տանձ սիրո՞ւմ ես, Եվա,— հարցնում եմ ես։

— Տա՞նձ. մենք տանձ ունենք. դու այդ թող...

Եվ մենք խոսում ենք զանազան բաներից ու ծիծաղում։ Ես նորից հարցնում եմ, թե մի՞թե իսկապես ինքը չի կանչել ինձ։

— Ոչ։ Ո՞վ ասավ, որ ես քեզ կանչել եմ։

Այլևս թաքցնելու կարիք չեմ տեսնում և ասում եմ.

— Սամսոնը։

— Սամսոնը՜ —, ծիծաղում է Եվան։— Ի՜նչ հիմար տղա է այդ Սամսոնը։ Շա՛տ հիմար է։ Կատակ է արել, երևի։

Ես Եվային հասցնում եմ ընկերուհու տուն և վերադառնում թեթև սրտով, մտածելով, որ Եվան լավ աղջիկ է, նրա համար պետք է մի լավ նվեր առնեմ։ Եվ գիշերն այնպես լավ է, գուրեկան։ Ուզում եմ բոլորին սիրել, բոլորին լավություն անել և բոլորին քաղցր խոսք ասել։ Նույնիսկ Սամսոնին, չնայած խաբել է ինձ, ուզում եմ սիրել... ներել և սիրե՜լ։

Բայց ահա հազիվ մի տասը քայլ եմ անում—Սամսոնը դուրս է գալիս Եվայենց պատի անկյունից։

— Սամսո՞ն. դու այստե՞ղ էիր։

Նա չփոթվում է։

— Ոչինչ. անցնում էի,— ասում է ակամա։

— Բա ասում էիր՝ Եվան կանչե՞լ է ինձ,— չեմ համբերում ես։

Նա չի պատասխանում։

Ես բռնում եմ նրա թևը։

— Թո՛ղ,— թափ է տալիս նա թևը և ճանապարհը ծռում։

— Սամսո՛ն, Սամսո՛ն,— կանչում եմ ես։ Բայց նա ետ չի նայում, և շուտով անհայտանում է խավարում։

Հասկանում եմ. նա ինձ խաբել—ուղարկել է Եվայի մոտ և ինքը ետևից եկել, որ ծիծաղի իմ անհաջողության վրա։ Նա կատակ է արել, որ հետո պատմի ընկերներին ու ծիծաղի։ Բայց նրա կատակը չունեցավ սպասված հետևանքը և, ընդհակառակը, Եվան ծիծաղեց ու «հիմար» անվանեց նրան։

Ահա՛ ինչու է տխուր Սամսոնը։

Բայց ես պատրաստ եմ ներել նրան ամենը և սիրել...

Իսկ Եվա՞ն... որքա՛ն բարի է Եվան, որքան սիրալիր։

Այդ գիշեր ես անկողին եմ մտնում ամենաերջանիկ զգացումներով։ Հիշում եմ Եվայի խոսքերը, նրա փոքրիկ ճերմակ ձեռները և նրա աչքերը, որ ճառագայթում էին մութի մեջ. ու երանության մեջ եմ զգում ինձ. աշխարհն այնպես քաղցր, այնպես լավ է թվում։ Մտածում եմ, որ այսուհետև մենք շուտ-շուտ կհանդիպենք միմյանց, ես դարձյալ խնձոր կտանեմ նրան, և մենք կխոսենք ու կզբոսնենք նրանց տան փողոցում...

Բայց դա եղավ մեր վերջին մտերիմ հանդիպումը։

XVII

ԱԶԱՎՈՐ ԳԻՇԵՐ ԵՎ ԱՆԾԱՆՈԹ ՏԵՂԵՐ

Ինչպես պայծառ երկնքից կայծակ տրաքի...

Այս խոսքը ոչ մի տեղ գուցե այնպես չի հարմարում, ինչպես այս դեպքում։ Ո՞վ կարող էր սպասել, որ իմ ուրախ երեկոն,—Եվայի հետ անցրած երանավետ ժամը— իմ խնդագին մտածումներն ապագայի մասին պիտի վերջանան մի մռայլ կոշմարով...

Ինչպես անամպ երկնքից կայծակ տրաքի։

Եվայի մասին երազելուց հետո՝ քնել եմ հանգիստ, ու քնի մեջ, լսում եմ՝ «Թըխկ-Թըխկ»... Թըվում է այդ մեր դուռն են ծեծում։ Բայց միայն թվում է, որովհետև երազի պես է։ Ապա քայլերի ձայն եմ լսում, խոսքեր տարօրինակ, և այդ բոլորը դարձյալ թվում է երազի պես, երազի մեջ։ Ես շրջվում եմ ավելի լավ քնելու համար։ Ես ուզում եմ քնել և ոչի՛նչ, ոչի՛նչ չլսել,— ա՛յնպես քաղցր է քունը... Ու մի առ ժամ կարծես, թվում է, ոչինչ չեմ լսում։ Բայց փոքր անց զգում եմ արդեն, ոչ թե լսում, այլ զգում եմ, թե ի՛նչպես են հրում ինձ։ Զգում եմ միաժամանակ, որ այդ մորս սովորական հպումը կամ շարժումը չի, երբ ուզում է զարթեցնել ինձ իր հարազատ ձեռի գգվանքով։ Ոչ, զգում եմ, որ սա մորս գորովոտ ձեռը չի, այլ մի կոպիտ ձեռի բիրտ ցնցում։ Այդ-

պես մեկ-մեկ զարթեցնում էր ինձ Սամսոնը քննությունների օրերին:

Այդ կոպտությունն ինձ դուր չէր գալիս և ես ասում եմ առանց աչքերս բանալու:

— Թո՛ղ...

Բայց ուսերիս ցնցումը շարունակվում է, և ես լսում եմ մորս մեղմ ձայնը․

— Սուրե՛ն, Սուրե՛ն...

Այդ ձայնը ոչ միայն մեղմ է. նրա մեջ զգում եմ և արտակարգ մի բան. մորս ձայնը դողում է ահաբեկ: Մի վատ նախազգացում է համակում ինձ— հիշում եմ եղբորս մահվան գիշերը— և ես բոլորովին սթափվում եմ քնից, աչքերս բանում եմ անմիջապես ու նստում անկողնիս մեջ: Բայց թվում է դարձյալ երազի մեջ եմ:— Մեր սենյակում կանգնած են թուրը կողքից կախ, սև բեղերով մի ծիգ մարդ, երկու ստրաժնիկ և մեր գզիր Ասատուրը. ստրաժնիկները հրացանով ու թրով, իսկ գզիրը՝ իր սովորական ճիպոտով: Նրանց մոտ կանգնած է հայրս՝ գիշերվա սպիտակեղենի վրա հին պիջակը քցած. կանգնել է անշարժ ու խեղճ, մի բան, որ երբեք չեմ տեսել. իսկ մայրս, մայրս իրեն կորցրած, բայց միժամանակ բռնկվելու պատրաստ, շտապ հագած զգեստներն է ուղղում:

— Հագնվիր,— ասում է ինձ թուրը կողքից կախած, սև բեղերով ծիգ մարդը, որ նայում է սեղանին դրած իմ թղթապանակը և արտագրության համար բերած գրությունները:

Ու մինչ ես հագնվում եմ, առանց իմանալու, թե ինչո՛ւ իմ թղթապանակը նայող թրավորը վերցնում է և իմ դասագրքերից մեկը, բանում է ու սկսում հանդիստ թերթել: Իսկ ստրաժնիկները՝ հրացանները ձեռներին, մերթ ինձ են նայում, մերթ թրավորին. գզիր Ասատուրն էլ ծվել-կանգնել է փայտի պես:

Ես զարմացած նայում եմ հորս ու մորս, նրանց դեմքից գոնե իմանալու, թե այս ի՛նչ է նշանակում: Բայց նրանք ավելի են զարմացած, քան ես: Ուրեմն նրանք նույնպես չգիտեն ի՛նչ է պատահել:

— Դու հո կանտորից հարկավոր թղթեր չե՞ս բերել,— ասում է հայրս կիսաձայն:

— Չէ,— պատասխանում եմ ես, մտածելով, թե մի՞թե սրանք թղթերի համար են եկել. և ի՞նչ թղթերի համար արդյոք:

— Էս ի՛նչ պատուհաս է,— շշնջում է մայրս դայբույթով,— աչքով կերան մեզ, աչքները տրաքի:

— Էստեղ մատնություն կա,— քիչ հետո ավելացնում է հայրս, մորս հանգստացնելու համար:

Այս կցկտուր խոսքերից և այն բանից, որ թրավորը նայեց իմ թղթապանակը, դասագիրքը և հիմա էլ նայում է Գոգոլի գրքերը,— ես զգում եմ, ո՛չ միայն զգում, այլ և հասկանում եմ, որ թե՛ թրավորը, թե՛ ստրաժնիկները և թե՛ մեր գզիրը եկել են ինձ համար:

Բայց ինչո՞ւ. ես ի՞նչ եմ արել:

— Նո՛ւ, գնանք,— ասում է թրավորը, երբ ես հագնված պատրաստ եմ, ու ինքը գնում է դեպի դուռը՝ իմ թղթապանակն ու Գոգոլը ձեռին:

Այդ ամենը դարձյալ թվում է երազի նման: Երազ է թվում և այն, որ ստրաժնիկներից մեկը բռնում է իմ թևից ու ասում. «Գնանք»: Երազ է թվում և այն, որ մայրս լաց է լինում, հայրս ուզում է գալ ինձ հետ, բայց նրան ետ են մղում, և մենք դուրս ենք գալիս փողոց, ու ես մտածում եմ ինչքան լավ է, որ քույրս՝ Վարդուշը և փոքրիկ Վաչոն չզարթնեցին և չտեսան այս ամենը: Լավ է նույնպես, որ ցերեկ չի և հորեղբայրս չի տեսնի ինձ այսպես, այս մարդկանցով շրջապատված:

Օ՜, տագնապալի ահավոր գիշեր, որ այնքան վիշտ բերիր մեր տունը:

Եթե ես ապրեմ հարյուր տարի, հավանորեն չեմ մոռանա այդ գիշերը:

Եվ այժմ ահա, երբ հեռվից-հեռու նայում եմ այդ գիշերին— տեսնում եմ քնած երկար փողոցներ՝ լիքը մութով ու մուժով: Երբեմն նվաղ մի լույս է ցոլում այս ու այն պատուհանից, վախեցած մի շուն կամ կատու կտրում-անցնում է փողոցը սրընթաց և անհետանում բակում կամ պարտեզում,— և այդ մութ, ամայի փողոցներով ահա քայլում է մի փոքրիկ տղա՝ երկու կողմը զինված ստրաժնիկներ, առջևից թրավոր մի մարդ, որի դերն ու պարտականությունը նա չի հասկանում. իսկ ետևից քաշ է գալիս գզիրը՝ ոտները քստացնելով:

Փոքրիկ տղան տնից փողոց դուրս գալով՝ թեթև սարսուռ է զգում, ու չի իմանում այդ վախի՞ց է, թե՞ խոնավությունից. բայց մութը և զինված ստրաժնիկներն ահաբեկում են նրան, և նա շարունակ մտածում է, թե ո՞ւր են տանում իրեն և ինչո՞ւ: Ու քանի գնում— նրա սարսափն այնքան մեծանում է, խորանում. աշխատում է հիշել իր մեղքերը, որ գործել է երբևէ.— մի՞թե կարող է պատահել, եկեղեցական ցույցերին մասնակցելու համար, կամ Մանուշի նշանը խանգարելու, թե՞... Բայց դրանք այնքան առաջ էին, մի քանի տարի առաջ: Ուրիշ ի՞նչ կարող է լինել ուրեմն:

Նա մտածում, մտածում է անվերջ ու չի գտնում մի հանցանք և մնում է մութ տարակուսանքների մեջ: Բայց և այնպես այդ ռոմանտիկ տղան սկսում է երազել անկարելի բաներ. հանկարծ ընկերները մի հրաշքով իմացած լինեն իր ձերբակալությունը և գան փայտերով զինված ու փախցնեն իրեն անտառ կամ հեռու մի տեղ:

Սակայն փողոցներ են անցնում, նրանք չկան:

Բայց քանի դեռ լսում է գզրի ոտների ձայնը— նա այնքան վախ չի զգում, իսկ երբ գզիրը գնում է

Նկ. Ս. Ռասմանյանի

Մութը և զինված ստրաժնիկներն ահաբեկում են նրան...

կես ճամբից (ըստ երևույթին նրա պարտականությու-
նըն է եղել միայն ցույց տալ մեր տունը) և նա մնում
է անծանոթ ստրաժնիկների հետ,— ահը դող է գցում
նրա սիրտը, թե չլինի հանկարծ սպանեն իրեն ու քիչ
է մնում լաց լինի: Բայց լաց չի լինում. հիշում է, որ
արդեն մեծ է, գրասենյակի պաշտոնյա է, և անհար-
մար է համարում լացը: Մի՞թե վայել է... Իսկ քիչ
հետո, երբ հազի ձայն է լսում— նա սրտապնդվում է և
քայլում համարձակ: Ինչո՞ւ...

Այդ իմ հոր հազի ձայնն է, մի ձայն, որ հազար
ձայնի մեջ կարող եմ ջոկել: Ես ուրեմն մենակ չեմ.
հայրս գալիս է ետևիցս և թերևս մի բան անի: Փախ-
ցնի՞... Ոչ, նա մենակ չի կարող փախցնել ինձ,
բայց կիմանա գոնե ու՛ր են տանում ինձ և կխնդրի,
որ թողնեն:

Քայլում եմ և մտածում զանազան բաներ:— Հան-
կարծ Եվան տեսնի ինձ այսպես. Երևի կմտածի, որ
գողություն եմ արել գրասենյակից կամ մի այնպիսի
վատ բան, որի համար ինձ տանում են պատժելու:
Բայց լավ է, որ մութն է և ոչ-ոք չի կարող ինձ տես-
նել:

Այս մտքերով ինձ տանում են պրիստավի գրա-
սենյակը, այնտեղից էլ մի ուրիշ սենյակ, ուր միայն
մի փայտե մահճակալ եմ տեսնում մոմի լույսով և
ուրիշ ոչինչ: Ստրաժնիկներից մեկը՝ մոմը ձեռին ինձ
ներս է անում ու դուռը դնում. հետո լսում եմ բա-
նալու դաժան պտույտը փականքի մեջ:

«Ինձ բանտարկեցին», մտածում եմ.— ուրեմն
հայրս չկարողացավ մի բան անել: Բայց գոնե ասեին
ինչո՞ւ համար: Մի՞թե առանց պատճառի մարդ են
բանտարկում: Այդ ինձ շատ տարօրինակ է թվում,
որովհետև տեսել եմ, որ երբ տանուտերը մարդ է բան-
տարկում, ասում է ինչո՛ւ համար: Իսկ այստեղ ին-
չո՞ւ չեն ասում: Իսկ իմ թղթերը, իմ գրքերն ինչո՞ւ

վերցրին: Ենթադրենք իմ դեմ բան կա, գրքե՞րս... Դա ի՞նչ է նշանակում:

Անթիվ հարցեր են ծագում մտքումս, անթիվ հարցեր եմ տալիս ինքս ինձ, ու ոչ մի պատասխան չեմ գտնում: Ժամեր են անցնում հուսահատության ու տխրության մեջ և ես, վերջապես, հոգնածությունից մեկնվում եմ չոր տախտին, սպասելով, թե ի՛նչ է լինելու: Ինձ թվում է հայրս նույնպես սպասում է դուրսը, որ մի բան անի: Ու այդ գիտակցությունը, թե հայրս սպասում է դուրսը— սրտապնդում է ինձ, և ես քնում եմ:

Առավոտյան ինձ զարթնեցնում են և տանում մի սենյակ, ուր պատին կախված է թագավորի պատկերը և մի օրացույց: Երկու հոգի նստած են մի մեծ սեղանի շուրջը. մեկն ակնոցով, փոքրիկ մորուքով ճաղատ մարդ է, որին ես առաջին անգամն եմ տեսնում, մյուսը ածիլված, կլոր երեսով և նույնպես անծանոթ: Իսկ երրորդը՝ երկար ճերմակ միրուքով մի ծերունի կանգնած է դռան մոտ, որ ինձ թվում է ծառա, այնքան վատ է հագնված: Երբ ես ներս եմ մտնում, նա ձեռն ուսիս դնելով ինձ մոտեցնում է սեղանին, իսկ ակնոցով ճաղատ մարդը հարցնում է անուն-ազգանունս: Ես ասում եմ:

— Դու ծառայում ես 15-րդ գծամասի գրասենյակո՞ւմ:

Ես գլխով եմ անում.— Այո:

— Դու սիրո՞ւմ ես ձեր պետին:

Տարօրինակ հարց: Ես նրանից ավելի շուտ վախենում եմ, քան սիրում: Ի՞նչ ասեմ, մտածում եմ և պատասխանում:

— Ես մի ամիս է ինչ ծառայում եմ:

— Մի ամի՛ս...

Մարդիկ իրար երեսի են նայում:

— Իսկ կարող ես ասել, թե ձեր ծառայողներից, բանվորներից, ո՞վ չէր սիրում ձեր պետին:

— Չգիտեմ... Նա ամենքի վրա էլ բարկանում է, — ասում եմ ես և զգալով, թե ինչ անհարմար բան եմ ասում, անմիջապես ընդհատում եմ ինձ:

Բայց ակնոցով մարդն իսկույն.

— Ո՞ւմ վրա, օրինակ... Ո՞ւմ վրա էր բարկանում:

Ես շփոթվում եմ և ասում.

— Շատերի:

— Կարող ես, օրինակ մի անուն տալ:

— Ես անուններ չգիտեմ, ես մի ամիս է ինչ ծառայում եմ: Դեռ չեմ ծանոթացել:

—Այդ թող և իմ հարցին պատասխանիր,— կտրում է ինձ ակնոցով մարդը:— Բանվորների մեջ ճանաչո՞ւմ ես մեկին, կամ մի քանիսին, որ չէին սիրում ձեր պետին:

Ես հիշում եմ բանվորների վերջին դժգոհությունը, հիշում եմ կարճահասակ Թուխ բանվորին, որ քիչ մնաց հարձակվեր Կառլ Կառլիչի վրա, ու ինչ-որ վատ հոտ եմ առնում այս հարցաքննությունից: Հիշում եմ և այն, թե ինչպես բոլորն ասում էին, որ Կառլ Կառլիչը խիստ, վատ մարդ է, որ ամեն մի չնչին բանի համար բանվոր ու ավագ է արձակում պաշտոնից, որ բանվոր ու ծառայող չի սիրում... բայց ամենից ավելի ես հիշում եմ կարճահասակ Թուխ բանվորին, և ինձ թվում է նրան մի վատ բան են ուզում անել: Եվ քննիչի հարցին պատասխանում եմ դարձյալ, որ այդպիսի մարդ չեմ ճանաչում, որովհետև ես մի ամիս է ի՛նչ ծառայում եմ:

Քննիչը, սակայն, իմ դանդաղ պատասխանից չի բավարարվում:

— Դու մի վախի, փոքրիկ, քեզ ոչինչ չի լինի: Ինձ ասել են, որ դու լավ տղա ես, կրթված, Գոգոլ ես կարդում, որ սուտ խոսել չգիտես. նո՛ւ, անկեղծ

ասա ինչ գիտես: Ձեր պետը ո՞ւմ հետ էր խիստ և ո՞վ էր նրանից դժգոհ:

Ասում է ակնոցով մարդը և ձեռը մտերմաբար դնում ուսիս.

— Ո՞ւմ հետ էր խիստ,— հարցնում եմ ես մըտածկոտ:

— Այո, այո,— ուրախանում է ակնոցով մարդը:

— Բոլորի հետ էլ խիստ է. բանվորների հետ էլ, գծի վարպետների հետ էլ, փոխադրիչների հետ էլ,— ասում եմ ես իրար ետևից և, նկատելով որ ածիլված մարդը, ըստ երևույթին՝ գրագիրը, գրի է առնում իմ խոսքերը, ես անմիջապես սթափվում, մտածում եմ, թե ինչեր եմ ասում. չէ՞ որ եթե Կառլ Կառլիչն իմանա, ինձ իսկույն գործից կհեռացնի:

— Լավ,— ասում է ակնոցով մարդը:— Իսկ ո՞վ էր ամենից շատ նրանից դժգոհ:

— Չգիտեմ: Ես մի ամիս է ինչ աշխատում եմ:

— Լավ: Իսկ սրանից մի քանի օր առաջ, երբ բանվորները աղմուկ բարձրացրին գրասենյակում, դու այնտե՞ղ էիր:

— Այո, ասում եմ ես, և նկատում, որ գրագիրը դարձյալ գրում է իմ պատասխանը:

— Կարո՞ղ ես ասել ո՛վքեր էին դրանք:

— Ոչ մեկին չեմ ճանաչում. ես մի ամիս է, որ աշխատում եմ:

— Լավ: Դու Արամ անունով բանվոր ճանաչո՞ւմ ես:

— Ոչ:

— Մամիկո՞ն:

— Ոչ:

Գրագիրը նորից գրում է իմ պատասխանները, իսկ դռան մոտ կանգնած ճերմակ միրուքավոր ծերունին տնքում է, հառաչում: Այդ ինձ տարօրինակ է թվում— նա ինչո՞ւ է հոգոցներ հանում, տնքում: Ակնոցով մարդը լռում է մի առժամ, կանաչ աչքերով

զննում է ինձ ոտից գլուխ, ապա սեղանի վրայից վերցնում է մի հին գլխարկ ու ցույց տալիս ինձ:

— Կարո՞ղ ես ասել ո՛ւմ գլխարկն է սա:

Ես գլուխս տարուբերում եմ.— Ոչ:

Նա դժգոհությամբ գլխով նշան է անում դռան մոտ կանգնած ծերունուն:

— Տարե՛ք:

Ինձ նորից տանում են իմ նախկին տեղը և, քիչ հետո, դռան մոտ կանգնած երկար մորուքով ծերունին հաց ու պանիր է բերում ինձ համար: Հացը դնում է առաջիս և ինքը հոգնած նստում թախտին՝ իմ դիմաց: Այստեղ, մոտիկից նայելով, ես նկատում եմ, որ նա թռչունի կլոր աչքեր ունի և կտուցի նման կեռ քիթ, որը կարծես ուզում է կտցել սպիտակ բեխերը, որ խառնվում են կրծքին փռված լայն միրուքին:

— Կեր, տղա ջան, կեր, սոված կըլես,— ասում է նա աչքերը փակելով, կարեկցանքով և մի այնպիսի հոգատար ձայնով, որ ակնոցավոր մարդու խստությունից հետո՝ մայրական քնքշություն է թվում ինձ:

Նրա այդ մեղմությունը, սրտացավությունը դուր են գալիս ինձ, սփոփում են ինձ, և ես մի անդիմադրելի պահանջ եմ զգում նրա հետ խոսելու, ու առաջին բանը, որ ասում եմ նրան, այն է լինում, թե ինչո՞ւ են ինձ բռնել:

— Բե՛գ,— երկարացնում է ծերունին,— քեզ՝ հեչ, քեզ կազատեն շուտով, եթե ասես, ով է սպանել նաչալնիկին:

— Ի՞նչ նաչալնիկ,— վեր եմ թռչում ես:

— Այ, ձեր Կառլ Կառլիչին:

— Կառլ Կառլիչի՞ն... Սպանե՞լ... Ո՞վ է սպանել:

— Էդ դու կիմանաս, որդի: Դու պիտի ասես:

Ու ծերունին իմ հետաքրքրությանը զիջելով, թե սրտացավությունից դրդված՝ պատմում է ինչպես են սպանել Կառլ Կառլիչին. և նրա պատմությունն այն

տպավորությունն է թողնում դարձյալ, ինչպես անամպ երկնքից կայծակ տրաքի: Եթե այդ պատմությունն աներ ուրիշ մեկը, ես հազիվ թե հավատայի. բայց ծերունու արտաքինն այնքա՛ն հավատ ներշնչող է և նա ա՛յնպես է հառաչում ու ծանր հոգոցներ արձակում: Իբր թե Կառլ Կառլիչը հենց երեկ երեկո, այսինքն այն ժամին, երբ ես ուրախ զրուցում էի Եվայի հետ,— տուն վերադառնալիս՝ կայարանի ճամբին հանդիպում է երկու հոգու. լսվում է մի քանի կրակոց, հետո ամեն ինչ լռում է, մարդիկ վազում են կրակոցի վրա— տեսնում են երկու հոգի վազում են դեպի դաշտ, իսկ Կառլ Կառլիչն ընկած է գետնին: Նայում են— արյունը գնում է գլխից. շարժում են— չէ, մեռած է խեղճը...

Ծերունու լայն մորուքը դողում է. նրա ձայնի մեջ այնպիսի տխրություն կա, որ թվում է ահա՛ պիտի արտասվի: Նա վերջացնում է կերկեր ու լիքն աչքերով նայում է ինձ:

— Հա՛, տղա ջան, սպանում են էսպես ու փախչում: Խեղճ մարդը կին ունի, երեխաներ...

Այս անգամ ծերունին թաշկինակը տանում է աչքերին:

Ես հուզվում եմ և էլ չեմ կարողանում հաց ուտել: Հենց միայն սպանության փաստը ինձ սարսափեցնում է, զարմացնում. ի՞նչ սիրտ պետք է ունենար մարդ, որ ձեռ բարձրացներ մի այդպիսի խիստ մարդու վրա, որ այնպիսի դիրք ուներ և այնպիսի պաշտոն, որ ինքը որսորդ էր և հրացան գցել գիտեր: Ես նախ զարմանում եմ սպանիչների համարձակության վրա, ապա խղճում եմ նրա կնոջն ու երեխաներին, որ ամեն օր իրենց սև փայլուն ու փայլատակող կառքով զրոսնում են կայարանի իրենց շենքից մինչև Կույսերի ձորը, մինչև Բաղդասարի աղբյուրը... Եվ, չգիտեմ ինչո՛ւ, խղճում եմ երեխաներին, որ հիմա պիտի տխրեն ու լաց լինեն... Ու,— տարօրինակ բան,

— ինձ մտահոգում է նաև այն, թե ի՞նչ պիտի անի հիմա կինը. կմնա՞ նույն տանը, կպահի՞ արդյոք կառքըն ու ձիերը, թե՞ կծախի... կամ ի՞նչ պիտի անի մարդու որսորդական հրացանը և որսի շունը,— մտածում եմ ես:

Իսկ ծերուկը, հոգոցներ հանելով ու տնքալով, շարունակում է.

— Բոլորն էլ խղճում են նրան, տղա ջան, բոլորն էլ: Մեղք էր, էնպես չի՞: Ով գիտի բանվորներից են սպանել, չէ՞,— ու ծերունին վշտահար նայում է ինձ:

Ես ուսերս վեր եմ քաշում.— Եսիմ...

Այս անգամ նա թռչունի կլոր աչքերը հառում է երեսիս:

— Ինչո՞ւ, տղա ջան. դու կիմանաս՝ ո՞վ էր հետըն ընկած, ո՞վ էր դժգոհ, ո՞վ էր նրան հայհոյում: Դու կանտորում աշխատում ես— կիմանաս... Խե՛ղճ մարդ, խե՛ղճ երեխաներ... Էն սուտ են ասում, թե նա բանվորներին չէր սիրում, ծառայողներին դուրս էր անում: Սուտ է, շատ էր սիրում... Խե՛ղճ մարդ... այնպես էր սիրում... .

Նա նորից թաշկինակը տանում է աչքերին:

Ես գլխի եմ ընկնում, որ սա էլ ակնոցավորի նման կարծում է, թե որպես գրասենյակի աշխատող, երևի, ճանաչում եմ սպանողներին և ուզում է իմանալ: Բայց իմ պատասխանները,— որ ես, իբրև մի ամսվա աշխատող՝ մարդ չեմ ճանաչում,— նրան չեն գոհացնում և նա շարունակում է.

— Սպանությունը տղա ջան, վատ բան է. չա՛տ: Սպանություն անողի հոգին էլ է դժոխք գնում, իմացողի—չասողի հոգին էլ: Դու մեղք ես, տղա ջան. անմեղ, փոքրիկ հոգիդ մեղք ա: Եթե բան գիտես—մի՛ թաքցնի: Մի սպասի ծեծեն, տանջեն—նոր ասես...

Ի՛նչպես թե «ծեծեն, տանջեն»... քանի անգամ կրկնեցի, որ ոչինչ չգիտեմ, ոչ մի բանվոր չեմ ճանաչում, իսկ նա շարունակում է... Ես բարկությունից

դողում եմ և քիչ է մնում բերած հացը գլխովը տամ, կամ այնպես եմ ուզում քացով տալ նրա փորին, նրա ներս ընկած փորին. բայց այն գիտակցությունը, թե դրա համար կարող են պատժել— զսպում եմ ինձ և կրկնում նեղացած, վրդով.

— Չգիտե՛մ, քեռի, չե՛մ իմանում: Ես ախր ո՛չ մի բան չեմ իմանում. ինձ հետ հո չե՞ն խոսել:

— Է՛հ, լավ չես անում, տղա ջան. լա՛վ չես անում,— օրորում է նա գլուխը վշտահար և նորից իր թռչունի կլոր աչքերը հառում երեսիս:— Լա՛վ չես անում: Եթե իմացածդ ասես, քեզ իսկույն կազատեն, կերթաս նորից ձեր տուն, հորդ, մորդ մոտ. էլի քո պաշտոնը, գործը կշարունակես: Բա՛... Ասա: Մարդ սպանողին չեն խղճա: Սպանվածին կխղճան. մեղք են նրա երեխեքը... Հը՞: Դե... ասա՛ տեսնենք...

Ես այլևս չեմ համբերում. ինձ համար էլ անըսպասելի՝ ոտս խփում եմ հատակին:

— Չգիտե՛մ, չգիտե՛մ, չգիտե՛մ,— ձայնս բարձրացնում եմ ես ու վրդովմունքից, զայրույթից լաց լինում:

— Դե լա՛վ, լա՛վ,— վեր է կենում նա տնքալով,— մի նեղանա, տղա ջան. մտածի, գուցե թե հիշես ո՛վ էր նրա թշնամին... Նստի, հացդ կեր ու մտածի:

Եվ նա հանդարտ դուրս է գնում ու դուռը փակում վրաս:

Ո՞վ էր նա: Ես մինչև այսօր էլ մտածում եմ, թե ո՞վ էր այդ խորհրդավոր ծերունին:

Նրա գնալուց հետո ես ոչինչ չեմ կարողանում ուտել, բայց մտածում եմ երկար, երկար: Եվ այն եզրակացության եմ գալիս, որ ինձ բռնել են ոչ թե հանցանքի համար, այլ նրա, որ ինձանից իմանան, թե ո՛վ էր մեր պետի թշնամին և ո՛վ կլինի նրա սպանողը:

Այդ երեկո ինձ տեղափոխում են բանտ:

Մեր բանտը... Այն օրից, երբ Վառոյին, Երանոսի հարսին և մյուս կանանց բանտարկեցին,— մեր բանտը զարմանալի հետաքրքրում է ինձ. ուզում էի տեսնել ի՛նչ կա նրա ներսը, ի՛նչպես են ապրում մարդիկ, ի՞նչ են ուտում, որտե՞ղ են քնում և արդյոք լույս վառո՞ւմ են այնտեղ, սեղան ունե՞ն... Թե՞ բոլորը գետնին են քնում ու գետնին հաց ուտում:

Եվ ես ահա այդ բանտումն եմ: Նրա փոքրիկ կամերներից մեկում: Բայց ես մենակ չեմ. ինձ հետ են և երեք փոքր, համարյա իմ տարիքի տղաներ: Եթե ապրեմ նույնիսկ հարյուր տարի— ես երբեք չեմ մոռանա այդ տղաներին, նրանց խնդուն զվարթությունը, նրանց զարմանալի համարձակությունն ու խելքը: Չեմ մոռանա առանձնապես այն նիհար, բայց մեծ գլխով ու խոշոր աչքերով տղային, որին ընկերները չգիտեմ ինչո՛ւ, Մանգո-Բալաս էին ասում. մյուսի անունն էլ տարօրինակ էր— Շուռ-տու-Գեվո, իսկ երրորդը— Աչիկն էր, երկուսից էլ փոքր, բայց երկուսից էլ ճարպիկ:

Ներս եմ մտնում թե չէ, նրանք անմիջապես շրջապատում են ինձ և մի քանի րոպեում մտերմանում: Իմանալով ինչո՛ւ համար եմ բանտարկվել՝ երեքը միասին ձեռնին թափ են տալիս:

— Էդ հե՛չ: Բռնել են՝ բան իմանան, շուտով կթողնեն: Մենք էլ կարծեցինք գողության համար է:

Իսկ իրենք նստած են գողության համար. ու այդ մասին խոսում են ա՛յնպես զվարթ, կատակներով, ասես բանտում չեն: Այդ թերևս նրանից է, որ, իրենց ասելով, բանտի սովոր են. շատ անգամ են նստել ու ազատվել, կամ, ինչպես Մանգո-Բալասն է ասում, «ծլկել». այս անգամ նրանց բռնել են մեր կայարանում՝ վագոնից ճամպրուկներ գողանալիս: Հազիվ իջնում են վագոնից՝ ամեն մեկը մի ճամպրուկ առած,— մի մարդ վրա է հասնում: «Ո՞ւր եք տանում»: Սրանք պատասխանում են. «Տերը տվեց իջեցնելու, հիմա ին-

քըն էլ կգա»: «Տերը ես եմ», ասում է մարդը: Ու նրանց բերում են մեր բանտը:

— Բայց ոչինչ, էստեղից էլ կծլկենք,— ասում են նրանք այնպես, կարծես թաքնված են և հիմա կարող են դուրս գալ ու փախչել:

Բոլորից սրտաբացը Մանգո-Բալասն է. նա չարունակ խոսում է և զարմանալի պատմություններ անում իրենց կյանքից: Պատմում է, օրինակ, թե ինչպես քաղաքի շուկայում մեկից «թռցրել» են մի փութ յուղ և մյուս օրը էլի ծախել տիրոջ վրա՝ արդեն ուրիշ ամանով: Մի կնոջ գրպանից հանել են պորտման— մեջը լիքը նկարներ է եղել... Պատմում է Մանգո-Բալասն իրար ետևից և ինքը ծիծաղում իր պատմությունների վրա: Երբեմն ընկերներն ուղղում են նրան կամ լրացնում և նույնպես ծիծաղում իրենց թե՛ հաջողությունների և թե՛ անհաջողությունների վրա: Ինձ զարմացնում է, որ դրանք այդ տարիքում այդքան բան գիտեն կյանքի մասին, այդպես ճանաչում են կյանքը. իսկ ես, որ դպրոց եմ գնացել, գրքեր եմ կարդացել— ոչինչ չգիտեմ համարյա: Նրանք ոչ մի բոպե չեն տխրում. կա՛մ եղջերուներ, այծեր են չինում հացից ու ներկում, կա՛մ կատակներ են անում և իրար զվարճացնում. իսկ ինձ չարունակ սիրտ են տալիս, թե ոչինչ չի լինի և խոստանում են, դուրս գալուց հետո, ընկերացնել ինձ, եթե ի հարկե, ցանկանամ աշխատել իրենց հետ:

— Ես որ ազատվեմ, սովորելու պիտի գնամ,— ասում եմ ես լուրջ:

— Ի՛ի՛... Սովորելը տխուր բան է,— ասում է Մանգո-Բալասը:— Ինչքան սովորես՝ մե՛կ է: Արի մեր դրագիրը դառ, կուզես ռոճիկ կտանք, կուզես ապրանք: Մի օր բանտ կնստես, մի օր գողություն կանես, էսպես ավելի հետաքրքիր է:

Որքան էլ զվարճեցնում են, զբաղեցնում, այնուամենայնիվ իմ վիշտն ու խոհերն ինձ չեն թողնում:

Ես դեռ շշմած եմ և չեմ կարողանում հավատալ Կառլ Կառլիչի սպանությանը: Այդ ամենը թվում է սուտ, հնարովի բան կամ երազ: Ես մտածում եմ նաև մերոնց մասին, ընկերներիս մասին, Եվայի մասին: Երևակայում եմ, թե որքա՛ն անհանգիստ է հիմա մայրըս, կամ ինչպես է չարախնդում հորեղբայրս. իսկ ընկերներս— Սամսոնը, Սեդրակը, Ապոստոլ Կարամանիդին, Աշոտ Զարդարյանը, Մելիտեն— մի՞թե կարող են վատ բանում կասկածել ինձ, մասնակից համարել այդ սպանությանը, եթե դա իսկապես, սուտ չի: Եվ ինձ թվում է, որ նրանցից և ոչ մեկը վատ չի մտածի իմ մասին. ընդհակառակը, նրանք հիմա, երևի, միջոցներ են խորհում, թե ի՛նչպես ազատեն ինձ... Իմ ընկերները՛: Բայց ինձ առանձնապես հետաքրքրում է Եվայի վերաբերմունքը.— արդյո՛ք իմացած կլինի՞, որ ես ձերբակալված եմ և բանտում եմ, և եթե իմանա՝ կտխրի՞ արդյոք, թե՞ սովորականի պես կնստի իրենց պատշգամում ու գիրք կկարդա կամ թևանցուկ կզբոսնի ընկերուհիների հետ. ես ա՛յնպես կուզեի իմանալ նրա վերաբերմունքը. կարո՞ղ է արդյոք կասկածել ինձ կամ վատ բան մտածել իմ մասին: Երբեմն ինձ թվում է, որ, այո, կարող է հանկարծ կասկածել. լավ չի լինի՞ այդ դեպքում մի նամակ գրել, որ ես անմեղ եմ, որ ինձ բռնել են միայն բան իմանալու, սակայն ես՝ ոչի՛նչ չգիտեմ...

Բայց ամեն անգամ, երբ ես տարվում եմ խոհերով, տղաներն իմ մտքերն իսկույն ցրում են իրենց խաղերով ու կատակներով.— աթուրմա են խաղում, գլխկոնծի են տալիս կամ երեքն իրար ուսի բարձրանալով՝ պատի վերին մասերում մակագրություններ են անում ածուխով ու մատիտով. երբեմն, զարմյալ միմյանց ուսի ելնելով, նայում են լուսամուտից դուրս և շվվացնում երկու մատով. իսկ հաճախ այնպիսի աղմուկ են բարձրացնում, որ պահակը բարկացած նկատողություն է անում անցքից.

— Է՛յ, պետրուշկաներ, կամա՛ց:

Տղաները, երեքը միասին անմիջապես ուղղվում են, ձեռնին դնում քուներին և պատիվ տալիս զավեշտական դիրքով ու շարժումներով, որ պահակն ինքն էլ ծիծաղում է։

— Պետրուշկանե՛ր. պետրուշկանե՛ր...

Բանտ փոխադրվելուս հետևյալ օրը պահակը մոտենում է մեր դռան անցքին և հայտնում, որ հայրս ուզում է ինձ տեսնել։

Հայրս ուզում է ինձ տեսնե՜լ... Հենց միայն այդ լուրը սիրտս լցնում է անասելի ջերմությամբ. հայրս իմ աչքում բարձրանում-դառնում է ամենալավ սրտի տեր մարդը, որ երբևիցե եղել է աշխարհում։ Եվ երբ նեղ միջանցքով պահակն ինձ առաջնորդում է դեպի դուռը, ես մտածում եմ՝ հայրս ինձ կհամբուրի՞, թե՞ ոչ. նա երբեք ինձ չի համբուրած, բայց չգիտեմ ինչո՞ւ, այս անգամ, ես մտածում եմ հորս համբույրի մասին։ Սակայն, երբ տեսնում եմ նրան երկաթե պատնեշի այն կողմը՝ մի վերմակ ու բարձ ձեռին, ինձ թվում է նրանից լավ հայր չկա։ Ինձ տեսնելուն պես՝ նա անունս տալիս է, վերմակը բարձի հետ դնում հատակին ու ձեռները տարածում, որ ինձ գրկի, բայց երկաթները չեն թողնում. մյուս կողմից պահակի ներկայությունը շփոթում է նրան, և նա կոշտ ձեռքը տանում է դեպի աչքերը։ Չգիտեմ՝ բանտային միջավայրից թե զգացմունքների առատությունից նա իսկույն չի կարողանում խոսել։ Իսկ երբ խոսում է, նրա առաջին խոսքը լինում է.

— Մերդ ա ղրկել,— և նա վերմակը, բարձը ու մի փոքրիկ կապոց տալիս է ինձ։— Գիշերները ծածկըված քնի, չբացվես...

Ես հարցնում եմ երեխաների մասին, մայրիկիս մասին, ընկերներիս մասին։

— Լա՛վ են, լա՛վ են. շատ բարով են անում։ Դու էն ասա՝ ե՞րբ են քեզ ազատում։ Ասում են քեզ քննել, անմեղ են հանել, հա՞...

— Էդ մասին չի կարելի,— ասում է պահակը։

Խեղճ հայրս շփոթվո՞ւմ, թե՞ վախենում է— էլ չի ըմանում ինչ խոսի։ Բայց ես ա՛յնքան ուրախ եմ. նա մենակ կարծես դրսի աշխարհը բերել է ինձ. Նրանից առնում եմ մեր տան հոտը, մեր դաշտի բուրմունքը...

Մենք խոսում ենք դարձյալ զանազան բաներից և նա հեռանալիս սիրտ է տալիս ինձ։

— Չվախենա՛ս, Սուրեն ջան. եզնիքը կծախեմ— քեզ կազատեմ...

Հայրս առհասարակ դժվար է արտահայտում իր հայրական զգացմունքները, և ես մինչև այն կարծիքի եմ եղել, որ նա սառն է, նման չի երբեք ուրիշ հայրերի, որ համբուրում են իրենց երեխաներին, բայց այսօր նրա խոսքը հուզում է ինձ մինչև սրտիս խորքը,— ուրեմն նա ա՛յնքան է սիրում ինձ, որ, ինձ ազատելու համար, պատրաստ է եզներն անգամ ծախել։

«Եզները կծախեմ՝ քեզ կազատեմ»... Հորս այս խոսքերը երկար, երկար հնչում է ականջիս և հույսեր վառում սրտումս։ Այդ խոսքերը սրտապնդում են ինձ, և ես էլ չեմ վախենում։ Իսկ տղաներն իմանալով՝ հայրս ուզում է եզները ծախել՝ ինձ ազատելու— խորհուրդ են տալիս հիմա չազատվել։

— Ավելի լավ է, սպասի միասին ազատվենք,— ասում է Մանդո-Բալասը,— մենք քեզ գործ կտանք. մեզ հետ ավելի շատ կաշխատես, քան գիր անելով...

Բայց շուտով այնպես է պատահում, որ ո՛չ հայրս է ստիպված լինում եզները ծախել, ո՛չ էլ տղաների ցանկությունն է կատարվում։

Հենց մյուս օրը բանտի հսկիչը— Թրով, ուսադիրներով մի չեչոտ մարդ, երեսը դեմ է անում դռան անցքին և, ազգանունս տալով, պատվիրում է՝ անկողինս հավաքեմ, դուրս գամ։

— Ո՞վ գիտի ազատում են,— ասում է Մանդո-Բալասը։

— Ի՞նչ գիտես, գուցե թե ուրիշ բանտ են տանում,— ավելացնում է Շուռ-տու-Գեվոն:

Ես աշխատում եմ հորս բերած վերմակն ու բարձը փաթաթել:

— Էնպես հավաքի, մեզանից բան չտանես,— ասում է Աշիկը:

— Եթե պտի ազատեն՝ մի գնա,— ծիծաղում է Մանգո-Բալասը:

Մինչ ես անկողինս կհավաքեմ՝ հսկիչը նորից է գալիս.

— Ի՞նչ է, տղա. ինչո՞ւ ես այդպես դանդաղ շարժվում. չլնի՞ չես ուզում ազատվել:

Այս խոսքերն այնպես են հուզում ինձ, որ ուրախությունից չեմ կարողանում խելապես անկողինս հավաքել, այսինքն՝ բարձս փաթաթել վերմակի մեջ ու կապել, մինչև Մանգո-Բալասն ու Աշիկը չեն օգնում ինձ: Իսկ երբ պատրաստվում եմ դուրս գալ, նրանք «ափսոսում» են, ձեռս սեղմում, իսկ Մանգո-Բալասը հացից շինած իր եղջերուներից մեկը տալիս է ինձ «հիշատակ», և ես որոշում եմ տանել այն քրոջս՝ Վարդուշին ու Վաչոյին նվեր: Այ կուրախանան հա՛... Դուռը բանալիս՝ տղաները նորից ցանկություն են հայտնում, որ ընկերանամ իրենց, երբ դուրս կգան:

— Չմոռանա՛ս, կպասես մեզ:

— Հլա՛-հլա՛,—ասում է հսկիչը,— դուք էստեղից չեք ազատվի, դուք մի պայմանավորվեք:

Որքան էլ հսկիչը շնորհավորում է իմ ազատությունը, բայց և այնպես տակավին մի կասկած կա ներսս, թե գուցե չազատեն, գուցե հսկիչն ինքը չգիտի:

Բայց սխալվում եմ,— ահա՛ բանտի գրասենյակը, ահա՛ վերադարձնում են Գոգոլի գրքերը, իմ թղթապանակը, ահա՛ իմ ծանոթ փողոցը, ահա՛ ազատ շրջող ծանոթ մարդիկ...

Ողջո՛ւյն քեզ, արև...

XVIII

ԴԵՊԻ ԱՆՀԱՅՏ ՀԵՌՈՒՆ

Իմ վերադարձն, իհարկե, մեծ անակնկալ եղավ մերոնց համար— բանտարկությանս պես անսպասելի ու հանկարծ:

Կեսօր է ահա. վերմակը մի թևիս տակ, եղջերուն մյուս ձեռքիս բռնած, ամաչկոտ, ներքուստ ուրախ, վերադառնում եմ տուն և հրճվում այն մտքից, թե որքա՜ն կզարմանան մերոնք և ինչ ուրախությամբ կվազեն ինձ ընդառաջ.—հայրս, մայրս, քույրս՝ Վարդուշը և փոքրիկ Վաչոն: Եվ ես եղջերուն կնվիրեմ Վարդուշին ու կհամբուրեմ Վաչոյին:

Բայց դեռ մեր տան անկյունը չհասած՝ ես աղմուկ եմ լսում, և այդ աղմուկի մեջ պարզ ջոկում եմ հորս, հորեղբորս, պապիս, մորս ու տատիս ձայները: Տատս ու մայրս խոսում են բարակ ձայներով և, ինչպես միշտ, նրանց ձայնը կորչում է տղամարդկանց ձայների մեջ, որ հնչում են բարձր ու բորբոքված:

— Բա ի՞նչ պտի անեմ, պտի հնձեմ,— ասում է հայրս:

— Իրավունք չունե՛ս,— կտրում է պապս,— իրավունք չունես:

— Հնձե՛ս... Դա քու տեղը չի, որ հնձես,— լսվում է հորեղբորս հեգնանքը:— Հերու հնձեցիր— հերի՛ք է:

— Պոլ հնձեմ, հենց քու ջիգրու պըտի հնձեմ,— կրկնում է հայրս:

Ես կանգ եմ առնում վերմակը թևիս տակ, եղջերուն ձեռիս:

Իմ պայծառ ուրախությունը պղտորվում է:

Նորից բաժանքի կռիվ է: Եվ, ձայներից ու խոսելու եղանակից դատելով, երևում է, որ կռիվն այն շրջանումն է արդեն, երբ սովորաբար անցնում են հայհոյանքի: Բայց իմ երևումը հանկարծ,— զարմանալի բան,— մոգական ազդեցություն է ունենում. լեզվակռիվը դադարում է անմիջապես, ինչպես դանակով կտրես: Թերևս դրա պատճառը մայրս է լինում, որ վրդովմունքը ուրախ մի ճիչի փոխելով՝ ձեռները պարզած նետվում է դեպի ինձ: Հայրս նույնպես առաջ է գալիս: Մայրս համբուրում է ինձ և ուրախությունից լաց լինում: Իսկ հայրս, իր բռնկումը հազիվ զսպելով, ասում է միայն. «Այ լա՛վ արիր եկար»... Տատս նույնպես գրկում է ինձ ու համբուրում: Քույրս ու եղբայրս պտտվում են շուրջս և եղջերուն, կարմիր ներկած եղջերուն համարյա խլում ձեռիցս: Պապս տերողորմյան քաշելով մնում է իր տեղը, իսկ հորեղբայրս երեսը շրջում է ու մտնում ներս, և ես պատըշգամբի առջևից անցնելիս՝ լսում եմ, թե ինչպես նա ասում է կնոջը— Սանամ-գիզուն.

— Կատրեժնին եկավ...

Այդ խոսքը փշրում է իմ ուրախության մնացորդը, և այնուհետև որքան էլ աշխատում եմ նշանակություն չտալ,— չեմ կարողանում, որքա՛ն էլ մայրս աշխատում է հյուրասիրել ինձ ճվածեղով և ուրիշ ուտելիքներով, որքան էլ քույրս՝ Վարդուշը և փոքրիկ Վաչոն հրճվալից ուրախությամբ նայում են եղջերուին կամ խնդուն դեմքերով դիտում ինձ, այնուամենայնիվ հորեղբորս խոսքը չի հեռանում մըտքիցս: «Կատրեժնին եկավ»... Զգում եմ այդ խոսքի բովանդակ ծանրությունը, նախատինքը և վարկաբե-

կող իմաստը: Գիտեմ, որ «կատրեժնի» ասում են մարդասպանին, գողին և ամեն տեսակ ավազակի, որոնց քշում են հեռու երկիր— բանտ կամ աքսոր: Ուրեմն նա ի՞նչ է համարում ինձ— սպանության մասնակի՞ց, թե՞ ա՛յնքան վատ տղա, որ արժանի եմ բանտի, աքսորի...

Այդ խոսքի տպավորությունն այնպես է ճնշում ինձ, որ քրոջս ու եղբորս հրճվանքին ժպիտով, մի հասարակ ժպիտով անգամ չեմ կարողանում պատասխանել և մորս հարցին, թե ինչո՛ւ տխուր եմ, պատճառաբանում եմ հոգնածությամբ. գիշերը չեմ քնել:

«Կատրեժնի՛»... Ուրեմն այսուհետև ինձ այդպես պիտի անվանեն, մտածում եմ ես, և այդ բառը շիկացած շամփուրի պես դառնում է ուղեղիս մեջ, դառնում է անվերջ:

Սրա վրա ավելանում է շուտով և այն, որ մերոնք սկսում են պատմել, թե ինչո՛ւ էին կռվում,— պապս չի թողնում, որ հայրս սարի խոտատեղը հնձի, իսկ հայրս պնդում է, որ պետք է հնձի:

— Նա իրավունք չունի ինձ խոտի տեղից զրկելու,— ասում է հայրս, խոսքն ավելի ուղղելով բացակա պապից, քան ինձ:— Կամ իմ բաժինը պըտի տա, կամ կերթամ էդ կհնձեմ...

Սովորական պատմություն, որ ուրիշ անգամ վրդովում էր ինձ, զայրացնում, բայց այսօր բոլորովին չի հուզում: Այլ, ընդհակառակը, տխրեցնում է միայն. և ես նեղանում եմ, որ ինձանով չեն զբաղվում, այլ խոսում են խոտի մասին, կռվի մասին: Մայրս շուտով հասկանում է տրամադրությունս և խոսքը փոխում է.

— Զթողին մի կարգին ծառայե՛ս,— ասում է նա,— աչքով կերա՛ն: Մի տեղ ըլի գնա՛ս-հեռանա՛ս սրանց աչքից...

Նախաճաշելուց և մերոնց հետ խոսելուց հետո՝

ես դուրս եմ գալիս շրջելու և ընկերներիս հանդիպելու։

Որքան բանտում կարոտում էի մերոնց և բոլորին, բայց հիմա, անհայտ է ինչու, ես տխրում եմ․ ես քայլում եմ ամաչելով․ թվում է՝ մարդիկ նայում են ինձ օտարոտի հայացքով, թվում է՝ չեն ասում, բայց բոլորի մտքում էլ պտտվում է «կատորժնի» բառը, և զգում եմ, որ ուրիշ կերպ էլ չեն կարող նայել, որովհետև մեր գյուղաքաղաքի բազմաթիվ նախապաշարումներից մեկն էլ այն է, որ երբ մեկը բանտարկվում է— նա դառնում է կասկածելի, արատավոր։

Եվ դա շուտով երևում է։

Ես գնում եմ ընկերներիս հանդիպելու։ Այնպես եմ ուզում տեսնել նրանց,— Սամսոնին, Սեդրակին, Աշոտին, Ապոստոլ Կարամանիդուն, Մելիտեին... Չեմ ուզում գնալ նրանց տները, այլ այն փողոցը, գլխավոր փողոցը, ուր հաճախ լինում են նրանք։

Եվ հազիվ մի հիսուն քայլ եմ անում— հանդիպում եմ Եվային։ Բարձրակրունկ կոշիկներ հագած գալիս է վերևից, ըստ երևույթին իրենց տնից։

Որքան էլ հագուստը փոխած— դեռ հեռվից ճանաչում եմ նրան․ նա քայլում է դարձյալ մեծ աղջկա նազանքներով, կոտրտվելով․ ավելի շուտ ուզում է նմանվել մեծ աղջկա։

Ես պատրաստվում եմ գլխարկ վերցնել և ուրախ բարևել նրան, ինչպես անում են բարեկիրթ մարդիկ օրիորդի հանդիպելիս․ բայց մտածում եմ, որ այս դեպքում բարևը հասարակ բան է․ բանտարկությունից հետո, այսքան օր իրար չտեսնելուց հետո՝ միայն բարևե՞լ․ նույնիսկ ամոթ է․ այդպես կարող են անել անծանոթները, իսկ մե՞նք...

Ու ես որոշում եմ և՛ բարևել և՛... Ու դեռ հեռվից ժպտում եմ նրան։ Նա տեսնում է ինձ, բայց

ինչո՞ւ հանկարծ այն կողմն է նայում։ Ի՞նչ կա այնտեղ։

Մոտենալով՝ ես գլխարկս վերցնում եմ, բայց նա դարձյալ ասես չի տեսնում ինձ․ նայում է դեպի աջ․ արդյոք նրա ուշադրությունն գրավվա՞ծ է այնտեղ կռվող տղաներով, թե՞ միտքը տարված է ուրիշ բանով։

— Բարև՛, Եվա,— ասում եմ ես։

— Վա՛յ, Մանասյա՛ն,— ասում է ցրված, զարմացած և էլի շուրջն է նայում։ Կարծես խուսափում, թե ամաչում է։

Իսկ ես շարունակում եմ ուրախ․

— Ես գիտես, Եվա, բանտից էսօր դուրս եկա․— Անմեղ էի,— պարզեցին։ Էս երկու օրը միշտ հիշում էի քեզ․ ուզում էի նամակ գրեմ...

— Նամա՞կ,— զարմանում է նա։— Ի՛նչ կարիք կար, Մանասյան։

Նրա ճերմակ ու բարակ ձեռները, նրա փափուկ ձայնը, որով ասում է «Մանասյան», հիշեցնում են դպրոցը, բայց նա, թվում է, խուսափում է․ աչքերը կամ խոնարհում է կամ արագ դարձնում այս ու այն կողմ։ Ի՞նչ է պատահել։

— Դու կարծես անհանգիստ ես, Եվա։

— Ոչ, ընդհակառակը։

— Բա ինչո՞ւ այդպես ես։

— Ի՞նչպես,— ասում է նա դարձյալ ցրված, ու կարմրում է։

— Ես երազում քեզ տեսա կարմիր շորեր հագած,— ասում եմ ես։— Դու ասում էիր «Մանասյան...»։

Եվան ժպտում է զուսպ ու փշրված ժպիտով և էլի շուրջն է նայում, կարծես անհամբեր սպասում է մեկին կամ ուշանում է մի տեղից։

— Դու տեղ ես շտապո՞ւմ, Եվա։

Եվան կարմրում է և կոշիկի ծայրով գետինը քանդում:

— Այո:

Նա այդ ասում է դժվարությամբ, առանց ինձ նայելու:

— Դե գնա,— ասում եմ ես կոտրած սրտով և շարունակում ճամպաս: Եվ ինձ թվում է իմ այդ տխուր ու դժգոհ տոնից Եվան կսթափվի ու ձայն կտա «Մանասյան», ապա կմոտենա մեզ ու սիրող խոսքերով, ժպտալով... Բայց նա գնում է, գնում առանց ետ նայելու:

Փողոց դուրս գալիս՝ ինձ թվում էր, թե ահա բոլորը կզարմանան ինձ ազատ տեսնելով ու կհետաքրքրվեն, թե ի՛նչեր են հարցրել ինձ, բանտը ի՞նչպես էր, ի՞նչպես եմ ապրել այնտեղ, վախեցե՞լ եմ, թե՞ ոչ: Եվ ամենից ավելի իմ ընկերները: Բայց հանկարծ Եվան այդպես անտարբեր...

Ես տխուր շարունակում եմ ճամպաս և ինձ թվում է, թե բոլոր նայվածքներն ու հայացքները նույնն են, ինչ որ Եվայինը: Եվայի վերաբերմունքից հետո ինձ հասկանալի է արդեն մարդկանց անտարբերությունը, թե ինչո՛ւ նրանք չեն զարմանում ինձ տեսնելիս: Եթե Եվան չզարմացավ, չը հետաքրքրվեց,— մյուսներն, իհարկե...

Այս մտքերով գնում եմ, ավելի շուտ քայլերս ինձ տանում են դեպի կայարան, երբ մեկը թևս բռնում է հանկարծ:

— Սուրե՞՛ն... էդ ե՞րբ ես դուրս եկել...

Առջևս կանգնած են երեք հոգի՝ մեր գծամասի բանվորներից, որ, ինչպես երևում է, նոր են վերադառնում աշխատանքից՝ պիջակներն ուսներին գցած: Ես նրանց ճանաչում եմ միայն դեմքով, բայց ծանոթ չեմ: Նրանք շրջապատում են ինձ և, մեկը-մյուսին ընդհատելով, հարցեր են տալիս. հարցեր, որոնց պատասխանը չեմ կարողանում հասցնել: Ամե-

նից առաջ հարցնում են— ի՞նչպես են բռնված ընկերները— Արամը, Մամիկոնը: Ես այդ Արամին ու Մամիկոնին նույնպես չեմ ճանաչում:

— Դու նրանց չե՞ս տեսել:

Ես բացատրում եմ նրանց, որ ես եղել եմ երեք փոքրիկ տղաների հետ, իսկ այդ Արամին ու Մամիկոնին չեմ տեսել:

— Ափսոս տղերք,— ասում է բանվորներից մեկը, որի ծնոտն այրված է, և այրված տեղը փայլում է այնպես, կարծես հղկված է ու յուղած:— Ափսոս, մի շան համար պըտի կորչեն:

Մյուսները նույնպես ափսոսում են, և նրանց խոսքերից, շարժումներից ու տխուր նայվածքներից զգում եմ, որ սրանք ավելի բան գիտեն, քան ես: Զգում եմ միաժամանակ, որ նրանց մեջ մի խոր ատելություն կա դեպի Կառլ Կաուլիչը, և սրանք մի առանձին համակրանքով են վերաբերում այդ սպանությանը, ու այդ ինձ զարմացնում է:

— Հոգիներս հանեց... գնաց, էլի չպրծանք,— ասում է ծնոտն այրված բանվորը:

Մյուսները գլուխնին օրորում են անխոս:

Այսօր էլ, տարիներ անց, հիշում եմ նրանց հոգնած, տխուր ու զայրացած դեմքերը և հիշում եմ, որ այդ դեմքերն ինձ դուր չէին գալիս,— ա՛յնպես չար էին նրանք: Նրանց վիշտը ես չէի հասկանում այն ժամանակ:

Փողոցի կարճ զրույցից հետո, նրանք ինձ հրավիրում են մի անծանոթ տուն. որքան էլ ես այդ չեմ ուզում, բայց գնում եմ ակամա. Նրանք ցանկանում են դարձյալ ինչ-որ բաներ իմանալ, և ես չգիտեմ ի՛նչ կարող եմ ասել նրանց: Սակայն նրանք շատ հետաքրքիր են: Ուզում են, որ պատմեմ, թե ի՛նչպես են բռնել ինձ և ի՛նչ են հարցրել: Եվ ես զարմանում եմ, թե ինչո՛ւ սրանք ավելի են հետաքրքրվում իմ

բանտարկության ու հարցաքննության հանգամանքներով, քան ծնողներս հետաքրքրվեցին:

Ես հիշում եմ պայծառորեն և այն ցածլիկ տունը, ուր մտանք: Հիշում եմ և այն կնոջը, որ մեզ տեսնելով, ավելը կոխեց թախտի տակ և սեղանը ծածկեց սփռոցով: Դա, ինչպես երևաց, բանվորներից մեկի տունն էր:

— Դե պատմիր, Սուրեն, պատմիր տեսնենք,— ասում են նրանք սեղանի շուրջը նստելով:

Ու ես պատմում եմ, ինչ գիտեմ.— Թե ինչե՛ր հարցրին ինձ, ո՛վ էր հարցաքննողը, ո՛վքեր էին ներկա, և ա՛յն, որ ես Արամին ու Մամիկոնին չեմ տեսել և չեմ ճանաչում առհասարակ:

Բանվորները գլուխնին օրորում են նորից:

— Ափսո՛ս, տղերք, ափսո՛ս...

— Մարդ կարողանա դրանց փախցնել,— ասում է ծնոտն այրվածը, սրտի խորքից, մի բուռն, բայց անզոր ցանկությամբ:

— Էդ չի ըլնի, էդ դժվար է,— ծանրախոհ տարուբերում է գլուխը միրուքավորը:

— Ինչո՞ւ չի ըլնի,— համարյա հարձակվում է ծնոտն այրվածը բոցկլտող աչքերով:— Ինչո՞ւ է դժար:

— Նրա համար, որ ղարաուլները շատացրել են:

— Ինչ նշանակություն ունի,—նորից վրա է պըրծնում ծնոտն այրվածը:— Էնքան մարդիկ են փախցնում, կարծում ես ղարաուլ չի ըլնում:

— Կարելի է կաշառում են,— միջամտում է երրորդ բանվորը, հարցական ու փոխն-փոխ նայելով երկուսին էլ:

Միրուքավորը համաձայնում է. ի հարկե, այդ էլ կա:

— Բայց ո՞ւր ա փող:

Նրանք խոսում են մտահոգ ու փոքր ինչ մութ, հիշելով ինձ անծանոթ անուններ ու դեպքեր, և նրանց

խոսակցությունից ես իմանում եմ, որ ինձ հետ միասին նույն գիշերը բռնվել են տասներկու հոգի—երկաթուղու բանվորներ ու ծառայողներ: Մի երկուսին թողել են, իսկ մյուսները դեռ բռնված են: Բայց նըրանք խոսում են միայն Արամի ու Մամիկոնի մասին և ափսոսում են միայն նրանց: Եվ ես մտածում եմ, որ այդ Արամն ու Մամիկոնը, հավանորեն, դրանց ընկերներն են, գուցե և բարեկամը:

Բայց միևնույն ժամանակ ես նկատում եմ, որ նրանք բնավ չեն ափսոսում Կառլ Կառլիչին. ընդհակառակը՝ շատ ուրախ են, որ իրենք ազատվել են նըրանից: Հիշում են, թե ինչպես միևնույն աշխատանքը դիտմամբ անել էր տալիս մի քանի անգամ, դիտմամբ, որ տանջի մարդկանց, կամ «պալուչկաներն» եր ուշացնում կա՛մ խմբերով հեռացնում բանվորներին:

Նայելով խոսողներին՝ ես հիշում եմ, որ դրանց նույնպես տեսել եմ գրասենյակում, բայց թե ո՛րտեղ են աշխատում և ի՛նչ են անում— չգիտեմ: Հիշում եմ և այն օրը, երբ կարճ բանվորը սպառնագին նայեց Կառլ Կառլիչին և Կառլ Կառլիչը գայրացած կարգադրեց, որ հեռացնեն բանվորներին:

Խոսակցությամբ տարված՝ նրանք համարյա մոռացել են, որ ես մնացել եմ նստած, ու ինձ մտաբերում են այն ժամանակ, երբ տանտիրուհին մոտենում է սիրալիր և սեղանին է դնում մի քանի թարմ վարունգ:

— Կե՛ր, մատաղ, մեր բաղչիցն ա:

Ես չեմ հրաժարվում. ախորժակով ուտում եմ թարմ վարունգները և նրանք ինձ ճանապարհ են դըցում, խնդրելով մարդու բան չասել, թե ի՛նչ են խոսել ինձ հետ:

Ես, ի հարկե, խոստանում եմ, մտածելով, որ նրանք շուտով մի բան կանեն, մի զորավոր միջոցի կդիմեն իրենց ընկերներին ազատելու:

Սակայն...

Հետո, շատ հետո իմացա, որ նրանք չկարողացան ազատել իրենց ընկերներին. և այդ ինձ անծանոթ Արամն ու Մամիկոնը դատապարտվեցին մահվան ու... կախվեցին:

Ես մինչև այսօր էլ չգիտեմ— Կառլ Կառլիչին սպանողը նրանք էին թե ոչ, բայց գիտեմ, երբ տերտերը մահապատժից առաջ գնում է նրանց խոստովանելու,— նրանք հայհոյում են տերտերին ու քշում:

Այս պատմել էր տերտերը նրանց ծնողներին:

Այժմ ես մոտենում եմ իմ պատմության վերջին մասին և սիրտս նորից լցվում է տխրությամբ:

Իրիկնադեմ է. ես հոգնած քայլերով վերադառնում եմ բանվորների մոտից ու դեռ մեր տան անկյունը չհասած— նորից բարձր, աղմկալի խոսակցություն եմ լսում: Խոսում են դարձյալ մեր բակում, և ես նորից ջոկում եմ հորս, հորեղբորս և պապիս ձայները:

— Ես իմ տասը կանեմ,— սպառնում է հայրս:

— Ձենդ կտրի՛,— սաստում է պապս:

Խոտատեղի վեճը նորոգվել է կրկին:

Չգիտեմ ինչու— սիրտս տխրում է ավելի ու չեմ ուզում էլ գնալ մեր տուն: Առաջները այդպիսի վեճեր լսելիս— հուզվում էի, բարկանում, բայց երբե՛ք չէի տխրում. իսկ այժմ մի զարմանալի թախիծ է գալիս վրաս և այնքա՛ն ձանձրալի, չնչին են թվում հողի, գոմի ու խոտի վեճերը, կռիվները, որոնք կրկնվում են միշտ միևնույն անփոփոխ խոսքերով, միշտ միևնույն սպառնալիքով ու հայհոյանքով:

Բանտում ես մոռացել էի այդ բոլորը, բայց այժմ նորից ու նորից լսելով այդ հին վեճերը, և այն էլ միևնույն օրը երկու անգամ— սիրտս դառնանում է... Եվան անհարմար է համարում խոսել հետս, հորեղբայրս «կատորժնի» է ասում և դրանով դասում ինձ հանցագործ ու գող մարդկանց շարքը, բանված մարդկանց ով գիտի ինչ է սպասվում.— աշխարհում այս-

պիսի ծանր գործեր են լինում, իսկ նրանք խոսում են դարձյալ հողի ու խոտի մասին, ու ոչ—ոք չի հետաքրքրվում ինձանով: Օ, լինե՛ր մի այնպիսի տեղ, այնպիսի մի անկյուն, որ էլ չլսեի այդ բոլորը՝ այդ վեճերը, այդ աղմուկները...

Ու ինձ հանկարծ պաշարում է հեռանալու միտքը:

Ես այլևս չեմ ուզում գնալ գրասենյակ: Ավելի լավ է հեռանալ այստեղից, հեռանա՛լ... Այ, ընկերներս շուտով գնալու են, ինչո՞ւ ես էլ չգնամ... Նրանք գնում են սովորելու, ինչո՞ւ ես էլ չսովորեմ: Հիշում եմ մորս խոսքերը, որ ասավ նախաճաշին. «մի տեղ ըլի գնաս— հեռանաս սրանց աչքից»:

Ինձ թվաց՝ նա ակնարկում է հարևաններին, բայց նա միտքը պարզեց իսկույն. «ով գիտի՞, մեկ էլ տեսար նորից եկան բռնեցին»: Այդ էլ կարող է պատահել, մտածում եմ ես:— Ի՞նչ իմանաս՝ հանկարծ նորից եկան ու նորից տարան բանտ:

Այս մտքերով դուրս եմ գալիս դաշտ և, դաշտը կրկնապատկում է տխրությունս:— Հասկավորված արտերն ալիքավորվում են հանդարտ,— տեղ—տեղ արդեն զնգում է անտես գերանդին, բանջարանոցները ջրում են բահերն ուսած մարդիկ, քաղհանավոր աղջիկները երգում են ծանոթ երգեր, իսկ անտառը լուռ, ասես ականջները կախ, լսում է նրանց:

Սիրտս ավելի է տխրում: Այդ տխրությունը աղջիկների ե՞րգն է բերում ինձ, անտես զնգացող գերանդինե՞րն արդյոք, թե՞ ամբողջ դաշտն ու անտառը միասին— չգիտեմ, բայց այժմ ես ինձ ա՛յնպես խորթ, ա՛յնպես օտար եմ զգում այդ բոլորի մեջ: Իսկ երբեմըն ինձ թվում է գերանդիների զնգոցի մեջ զգում եմ հորեղբորս խոսքը, հիշում եմ Եվայի վերաբերմունքը և մերոնց կռիվը խոտատեղի համար: Ու հեռանալու միտքը նորից, ավելի ուժով պաշարում է ինձ, և ես մտածում եմ տարօրինակ, համարձակ բաներ. նորից երազանքներ ու ցնորքներ...

Այո, կերթամ հեռու մի տեղ, ցերեկները կաշխատեմ, կծառայեմ, իսկ գիշերը դաս կսովորեմ ու կըկարդամ անվերջ... կսովորեմ ու կավարտեմ, հետո փող, շատ փող կաշխատեմ ու մի օր հանկարծ, բոլորի համար անսպասելի, նվերներ ու փող կուղարկեմ հորս, մորս, քրոջս ու եղբորս:

Փողը կուղարկեմ, իհարկե, հորս, որ նա այլևս պապիցս հող,դոմ, մարագ ու զանազան բաներ չուզի. հրաժարվի հոր ժառանգությունից և վերջ տա վեճերին, այդ տխուր վեճերին... Կուղարկեմ շատ, շատ փող և շատ նվերներ... Ու մերոնք կզարմանան, ի հարկե, և կպատմեն հարևաններին: Հարևանները նույնպես կզարմանան, որ ես այսքան «քաջ» եմ ու աշխատասեր... Եվ եթե մի օր վերադառնամ— բոլորը, օ՜, բոլորը— հարևան, բարեկամ որքա՛ն լավ կընդունեն ինձ: Բոլորը մատնացույց կանեն ինձ ու կասեն իրենց փոքրիկներին.

— Այ, տեսնում եք, տասնուհինգ տարեկան գընաց քաղաք, ինքն իր աշխատանքով ուսում առավ, մարդ դառավ, հիմա եկել է ծնողներին տես:

Գուցե ասեն և շատ ուրիշ բաներ:

Վերադառնալով՝ ես սիրով կողջունեմ բոլորին, սիրով կսեղմեմ բոլորի ձեռքը, բայց հորեղբորս ձեռը— երբե՛ք, երբե՛ք... Նրան տեսնելիս՝ ես երեսս կշրջեմ ու կանցնեմ: Նրան չեմ արժանացնի իմ հայացքին անգամ: Իսկ եթե նա ինքը մոտենա ու ձեռ մեկնի՞ ինձ... Միևնույն է, ես նրան չեմ բարևի: Ու այդպես կառնեմ իմ վրեժը այն բոլոր վիրավորանքների համար, որ պատճառել է նա ինձ: Իսկ Եվան... Եվան... Եթե նա հանդիպի և ժպտալով ձեռ մեկնի՞ ինձ... Ի՞նչ կանեմ... Ես, ի հարկե, կբարևեմ նրան ու կժպտամ սիրով ու կհարցնեմ՝ ի՞նչպես է ապրում արդյոք...

Եվ, չգիտեմ ինչու, այդքան տարիներ անցնելուց հետո, ես նրան պատկերացնում եմ դարձյալ նույն

Եվան՝ դպրոցական հագուստով, գոգնոցով, կամ այդ օրվա կապույտ զգեստով:

Իմ վերաբերմունքից նա կամաչի, ի հարկե, որ չուզեց խոսել բանտից դուրս եկածի հետ. կամաչի և կափսոսա, որ վատ վարվեց հետս, և, թերևս, ներողություն խնդրի:

«Ոչի՛նչ, ոչի՛նչ»,— կասեմ ես, ու ամենայն մեծահոգությամբ կներեմ նրան:

Կլինեմ առհասարակ վեհանձն ու ներող: Կներեմ բոլորին, բոլորին.— այն տղաներին, որ երբևիցե ծաղրել են ինձ. դպրոցական ընկերներիս, որ վատ են եղել ու չարակամ. հարևաններին, որ երբեք վատ աչքով են նայել ինձ. կներեմ անգամ պապիս,որ այնքան դառնություններ է պատճառել հորս ու մորս... Բայց հորեղբորս— երբե՛ք, երբե՛ք...

Այնուհետև կարոտով կգամ այս դաշտը, կերթամ անտառ, կշրջեմ ծանոթ վայրերը բոլոր— Կույսերի ձորը, Լորու թալան և Բաղդասարի աղբյուրը, որի ջուրը բղխում է ժայռի կրծքից՝ ձիու նման վրնջալով:

Այս հեռանկարը հուզում է ինձ, գրավում ու դյութում, և ես հափշտակված ծրագիրներ եմ կազմում:

— Այո, այդպես էլ կանեմ,— վճռում եմ ես և քայլերս ուղղում դեպի տուն:

Այստեղ սիրտս հուզում է մի անցած բերկրանք:

Այս անգամ տանն ինձ սպասում էր ուրախությունը.— սպասում էին ընկերներս— Սամսոնը, Սեդրակը, Աշոտ Զարզարյանը, Մելիտեն և Ապոստոլ Կարամանիդին: Իմանալով ազատվել եմ բանտից— եկել էին ինձ տես... Այժմ ես անկարող եմ նկարագրել մեր հանդիպման վճիտ ուրախությունը, արցունքավետ համբույրները, գրկախառնումները և իմ երանավետ հրճվանքն ու սփոփանքը, որ արտահայտվում էին միայն արցունքներով. արցունքներ, որ անարգել

թափվում էին իմ աչքերից և ողողացնում լցված սիրտըս:

— Բա մենք մտածում էինք քեզ փախցնել,— ասում է Սեդրակը, առաջինը սթափվելով տղամարդուն անվայել սանտիմենտալ տեսարանից:

Ու սկսվում է հարց ու փորձը:

— Քանի ժամ է փնտրում ենք, ո՞րտեղ էիր,— հետաքրքրվում է Սամսոնը:— Ձեր գրասենյակո՞ւմ:

Ես գլուխս օրորում եմ.

— Չէ, ես էլ գրասենյակ չեմ գնալու:

— Ինչո՞ւ: Չէ՞ որ անմեղ ես...

— Էլ չեմ ուզում այստեղ մնալ:

— Ինչո՞ւ:

— Գնալու եմ Թիֆլիս:

Ընկերներս հավանություն են տալիս իմ մտադրությանը: Բայց նրանց հարցին, թե ինչ պիտի անեմ այնտեղ— չեմ կարողանում պատասխանել: Ինքս էլ չգիտեմ ի՛նչ պիտի անեմ:

— Է, գնա, մենք էլ շուտով կգանք,— ասում է Զարգարյան Աշոտն իր ու Սամսոնի կողմից:— Ապոստոլն էլ գնում է Հունաստան: Մնում են Մելիտեն ու Սեդրակը:

— Մելիտեն էլ հոր խանութը կերթա, կմնամ ես մենակ,— ավելացնում է Սեդրակը:— Ես էլ Մանուշին կվերցնեմ, կերթամ մի տեղ...

Ու մի քանի օր հետո գնացքն ինձ տանում է Թիֆլիս: Վագոնի լուսամուտից նայում եմ ետ մնացող ընկերներիս, մեր գյուղաքաղաքին, նրա ծաղկած դաշտերին, անտառներին, խշշան գետին և մտքով մնաս բարով ասում բոլորի՛ն, բոլորի՛ն. դրանց հետ նաև երկաթուղու 15-րդ գծամասի գրասենյակին, սպիտակ կոճակներով բաճկոնին, որ պիտի հագնեի, և կակարդով գլխարկին...

Եվ գնացքը սուլում ու սլանում է առաջ...

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԳՐՔԻ

ՀՍՍՀ-CCP

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		Էջ
I	Մեր տունը	5
II	Բաժանք	12
III	Վրեժխնդրություն	23
IV	Զաքար վարժապետի դպրոցը	42
V	Ռուսաց դպրոց	57
VI	Տավարած	72
VII	Նորից դպրոցում	88
VIII	Նիկոլայ Պետրովիչ	98
IX	Լիդա Լվովնա	111
X	Տեր-Գյուսը	115
XI	Ավզանխատան	124
XII	Մանուշի նշանը	150
XIII	Երկրորդ քաջագործություն	161
XIV	Փնտրություններ և Գոգոլներ	170
XV	Օրերը	180
XVI	Տասնհինգերորդ գծամասի գրասենյակը	197
XVII	Ահավոր գիշեր և անծանոթ տեղեր	215
XVIII	Դեպի անհայտ հեռուն	233

Պատ-խմբագիր
Ա. Հարենց
Տեխ-խմբագիր՝
Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝
Մ. Թումանյան

ՎՖ 1059. Հրատ. 5335. Պատ. 646. Տիրաժ 4000.
Հանձնված է արտադրության 21/IX 1940 թ.
Ստորագրված է տպագրության 20/XII 1940 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0399446

8548